COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2015
Հայերեն / Armenian / Arménien

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ)

ԽԿԿ չափանիշները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽԿԿ–ի մասին համառոտ 4

I. Ոստիկանությունում արգելանքի տակ պահելը 7

Փաստաբանի մատչելիությունը որպես վատ վերաբերմունքի կանխարգելման միջոց 21

II. Բանտարկություն 24

Բանտեր 24
Մեկուսի բանտարկությունը 42
Բժշկական սպասարկումն ազատազրկման վայրերում 57

III. Հոգեբուժական հաստատություններ 72

Հարկադրական տեղավորումը հոգեբուժական հաստատություններում 72
Չափահասների համար նախատեսված զսպման միջոցները հոգեբուժական հիմնարկներում 86

IV. Ներգաղթողների ազատազրկումը 96

Օտարերկրացիների մասին օրենսդրության հիման վրա ազատազրկված օտարերկրյա քաղաքացիներ 96
Երաշխիքներ ազատությունից զրկված անօրինական միգրանտների համար 103
Օդային տրանսպորտով օտարերկրացիների արտաքսումը 115

V. Ազատությունից զրկված անչափահասներն ըստ Քրեական օրենսդրության 124

VI. Ազատազրկված կանայք 139

VII. Վատ վերաբերմունքի բժշկական ապացույցների փաստագրում և հաղորդում 145

VIII. Պայքար անպատժելիության դեմ 153

IX. Էլեկտրահարող սարքերը 162

ԽԿԿ–ի մասին համառոտ

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) ստեղծվել է Եվրոպայի խորհրդի 1987թ. համանուն կոնվենցիայի համաձայն (այսուհետև «Կոնվենցիա»): Համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի՝

> «Խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման նպատակով ստեղծվում է Եվրոպական կոմիտե... Կոմիտեն այցելությունների միջոցով ուսումնասիրում է ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը՝ անհրաժեշտության դեպքում խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից նրանց պաշտպանությունը ուժեղացնելու նպատակով»:

ԽԿԿ-ի գործունեությունը Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների պաշտպանության համակարգի անբաժանելի մասն է կազմում, որը մարդու իրավունքների Եվրոպական դատարանի գոյություն ունեցող հակազդող դատական մեխանիզմի հետ մեկտեղ, կիրառում է կանխարգելիչ, ոչ դատական մեխանիզմ:

ԽԿԿ-ն իր կանխարգելիչ գործունեությունը հիմնականում իրականացնում է երկու տեսակի այցելությունների միջոցով՝ պարբերական և հատուկ (ad hoc): Պարբերական այցելությունները կատարվում են կանոնավոր կերպով, Կոնվենցիայի Կողմեր հանդիսացող բոլոր երկրներում: Հատուկ այցելությունները կազմակերպվում են, երբ Կոմիտեի կարծիքով, այդ պետություններում դրանք անհրաժեշտ են «ելնելով կոնկրետ հանգամանքներից»:

Այցելությունն իրականացնելիս ԽԿԿ-ն, Կոնվենցիայի համաձայն, օգտվում է լայն լիազորություններից, որոնցից են՝ համապատասխան պետության տարածք մուտք գործելու և առանց սահմանափակումների այնտեղ տեղաշարժվելու իրավունքը, որևէ ազատազրկման վայր անսահմանափակ այցելությունը՝ ներառյալ այդ վայրերում անսահմանափակ տեղաշարժվելու իրավունքը, մարդկանց ազատազրկման

վայրերի մասին լիարժեք տեղեկատվություն ստանալու իրավունքը, ինչպես նաև իրավունք՝ օգտվելու պետության տրամադրության տակ եղած տեղեկություններից, որոնք անհրաժեշտ են կոմիտեին իր խնդիրները իրագործելու համար:

Կոմիտեն նաև իրավասու է մեկուսի զրուցել ազատազրկված անձանց հետ և ազատորեն հաղորդակցվել ցանկացած անձի հետ, ով Կոմիտեի ենթադրությամբ կարող է համապատասխան տեղեկություն տրամադրել:

Այցելությունները կարող են կատարվել ցանկացած վայր, «որտեղ պահվում են պետական մարմնի կողմից ազատազրկված անձինք»: Այսպիսով, ԽԿԿ-ի լիազորությունները դուրս են գալիս ուղղիչ հիմնարկների և ոստիկանական բաժանմունքների շրջանակներից և ընդգրկում են, օրինակ՝ հոգեբուժարանները, զորանոցների կալանատեղերը, ապաստան խնդրող և այլ կարգի օտարերկրացիների պահման կենտրոնները և այն վայրերը, ուր կարող են պահվել դատական կամ վարչական կարգով ազատությունից զրկված երիտասարդ անձինք:

ԽԿԿ-ի և Կոնվենցիայի Կողմերի հարաբերությունները կարգավորվում են երկու հիմնարար սկզբունքով՝ համագործակցություն և գաղտնիություն: Այս առումով, անհրաժեշտ է ընդգծել, որ Կոմիտեի նպատակը՝ ոչ թե պետություններին մեղադրելն է, այլ օգնություն ցույց տալը, որպեսզի կանխարգելվի ազատազրկված անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքը:

Յուրաքանչյուր այցելությունից հետո, ԽԿԿ-ն զեկուցագիր է կազմում այցելության ընթացքում իր կողմից ի հայտ բերած փաստերի վերաբերյալ և ներկայացնում շահագրգիռ Կողմին իր տեսանկյունից անհրաժեշտ բոլոր հանձնարարականները, անհրաժեշտության դեպքում նաև այլ առաջարկություններ, որի հիման վրա տեղի է ունենում երկխոսություն համապատասխան պետության հետ: Կոմիտեի այցելությունների մասին զեկուցագիրը հիմնականում գաղտնի է, թեև գրեթե բոլոր պետությունները նախընտրում են հրաժարվել գաղտնիության սկզբունքից և հրապարակել այն:

ԽԿԿ-ն յուրաքանչյուր տարի իր գործունեության մասին Ընդհանուր հաշվետվություն է ներկայացնում, որը հրապարակվում է:

ԽԿԿ-ն իր մի շարք Ընդհանուր հաշվետվություններում նկարագրում է ազատազրկման վայրեր այցելությունների ընթացքում իր կողմից հետապնդվող որոշ հիմնահարցեր: Կոմիտեն հուսով է, որ ազգային իշխանությունները, այսպիսով, նախնական ստույգ տեղեկություններ կստանան իր տեսակետների մասին, որոնք վերաբերում են ազատազրկված անձանց հետ վարվելուն և, ընդհանրապես, կխրախուսվեն այդ հարցերի շուրջ քննարկումները:

Մինչև օրս կազմված Ընդհանուր հաշվետվությունների «հիմնական» բաժինները միավորվել են սույն փաստաթղթում:

I. Ոստիկանությունում արգելանքի տակ պահելը

Քաղվածք 2-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (92) 3]

36. ԽԿԿ-ն հատուկ նշանակություն է տալիս ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքների ապահովմանը՝ ազատազրկված անձանց ձերբակալության փաստի մասին, իր ընտրությամբ, երրորդ կողմին (ընտանիքի անդամ, ընկեր, հյուպատոսարան) տեղեկացնելու իրավունքը. փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունքը և իր ընտրած բժշկի կողմից բժշկական հետազոտության իրավունքը (բացի այն բժշկական հետազոտություններից, որ կատարել է ոստիկանական իշխանությունների կողմից հրավիրված բժիշկը)[1]: ԽԿԿ-ի կարծիքով այս իրավունքները ազատազրկված անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի հարցում իրավունքների պաշտպանության երեք հիմնարար երաշխիքներն են, և նրանք պետք է կիրառվեն ազատազրկման հենց առաջին պահից, անկախ նրանից, թե ինչպես է այն բնութագրվում ըստ համապատասխան իրավական համակարգի (ձերբակալություն, կալանք և այլն):

37. Ոստիկանության կողմից ձերբակալված անձինք պետք է անհապաղ հստակ տեղեկացվեն իրենց բոլոր իրավունքների մասին, այդ թվում այն իրավունքների, որոնք նշված են 36 կետում: Ավելին, արդարադատության շահերի պաշտպանության նպատակով պետք է հստակորեն սահմանվեն վերոհիշյալ իրավունքներից այս կամ այն իրավունքի իրագործումը հետաձգելու՝ իշխանություններին տրված յուրաքանչյուր հնարավորություն և նրանց կիրառումը պետք է կատարվի խստորեն սահմանված ժամկետում: Ինչ վերաբերում է, մասնավորապես, փաստաբանի ծառայություններից օգտվելուն և բացի ոստիկանության կողմից հրավիրված բժշկի, այլ բժշկի կողմից կատարվող բժշկական հետազոտման պահանջի իրավունքներին, ապա համակարգերը պետք է վերացնեն այս իրավունքների իրագործման հետաձգման որևէ անհրաժեշտություն, քանի որ հատկապես փաստաբանների նաև բժիշկների ընտրությունը կարող է կատարվել և համապատասխան արհեստավարժ կազմակերպությունների հետ համաձայնեցված ցուցակներից:

---

[1] Այս իրավունքը հետագայում վերաձևակերպվել է հետևյալ կերպ. բժշկի ծառայություններից օգտվելու իրավունք, որն ընդգրկում է նաև ազատազրկված անձի ցանկությամբ իր ընտրած բժշկի մոտ հետազոտման իրավունքը (ի լրումն ոստիկանական մարմինների կողմից հրավիրված բժշկի կատարած որևէ բժշկական հետազոտության):

38. Ոստիկանության կողմից ձերբակալված անձինք, բացի փաստաբանի ծառայություններից օգտվելուց, պետք է նաև իրավունք ունենան շփման մեջ մտնել փաստաբանի հետ և այցելվել նրա կողմից (երկու դեպքերում էլ նրանց զրույցների գաղտնիության երաշխիքի պայմանով), ձերբակալված անձինք նաև պետք է օգտվեն հարցաքննության ընթացքում փաստաբանի ներկայության իրավունքից:

Ինչ վերաբերում է ոստիկանության կողմից ձերբակալված անձանց բժշկական հետազոտությանը, ապա բոլոր այդ հետազոտությունները պետք է կատարվեն այնպես, որպեսզի նրանք լսելի չլինեն ոստիկանների համար և գերադասելի է, որ գտնվեն նաև ոստիկանների տեսադաշտից դուրս: Բացի այդ, յուրաքանչյուր հետազոտության արդյունքները, ինչպես նաև ձերբակալված անձի կողմից արված համապատասխան պնդումները և բժշկի հետևությունները պետք է պաշտոնապես գրանցվեն հետազոտող բժշկի կողմից և տրամադրվեն ձերբակալված անձին և նրա փաստաբանին:

39. Անդրադառնալով հարցաքննության գործընթացին՝ ԽԿԿ-ն գտնում է, որ պետք է գոյություն ունենան ստույգ կանոններ կամ ղեկավար հրահանգներ թե ինչպես պետք է անցկացվեն հարցաքննությունները ոստիկանության կողմից: Այդ կանոնները, բացի նշված հարցերից, պետք է ներառեն հետևյալ խնդիրները՝ ձերբակալված անձի տեղեկացումը հարցաքննությանը ներկա անձանց տվյալների մասին (անունը և/կամ համարը). հարցաքննության թույլատրելի տևողությունը. հարցաքննությունների միջև ընկած հանգստի ժամերի տևողությունը և ընդմիջումները հարցաքննության ընթացքում. վայրերը, որտեղ կարող են տեղի ունենալ հարցաքննությունները. հարցաքննության ընթացքում ձերբակալված անձի կանգնած լինելու պահանջի անհրաժեշտության պայմանները. թմրանյութերի, ալկոհոլի և այլ ազդեցության տակ գտնվող անձանց հարցաքննությունը: Նմանապես պահանջվում է սիստեմատիկորեն գրանցել հարցաքննությունների սկզբի և ավարտի ժամերը, հարցաքննության ժամանակ ձերբակալված անձի որևէ խնդրանքը և յուրաքանչյուր հարցաքննության ժամանակ ներկա անձանց տվյալները:

ԽԿԿ-ն նաև նշում է, որ ոստիկանության կողմից անցկացվող հարցաքննությունների էլեկտրոնային գրանցումը իրավունքների պաշտպանության ևս մի օգտակար երաշխիք է ձերբակալված անձանց հետ դաժան վերաբերմունքի դեմ (զգալի առավելություններ է ստեղծում նաև ոստիկանության համար):

40. ԽԿԿ-ն գտնում է, որ ոստիկանության կողմից ձերբակալված անձանց տրամադրվելիք իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիքները կամրապնդվեն (և ոստիկանների աշխատանքը, ամենայն հավանականությամբ,

դյուրին կդառնա), եթե յուրաքանչյուր ձերբակալված անձի համար կազմվի անձնական համապարփակ գործ, որտեղ կգրանցվեն ձերբակալության տակ գտնվելու հետ կապված բոլոր հարցերը և գործողությունները (ձերբակալության ժամանակը և պատճառները, իրավունքների մասին տեղեկացնելու ժամանակը, վնասվածքների նշանները. հոգեկան խանգարումները և այլն. ազգականների/հյուպատոսի և փաստաբանի այցելությունների և նրանց հետ շփման մեջ մտնելու ժամանակը. սնունդ առաջարկելու ժամանակը. հարցաքննության ժամանակը. տեղափոխման կամ ազատման ժամանակը և այլն): Տարբեր հարցերի վերաբերյալ (օրինակ՝ ձերբակալված անձի մոտ եղած իրերը, իրավունքների մասին հայտնելը և այդ իրավունքները ընդունելու կամ մերժելու փաստը) ձերբակալված անձից պետք է ստանալ ստորագրություն, իսկ անհրաժեշտության դեպքում բացատրել ստորագրության բացակայության պատճառը: Ձերբակալված անձի փաստաբանին իրավունք է վերապահվում ծանոթանալ ձերբակալության գործին:

41. Իրավունքների պաշտպանության էապես կարևոր երաշխիք է նաև ոստիկանությունում արգելանքի տակ գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի մասին բողոքների քննության անկախ մեխանիզմի առկայությունը:

42. Ոստիկանությունում արգելանքի տակ գտնվելու տևողությունը հիմնականում համեմատաբար կարճատև է: Հետևաբար, ոստիկանական հիմնարկներում արգելանքի տակ գտնվելու ֆիզիկական պայմանները սովորաբար զիջում են երկարատև պահման վայրերի պայմաններին, թեև նրանք պետք է համապատասխանեն որոշ տարրական նյութական ապահովման պահանջներին:

Ոստիկանությունում գտնվող բոլոր խցերը պետք է ունենան պահվող մարդկանց քանակին համապատասխան չափսեր, լուսավորում (այսինքն՝ բավարար կարդալու համար, բացառելով քնելու ժամերը) և օդափոխում: Գերադասելի է, որ խցերը սարքավորված լինեն հանգստի միջոցներով (օրինակ, հատակին ամրացված լինեն աթոռ կամ նստարան), իսկ զիշերը այնտեղ անցկացնող անձանց պետք է տրամադրվեն մաքուր ներքնակներ և վերմակներ:

Արգելանքի ենթարկված անձինք անհրաժեշտության դեպքում իրենց բնական պահանջները պետք է բավարարեն մաքուր և պատշաճ պայմաններում՝ ունենալով լվացվելու հարմարանքներ: Նրանք պետք է սնունդ ստանան համապատասխան ժամերին, և ամեն օր[1] առնվազն մեկ անգամ դա պետք է լինի լրիվ կերակուր (այսինքն՝ ավելի էական կերակուր, քան բուտերբրոդն է):

[1] ԽԿԿ-ն նաև պաշտպանում է այն տեսակետը, որ ոստիկանությունում 24 կամ ավելի ժամ արգելանքի տակ պահվող անձինք հնարավորության դեպքում պետք է կարողանան ամեն օր դրսում զբոսնել:

43. Ոստիկանական խցի (կամ որևէ այլ պահման տեղի) հարմար չափերի ընտրության խնդիրը բարդ հարց է: Հաշվարկներ կատարելիս պետք է նկատի առնվեն բազմաթիվ գործոններ: Այնուամենայնիվ, ԽԿԿ-ի պատվիրակությունները գտնում են, որ անհրաժեշտ է այս բնագավառում ընդունել մի ղեկավար մոտավոր սկզբունք: Ներկայումս մեկ անձին մի քանի ժամից ավելի ոստիկանությունում պահելու համար նախատեսված խցերի նկատմամբ կիրառվում է հետևյալ չափանիշը (որը դիտվում է որպես ցանկալի մակարդակ, այլ ոչ թե որպես նվազագույն ստանդարտ) 7մ2 չափով խուց՝ 2 կամ ավելի մետր լայնությամբ (պատից պատ), 2,5մ բարձրությամբ (հատակից առաստաղ):

Քաղվածք 6-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (96) 21]

14. ԽԿԿ-ն ողջունում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ազատազրկված անձանց պահելու պայմաններին վերաբերող իր գործունեությանը ցույց տրվող աջակցությունը, որն արտահայտված է խորհրդարանական վեհաժողովի թիվ 1257 (1995թ.) Հանձնարարականում: Կոմիտեն նաև թիվ 1257 Հանձնարարականին տրված պատասխանից մեծ գոհունակությամբ տեղեկացավ, որ Նախարարների կոմիտեն անդամ պետությունների իշխանություններին կոչ է անում գործել ԽԿԿ-ի 2-րդ Ընդհանուր հաշվետվությունում (հմմտ. CPT/Inf (92) 3, կետ 36-43) շարադրված ոստիկանությունում արգելանքի տակ պահելու մասին ղեկավար սկզբունքների համաձայն:

Այս առումով հարկ է նշել, որ Կոնվենցիայի որոշ անդամ երկրներ ցանկություն չունեն լիովին կատարելու ԽԿԿ-ի որոշ հանձնարարականները, որոնք վերաբերում են ոստիկանությունում արգելանքի տակ գտնվող անձանց հետ դաժան վերաբերմունքի դեմ ուղված երաշխիքներին, և մասնավորապես այն հանձնարարականը, որտեղ նշվում է, որ այդ անձինք ազատազրկման պահից սկսած պետք է ստանան փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունք:

15. ԽԿԿ-ն, իր փորձից ելնելով, ցանկանում է շեշտել, որ ահաբեկման և դաժան վերաբերմունքի դեպքերն ամենահավանականն են ձերբակալումից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածում: Հետևաբար, ոստիկանությունում արգելանքի տակ գտնվող անձանց համար փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորությունը ճիշտ այդ ժամանակահատվածի ընթացքում հիմնարար երաշխիք է դաժան վերաբերմունքի դեմ: Այս հնարավորության առկայությունը կունենա կանխիչ ազդեցություն այն պաշտոնյաների համար, որոնք տրամադրված են ցուցաբերել դաժան վերաբերմունք ձերբակալված անձանց նկատմամբ: Եթե այդ տեղի է ունենում, ապա փաստաբանը ունի համապատասխան միջոցներ ձեռնարկելու բոլոր հնարավորությունները:

ԽԿԿ-ն ընդունում է, որ արդարադատության շահերը պաշտպանելու նպատակով կարող է ծայրահեղ անհրաժեշտ լինել որոշ ժամանակով հետաձգել ձերբակալված անձի կողմից ընտրված փաստաբանին դիմելու հնարավորությունը: Սակայն սա չի նշանակում, որ այդ ժամանակահատվածում պետք է լիովին ժխտվի փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունքը: Նման դեպքերում պետք է հնարավորություն ստեղծվի օգտվելու որևէ այլ անկախ և վստահելի փաստաբանի ծառայություններից, որը չի վտանգի ոստիկանության կողմից իրականացվող հետաքննության օրինական շահերը:

16. ԽԿԿ-ն 2-րդ Ընդհանուր հաշվետվությունում ընդգծել է նաև ոստիկանական արգելանքի տակ գտնվող անձանց իրենց բոլոր իրավունքների մասին անհապաղ և հստակորեն տեղեկացնելու կարևորությունը:

ԽԿԿ-ն գտնում է, որ վերոհիշյալի ապահովման համար ոստիկանության կողմից ձերբակալված անձանց արգելանքի տակ պահելու առաջին իսկ պահից ուղղակի և համակարգված ձևով պետք է տրվի մի փաստաթուղթ, որում շարադրված են այդ իրավունքները: Ձերբակալված անձինք պետք է նաև ստորագրեն իրենց իրավունքների մասին տեղեկացվելու վերաբերյալ հայտարարագիր:

Վերոհիշյալ գործողությունների կատարումը կլինի դյուրին, արդյունավետ և կապված չի լինի մեծ ծախսերի հետ:

Քաղվածք 12-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2002) 15]

33. Հասարակության բնականոն գործունեության համար կարևոր է, որպեսզի ոստիկանությունն ունենա քրեական հանցագործության մեջ կասկածվող և այլ կատեգորիայի անձանց բերման ենթարկելու, ժամանակավորապես ձերբակալելու և հարցաքննելու լիազորություններ: Սակայն, նման լիազորություններն իրենց հետ բերում են ահաբեկելուն և ֆիզիկական բռնության ռիսկեր: ԽԿԿ-ի աշխատանքի էությունը նման ռիսկերը բացարձակ նվազագույնի հասցնելուն ուղղված ուղիներ փնտրելն է՝ առանց անհարկի խոչընդոտելու ոստիկանության կողմից իր պարտականությունների պատշաճ կատարմանը: Մի շարք երկրներում նշվել են խրախուսող զարգացումներ ոստիկանությունում կալանքի տակ պահելու բնագավառում. այնուամենայնիվ, ԽԿԿ-ի ունեցած տվյալները շատ հաճախ ընդգծում են զգոնությունը պահպանելու անհրաժեշտությունը:

34. **Հանցագործության մեջ կասկածվողների հարցաքննությունը** մասնագիտական խնդիր է, ինչը հատուկ ուսուցում է պահանջում այն բավարար կերպով իրականացնելու համար: Նախևառաջ, անհրաժեշտ է կատարյալ հստակությամբ սահմանել *նման հարցաքննությունների նպատակը*. նպատակը

պետք է լինի ճշգրիտ և վստահելի տեղեկություններ ձեռք բերելը՝ բացահայտելու համար քննվող գործով ճշմարտությունը, այլ ոչ խոստովանական ցուցմունքի ստացումն այն անձից, ում հարցաքննողն արդեն իսկ մեղավոր է համարում: Ի հավելումն համապատասխան ուսուցման, հանցագործության մեջ կասկածվող անձանց հարցաքննության վերաբերյալ վարքագծի կանոնների ընդունումը մեծապես կնպաստի իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից նշված նպատակի լիարժեք իրականացմանը:

35. Տարիների ընթացքում ԽԿԿ-ի պատվիրակությունները զրուցել են ազատությունից զրկված մեծ թվով անձանց հետ տարբեր երկրներում, ովքեր վստահություն ներշնչող պնդումներ են արել իրենց նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնության կամ ոստիկանների կողմից այլ ահաբեկումների կամ սպառնալիքների մասին՝ ստանալու համար խոստովանական ցուցմունքներ հարցաքննությունների ընթացքում: Ակնհայտ է, որ քրեական արդարադատության այնպիսի համակարգը, որը շեշտը դնում է *որպես ապացույց մեղքի խոստովանության* վրա, խթանում է քննությանը ներգրավված պաշտոնատար անձանց ներգրավումը հանցանքի մեջ և հաճախ արդյունքների հասնելու ճնշման ներքո՝ ֆիզիկական կամ հոգեբանական հարկադրանքի կիրառումը: Խոշտանգումների և այլ տեսակի բռնությունների կանխարգելման համատեքստում արտակարգ կարևոր է զարգացնել հանցագործությունների քննության այնպիսի մեթոդներ, որոնք ունակ են նվազեցնելու կախվածությունը խոստովանություններից և մեղադրանքն ապահովելու համար այլ հարցաքննությունների միջոցով ստացված ապացույցներից ու տեղեկություններից:

36. **Ոստիկանության կողմից կատարված հարցաքննությունների էլեկտրոնային (այսինքն՝ աուդիո և (կամ) վիդեո) ձայնագրությունները** ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ լրացուցիչ երաշխիք են: ԽԿԿ-ն գոհունակությամբ նշում է, որ ավելի շատ երկրներ են քննարկում նման համակարգերի ներդրման հնարավորությունը: Նման տեխնիկական միջոցները կարող են ապահովել հարցաքննության ընթացքի լիարժեք և արժանահավատ ձայնագրությունը՝ դրանով իսկ նշանակալիորեն հեշտացնելով դաժան վերաբերմունքի դեմ բողոքների քննությունը: Նման ձայնագրությունների առկայությունը բխում է ինչպես ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի արժանացած անձանց, այնպես էլ ոստիկանության աշխատակիցների շահերից, ում նկատմամբ անհիմն բողոքներ են ներկայացվում նրանց կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ճնշումներ գործադրելու վերաբերյալ: Ոստիկանական հարցաքննությունների էլեկտրոնային ձայնագրությունները նվազեցնում են նաև ամբաստանյալների կողմից

հետագայում հնարավոր ստահոդ պնդումները, թե նախկինում իրենք որոշակի խոստովանություններ են կատարել:

37. ԽԿԿ-ն բազմաթիվ անգամներ և մեկից ավել երկրներում հայտնաբերել է **հարցաքննության** խիստ սարսափազդու **սենյակներ:** Օրինակ՝ ամբողջությամբ սև ներկված և միայն դեպի հարցաքննվողի դեմքը ուղղորդվող նեղ լույսի փնջով լուսավորող լուսարձակներով կահավորված սենյակներ: Նման տեսակի սարքավորումները տեղ չունեն ոստիկանությունում:

Բացի այն, որ հարցաքննության սենյակները պետք է լինեն բավարար չափով լուսավորված, ջեռուցված և օդափոխված, հարցաքննության բոլոր մասնակիցների համար պետք է նախատեսված լինեն միատեսակ և միևնույն հարմարավետության աթոռներ: Հարցաքննությունն իրականացնող պաշտոնատար անձը չպետք է գտնվի հարցաքննվողի նկատմամբ գերիշխող (ավելի բարձր) կամ հեռու դիրքում: Բացի այդ, գունային գամման պետք է չեզոք լինի:

38. Որոշ երկրներում ԽԿԿ-ն բախվել է ոստիկանությունում ձերբակալված անձանց **աչքերը կապելու պրակտիկայի** հետ, հատկապես՝ հարցաքննությունների ընթացքում: ԽԿԿ պատվիրակությունները ստացել են ոստիկանության աշխատակիցներից տարբեր և հաճախ հակասական բացատրություններ այն մասին, թե որն է այդպիսի պրակտիկայի նպատակը: Տարիների ընթացքում հավաքած տեղեկությունների արդյունքում ԽԿԿ-ին պարզ է դարձել, որ բազմաթիվ, եթե ոչ գրեթե բոլոր դեպքերում մարդկանց աչքերը կապում են, որպեսզի նրանք հնարավորություն չունենան ճանաչելու իրավապահ մարմինների՝ իրենց նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորող աշխատակիցներին: Անգամ այն դեպքերում, երբ ֆիզիկական բռնություն չի գործադրվել, ձերբակալվածի և մասնավորապես՝ հարցաքննվող անձի աչքերը կապելը, վատ վերաբերմունքի տեսակ է, որի թողած ազդեցությունը տվյալ անձի վրա հաճախ հավասարազոր է հոգեբանական դաժան ներգործության: ԽԿԿ-ն խորհուրդ է տալիս հստակորեն արգելել ոստիկանությունում գտնվող ձերբակալված անձանց աչքերը կապելը:

39. ԽԿԿ-ի համար սովորական է դարձել ոստիկանության շինություններում **կասկածելի առարկաներ** գտնելը, ինչպես օրինակ՝ փայտե ձողեր, ցախավելի բռնակներ, բեյսբոլի բիտաներ, մետաղական ձողեր, էլեկտրական մալուխի հաստ կտորներ, ոչ իրական հրազեն կամ դանակներ: Նման առարկաների առկայությունը մի շարք դեպքերում հաստատել է ԽԿԿ-ի պատվիրակությունների ստացած այն բողոքները, թե այդ հաստատություններում պահվող անձանց սպառնացել են և/կամ ծեծի ենթարկել նման առարկաների միջոցով:

Վերը թվարկած առարկաների առնչությամբ ոստիկանության աշխատակիցների բացատրությունը սովորաբար լինում է այն, թե իրենք դրանք առգրավել են կասկածյալներից և պետք է օգտագործեն որպես իրեղեն ապացույցներ: Այն փաստը, որ հիշատակված առարկաներն միշտ առանց պիտակների էին և հաճախ ցրված ողջ շինությունով մեկ (երբեմն տեղադրված վարագույրների կամ պահարանների հետևում), կարող են միայն թերահավատություն առաջացնել նման բացատրության հանդեպ: Որպեսզի փարատվեն ենթադրություններն այն մասին, թե ոստիկանության աշխատակիցների մի մասն անվայել վարք է դրսևորել և վերացնել աշխատակազմի և ձերբակալվածների նկատմամբ պոտենցիալ վտանգի աղբյուրները, առգրավված առարկաները, որպես ապացույցներ հետագայում օգտագործելու նպատակով, պետք է մշտապես ինչպես հարկն է պիտակավորվեն, արձանագրվեն և պահպանվեն հատուկ առանձնացված պահեստում: Մնացած բոլոր վերը հիշատակված առարկաները պետք է հեռացվեն ոստիկանական բոլոր բաժանմունքներից:

40. Իր գործունեության հենց սկզբից ԽԿԿ-ն պաշտպանել է ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքները. **փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները և ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը:** Շատ երկրներում քայլեր են ձեռնարկվել այս իրավունքների սահմանման կամ ուժեղացման ուղղությամբ՝ ԽԿԿ-ի խորհուրդների լույսի ներքո: Ավելի կոնկրետ՝ ձերբակալության լինելու ընթացքում փաստաբանի մատչելիության իրավունքը ներկայում լայնորեն ընդունված է ԽԿԿ-ի կողմից այցելած երկրներում, իսկ այն փոքրաթիվ երկրներում, որտեղ այդ իրավունքն դեռ բացակայում է, արդեն ծրագրում են ներդնել այն:

41. Սակայն մի շարք երկրներում նկատվում է զգալի դժկամություն կատարելու ԽԿԿ-ի առաջարկությունները՝ կապված այն բանի հետ, որպեսզի **փաստաբանի մատչելիության** իրավունքը երաշխավորվի ձերբակալման առաջին պահից սկսած: Որոշ երկրներում ոստիկանության կողմից կալանքի տակ առնված անձինք կարող են օգտվել այդ իրավունքից միայն կալանքի տակ անցկացրած որոշակի ժամանակահատ հետո. այլ երկրներում այդ իրավունքն ուժի մեջ է մտնում այն պահից հետո, երբ ձերբակալվածը պաշտոնապես հայտարարվում է որպես «կասկածյալ»:

ԽԿԿ-ն բազմիցս նշել է, որ ազատությունից զրկմանն անմիջապես հաջորդող ժամանակատվածում սպառնալիքի և ֆիզիկական բռնության ենթարկվելու ռիսկն ամենամեծն է: Հետևաբար, ոստիկանության կողմից ձերբակալված անձանց համար փաստաբանի մատչելիության հնարավորությունը

հենց այդ ժամանակահատվածում վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիք է: Նման հնարավորության առկայությունը զսպող ազդեցություն է թողնում այն ոստիկանների վրա, ովքեր հակված են բռնություն կիրառել ազատազրկված անձանց նկատմամբ. բացի դրանից, փաստաբանն ի վիճակի է ձեռնարկելու համապատասխան քայլեր, եթե բռնություն իրականում տեղի է ունենում: ԽԿԿ-ն ընդունում է, որ ոստիկանական քննության օրինական շահերը պաշտպանելու նպատակով բացառիկ դեպքերում անհրաժեշտ է լինում որոշակի ժամանակով հետաձգել ազատությունից զրկված անձի հանդիպումը նրա կողմից ընտրված փաստաբանի հետ: Սակայն, դա չպետք է հանգեցնի նրան, որ փաստաբանի մատչելիության իրավունքն ամբողջությամբ մերժվի հարցաքննությունների ընթացքում: Նման դեպքերում պետք է ապահովվի մեկ այլ անկախ փաստաբանի մատչելիությունը:

Փաստաբանի մատչելիության իրավունքը պետք է ներառի նրա հետ առանձին խոսելու իրավունքը: Տվյալ անձը, սկզբունքորեն, պետք է փաստաբանի իրավունք ունենա ոստիկանության կողմից իրականացվող ցանկացած հարցաքննության ընթացքում: Բնականաբար, դա չի կարող ոստիկանությանը խանգարել հարցաքննել նրան անհետաձգելի հարցերի վերաբերյալ, անգամ փաստաբանի բացակայության դեպքում (ով կարող է և չկարողանա անմիջապես ներկայանալ) ոչ էլ բացառել այն փաստաբանի փոխարինումը, ով խոչընդոտում է հարցաքննության պատշաճ իրականացմանը:

ԽԿԿ-ն նաև ընդգծում է, որ փաստաբանի մատչելիության իրավունք պետք է տրամադրվի ոչ միայն հանցագործություն կատարելու մեջ կասկածվողներին, այլև ցանկացած անձի, ով ունի ոստիկանություն ներկայանալու և այնտեղ գտնվելու իրավական պարտականություն (օրինակ՝ <<վկաները>>):

Բացի դրանից, որպեսզի փաստաբանի մատչելիության իրավունքը լիարժեքորեն գործի պրակտիկայում, նման հնարավորություն պետք է տրամադրվի նաև այն անձանց, ովքեր ի վիճակի չեն վճարելու փաստաբանի ծառայությունների համար:

42. Ոստիկանությունում ձերբակալված անձինք պետք է ունենան **բժշկի մատչելիության՝** ձևականորեն ճանաչված իրավունք: Այլ կերպ, պետք է անմիջապես բժիշկ կանչվի, եթե անձը բժշկական զննում է պահանջում. ոստիկանության աշխատակիցները չպետք է սողանցքներ փնտրեն մերժելու համար նման պահանջները: Բացի դրանից, բժշկի մատչելիության իրավունքը պետք է ներառի ազատազրկված անձին բժշկական քննության ենթարկելը, եթե տվյալ անձը նման ցանկություն արտահայտի, նրա կողմից ընտրված բժշկի մոտ (ի

լրումն ցանկացած բժշկական քննության, որն իրականացրել է ոստիկանության կողմից կանչված բժիշկը):

Ոստիկանությունում կալանքի տակ գտնվող անձանց բոլոր բժշկական զննումները պետք է իրականցվեն իրավապահ մարմինների աշխատակիցների լսողությանը անհասանելի պայմաններում և տեսադաշտից դուրս, քանի դեռ զննող բժիշկն առանձին դեպքում այլ բան չի պահանջել:

Կարևոր է նաև, որպեսզի այն անձինք, ովքեր ազատ են արձակվել ոստիկանական ձերբակալումից առանց դատավորի մոտ բերվելու, իրավունք ունենան ուղղակիորեն պահանջելու բժշկական զննման տեղեկանք պաշտոնապես ճանաչված դատական բժշկից:

43. Ձերբակալված անձի **իրավունքը հայտնելու իր ձերբակալման մասին երրորդ կողմին** սկզբունքորեն պետք է երաշխավորված լինի ոստիկանական ձերբակալման ամենասկզբնական պահից: Իհարկե, ԽԿԿ-ն ընդունում է, որ այդ իրավունքի իրականացումը կարող է ենթակա լինել որոշակի բացառությունների՝ նպատակ ունենալով պաշտպանել ոստիկանական քննության իրավաչափ շահերը: Սակայն նման բացառությունները պետք է հստակ սահմանված լինեն և ունենան խիստ ժամանակային սահմանափակումներ, իսկ դրանց դիմելը պետք է ուղեկցվի համապատասխան երաշխիքներով (օրինակ՝ ձերբակալվելու մասին հայտնելու ցանկացած հետաձգում պետք է գրավոր արձանագրվի՝ նշելով դրա պատճառները և ստանա ոստիկանության՝ տվյալ գործի հետ առնչություն չունեցող ավագ պաշտոնատար անձի կամ դատախազի հավանությունը):

44. Ազատությունից զրկված անձանց իրավունքներն փոքրարժեք կլինեն, եթե տվյալ անձինք տեղեկություն չունենան դրանց մասին: Հետևաբար, հրամայական պահանջ է, որպեսզի ոստիկանական ձերբակալման ենթարկված անձինք առանց ձգձգումների **հստակ տեղեկացվեն իրենց իրավունքների մասին**՝ նրանց համար հասկանալի լեզվով: Դրա ապահովման համար ոստիկանության կողմից ձերբակալված անձանց պետք է ձերբակալման առաջին իսկ պահից պարբերաբար տրվեն հուշաթերթիկներ, որտեղ հստակ շարադրված են այդ իրավունքները: Բացի դրանից, այդ անձինք պետք է ստորագրեն այն հայտարարությունը, որը հաստատում է իրենց իրավունքների մասին տեղեկացված լինելը:

45. ԽԿԿ-ն մի քանի անգամ ընդգծել է ոստիկանական կողմից վատ վերաբերմունքի դեմ պայքարում **դատական իշխանությունների և դատախազության դերը**:

Օրինակ՝ ոստիկանության կողմից ձերբակալված բոլոր անձինք, ում մտադիր են նախնական կալանքի վերցնել, պետք է ֆիզիկապես ներկայացվեն դատավորին, ով պետք է որոշի այդ հարցը. ԽԿԿ-ի այցելած որոշ երկրներում դա դեռ տեղի չի ունենում: Հանցագործության մեջ կասկածվող անձին, ում նկատմամբ բռնություն է կիրառվել, դատավորին ներկայացնելը նրան բողոք ներկայացնելու հնարավորություն է տալիս: Բացի դրանից, անգամ արտահայտված բողոքի բացակայության դեպքում, դատավորը հնարավորություն կունենա ժամանակին ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ, եթե առկա են բռնության այլ նշաններ (օրինակ՝ տեսանելի վերքեր, ձերբակալվածի ընդհանուր տեսքը կամ վարքը):

Բնականաբար, դատավորը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի, եթե առկա են ոստիկանության կողմից բռնության կիրառման նշաններ: Ամեն դեպքում, երբ հանցագործության մեջ կասկածվող անձինք դատավորի առջև հայտարարում են իրենց նկատմամբ կիրառված բռնության մասին, դատավորը պետք է գրավոր արձանագրի այդ բողոքները, կարգադրի անհապաղ նշանակել դատաբժշկական փորձաքննություն և անհրաժեշտ քայլեր ձեռնարկի, որպեսզի այդ բողոքները մանրակրկիտ քննության ենթարկվեն: Նման մոտեցում պետք է պահպանվի անկախ այն բանից, թե ունի արդյոք տվյալ անձը տեսանելի արտաքին վնասվածքներ: Բացի դրանից, անգամ բռնություն կիրառելու մասին արտահայտված բողոքի բացակայության դեպքում, դատավորը պետք է պահանջի դատաբժշկական քննության տեղեկանք ամեն անգամ, երբ գոյություն ունեն այլ հիմքեր ենթադրելու, որ իր առջև կանգնած անձը կարող էր դառնալ բռնության զոհ:

Դատական և այլ համապատասխան մարմինների կողմից իրավապահ մարմինների աշխատակիցների կիրառած բռնությունների մասին բոլոր բողոքների մանրակրկիտ քննությունը և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան պատժի կիրառումը ուժեղ կանխարգելիչ ազդեցություն կունենա: Եվ հակառակը՝ եթե համապատասխան մարմիններն արդյունավետ քայլեր չձեռնարկեն իրենց ուղղված բողոքներին ի պատասխան, ապա իրավապահ մարմինների այն աշխատակիցները, ովքեր հակված են ազատազրկված անձանց նկատմամբ բռնություններ կիրառելու, շատ արագ կգիտակցեն, որ կարող են անպատիժ կերպով անել դա:

46. **Ոստիկանության՝ բանտում կալանքի տակ գտնվող անձանց լրացուցիչ հարցաքննությունները** կարող են որոշակի դեպքերում անհրաժեշտ դառնալ: ԽԿԿ-ն այն կարծիքին է, որ վատ վերաբերմունքի կանխարգելման տեսակետից գերադասելի է նման հարցաքննություններն անցկացնել տվյալ բանտի շենքում, այլ ոչ թե ոստիկանությունում: Հետագա հարցաքննության նպատակով կալանավորված անձանց տեղափոխումը ոստիկանություն անհրաժեշտ է իրականացնել և թույլատրել միայն բացարձակ անխուսափելի դեպքերում: Ինքնին հասկանալի է, որ նման բացառիկ դեպքերում, երբ կալանքի տակ գտնվող անձը ետ է վերադարձվում ոստիկանություն, նա պետք է օգտվի այն երեք իրավունքներից, որոնք նշված են 40-ից 43-րդ կետերում:

47. Ոստիկանական ձերբակալումը գտնվելը տևում է (կամ՝ առնվազն, այդպես պետք է լինի) համեմատաբար կարճ ժամանակահատված: Այնուամենայնիվ, **ոստիկանության խցերում ձերբակալվածին պահելու պայմանները** պետք է համապատասխանեն որոշակի *հիմնական պահանջների*:

Ոստիկանության բոլոր խցերը պետք է լինեն մաքուր և բավականաչափ ընդարձակ[1] և ունենան բավարար լուսավորություն (այսինքն՝ բավարար լինի ընթերցանության համար, բացառությամբ քնելու ժամերը). նախընտրելի է, որպեսզի խցերը լուսավորված լինեն բնական լույսով: Բացի դրանից, խցերը պետք է համալրված լինեն հանգստի միջոցներով (օրինակ, հատակին ամրացված աթոռով կամ նստարանով), իսկ այն անձանց, ովքեր գիշերը պետք է կալանքի տակ մնան, հարկ է ապահովել մաքուր ներքնակներով և ծածկոցներով: Ոստիկանության կողմից կալանավորված անձինք պետք է օգտվեն պատշաճ զուգարաններից և հնարավորություն ունենան նորմալ լվացվելու: Նրանց պետք է մատչելի լինի խմելու ջուրը, իսկ սնունդը պետք է տրվի համապատասխան ժամին և ներառի ամբողջական կերակուր (այսինքն, սենդվիչներից ավելի էական ինչ-որ բան) ամեն օր: 24 ժամ կամ ավելի ոստիկանությունում պահվողներին պետք է հնարավորինս առաջարկվի ամենօրյա բացօթյա զբոսանք:

Ոստիկանության շատ տարածքներ, ուր այցելել են ԽԿԿ-ի պատվիրակությունները, չեն համապատասխանում այս նվազագույն պահանջներին: Դա հատկապես բացասական ազդեցություն է ունենում այն անձանց վրա, ովքեր հետագայում կանգնում են դատական իշխանությունների առջև. շատ հաճախ այդ անձինք դատավորին են ներկայանում մեկ կամ ավելի օր

[1] Խցերի չափսերի վերաբերյալ տես նաև 2-րդ Ընդհանուր հաշվետվության *(CPT/Inf (92) 3)* 43-րդ կետը:

անցկացրած կեղտոտ և չսարքավորված խցերում՝ հնարավորություն չունենալով ինչպես հարկն է հանգստանալ, սնվել ու լվացվել:

48. Ձերբակալվածների մասին հոգ տանելու ոստիկանության պարտականությունների մեջ է մտնում երաշխավորել նրանց *անվտանգությունն ու ֆիզիկական անձեռնմխելիությունը*: Հետևաբար, ազատազրկված անձանց պահման պայմանների նկատմամբ համապատասխան հսկողությունը ոստիկանության ստանձնած պարտականությունների անբաժան մասն է: Համարժեք քայլեր պետք է ձեռնարկվեն ապահովելու համար, որպեսզի ոստիկանության կողմից ձերբակալված անձինք մշտական հնարավորություն ունենան առանց դժվարության շփվելու ձերբակալվածներին պահելու վայրի անձնակազմի հետ:

Մի շարք դեպքերում ԽԿԿ-ի պատվիրակությունները հայտնաբերել են, որ ոստիկանության խցերը զգալիորեն հեռու են գտնվում ոստիկանության աշխատակիցների գտնվելու սովորական վայրերից, ինչպես նաև զուրկ են անհրաժեշտ միջոցներից (օրինակ՝ զանգի համակարգից), ինչը ձերբակալվածներին հնարավորություն կտար գրավելու ոստիկանության աշխատակիցների ուշադրությունը: Նման պայմաններում զգալի է այն բանի ռիսկը, որ տարբեր միջադեպերի (բռնություն ձերբակալվածների միջև, ինքնասպանության փորձեր, հրդեհներ և այլն) դեպքում օգնությունը ժամանակին չի հասնի:

49. ԽԿԿ-ն նաև իր մտավախություն է արտահայտել այն պրակտիկայի վերաբերյալ, որը նկատելի է որոշ երկրներում, երբ յուրաքանչյուր մասնագիտացված բաժին (թմրամիջոցներ, կազմակերպված հանցավորություն, ահաբեկչության դեմ պայքար) ոստիկանության շենքում ունի ձերբակալվածներին պահելու համար նախատեսված սեփական տարածք, որը համալրված տվյալ բաժնի աշխատակիցներով: Կոմիտեն համարում է, որ հարկ է հրաժարվել նման մոտեցումից հօգուտ *ձերբակալվածներին պահելու կենտրոնացված վայրի*՝ համալրված աշխատակիցների որոշակի անձնակազմով, ովքեր հատուկ պատրաստություն են անցել ձերբակալված անձանց պահելու վայրում գործառույթներ իրականացնելու համար: Նման մոտեցումը գրեթե միանգամայն նպաստավոր կլինի վատ վերաբերմունքի կանխարգելման տեսանկյունից: Այնուհետև, մասնագիտացված ստորաբաժանումները ձերբակալվածների վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականություններից ազատելը կարող է իր առավելություններն ունենալ կառավարման և նյութատեխնիկական ապահովման տեսանկյունից:

50. Վերջապես, **անկախ մարմնի կողմից ոստիկանության հաստատությունների ստուգումները** կարող են կարևոր նշանակություն ունենալ ոստիկանության կողմից պահվող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխարգելման գործում և, ավելի լայն առումով, օգնել ապահովելու ձերբակալման կրման բավարար պայմաններ: Առավել արդյունավետ լինելու համար նման մարմնի ներկայացուցիչների այցելությունները պետք է լինեն կանոնավոր և նախօրոք չհայտարարված, իսկ նշված մարմինները պետք է ունենան ձերբակալվածների հետ առանձին զրուցելու իրավունք: Բացի դրանից, նրանք պետք է ուսումնասիրեն բոլոր այն հարցերը, որոնք առնչվում են ազատությունից զրկված անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի հետ. ձերբակալման պահի գրանցումը, ձերբակալված անձանց իրենց իրավունքների մասին տեղեկացնելը և այդ իրավունքների իրական կենսագործումը (մասնավորապես՝ 40-43-րդ կետերում նշված երեք իրավունքները). հանցագործության մեջ կասկածվող անձանց հարցաքննությունը կարգավորող կանոնների պահպանումը. և կալանքի տակ պահելու նյութական պայմանները:

Նշված մարմնի եզրակացությունները պետք է ուղարկվեն ոչ միայն ոստիկանություն, այլ նաև ոստիկանությունից կախվածություն չունեցող այլ մարմիններ:

Փաստաբանի մատչելիությունը որպես վատ վերաբերմունքի կանխարգելման միջոց

Քաղվածք, 21-րդ Ընդհանուր հաշվետվություն [CPT/Inf (2011) 28]

18. Ոստիկանական ձերբակալման ենթարկված անձանց համար փաստաբանի մատչելիությունը վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիքն է: Նման հնարավորության առկայությունը զսպող ազդեցություն կունենա այն անձանց վրա, ովքեր հակված են դրսևորելու վատ վերաբերմունք ձերբակալված անձանց նկատմամբ: Բացի դրանից, փաստաբանն իրական հնարավորություն ունի ձեռնարկելու համապատասխան քայլեր, եթե վատ վերաբերմունք տեղի է ունեցել:

19. Լիարժեք արդյունավետ լինելու համար փաստաբանի մատչելիության իրավունքը պետք է երաշխավորված լինի անձին ազատությունից զրկելու առաջին իսկ պահից[1]: Իսկապես, ԽԿԿ-ն մեկ անգամ չէ որ պարզել է, որ ազատությունից զրկմանն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում է, որ ահաբեկման և ֆիզիկական բռնության ենթարկվելու ռիսկերն ամենամեծն են: Բացի դրանից, փաստաբանի մատչելիության իրավունքը պետք է կիրառվի անձին ազատությունից զրկելու առաջին իսկ պահից՝ անկախ այդ անձի հստակ իրավական կարգավիճակից. ավելի կոնկրետ՝ այդ իրավունքից օգտվելը չպետք է պայմանավորված լինի նրանով, թե արդյոք անձը պաշտոնապես ճանաչվել է «կասկածյալ»: Օրինակ՝ Եվրոպայում առկա շատ իրավական համակարգերում անձինք կարող են պարտավորեցվել ներկայանալ իրավապահ հաստատություն և գտնվել այնտեղ որոշակի ժամանակ «վկայի» կարգավիճակով կամ «ոչ պաշտոնական զրույցների նպատակով». ԽԿԿ-ն իր փորձից գիտի, որ այդ մարդիկ կարող են բախվել վատ վերաբերմունքի ենթարկվելու մեծ ռիսկի հետ:

20. Փաստաբանի մատչելիության իրավունք պետք է ունենա յուրաքանչյուր անձ, ով զրկվել է ազատությունից՝ անկախ իրավախախտման «նվազ» լինելուց, որում նրանք կասկածվում են: ԽԿԿ-ի այցելած բազմաթիվ երկրներում անձինք կարող են մի քանի շաբաթով զրկվել ազատությունից այսպես կոչված «վարչական» իրավախախտումների համար: Կոմիտեն ոչ մի արդարացում չի տեսնում նման անձանց փաստաբանի մատչելիության իրավունքից զրկելու համար: Բացի դրանից, ԽԿԿ-ն բազմիցս բախվել է այնպիսի իրավիճակների, երբ իրականում

[1] Իհարկե, կախված համապատասխան գործի հանգամանքներից, փաստաբանի մատչելիության իրավունքը կարող է գործել անգամ ավելի վաղ փուլում:

քրեական հանցագործության մեջ կասկածվող անձանց պաշտոնապես ձերբակալել որպես վարչական իրավախախտում կատարածների, որպեսզի խուսափեն քրեական հանցագործության մեջ կասկածվողների վրա տարածվող երաշխիքները կիրառելուց. որոշակի իրավախախտումների բացառումը փաստաբանի մատչելիության իրավունքի կրառման շրջանակից անխուսափելիորեն հանգեցնում է նման ռիսկերի:

21. Նույն կերպ, փաստաբանի մատչելիության իրավունքը պետք է կիրառվի անկախ նրանից, թե որքան «լուրջ է» այն իրավախախտումը, որի կատարման մեջ կասկածվում է ձերբակալված անձը: Իսկապես, հատկապես վտանգավոր հանցագործությունների մեջ կասկածվողները, կարող են դասվել այն անձանց շարքը, ովքեր ամենաշատն են կրում վատ վերաբերմունքի ենթարկվելու ռիսկը և այդ պատճառով հենց նրանց է ամենից շատ անհրաժեշտ փաստաբանի մատչելիությունը: Հետևաբար, ԽԿԿ-ն դեմ է այն միջոցներին, որոնք որոշակի ժամանակահատվածի ընթացքում նախատեսում են փաստաբանի մատչելիության պարբերաբար մերժում այն ձերբակալվածների համար, ովքեր կասկածվում են որոշակի կարգի իրավախախտումներ կատարելու մեջ (օրինակ, հակահաբեկչական օրենսդրությամբ նախատեսված իրավախախտումները): Այն հարցը, թե արդարացված են արդյոք փաստաբանի մատչելիության իրավունքի սահմանափակումները, պետք է քննարկվի յուրաքանչյուր դեպքի համար առանձին, այլ ոչ թե կանխորոշվի՝ կախված իրավախախտման որոշակի տեսակից[1]:

22. ԽԿԿ-ն ամբողջությամբ ընդունում է, որ բացառիկ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել որոշակի ժամանակահատվածով կասեցնել ձերբակալված անձի ընտրած փաստաբանի մատչելիությունը: Սակայն դա չպետք է հանգեցնի նրան, որ ողջ այդ ժամանակահատվածի ընթացքում փաստաբանի մատչելիության իրավունքը ամբողջությամբ մերժվի: Նման դեպքերում անհրաժեշտ է կազմակերպել մեկ այլ անկախ և վստահելի փաստաբանի մատչելիության ապահովումը, ով քննության իրավաչափ շահերի համար վտանգ չի ներկայացնի: Միանգամայն հնարավոր է նախապես ձեռք բերել բավարար պայմանավորվածություններ նման տեսակի իրավիճակի համար՝ խորհրդակցելով փաստաբանների տեղական միության կամ իրավաբանների ընկերակցության հետ:

---

[1] Այստեղ կարելի է վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը՝ Սալդուզն ընդդեմ Թուրքիայի գործով (27-ը նոյեմբերի 2008 թ.), որտեղ Դատարանը սահմանեց, որ «…հոդված

23. Ոստիկանական ձերբակալման ընթացքում փաստաբանի մատչելիության իրավունքը պետք է ներառի նրա հետ առանձին հանդիպելու իրավունքը: Նախատեսված լինելով որպես վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիք՝ (տարբերվում է արդար դատաքննության ապահովման միջոցներից)՝ ակնհայտորեն կարևոր է ձերբակալված անձի հետ ուղղակի ֆիզիկական շփման մեջ փաստաբանի գտնվելը: Դա ճշգրիտ տվյալ անձի ֆիզիկական և հոգեբանական վիճակին գնահատական տալ միակ միջոցն է: Նմանապես, եթե հանդիպումը փաստաբանի հետ մասնավոր բնույթ չի կրում, ապա ձերբակալված անձն իրեն ազատ չի զգա, որպեսզի տեղեկացնի, թե ինչպես են իր հետ վերաբերվում: Եթե համաձայնություն կա այն մասին, որ բացառիկ դեպքերում այդ փաստաբանը կարող է նաև լինել ձերբակալված անձի կողմից չընտրված փաստաբան, այլ մեկը, ով, ըստ նախապես պայմանավորված ընթացակարգի, փոխարինում է նրան, ապա ԽԿԿ-ն ոչ մի անհրաժեշտություն չի տեսնում չպահպանելու փաստաբանի և համապատասխան անձի հանդիպման գաղտնիությունը:

24. Փաստաբանի մատչելիության իրավունքը պետք է ներառի նաև փաստաբանի ներկա գտնվելը ոստիկանության կողմից իրականացվող ցանկացած հարցաքննությանը և դրան միջամտելուհնարավորությունը: Բնականաբար, դա չպետք է ոստիկանության համար խոչընդոտ հանդիսանա փաստաբանի մատչելության իր իրավունքն իրացրած՝ ձերբակալված անձին անհապաղ հարցաքննելու համար, անգամ մինչև փաստաբանի ժամանելը, եթե դա է պահանջում քննվող գործի բացառիկ հրատապությունը. դա չի բացառում նաև փաստաբանին փոխելու հնարավորությունը, եթե վերջինս խանգարում է հարցաքննության պատշաճ անցկացմանը: Ընդ որում, նման իրավիճակներում ոստիկանությունը պետք է հաշվետու լինի իր գործողությունների համար:

25. Վերջապես, որպեսզի փաստաբանի մատչելիության իրավունքը ոստիկանական ձերբակալման ընթացքում գործնականորեն լինի լիովին արդյունավետ, քրեական դատավարության արդեն իսկ այդ վաղ փուլում պետք է նախատեսված լինի համապատասխան դրույթ այն անձանց հետ կապված, ովքեր ի վիճակի չեն վճարելու փաստաբանի ծառայությունների համար:

II. Բանտարկություն

Բանտեր

Քաղվածք 2-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (92) 3]

44. Առաջին հերթին պետք է հատկապես նշել, որ ազատազրկման որևէ վայր այցելելիս ԽԿԿ-ն պարտավոր է ուսումնասիրել բազմաթիվ հարցեր: Նա, իհարկե, հատուկ ուշադրություն է դարձնում բանտերի անձնակազմի կողմից ազատազկված անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի վերաբերյալ դեպքերին, թեև ԽԿԿ-ի լիազորությունները ընդգրկում են կալանքի պայմանների հետ կապված բոլոր հարցերը: Դաժան վերաբերմունքը կարող է ընդունել բազմաթիվ ձևեր, որոնցից շատերը տեղի են ունենում ոչ թե կանխամտածված, այլ կազմակերպչական թերությունների կամ անբավարար միջոցների հետևանքով: Հետևաբար, ազատազրկման վայրերում կյանքի ընդհանուր մակարդակը մեծ նշանակություն ունի ԽԿԿ-ի համար: Կյանքի այդ մակարդակը մեծապես կախված է ազատազրկյալներին առաջարկվող գործունեության ձևերից և նրանց ու անձնակազմի միջև եղած հարաբերությունների ընդհանուր վիճակից:

45. ԽԿԿ-ն մանրակրկիտ ուսումնասիրում է ազատազրկման վայրում իշխող մթնոլորտը: Բանտարկյալների և աշխատակիցների միջև կառուցողական, այլ ոչ թե հակադրական հարաբերությունների խթանումը կնպաստի յուրաքանչյուր ազատազրկման վայրի համար բնորոշ լարվածության նվազեցմանը և, բացի այդ, զգալիորեն կնպաստի դաժան երևույթների և դրանց հետ կապված դաժան վերաբերմունքի դրսևորման հավանականության իջեցմանը: Հակիրճ ասած, ԽԿԿ-ն ցանկանում է տեսնել, թե վերահսկողության սահմանափակման միջոցները ինչպես են համակցվում հաղորդակցության և խնամքի հետ: Այսպիսի մոտեցումը՝ ընդհանրապես չի խթարի հաստատության անվտանգությունը, այլ ընդհակառակը՝ մեծապես կնպաստի նրա ուժեղացմանը:

46. Բանտերի գերբնակեցման հարցը ուղղակիորեն վերաբերում է ԽԿԿ-ի լիազորություններին: Բանտերում նախատեսվածից ավելի մեծ թվով բանտարկյալներ պահելու անհրաժեշտությունը ծայրահեղ վատ է ազդում այնտեղ մատուցվող բոլոր ծառայությունների և իրականացվող միջոցառումների վրա. նվազեցնում է, և հավանաբար զգալիորեն, բանտերում կյանքի ընդհանուր մակարդակը: Ավելին, բանտի կամ նրա որևէ մասի գերբնակեցման աստիճանը ֆիզիկական առումով ինքնստինքյան կարող է լինել անմարդկային կամ նվաստացուցիչ:

47. Ազատազրկված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են նրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե հետաքննության տակ գտնվողների: ԽԿԿ-ն նշում է, որ բազմաթիվ քննչական հիմնարկներում կալանավորվածների գործողությունները սահմանափակ են: Այսպիսի հիմնարկներում ռեժիմային միջոցառումների կազմակերպումը հասարակ խնդիր չէ, քանի որ այստեղ բավականին արագ փոխվում է կալանքի տակ գտնվող անձանց կազմը: Պարզ է, որ այստեղ չեն կարող իրագործվել այնպիսի անհատական վերաբերմունքի ծրագրեր, որոնք ցանկալի կլիներ կիրառել դատապարտված բանտարկյալների համար նախատեսված հիմնարկներում: Այնուամենայինով, կալանավորվածներին չի կարելի շաբաթներով ու հավանաբար, ամիսներով անգործության մատնել իրենց խցերում, եթե անգամ խցերում առկա են բավականին լավ կենսական պայմաններ: ԽԿԿ-ի կարծիքով անհրաժեշտ է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք քննչական հիմնարկներում գտնվող կալանավորվածներին հնարավորություն կտան օրվա որոշ մասը (8 ժամ և ավելին), անցկացնել իրենց խցերից դուրս և զբաղվել տարբեր բնույթի օգտակար գործունեությամբ: Դատապարտյալների համար նախատեսված հիմնարկներում ռեժիմը պետք է շատ ավելի բարենպաստ լինի:

48. Հատուկ պետք է նշել բացօդյա պայմաններում անցկացվող ժամանակի կարևորությունը: Ազատազրկված անձանց ամենօրյա բացօդյա առնվազն մեկժամյա զբոսանքի պահանջը ամենուր ընդունված առաջնահերթ իրավունքի երաշխիք է(նախընտրելի է, որ սա կազմի միջոցառումների ավելի լայն ծրագրի մի մաս): ԽԿԿ-ն ցանկանում է շեշտել, որ **բոլոր ազատազրկված անձինք առանց բացառության** (այդ թվում նաև խցերում որպես պատիժ մեկուսացվածները) պետք է ամեն օր հնարավորություն ունենան որոշ ժամանակ անցկացնել դրսում: Նմանապես ակնհայտ է, որ բացօդյա տարածքները պետք է լինեն բավարար չափսի և հնարավորինս պաշտպանված վատ եղանակից:

49. Համապատասխան զուգարանների մատչելիությունը և հիգիենայի բավարար ստանդարտների ապահովումը կենցաղային միջավայրի բաղադրիչ մասերն են:

Այս առումով ԽԿԿ-ն պետք է նշի, որ չի խրախուսում որոշ երկրներում տեղ գտած պրակտիկան, երբ ազատազրկված անձինք խցերում բնական կարիքները բավարարելու համար օգտվում են դույլերից (որոնք հետագայում թափվում են որոշակի ժամերին): Զուգարանը պետք է տեղադրված լինի կամ խցերում (ցանկալի է որպես առանձին սանհանգույց), կամ պետք է առկա լինեն միջոցներ, որոնք հնարավորություն կտան զուգարանից օգտվելու կարիք ունեցող ազատազրկված անձանց անհապաղորեն ցանկացած պահին (այդ թվում և գիշերը) դուրս գալ խցից:

Բացի այդ, ազատազրկված անձինք պետք է ունենան համապատասխան հնարավորություն օգտվելու ցնցուղներից կամ լողանալու համար նախատեսված այլ սարքավորումներից: Նմանապես ցանկալի է, որ խցերում լինի հոսող ջուր:

50. ԽԿԿ-ն նաև նշում է, որ իրեն հատուկ անհանգստություն է պատճառում այն հանգամանքը, որ նույն հիմնարկում միաժամանակ տեղ են գտնում այնպիսի փաստեր, ինչպիսիք են խցերում մարդկանց չափից ավելի քանակը, ռեժիմային գործունեության անբավարարությունը և սանհանգույցների ոչ բավարար մատչելիությունը: Այսպիսի պայմանների համընդհանուր հետևանքները կարող են ծայրահեղ կործանարար լինել ազատազրկված անձանց համար:

51. Ազատազրկված անձանց համար շատ կարևոր է բավարար շփումը արտաքին աշխարհի հետ: Առաջին հերթին կալանավորված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերությունները իր ընտանիքի և մտերիմ բարեկամների հետ: Ղեկավար սկզբունք պետք է դառնա՝ արտաքին աշխարհի հետ շփման աջակցությունը: Այդպիսի շփման որևէ սահմանափակում պետք է հիմնավորված լինի միմիայն անվտանգության շահերի խելամիտ պաշտպանությամբ կամ անբավարար միջոցներով:

Այս առումով Կոմիտեն ցանկանում է ընդգծել, որ անհրաժեշտ է դրսևորել որոշակի ճկունություն այցելությունների ու հեռախոսային շփումների կարգի կիրառման հարցում այն ազատազրկված անձանց նկատմամբ, ում ընտանիքները բնակվում են հեռավոր վայրերում (ինչը դժվարացնում է կանոնավոր այցելությունները): Նման կալանավորված անձանց՝ օրինակ. կարելի է թույլ տալ միացնելու այցելությունների համար հատկացված ժամանակահատվածները և/ կամ իրենց ընտանիքների հետ հեռախոսային շփման համար ավելի բարենպաստ հնարավորություններ տրամադրել:

52. Կոմիտեն ուշադրություն է դարձնում այն հատուկ խնդիրների վրա, որոնք կարող են առաջանալ կալանքի տակ գտնվող որոշակի կարգի անձանց մոտ. օրինակ՝ կանանց, անչափահասների և օտարերկրացիների մոտ:

53. Բանտերի անձնակազմը, որոշ դեպքերում ստիպված է լինում կիրառել ուժ բռնության գործողություններ կատարող բանտարկյալների վերահսկողության համար, այլ ծայրահեղ դեպքերում կարող է դիմել նույնիսկ ֆիզիկական ազդեցության միջոցներին: Այդպիսի իրավիճակներում, ամենայն հավանականությամբ, կարող է տեղի ունենալ դաժան վերաբերմունք ազատազրկված անձանց նկատմամբ, որը և պահանջում է իրավունքների պաշտպանության հատուկ երաշխիքներ:

Կալանքի տակ գտնվող անձինք, որոնց դեմ օգտագործվել է որևէ ֆիզիկական ուժի միջոց, պետք է իրավունք ունենան անմիջապես հետազոտվելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բուժում ստանալու բժշկի կողմից: Այս բժշկական զննումը պետք է անցկացվի ոչ բուժական անձնակազմի լսողությունից, ցանկալի է նաև տեսադաշտից դուրս: Բուժզննման արդյունքները (այդ թվում ազատազրկված անձի կողմից արված գործին վերաբերող բոլոր հայտարարությունները և բժշկի եզրակացությունները) պետք է պաշտոնապես արձանագրվեն և տրամադրվեն այդ կալանվորված անձին: Հազվադեպ դեպքերում, երբ պահանջվում է ֆիզիկական ազդեցության միջոցների կիրառում, տվյալ ազատազրկված անձն անընդհատ պետք է գտնվի համապատասխան հսկողության տակ: Բացի դրանից, ազդեցության միջոցների կիրառումը առաջին իսկ հնարավորության դեպքում պետք է անհապաղ կասեցվի. նրանք երբևիցե չպետք է կիրառվեն կամ նրանց կիրառումը չպետք է երկարաձգվի պատժիչ նպատակով: Վերջապես, ազատազրկված անձանց դեմ ուժի օգտագործման յուրաքանչյուր դեպք պետք է գրանցվի:

54. Բողոքների քննարկման և հսկողության արդյունավետ կարգը բանտերում դաժան վերաբերմունքի դեմ ուղղված իրավունքի հիմնարար երաշխիքն է: Բանտարկյալները պետք է բողոք ներկայացնելու ազատ հնարավորություն ունենան և ուղղիչ համակարգում և նրանից դուրս և նմանապես հնարավորություն ունենան կապի մեջ մտնել համապատասխան մարմնի հետ գաղտնիության պայմաններում: Կոմիտեն հատուկ նշանակություն է տալիս յուրաքանչյուր ուղղիչ հիմնարկ մշտական հիմունքներով կատարվելիք այցելություններին՝ անկախ մարմնի կողմից (օրինակ այցելուների խորհրդի կամ վերահսկիչ դատավորի), որը լիազորված է քննելու, (և անհրաժեշտության դեպքում,համապատասխան միջոցներ ձեռնարկելու) ազատազրկված անձանց բողոքները, և տեսչական զննության ենթարկելու հաստատության տարածքները: Այսպիսի մարմինները կարևոր դեր են խաղում հիմնարկների վարչակազմի և տվյալ ազատազրկված անձի կամ ընդհանրապես ազատազրկված անձանց միջև ծագած տարաձայնությունների վերացման գործում:

55. Ինչպես ազատազրկված անձանց, այնպես էլ անձնակազմի շահերից ելնելով անհրաժեշտ է պաշտոնապես սահմանել և գործնականում կիրառել հատուկ կարգապահական ընթացակարգեր: Այդ բնագավառում յուրաքանչյուր անորոշություն կարող է հանգեցնել ոչ պաշտոնական (և անվերահսկելի) համակարգերի զարգացման հավանականությանը: Կարգապահական ընթացակարգերը բանտարկյալների համար պետք է նախատեսեն իրավունք՝ արտահայտելու իրենց կարծիքը խախտումների վերաբերյալ,որոնցում նրանք մեղադրվում են և բողոք ներկայացնելու վերադաս մարմնին՝ իրենց նկատմամբ ընդունված որևէ պատժամիջոցի դեմ:

Պաշտոնական կարգապահական ընթացակարգերի հետ մեկտեղ հաճախ գոյություն ունեն այլ ընթացակարգեր ըստ որի, ազատազրկված անձը ոչ կամավոր ձևով կարող է մեկուսացվել այլ բանտարկյալներից՝ կարգապահության և անվտանգության նպատակներով (օրինակ՝ հիմնարկում կարգ ու կանոն հաստատելու նպատակով): Այս ընթացակարգերին պետք է նաև զուգակցեն իրավունքների պաշտպանության երաշխիքները: Ազատազրկված անձը պետք է տեղեկացվի իր դեմ կիրառվող պատժամիջոցի պատճառների մասին, եթե անվտանգության պահանջները այլ բան չեն նախատեսում[1], նրանց պետք է հնարավորություն տրվի արտահայտելու իրենց տեսակետը այս հարցի վերաբերյալ և համապատասխան մարմիններին այդ պատժամիջոցի դեմ բողոք ներկայացնելու:

56. ԽԿԿ-ն հատուկ ուշադրություն է դարձնում այն ազատազրկված անձանց վրա, ովքեր այս կամ այն պատճառով (կարգապահական նպատակներով, «վտանգ» ներկայացնող կամ «ոչ կարգապահ» վարքի հետևանքով, քրեական հետաքննության շահերից ելնելով, իրենց իսկ խնդրանքով) գտնվում են մեկուսի բանտարկությանը համազոր պայմաններում:

Համաչափության սկզբունքը պահանջում է՝ տվյալ գործից բխող պահանջների և մեկուսի բանտարկության ռեժիմի կիրառման միջև ստեղծել հավասարակշռություն, այլապես այդ ռեժիմը կարող է ունենալ բավականին կործանարար հետևանքներ տվյալ անձի համար: Որոշ պարագաներում մեկուսի բանտարկությունը կարող է համարժեք լինել անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքին: Մեկուսի բանտարկության բոլոր ձևերը, ամեն դեպքում պետք է լինեն հնարավորինս կարճատև:

Հարկադիր, կամ իր խնդրանքով այսպիսի ռեժիմի կիրառման դեպքում իրավունքների պաշտպանության էական երաշխիք կարող է լինել, բժշկական հետազոտություն կատարելու նպատակով, բժշկի այցելության անհապաղ կազմակերպումը այն դեպքերում, երբ դա կատարվում է տվյալ ազատազրկված անձի կամ նրա դիմումով ազատազրկման վայրի աշխատակցի խնդրանքով: Այս հետազոտության արդյունքները և ազատազրկված անձի ֆիզիկական և հոգեկան վիճակի մասին տվյալները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև մեկուսացման երկարաձգման հնարավոր հետևանքները պետք է արձանագրվեն և գրավոր ներկայացվեն իրավասու մարմիններին:

---

[1] Այս պահանջը հետագայում վերաձևակերպվել է հետևյալ կերպ. ազատազրկված անձը պետք է գրավոր տեղեկացվի իր նկատմամբ կիրառվող միջոցների պատճառների մասին(պարզ է, որ նշված պատճառները կարող են չներառել այն մանրամասները, որոնք անվտանգության պահանջներից ելնելով՝ թաքցվում են ազատազրկված անձից):

57. ԽԿԿ-ի համար հետաքրքրություն է ներկայացնում նաև ոչ կարգապահ բանտարկյալների այլ վայր տեղափոխման պրակտիկան: Որոշ ազատազրկված անձանց ծայրահեղ դժվար է վերահսկել, երբ նրանց այլ վայր տեղափոխելու անհրաժեշտություն կա: Ազատազրկված անձի տեղից տեղ անընդհատ տեղափոխումը կարող է ծայրահեղ վատ հետևանքներ ունենալ նրա հոգեկան և ֆիզիկական վիճակի վրա: Բացի այդ, այդպիսի իրավիճակում գտնվող ազատազրկված անձի համար չափազանց դժվար է պահպանել բավարար շփումներ իր ընտանիքի և փաստաբանի հետ: Հաճախակի տեղափոխումների համընդհանուր ազդեցությունը ազատազրկված անձի վրա որոշակի պարագաներում կարող է համարժեք լինել անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքին:

* * *

59. ԽԿԿ-ն ցանկանում է ընդգծել, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի իրավապահ անձնակազմի[1] պատրաստումը (որը պետք է ներառի մարդու իրավունքների հարցերի ուսուցումը՝ տես նաև Միացյալ Ազգերի Կազմակերպության խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, հոդված10): Ակնհայտ է, որ ազատազրկված անձի նկատմամբ դաժան վերաբերմունքի դեմ գոյություն չունի ավելի լավ երաշխիք, քան պատշաճ ձևով պատրաստված ոստիկանության կամ բանտի աշխատակիցը: Բարձր որակավորում ունեցող աշխատակիցները կկարողանան հաջողությամբ կատարել իրենց պարտականությունները, առանց դաժան վերաբերմունքի դրսևորման և պաշտպանել ոստիկանությունում ու բանտերում պահվող անձանց իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքները:

60. Այս առումով, ԽԿԿ-ն գտնում է, որ իրավապահ անձնակազմի կադրերի ընտրության ժամանակ հիմնական չափանիշ պետք է հանդիսանա մարդկանց հետ շփվելու կարողությունը և ուսուցման ընթացքում զգալի շեշտ պետք է դրվի, մարդու արժանապատվության հարգանքի վրա հիմնված, միջանձնական շփման հմտությունների զարգացման վրա: Այդպիսի հմտություններին տիրապետելը ոստիկանին,կալանավայրի կամ ուղղիչ հիմնարկի աշխատակցին հաճախ հնարավորություն կտա լիցքաթափել իրավիճակը, որը հակառակ դեպքում կարող է վերածվել բռնության և, ավելի լայն իմաստով,կբերի լարվածության նվազեցմանը և կյանքի որակի բարձրացմանը ոստիկանական բաժանմունքներում,

[1] Այս հաշվետվությունում «իրավապահ անձնակազմ» հասկացությունը ընդգրկում է ոստիկանության և ուղղիչ հիմնարկների ծառայողներին:

կալանավայրերում և ուղղիչ հիմնարկներում՝ ի օգուտ բոլոր շահագրգռված կողմերի[1]:

Քաղվածք 7-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (97) 10]

12. ԽԿԿ-ն 1996թ. կատարած մի շարք այցելությունների ընթացքում բազմիցս բախվել է **բանտերի գերբնակեցման** խնդրի հետ, երևույթ, որը տառացիորեն զարմացրեց եվրոպական շատ երկրների ուղղիչ համակարգերին: Գերբնակեցումը հաճախ հատկապես բարձր է այն կալանավայրերում, որոնք օգտագործվում են կալանքի տակ վերցված կալանավորվածների (այսինքն անձանց, որոնք սպասում են դատի) պահման համար, սակայն ԽԿԿ-ի դիտումներով այս երևույթը առկա է շատ երկրների բանտային համակարգերում:

13. Ինչպես ԽԿԿ-ն նշում է իր 2-րդ Ընդհանուր հաշվետվությունում (տես CPT/Inf (92) 3. կետ 46) բանտերի գերբնակեցման խնդիրը ուղղակիորեն վերաբերում է Կոմիտեի գործունեությանը:

Երբ բանտը գերբնակեցված է, ազատազրկված անձինք պահվում են նեղ ոչ հիգիենիկ զետեղարաններում. այդպիսի պայմաններում գտնվելը բացառում է առանձնանալու հնարավորությունը (նույնիսկ այնպիսի կենսական պահանջների համար, ինչպիսին է՝ զուգարանը), կրճատվում է խցից դուրս գտնվելու հետ կապված միջոցառումների թիվը, որը բացատրվում է անձնակազմի և անհրաժեշտ սարքավորումների անբավարարությամբ,առողջապահական ծառայությունների գերբեռնվածությամբ, աճող լարվածությամբ և բռնության դրսևորմամբ ազատազրկված անձանց, ինչպես նաև վերջիններիս և անձնակազմի հարաբերությունների միջև: Այս ցանկը ամենևին էլ լրիվ չէ:

ԽԿԿ-ն բազմիցս ստիպված է եղել հայտարարել, որ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող պահելու պայմանները բանտերի գերբնակեցման կործանարար ազդեցության հետևանքն են:

14. Որոշ երկրներ բանտերի գերբնակեցման խնդրի լուծման համար գնում են ուղղիչ հիմնարկներում տեղերի քանակի ավելացման ճանապարհով:ԽԿԿ-ն հեռու

[1] ԽԿԿ-ն քաջալերում է ազգային իշխանություններին հնարավորություններ ստեղծել ընդգրկելու մարդու իրավունքների պաշտպանության հասկացությունները գործնական մասնագիտական վերապատրաստման ծրագրերի մեջ, որոնք ուղղված են մեծ վտանգ պարունակող իրավիճակների հաղթահարմանը, ինչպիսիք են՝ քրեական հանցանքի մեջ կասկածվող անձանց ձերբակալումը և հարցաքննումը. սա կլինի ավելի արդյունավետ, քան մարդու իրավունքների մասին առանձին դասընթացները:

է այն մտքից, որ միայն լրացուցիչ տեղերի ստեղծմամբ կարելի է լուծել այդ խնդիրը երկարատև հեռանկարում: Իրականում, մի շարք եվրոպական երկրներում, որոնք նախաձեռնել էին իրականացնել ուղղիչ հիմնարկների ընդլայնման շինարարության ծրագիրը, պարզվեց, որ ուղղիչ հիմնարկների բանտարկյալներ ընդունելու կարողության աճի հետ միասին աճում է նաև բանտարկյալների թիվը: Ընդհակառակը, մի շարք պետությունների վարած քաղաքականությունը՝ ուղղված բանտեր ուղարկվող մարդկանց թվի կրճատմանը կամ փոփոխմանը, մեծ ավանդ մտցրեց բանտում պահվող մարդկանց քանակի կառավարելի մակարդակի պահպանման գործում:

15. Բանտերի գերբնակեցման խնդիրը բավականին լուրջ խնդիր է, որը այս երևույթի դեմ ռազմավարություն մշակելու համար պահանջում է եվրոպական մակարդակով համագործակցություն: Այդ պատճառով ԽԿԿ-ին ուրախացնում է այն հանգամանքը, որ Հանցագործությունների խնդիրների Եվրոպական կոմիտեի (ՀԽԵԿ) շրջանակներում այդ ուղղությամբ աշխատանք է սկսվել, և այդ աշխատանքի հաջող ավարտը կդիտարկվի որպես առաջնահերտ խնդիր[1]

Քաղվածք 11-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2001) 16]

Անձնակազմի և ազատազրկված անձանց հարաբերությունները

26. Մարդասիրական ՈՒղղիչ հիմնարկների համակարգի անկյունաքարը, անկասկած, հանդիսանում է ճիշտ ձևով ընտրված և համապատասխան ուսուցում ստացած կալանավայրի անձնակազմը, որը կարողանում է հմտորեն կառուցել իր հարաբերությունները ազատազրկված անձանց հետ, և որի համար իր աշխատանքը նաև կոչում է: Ազատազրկված անձանց հետ պոզիտիվ հարաբերությունների կառուցումը այդ կոչման հիմնական գործոններից մեկն է:

Ցավոք սրտի, ԽԿԿ-ն հաճախ առնչվում է այնպիսի դեպքերի հետ, երբ անձնակազմի և ազատազրկված անձանց հարաբերությունները կրում են ձևական և ոչ անմիջական բնույթ. անձնակազմը դրսևորվում է անհոգի վերաբերմունք ազատազրկված անձանց նկատմամբ և նրանց հետ հաղորդակցվելը համարում իր աշխատանքի համար երկրորդական գործ: Այս մոտեցման համար բնորոշ են ԽԿԿ-ի կողմից հաճախ հանդիպող հետևյալ դեպքերը՝ ազատազրկված անձանց պարտադրում են կանգնել դեմքով դեպի պատը և սպասել մինչ իրենց կմոտենան բանտի աշխատակիցները կամ կանցնեն այցելուները, հիմնարկի ներսում

[1] 1990թ. սեպտեմբերի 30-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունել է թիվ R (99) 22 Հանձնարարականը՝ բանտերի գերբնակեցման և բանտարկյալների թվի աճի մասին:

տեղաշարժվելիս ազատազրկված անձանցից պահանջում են գլուխները կախել, իսկ ձեռքերը պահել մեջքի ետևում, հսկիչները մահակները պահում են ցուցադրական և նույնիսկ վրդովեցուցիչ ձևով: Անվտանգության տեսակետից այսպիսի գործողությունների որևէ անհրաժեշտություն չկա և նրանք բոլորովին չեն նպաստում անձնակազմի և ազատազրկված անձանց հարաբերություններին:

Ազատազրկման վայրերի անձնակազմերի արհեստավարժությունը պահանջում է, որ նրանք, ուշադրություն դարձնելով անվտանգության և կարգապահության հարցերին, միաժամանակ, ազատազրկված անձանց հետ պատշաճ և մարդկայնորեն վարվելու ունակություն ունենան: Այս առումով բանտերի վարչակազմը պետք է քաջալերի անձնակազմին՝ չափավոր վստահությամբ վերաբերվել բանտարկյալների հետ, ակնկալելով, որ նրանք իրենց պետք է պահեն ինչպես հարկն է: Անձնակազմի և ազատազրկված անձանց կառուցողական պոզիտիվ հարաբերությունների զարգացումը ոչ միայն կնվազեցնի դաժան վերաբերմունքի հավանականությունը,այլև կուժեղացնի վերահսկողությունն ու անվտանգությունը: Վերջինս ավելի կկարևորի բանտերի անձնակազմի աշխատանքը:

Անձնակազմի և ազատազրկված անձանց պոզիտիվ հարաբերությունների ապահովումը մեծապես կախված է ազատազրկված անձանց պահման և իրենց գործունեության համար տրամադրվող տարածքներում յուրաքանչյուր, տվյալ պահին անհրաժեշտ անձնակազմի համապատասխան քանակի առկայությունից: ԽԿԿ-ի պատվիրակությունները հաճախ գտնում են, որ այդ պայմանը չի ապահովվում: Անձնակազմի ոչ բավարար քանակը և աշխատանքային հերթափոխի որոշակի համակարգը նվազեցնում է ազատազրկված անձանց հետ անմիջական շփման հնարավորությունները և, անկասկած, արգելք հանդիսանում պոզիտիվ հարաբերությունների զարգացման համար. ընդհանուր առմամբ դրանք ստեղծում են ոչ ապահով միջավայր և՛ անձնակազմի, և՛ ազատազրկված անձանց համար:

Հարկ է նաև նշել, որ անբավարար դրույքաչափերի դեպքում տվյալ հիմնարկում անվտանգության և ռեժիմային կարգի անհրաժեշտ մակարդակի ապահովման համար կարող է արտաժամյա աշխատանքների զգալի քանակի անհրաժեշտություն առաջանալ: Այդպիսի իրավիճակը, ամենայն հավանականությամբ, կարող է անձնակազմի մոտ ուժեղ ստրեսներ առաջացնել, որը կբերի ժամանակից շուտ ուժերի սպառմանը: Մի իրավիճակ, որը հավանաբար կնպաստի յուրաքանչյուր ուղղիչ հիմնարկի մթնոլորտի լարվածության բարձրացմանը:

Բռնության դեպքեր ազատազրկված անձանց միջև

27. Անձնակազմի պարտականությունն է հոգալ իրենց տնօրինության տակ գտնվող անձանց մասին, որը նաև նշանակում է պատասխանատվություն՝ պաշտպանելու ազատազրկված անձանց միմյանց նկատմամբ բռնության արտահայտություններից: Բռնության դեպքերը բանտարկյալների միջև, փաստորեն, սովորական երևույթ են բոլոր ուղղիչ հիմնարկների համակարգերում: Բռնություններն իրենց մեջ ներառում են նման երևույթների մի լայն հավաքածու՝ սկսած հետապնդման թաքուն ձևերից մինչև ակնհայտ ահաբեկումը և ֆիզիկական լուրջ հարձակումները:

Ազատազրկված անձանց միջև բռնության երևույթի կանխումը պահանջում է, որ բանտի անձնակազմը հնարավորություն ունենա, այդ թվում նաև պաշտոնադրույքների մակարդակների ճիշտ բաշխման շնորհիվ, պատշաճ ձևով իրագործելու լիազորությունները և կատարելու իր առջև դրված վերահսկողական խնդիրները: Անձնակազմը պետք է զգոնություն ցուցաբերի տագնապալի երևույթների նշանների առկայության նկատմամբ և կարողանա հաստատակամությամբ և անհրաժեշտության դեպքում պատրաստակամությամբ ու մասնագիտորեն միջամտել: Այս կոնտեքստում որոշիչ գործոն է հանդիսանում, անվտանգության և խնամքի հասկացությունների վրա հիմնված, անձնակազմի և ազատազրկված անձանց միջև պոզիտիվ հարաբերությունների առկայությունը, որը մեծ մասամբ կախված է միջանձնական հաղորդակցման համապատասխան հմտություններին տիրապետող անձնակազմից: Բացի այդ, ղեկավարությունը պետք է ամենայն պատրաստակամությամբ օժանդակի անձնակազմին իր լիազորությունների իրականացման գործում: Շատ հավանական է, որ անհրաժեշտ կլինի ձեռնարկել կոնկրետ իրավիճակին համապատասխանող անվտանգության հատուկ միջոցներ (այդ թվում նաև խուզարկություններ անցկացնելու արդյունավետ ընթացակարգեր:). թեև այս միջոցները կարող են լրացնել միայն վերոհիշյալ հիմնական հրամայական պահանջները: Բացի դրանից, ուղղիչ համակարգը պետք է լուծի ազատազրկված անձանց համապատասխան դասակարգման և բաշխման հարցը:

Հատկապես բարձր է հավանականությունը, որ բռնությունների կենթարկվեն այն ազատազրկված անձինք, որոնք կասկածվում կամ մեղադրված են սեռական հանցագործությունների մեջ: Այդպիսի գործողությունների կանխարգելումը միշտ բարդ խնդիր է: Այս խնդիրը հաճախ լուծում են այդ անձանց մյուս կալանավորվածներից առանձնացնելով: Սակայն այս «հարաբերական» անվտանգությունը կարող է վատ հետևանքներ ունենալ ազատազրկված անձանց համար, քանի որ նրանց համար նախատեսված միջոցառումների ծրագրերը շատ ավելի սահմանափակ են, քան սովորական ռեժիմով իրականացվող ծրագրերը: Հարցի մեկ այլ լուծում է՝ սեռական հանցագործությունների մեջ կասկածվող կամ մեղադրվող ազատազրկված անձանց տեղավորումը տվյալ հիմնարկի տարբեր

մասերում: Այսպիսի մոտեցման հաջող իրականացման համար պետք է ստեղծել անհրաժեշտ մթնոլորտ, որը ազատազրկված անձանց, ինչպես հարկն է, հնարավորություն կտա ինտեգրացվել սովորական խցերում պահվող անձանց հետ: Ուղղիչ հիմնարկների անձնակազմը պետք է, մասնավորապես, բարեխղճորեն և հաստատակամությամբ վերաբերվի թշնամության կամ հետապնդման նշանների դրսևորմանը: Երրորդ մոտեցումն այն է, որ ազատազրկված անձանց կարելի է տեղափոխել մի այլ հիմնարկ, միաժամանակ ձեռնարկելով այնպիսի միջոցներ, որոնց նպատակն է թաքցնել իրենց կողմից կատարված հանցագործությունների բնույթը: Այս մոտեցումներից յուրաքանչյուրը ունի իր առավելությունները և թերությունները, և ԽԿԿ-ն չի փորձում պաշտպանել այս մոտեցումներից որևէ մեկը, հակադրելով այդ մոտեցումները միմյանց: Մոտեցման ընտրության որոշումը, իրոք, հիմնականում կախված է յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքներից:

Բանտերի գերբնակեցումը

28. Բանտերի գերբնակեցման երևույթը ամբողջ Եվրոպայով մեկ շարունակում է քայքայել ուղղիչ համակարգերը և լրջորեն ձախողել ազատազրկված անձանց պահման պայմանների բարելավման փորձերը: Գերբնակեցման բացասական ազդեցության հետևանքները արդեն լուսաբանված են նախորդ Ընդհանուր հաշվետվություններում[1]:Քանի որ ԽԿԿ-ի գործունեության շրջանակները տարածվել են Եվրոպայի ամբողջ մայրցամաքով, Կոմիտեն հայտնաբերել է, որ ազատազրկման ծավալները շատ բարձր են, որի պատճառով բանտերը գերբնակեցված են: Միայն հանցագործության բարձր մակարդակով չի կարելի համոզեցուցիչ բացատրություն տալ այն փաստին, թե ինչու՞ է պետությունն ազատազրկում այդքան մեծ թվով քաղաքացիների: Այս երևույթի համար մասամբ պատասխանատու են իրավապահ և դատական մարմինների աշխատակիցները:

Այս պարագաներում հարցը հնարավոր չի լինի լուծել չափից ավելի գումարներ ծախսելով ուղղիչ հիմնարկների վրա: Դրա փոխարեն պետք է վերանայել ներկայիս գործող կալանքի տակ պահվելուն վերաբերող օրենսդրությունն ու իրավակիրառական պրակտիկան, ինչպես նաև ազատազրկում չնախատեսող դատավճիռների ցանկը: Հենց այս մոտեցումն էլ պաշտպանում է Նախարարների կոմիտեի թիվ R (99) 22 հանձնարարականը բանտերի գերբնակեցման և բանտարկյալների թվի աճի մասին: ԽԿԿ-ն մեծ հույսեր ունի, որ այդ կարևոր փաստաթղթում շարադրված սկզբունքները իրոք կկիրառվեն անդամ պետությունների կողմից. այս հանձնարարականի կատարումը պետք է անմիջականորեն վերահսկվի Եվրոպայի խորհրդի կողմից:

---

[1] 2-րդ Ընդհանուր հաշվետվություն - CPT/Inf (92) 3 կետ 4, և 7-րդ Ընդհանուր հաշվետվություն - CPT/Inf (97) 10, կետեր 12-15:

Բազմաբնակ կացարաններ

29. ԽԿԿ-ի կողմից այցելված մի շարք երկրներում, հատկապես կենտրոնական և արևելյան Եվրոպայում, ազատազրկված անձանց ապրելու վայրերը հաճախ իրենցից ներկայացնում են մեծ կացարաններ, որոնց մեջ մտնում են ազատազրկված անձանց կողմից ամենօրյա օգտագործման բոլոր կամ գրեթե բոլոր տարածքները, ինչպես օրինակ՝ քնելու և ապրելու տեղերը, սանհանգույցները: ԽԿԿ-ն առարկում է փակ բանտերում այսպիսի տեղավորման սկզբունքին և այս առարկությունները ավելի են հիմնավորվում, երբ դա վերաբերում է ծայրահեղ նեղ և առողջության համար վնասակար պայմաններին: Անկասկած, տարբեր գործոնները՝ այդ թվում մշակութային բնույթի, որոշ երկրներում կարող են ավելի գերադասելի դարձնել բանտարկյալները ոչ թե մեկուսի, այլ խմբային պահման ձևերը: Թեև տասնյակ բանտարկյալների միասին կեցության պայմանները ավելի շատ առարկություններ են առաջացնում, քան թե խրախուսվում են:

Բազմաբնակ կացարանները անխուսափելիորեն ենթադրում են, որ բանտարկյալները իրենց ամենօրյա կյանքում զրկված պետք է լինեն անհատական առանձնացման հնարավորությունից: Ավելին, այս պայմաններում բարձր է նաև ահաբեկման և բռնության հավանականությունը: Ապրելու այսպիսի պայմանները բերում են հանցավոր մթնոլորտի զարգացմանը և նպաստում հանցավոր կազմակերպությունների համախմբվածությանը: Նրանք, նմանապես, կարող են ծայրահեղ դժվարացնել և մինչև անգամ անհնարին դարձնել անձնակազմի կողմից, ինչպես հարկն է վերահսկողության իրականացումը, օրինակ՝ բանտերում զանգվածային անհնազանդության դեպքերում դժվար կլինի խուսափել արտաքին միջամտությունից, այդ թվում նաև զգալի ուժի կիրառումից: Բանտարկյալների պահումը նման պայմաններում գրեթե անհնարին է դարձնում յուրաքանչյուր դեպքի ռիսկի և կարիքների գնահատման վրա հիմնված առանձին բանտարկյալների ճիշտ տեղաբաշխումը: Այս բոլոր խնդիրները ավելի են բարդանում, երբ բանտարկյալների թիվը գերազանցում է բնակեցման բավարար մակարդակը. ավելին, այսպիսի իրավիճակում կենցաղային հարմարանքների՝ լվացարանների և զուգարանների ծանրաբեռնվածությունը և անբավարար օդափոխությունը հաճախ կարող են ստեղծել ծանր պայմաններ:

ԽԿԿ-ն նմանապես ընդգծում է, որ բազմամարդ կացարաններից բնակեցման ավելի փոքր տեղամասերի անցմանն ուղղված քայլերից բացի, պետք է ձեռնարկվեն նաև միջոցներ, որոնք կապահովեն բանտակյալների օրվա բավարար մասը բնակեցման տեղամասերից դուրս անցկացնելու և տարբեր բնույթի օգտակար գործողություններով զբաղվելու հնարավորությունները:

Բնական լույսից և մաքուր օդից օգտվելու հնարավորություն

30. ԽԿԿ-ն հաճախ ականատես է լինում խցերի պատուհանների վրա տեղադրված այնպիսի սարքերի, ինչպիսին են շերտավարագույրները, շերտաձողիկները կամ շերտաթիթեղները, որոնք զրկում են բանտարկյալին բնական լույսից օգտվելու հնարավորությունից և թույլ չեն տալիս մաքուր օդի մուտքը ապրելատեղ: Այս դեպքերը բնորոշ են այն հիմնարկներին, որտեղ պահվում են կալանքի տակ գտնվող կալանավորված անձինք: ԽԿԿ-ն լիովին ընդունում է, որ որոշ բանտարկյալների նկատմամբ անկասկած կարող է անհրաժեշտություն առաջանալ իրագործելու միմյանց հետ համաձայնության գալու և/ կամ հանցավոր գործունեության հավանականությունը կանխելուն ուղղված հատուկ անվտանգության ապահովման միջոցներ: Սակայն այս տիպի միջոցների կիրառումը պետք է լինի բացառություն, այլ ոչ թե կանոն: Սա ենթադրում է, որ համապատասխան մարմինները պետք է ուսումնասիրեն յուրաքանչյուր բանտարկյալի հետ կապված դեպք և որոշեն արդյո՞ք իրոք հիմնավորված է տվյալ դեպքում հատուկ անվտանգության միջոցների կիրառումը: Ավելին, այդ միջոցների անհրաժեշտության դեպքում էլ տվյալ բանտարկյալները չպետք է երբևիցե զրկվեն բնական լույսից և մաքուր օդից: Վերջիններս կյանքի կենսական տարրերն են, որոնցից յուրաքանչյուր ազատազրկված անձ իրավունք ունի օգտվելու, բացի դրանից այս տարրերի բացակայությունը ստեղծում է հիվանդությունների և հատկապես պալարախտի տարածման համար նպաստավոր պայմաններ:

ԽԿԿ-ն ընդունում է, որ ուղղիչ հիմնարկներում կյանքի բավարար պայմանների ապահովումը կարող է կապված լինել մեծ ծախսերի հետ, և շատ երկրներում բարեփոխումները խոչնդոտվում են միջոցների բացակայության պատճառով: Այնուամենայնիվ խցերի պատուհանների պատնեշող սարքավորումների հեռացումը (և բացառիկ դեպքերում, երբ այդ անհրաժեշտ է, այլընտրանի հարմար ձևավորում ունեցող անվտանգության սարքերի տեղադրումը) չպետք է պահանջի զգալի ներդրումներ և միաժամանակ օգտակար կլինի բոլորի համար:

Վարակիչ հիվանդություններ

31. Վարակիչ հիվանդությունները և հատկապես պալարախտը, հեպատիտը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը մի շարք եվրոպական երկրներում դարձել են խոշոր առողջապահության համար մտահոգություն առաջացնող մեծ խնդիր: Թեև այս հիվանդությունները բնակչության մեջ նույնպես տարածված են, նրանք որոշ ուղղիչ համակարգերի համար դարձել են բարդ խնդիր: Հետևաբար, ԽԿԿ-ն մի շարք առիթներով արտահայտել է իր լուրջ մտահոգությունները այս խնդրի լուծման համար անբավարար միջոցների ձեռնարկման կապակցությամբ: Ավելին, նյութական պայմանները, որոնցում պահվում են բանտարկյալները, հաճախ այնպիսին են, որ կարող են միայն նպաստել այս հիվանդությունների տարածմանը:

ԽԿԿ-ն գիտակցում է, որ ծանր տնտեսական ճգնաժամ ապրող երկրներում, ինչպիսին են այսօր ԽԿԿ-ի կողմից այցելված շատ երկրներ, անհրաժեշտ են զոհողություններ, այդ թվում նաև ուղղիչ հիմնարկներում: Սակայն, որքանով էլ որ այդ դժվարությունները առկա լինեն,անձի ազատազրկման գործողությունը միշտ հոգատարություն է պահանջում, որն էլ իր հերթին պարտավորեցնում է իրականացնել առողջության նախապահպանական, մասսայական հետազոտությունների ու բուժման արդյունավետ մեթոդների կիրառում: Պետական մարմինների կողմից այս պարտականության կատարումը առավել կարևոր է և անհրաժեշտ, երբ խոսքը գնում է կյանքին սպառնացող հիվանդությունների մասին:

Զանգվածային հետազոտման ժամանակակից մեթոդների կիրառումը, դեղամիջոցների և համապատասխան նյութերի անընդմեջ մատակարարումը, անձնակազմի առկայությունը, որը ապահովում է ազատազրկված անձանց նշանակված դեղամիջոցների ընդունումը ճիշտ ժամին և ճիշտ քանակով, և անհրաժեշտության դեպքում հատուկ սննդի ապահովումը կազմում են վերոհիշյալ հիվանդությունների դեմ պայքարելու և ազատազրկված անձանց անհրաժեշտ բժշկական սպասարկումը իրականացնելու արդյունավետ ռազմավարության հիմնական տարրերը: Վարակիչ հիվանդություններով տառապող բանտարկյալների բնակեցման տեղերում նյութական պայմանները պետք է նպաստեն նաև նրանց առողջական վիճակի բարելավմանը. բացի բնական լույսից և լավ օդափոխությունից նրանք պետք է ունենան բավարար հիգիենայի պայմաններ, ինչպես նաև պետք է գերբնակեցված չլինեն:

Ավելին, այս բանտարկյալները չպետք է մեկուսացվեն բանտում պահվող այլ անձանցից, եթե դա խիստ անհրաժեշտ չէ բժշկական կամ այլ պատճառներով: Այս առումով, ԽԿԿ-ն ցանկանում է հատկապես ընդգծել, որ չի կարող լինել որևէ բժշկական հիմնավորում բանտարկյալների մեկուսացման համար միայն այն պատճառով, որ նրանք ունեն դրական ՄԻԱՎ:

Այս հարցերի սխալ պատկերացումների վերացման համար ազգային մարմինները բանտարկյալներին և բանտերի ծառայողներին պարտավոր են ապահովել վարակիչ հիվանդությունների վերաբերյալ ուսուցման ծրագրով: Այս ծրագիրը պետք է ներառի հիվանդությունների վարակման ձևերը, նրանցից պաշտպանվելու և համապատասխան նախապահպանական միջոցները: Հատկապես պետք է լուսաբանվի սեռական կապերի և դեղամիջոցների ներերակային օգտագործման ճանապարհով ՄԻԱՎ-ով և հեպատիտ B/C-ով վարակվելու վտանգը և բացատրվի օրգանիզմի հեղուկային միջավայրերի դերը՝ որպես ՄԻԱՎ-ի և հեպատիտի վիրուսակիրներ:

Պետք է նմանապես ընդգծել, որ համապատասխան տեղեկատվությունը և խորհրդատվությունը պետք է տրամադրվի յուրաքանչյուր զննումից առաջ, իսկ դրական արդյունքի դեպքում նաև՝ հետո:Ակնհայտ է, որ հիվանդին վերաբերող տեղեկությունները պետք է պաշտպանվեն բժշկական գաղտնիության սկզբունքով: Սկզբունքորեն որևէ միջամտություն այս բնագավառում պետք է հիմնված լինի տվյալ տեղեկացված անձանց կողմից տրված համաձայնության վրա:

Ավելին, տվյալ երկրներում այս բնագավառում գործող բոլոր նախարարություններն ու հիմնարկները պետք է լավագույն ձևով կոորդինացնեն իրենց ճիգերը վերոհիշյալ հիվանդությունների դեմ պայքարելու համար: ԽԿԿ-ն այս առումով հատուկ նշում է, որ պետք է երաշխավորվի հիվանդությունների բուժման շարունակումը[1] բանտից ազատվելուց հետո:

[1] Տե՛ս էջ 25 «Բժշկական սպասարկումն ազատազրկման վայրերում», «Վարակիչ հիվանդություններ» բաժինը:

Բարձր անվտանգության միջոցներ պահանջող տեղամասեր

32. Յուրաքանչյուր երկրում, անպայման կան մի շարք բանտարկյալներ, որոնք անվտանգության տեսակետից մեծ վտանգ են ներկայացնում և հետևաբար պահանջում են պահման հատուկ պայմաններ: Բանտարկյալների կողմից կատարված հանցանքների բնույթը, նրանց վերաբերմունքը բանտային կյանքի սահմանափակումներին կամ նրանց հոգեբանական և հոգեկան նկարագիրը կարող են հիմք հանդիսանալ մեծ վտանգ ներկայացնող բանտարկյալների թվին դասվելու համար: Բանտարկյալների այս խումբը կազմում է (կամ առնվազն պետք է կազմի, եթե դասակարգման համակարգը գործում է բավարար) բանտերում պահվող բոլոր բանտարկյալների մի փոքր մասը: Այնուամենայնիվ, սա այն խումբն է, որը հատուկ մտահոգություն է առաջացնում ԽԿԿ-ի համար, քանի որ այս բանտարկյալների նկատմամբ հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտությունը իր հետ բերում է անմարդկային վերաբերմունքի ավելի բարձր հավանականություն:

Անվտանգության տեսակետից մեծ վտանգ ներկայացնող բանտարկյալները իրենց պահման տեղամասերի սահմաններում պետք է օգտվեն համեմատաբար ավելի հանգիստ ռեժիմից, որը նրանց բանտում պահելու ծանր վիճակի փոխհատուցումն է: Նրանք, մասնավորապես պետք է ունենան հնարավորություն հանդիպելու տվյալ տեղամասերում գտնվող բանտարկյալների հետ և գործունեության բավականին մեծ ընտրություն: Պետք է հատուկ ջանքեր գործադրվեն բարձր անվտանգության տեղամասերում ներքին լավ մթնոլորտ ստեղծելու համար: Սրա նպատակը պետք է լինի անձնակազմի և բանտարկյալների միջև դրական հարաբերությունների ստեղծումը: Սա բխում է ոչ միայն տվյալ տեղամասում գտնվող անձանց նկատմամբ մարդկային վերաբերմունքի ցուցաբերման, այլ նաև արդյունավետ հսկողության և անվտանգության պահպանման, ինչպես նաև անձնակազմի անվտանգության շահերից:

Գործունեության բավարար ծրագրի առկայությունը բարձր անվտանգության տեղամասերում նմանապես կարևոր է, եթե ոչ ավելի կարևոր, քան սովորական տեղամասերում: Սա կարող է մեծապես նպաստել կանխելու տեղամասում տիրող լարված մթնոլորտի բացասական ազդեցությունը բանտարկյալի վրա: Այս գործունեությունը պետք է լինի հնարավորին չափ բազմազան (կրթություն, սպորտ,մասնագիտական աշխատանք և այլն): Ինչ մասնավորապես վերաբերում է աշխատանքին, պարզ է, որ անվտանգության պահպանման նկատառումներից ելնելով կարող են բացառվել սովորական բանտերում կիրառվող աշխատանքի շատ տեսակներ: Սակայն սա չի նշանակում, որ բանտարկյալները պետք է զբաղվեն միմիայն միապաղաղ բնույթի աշխատանքով:

Ակնհայտ է, որ հատուկ անվտանգության ռեժիմի պայմաններում բանտարկյալները չպետք է պահվեն ավելի երկար, քան դա պահանջվում է իրենցից բխող վտանգից: Անհրաժեշտ է պարբերաբար վերանայել պահման ձևին վերաբերող որոշումները:Այս որոշումների վերանայումը պետք է միշտ հիմնված լինի ամեն մի բանտարկյալի վարքագծի գնահատման վրա, որը պետք է կատարվի համապատասխան ուսուցում ստացած անձնակազմի կողմից: Բացի այդ,կալանավորներին պետք է հնարավորին չափ լրիվ տեղեկացնել՝ իրենց տվյալ տեղամասում տեղավորման իսկ անհրաժեշտության դեպքում, նաև պահելու ժամկետի երկարաձգման պատճառների մասին, որը հնարավորություն կտա արդյունավետ ձևով հարմարվել իրենց նկատմամբ կիրառվող միջոցներին:

Ցմահ բանտարկության և երկարաժամկետ դատապարտված բանտարկյալներ

33. Եվրոպական շատ երկրներում աճում է ցմահ բանտարկության և երկարատև ժամկետով դատապարտվածների թիվը: ԽԿԿ-ն իր մի շարք այցելությունների ընթեցքում հայտնաբերել է, որ այս կարգի բանտարկյալների վիճակը նյութական պայմանների, գործունեության և մարդկային շփումների հնարավորությունների տեսակետից չափից ավելի ծանր է: Ավելին, այս կարգի շատ բանտարկյալներ ենթարկվում են հատուկ սահմանափակումների, որոնք կարող են ավելի սաստկացնել երկարատև ազատազրկմանը բնորոշող բացասական ազդեցությունը. այսպիսի սահմանափակումների օրինակներ են՝ այլ ազատազրկվածներից մշտապես անջատ պահումը, խցից դուրս գալու ժամանակ ձեռնաշղթաների կրումը, մյուս բանտարկյալների հետ հաղորդակցվելու արգելումը և այցելությունների քանակի սահմանափակումը: ԽԿԿ-ն չի տեսնում որևէ հիմնավորում բոլոր որոշակի պատիժ կրող բանտարկյալների նկատմամբ այս սահմանափակումների անխտիր կիրառման համար, առանց ինչպես հարկն է հաշվի առնելու՝ ներկայացնում են նրանք արդյո՞ք (կամ չեն ներկայացնում) վտանգ՝ յուրաքանչյուրը առանձին վերցրած:

Երկարաժամկետ բանտարկությունը սոցիալական շփման տեսակետից, կարող է ունենալ մի շարք հետևանքներ բանտարկյալների համար: Նրանք դառնում են հաստատության մեխանիզմից կախված մասնիկ և կարող են նաև ունենալ բազմաթիվ հոգեբանական խնդիրներ (այդ թվում կորցնել սեփական անձի նկատմամբ հարգանքը, զրկվել սեփական սոցիալական հմտություններից) և ավելին, հասարակությունից, ուր համարյա թե բոլորը ի վերջո վերադառնում են, մեկուսանալու հակում ունենալ: ԽԿԿ-ի տեսակետից երկարաժամկետ ազատազրկման դատապարտված անձանց հատկացվող ռեժիմները պետք է փորձեն պոզիտիվ և կանխարգելիչ մեթոդներով նվազեցնել այս հետևանքների ազդեցությունը:

Այդպիսի բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան զբաղվելու զանազան բնույթի լայն գործունեությամբ (աշխատանք, գերադասելի է մասնագիտական, կրթություն, սպորտ, հանգստի և իրար հետ շփվելու զանազան ձևեր): Ավելին, նրանք պետք է իրենց ժամանակը անցկացնելու որոշակի ընտրության հնարավորություն ունենան, որը կզարգացնի իրենց ինքնուրույնության և անհատական պատասխանատվության զգացմունքը: Նրանց բանտարկության ժամկետը իմաստալից դարձնելու նպատակով պետք է լրացուցիչ քայլեր ձեռնարկել՝ դատապարտյալներին պետք է օգնել հոգեբանորեն համակերպվելու իրենց ազատազրկման ժամկետի հետ և նախապատրաստել նրանց ժամկետը լրանալուն պես բանտից ազատվելուն: Այս հարցում կարևոր դեր են խաղում անհատական մոտեցման պլանները և համապատասխան հոգեբանական և սոցիալական օժանդակությունը: Բացի այդ, երկարաժամկետ դատապարտյալների վրա ինստիտուցիոնալիզացիայի բացասական հետևանքների ազդեցությունը կարող է ոչ այնքան ազդեցիկ լինել և նրանք ավելի լավ նախապատրաստված լինեն բանտից ազատվելուն, եթե հնարավորություն ունենան արդյունավետ ձևով շփվել արտաքին աշխարհի հետ:

Մեկուսի բանտարկությունը

Քաղվածք, 21-րդ Ընդհանուր հաշվետվություն [CPT/Inf (2011) 28]

Ներածություն

53. Մեկուսի բանտարկություն, այս կամ այն ձևով, գոյություն ունի յուրաքանչյուր բանտային համակարգում: ԽԿԿ-ն մշտապես առանձնակի ուշադրություն է դարձրել մեկուսի բանտարկություն կրող բանտարկյալների վրա, քանի որ այն կարող է ծայրահեղ վնասակար ազդեցություն ունենալ այդ անձանց մտավոր, ֆիզիկական և սոցիալական առողջության վրա[1]:

Այդ վնասակար ազդեցությունը կարող է լինել անմիջապես և ավելանալ՝ կապված այդ միջոցի կիրառման տևողության և այդ ժամկետի անորոշության հետ: Ամենակարևոր ցուցանիշն այն վնասն է, որ կարող է հասցվել մեկուսի բանտարկության պատճառով: Դա պատասխանատվության նման միջոցի ենթարկված բանտարկյալների կողմից ինքնասպանությունների զգալիորեն ավելի բարձր տոկոսն է ի համեմատ մնացած բանտարկյալների: Հետևաբար, ակնհայտ է, որ մեկուսի բանտարկությունն ինքնին ի զորու է բարձրացնելու հարցեր՝ կապված խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հետ: Բացի այդ, դա կարող է առիթ դառնալ բանտարկյալների նկատմամբ միտումնավոր վատ վերաբերմունք դրսևորելու համար՝ մյուս բանտարկյալների և բանտի աշխատակազմի տեսադաշտից հեռու: Այդ պատճառով, այդ հարցը գտվում է ԽԿԿ-ի ուշադրության կենտրոնում, և յուրաքանչյուր այցելության ընթացքում պատվիրակությունները պնդում են, որպեսզի հանդիպում ունենան և զրուցեն մեկուսի բանտարկություն կրող բանտարկյալների հետ՝ պարզելու համար վերջիններիս կալանքի կամ պատժի կրման պայմանները և նրանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը, ինչպես նաև ստուգելու համար մեկուսի բանտարկության որոշում կայացնելու ընթացակարգերը, ինչպես նաև դրանք վերանայելու համար: Իր Ընդհանուր հաշվետվության այդ բաժնում ԽԿԿ-ն սահմանել է այն չափանիշները, որոնք Կոմիտեն կիրառում է մեկուսի բանտարկությունը գնահատելու համար: Կոմիտեն կարծում է, որ այդ չափանիշների պահպանման դեպքում հնարավոր կլինի մեկուսի բանտարկության կիրառման դեպքերը իջեցնել մինչև բացարձակ նվազագույնի՝ ապահովելով դրա կրրառումը որքան հնարավոր է կարճ

[1] Այդ թեմային նվիրված հետազոտության արդյունքները հիմնավորապես ամփոփված են Շարոն Շալեվզի «A Sourcebook on Solitory Confinement» (Mannheim Centre for Criminology, London, 2008) գրքում, որը հասանելի է էլեկտրոնային եղանակով՝ www. solitaryconfinement.org

ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաև նպատակ ունենալով յուրաքանչյուր նման բանտարկություն դարձնել հնարավորինս դրական և երաշխավորել նման միջոցի կիրառության ընթացակարգերի ամբողջական հաշվետու բնույթը:

54. ԽԿԿ-ն « մեկուսի բանտարկություն» տերմինը հասկանում է որպես բոլոր այն դեպքերը ներկայացնող հասկացություն, որի դեպքում կարգադրված է մի բանտարկյալին պահել մյուսներից առանձին (օրինակ՝ որպես դատական որոշման արդյունք, որպես քրեակատարողական համակարգի կողմից կիրառված կարգապահական տույժ, որպես կանխարգելիչ վարչական միջոց կամ կիրառված է ի պաշտպանություն հենց այդ հենց այդ բանտարկյալի): Այդպիսի միջոցի ենթարկված բանտարկյալը որպես կանոն պահվում է միայնակ: Որոշ երկրներում նա կարող է պահվել մեկ կամ երկու այլ բանտարկյալների հետ միասին, և այս բաժինը հավասարապես կիրառելի է նաև նման իրավիճակների նկատմամբ:

Ինչ վերաբերում է անչափահասների մեկուսի բանտարկությանը, այսինքն՝ այն պրակտիկային, որի վերաբերյալ ԽԿԿ-ն ունի առանձնակի լուրջ վերապահումներ, ապա այստեղ պետք է վկայակոչել նաև ԽԿԿ 18-րդ Ընդհանուր հաշվետվությունում մեջ Կոմիտեի արված մեկնաբանությունները[1]:

Այս բաժինը չի տարածվում բժշկական նկատառումներով բանտարկյալներին մեկուսացնելու վրա, քանի որ նման միջոցի հիմքեր միանգամայն այլ բնույթ ունեն:

Կիրառելի սկզբունքները

55. Մեկուսի բանտարկությունը լրացուցիչ սահմանափակում է ազատությունից զրկված անձանց արդեն իսկ մեծապես սահմանափակված իրավունքները: Այդ լրացուցիչ սահմանափակումները չեն բխում զուտ ազատազրկման փաստից և այդ իսկ պատճառով պետք է առանձին հիմնավորում ստանան: Ստուգելու համար, թե հիմնավորված է արդյոք նման միջոցի որևէ կիրառում, անհրաժեշտ է դիմել ավանդական թեստերի օգնությանը, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթներում և իրենց զարգացումն են ստացել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Պարզ ՀՕՀԱՈ (անգլերեն՝ PLANN) հապավումը ամփոփում է այդ թեստերը:

[1] Տես CPT/Inf (2008) 25, կետ 26:

ա) Համամասնական. բանտարկյալի իրավունքների ցանկացած լրացուցիչ սահմանափակում պետք է կապված լինի այն իրական կամ հնարավոր վնասի հետ, որ բանտարկյալը բանտում պատճառել է կամ կարող է պատճառել իր գործողություններով (կամ հենց իրեն սպառնացող հնարավոր վնաս է ի հայտ եկել): Հաշվի առնելով, որ մեկուսի բանտարկությունը հանդիսանում է բանտարկյալի իրավունքների լուրջ սահմանափակում, ինչը ներառում է անմիջական ռիսկեր հենց բանտարկյալի համար, ապա իրական կամ հնարավոր վնասի մակարդակը պետք է առնվազն նույնքան լուրջ լինի և հանդիսանա ծագած խնդրի լուծման միակ միջոցը: Սա արտահայտվում է, օրինակ նրանում, որ երկրների մեծ մասում մեկուսի բանտարկություն նախատեսված է միայն ամենալուրջ կարգապահական խախտումների համար, բայց այդ սկզբունքը պետք է պահպանվի նման միջոցի կիրառման բոլոր ձևերի ժամանակ: Որքան ավելի երկար է շարունակվում նման միջոցի կիրառումը, այնքան ավելի հիմնավոր պետք է լինի դրա պատճառը և պետք է արվի ավելին, որպեսզի այն հասնի իր նպատակին:

բ) Օրինական. ներպետական օրենսդրությունը պետք է բովանդակի դրույթներ երկրում թույլատրելի մեկուսի բանտարկության ցանկացած տեսակի վերաբերյալ և այդ դրույթը պետք է լինի ողջամիտ: Այդ մասին պետք է հասկանալի ձևով տեղեկացվի յուրաքանչյուր ոք, ով կարող է ենթարկվել նման միջոցի: Օրենքում պետք է հստակ սահմանված լինեն այն կոնկրետ հանգամանքները, որոնց դեպքում կարող է կիրառվել մեկուսի բանտարկության ցանկացած տեսակ, ինչպես նաև այն անձինք, ովքեր կարող են կիրառել այն, այդ անձանց գործողությունները, համապատասխան բանտարկյալի հայտարարություններ անելու իրավունքը՝ որպես այդ ընթացակարգի բաղկացուցիչ մաս, բանտարկյալին այդ որոշման հնարավոր հիմնավորումները հնարավորինս լիարժեք ներկայացնելու պահանջ (նկատի է ունեցվում, որ որոշ դեպքում կարող է լինել ողջամիտ հիմնավորում առ այն, որ չպետք է բացահայտվեն անվտանգության հետ կապված հատուկ մանրամասներ, կամ անհրաժեշտ է պաշտպանել երրորդ կողմի շահերը), որոշման վերանայման հաճախականությունը և ընթացակարգը, ինչպես մաև այդ որոշումը բողոքարկելու ընթացակարգը: Յուրաքանչյուր տեսակի մեկուսի բանտարկության ռեժիմը պետք է սահմանվի օրենքով: Ընդ որում այդ ռեժիմներից յուրաքանչյուրը պետք է հստակորեն տարբերվի մյուսից:

գ) Հաշվետու. պետք է պահպանվեն մեկուսի բանտարկություն կիրառելու վերաբերյալ որոշմանը, ինչպես նաև այդ որոշման բոլոր վերանայումներին առնչվող փաստաթղթերը: Այդ փաստաթղթերում պետք է շարադրված լինեն բոլոր այն գործոնները, որոնք հաշվի են առնվել, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնց վրա դրանք հիմնվել են: Հարկ է նաև արձանագրել բանտարկյալի դերը այդ որոշման կայացման գործընթացին կամ նրա հրաժարումը դրանից: Բացի դրանից,

պետք է ամբողջությամբ արձանագրել բանտի աշխատակազմի հետ ունեցած բոլոր շփումները բանտարկյալի մեկուսի բանտարկության մեջ գտնվելու ընթացքում, այդ թվում՝ բանտի անձնակազմի փորձերը շփում հաստատելու բանտարկյալի հետ և բանտարկյալի արձագանքը դրան:

դ) Անհրաժեշտ. կանոնը, համաձայն որի թույլատրվում են միայն այն սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են բանտարկյալի անվտանգության և պատշաճ բանտարկության և արդարադատության պահանջների պահպանման համար, հավասար չափով կիրառելի է նաև մեկուսի բանտարկության մեջ գտնվող բանտարկյալների նկատմամբ: Համապատասխանաբար, մեկուսի բանտարկության ընթացքում չպետք է, օրինակ, անձն մեխանիկորեն զրկվի այցելությունների, հեռախոսային զանգերի և նամակագրության իրավունքից կամ այն ամենից, ինչը սովորաբար հասանելի է բանտարկյալներին (օրինակ, ընթերցանության նյութերից): Հավասարապես, ռեժիմը պետք է բավականաչափ ճկուն լինի, որպեսզի չսահմանվի այնպիսի սահմանափակում, որի անհրաժեշտությունը յուրաքանչյուր առանձին դեպքում չկա:

ե) Ոչ խտրական. մեկուսի բանտարկության որոշում կայացնելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն գործին վերաբերող բոլոր հանգամանքները, այլ նաև ձեռնարկել միջոցներ, որպեսզի գործին չվերաբերող հարցերը հաշվի չառնվեն: Իշխանությունները պետք է վերահսկեն մեկուսի բանտարկության բոլոր ձևերի կիրառումը, որպեսզի դրանք չկիրառվեն անհամաչափ, առանց օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորման, ուղղված չլինեն առանձին բանտարկյալի կամ բանտարկյալների առանձին խմբի դեմ:

Մեկուսի բանտարկության տեսակները և դրանց իրավաչափությունը

56. Գոյություն ունեն չորս հիմնական իրավիճակներ, որոնց դեպքում կիրառվում է մեկուսի բանտարկություն: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր սեփական հիմնավորումը և յուրաքանչյուրին պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում:

ա) Մեկուսի բանտարկությունը որպես դատարանի որոշման արդյունք

Երկրների մեծ մասում դատարանները լիազորված են որոշելու, որ կալանքի տակ գտնվող անձը (այսինքն՝ նախնական դատական կալանքի տակ գտնվողները) քննության շահերից ելնելով որոշակի ժամանակ կարող են պահվել մեկուսի բանտարկության մեջ: Բացի այդ, որոշ երկրներում մեկուսի բանտարկության ժամկետը մեխանիկորեն համարվում է օրենսդրությամբ

նախատեսված որոշ դատավճիռների մի մասը կամ այդ մասին որոշում կարող է կայացնել դատարանը՝ որպես դատավճռի մաս:

Ինչ վերաբերում է մեկուսի բանտարկությանը, որի մասին որոշում կայացնում է դատարանը որպես նախնական կալանքի մի մաս, ապա ակնհայտ է, որ յուրաքանչյուր առանձին դեպքում այն պետք է արդարացված լինի և հիմնավորվի բավարար ապացույցներով, որպեսզի տվյալ բանտարկյալին պահեն այլ բանտարկյալներից առանձին, կամ բացառիկ դեպքերում՝ ընդհանրապես բոլոր բանտարկյալներից առանձին և, դրա հետ միասին, սահմանափակեն նրա շփումներն արտաքին աշխարհի հետ: Դա պետք է արվի միայն արդարադատության իրականացմանը սպառնացող իրական վտանգի դեպքում և պետք է ուղեկցվի 57-րդ կետում նշված երաշխիքներով:

ԽԿԿ-ն համարում է, որ մեկուսի բանտարկությունը երբեք չպետք է նախատեսվի կամ թողնվի դատարանի հայեցողությանը, որպես պատժի մաս: Համընդհանուր ճանաչում գտած սկզբունքն այն է, որ իրավախախտները գնում են բանտ՝ որպես պատիժ, այլ ոչ թե այնտեղ պատիվ ստանալու համար: Այս սկզբունքը պետք է հաշվի առնել այս համատեքստում: Ազատազրկումն ինքնին պատիժ է և դատավճռի պոտենցիալ վտանգավոր սաստկացումները որպես պատժի մաս՝ անընդունելի են: Հնարավոր է՝ անհրաժեշտություն առաջանա որպեսզի դատապարտված բանտարկյալը որոշակի ժամանակահատվածի ընթացքում ենթարկվի մեկուսի բանտարկություն կրելու ռեժիմին, սակայն նման ռեժիմի կիրառումը պետք է լինի բանտային իշխանությունների իրավասությունը, այլ ոչ թե լինի քրեական պատժամիջոցների մասը:

բ) Մեկուսի բանտարկությունը որպես կարգապահական տույժ

Բանտարկյալին մյուս բանտարկյալների հետ շփումից զրկելը կարող է օրենքով նախատեսված նախատեսված սովորական կարգապահական ընթացակարգի շրջանակներում կիրառվել՝ որպես ամենախիստ կարգապահական պատիժ: Գիտակցելով նման տույժին բնորոշ վտանգները՝ երկրները սահմանում են այն առավելագույն ժամկետը, որի ընթացքում այն կարող է կիրառվել: Դա կարող է տատանվել ամենաքիչը մի քանի օրից մինչև առավելագույնը մեկ ամիս կամ դրանից ավելի: Որոշ երկրներ թույլատրում են բանտերի տնօրենների սահմանել որոշակի առավելագույն ժամանակահատված՝ դատական մարմիններին հնարավորություն ընձեռելով սահմանելու ավելի երկար ժամկետներ: Երկրների մեծամասնությունը, բայց ոչ բոլորը, արգելում են մեկուսի բանտարկության ձևով իրար հաջորդող պատիժներ նշանակելը:

Հաշվի առնելով մեկուսի բանտարկության պոտենցիալ չափազանց վնասակար հետևանքները՝ ԽԿԿ-ն համարում է, որ համամասնության սկզբունքը պահանջում է, որպեսզի այն կիրառվի որպես կարգապահական պատիժ միայն բացառիկ դեպքերում և որպես վերջին միջոց, ընդ որում, հնարավոր ամենակարճ ժամանակահատվածի ընթացքում: Եվրախորհրդի անդամ շատ պետություններում միտում կա առավելագույնս նվազեցնել մեկուսի բանտարկության՝ որպես պատժի հնարավոր ժամկետը: ԽԿԿ-ն համարում է, որ որոշակի խախտման համար առավելագույն ժամկետը չպետք է գերազանցի 14 օրը, իսկ նախընտրելի է և ավելի քիչը:[1] Բացի դրանից, պետք է արգելել իրար հաջորդող կարգապահական տույժերի կիրառումը, ինչը հանգեցնում է նրան, որ մեկուսի բանտարկության անընդմեջ ժամանակահատվածը գերազանցում է սահմանված պատժի առավելագույն ժամկետը: Բանտարկյալի կողմից կատարված ցանկացած իրավախախտում, ինչը համարվում է, որ պահանջում է ավելի խիստ պատժամիջոցների կիրառում, պետք է դիտարկվի քրեական արդարադատության համակարգի շրջանակներում:

գ) Վարչական մեկուսի բանտարկություն կանխարգելիչ նպատակներով

Եվրոպական երկրների մեծ մասի օրենսդրություն թույլատրում է վարչական որոշման հիման վրա մեկուսի բանտարկություն կիրառել այն բանտարկյալների նկատմամբ, ովքեր լուրջ վնաս են հասցրել ուրիշներին կամ հիմքեր կան ենթադրելու, որ կարող են հասցնել կամ ովքեր չափազանց լուրջ սպառնալիք են ներկայացնում բանտի անվտանգության համար: Առանձին միջադեպի դեպքում դա կարող է տևել ընդամենը մի քանի ժամ, կամ տևել մի քանի տարի, եթե խոսքը գնում է բանտարկյալների մասին, ովքեր համարվում են առանձնապես վտանգավոր և շարունակում են անմիջական սպառնալիք ներկայացնել:

Սա մեկուսի բանտարկության հնարավորինս երկարաժամկետ տեսակն է և հաճախ այն միակը, որի նկատմամբ գոյություն ունեն ամենաքիչ ընթացակարգային երաշխիքները: Այդ պատճառով չափազանց կարևոր է, որպեսզի լինեն կանոններ, որոնք կապահովեն, որ այդ միջոցին չդիմեն խիստ շտապողաբար (օրինակ, որպես անհապաղ արձագանք ցանկացած կարգապահական խախտման մինչև դատական որոշման կայացումը), շատ լայնածավալ կերպով կամ շատ երկար ժամանակահատվածի համար: Համապատասխանաբար, պետք է խստորեն հետևել ստորև հիշատակված՝ 57-րդ կետում մեջբերված երաշխիքների պահպանմանը:

---

[1] Առավելագույն ժամկետն անչափահասների համար, բնականաբար, պետք է ավելի քիչ լինի:

դ) Մեկուսի բանտարկություն պաշտպանական նպատակներով

Յուրաքանչյուր բանտային համակարգում կան բանտարկյալներ, ում կարող է պահանջվել պաշտպանություն այլ բանտարկյալներից: Դա կարող է կապված լինել նրանց իրավախախտման բնույթից, քրեական արդարադատության մարմինների հետ նրանց համագործակցությունից, բանդաների միջև բախումներից, բանտի ներսում կամ դրսում ունեցած պարտքերից կամ տվյալ անձի ընդհանուր խոցելիությունից: Այն դեպքում, երբ նման իրավիճակներում շատ բանտարկյալների պահպանման պայմանները կարելի է կարգավորել բանտի ողջ բնակչության շրջանակում, նրանցից մի քանիսի նկատմամբ վտանգն այն աստիճանի է հասնում, որ բանտն իր պարտավորություններն այդ անձանց նկատմամբ կարող է կատարել միայն այն դեպքում, եթե նրանց պահեն մնացած բոլոր բանտարկյալներից առանձին: Դա կարող է կատարվել հենց բանտարկյալի խնդրանքով կամ բանտի ղեկավարության նախաձեռնությամբ, երբ դա անհրաժեշտ համարվի: Ինչպիսին էլ որ լինի այդ գործընթացը, փաստն այն է, որ բանտարկյալի համար կարող է շատ դժվար լինել դուրս գալ այդ պաշտպանության հովանուց պատժի մնացած մասը կրելու ողջ ընթացքում և հնարավոր է՝ հետագա բանտարկությունների ժամանակ ևս:

Պետությունները պարտավոր են բանտարկյալների համար ապահովել անվտանգ պայմաններ և պետք է ձգտեն կատարել այդ պարտականությունը՝ թույլատրելով հնարավորինս շատ սոցիալական փոխգործակցություն բանտարկյալների միջև, ինչը համատեղելի է պատշաճ կարգ ու կանոն պահպանելու հետ: Պաշտպանական նպատակներով մեկուսի բանտարկության դիմել հարկ է միայն այն դեպքում, երբ արդեն սպառվել են տվյալ բանտարկյալի անվտանգությունն ապահովելու մնացած բոլոր միջոցները:

Մեկուսի բանտարկության ենթարկելու որոշումը. ընթացակարգերը և երաշխիքները

57. Ապահովելու համար մեկուսի բանտարկության կիրառումը միայն բացառիկ դեպքերում և անհրաժեշտ ամենակարճ ժամանակահատվածով, մեկուսի բանտարկության յուրաքանչյուր տեսակ պետք է ունենա կիրառության և վերանայման սեփական որոշակի գործընթացը: Ստորև բերված են այն, ինչ ԽԿԿ-ն համարում է պատշաճ գործընթացներ:

ա) Մեկուսի բանտարկությունը որպես նախնական կալանքի պայմանների մաս

Ինչպես արդեն նշվել է նախնական կալանքի տակ գտնվող անձանց մեկուսի բանտարկության մեջ պահելը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, երբ կոնկրետ գործով առկա են ուղղակի ապացույցներ առ այն, որ գոյություն ունեն լուրջ ռիսկեր արդարադատություն իրականացնելու համար, եթե տվյալ բանտարկյալը կապի մեջ մտնի առանձին բանտարկյալների կամ մնացած բանտարկյալների հետ ընդհանրապես: Նման որոշումները պետք է ընդունվեն բաց դատավարությունների ժամանակ, հնարավորինս լիարժեքորեն հիմնավորված դատական ակտով և որոնք հնարավոր կլինի առանձին բողոքարկել: Դրանք պետք է նաև հաճախակի վերանայվեն իրավասու դատարանի կողմից՝ ապահովելու համար մեկուսի բանտարկությունը շարունակելու անհրաժեշտությունը:

բ) Մեկուսի բանտարկությունը՝ որպես կարգապահական տույժ

Մեկուսի բանտարկությունը՝ որպես պատիժ կիրառելու հիմնավորումը և դրա ժամկետը պետք է ամբողջությամբ արձանագրվեն կարգապահական լսումների ընթացքում: Նման արձանագրությունները պետք է մատչելի լինեն ղեկավարությանը և վերահսկողության մարմիններին: Պետք է նաև նախատեսված լինի բողոքարկման արդյունավետ ընթացակարգ, որտեղ հնարավոր կլինի վերաքննել մեղավորության մասին եզրակացությունները և (կամ) դատավճիռը՝ գործնական կիրառության առումով դրանք տարբերակելու համար: Սրան զուգընթաց հարկ է նախատեսել նման իրավիճակում գտնվող բանտարկյալների համար իրավաբանական խորհրդատվության մատչելիություն:

Նման պատժի ենթարկված բանտարկյալներին պետք է ամեն օր այցելի բանտի տնօրենը կամ բանտի ավագ վարչակազմի այլ ավագ ներկայացուցիչ և այդ ընթացքում նրանք կարող են կարգադրել դադարեցնել մեկուսի բանտարկությունը, երբ այդ քայլը հիմնավորված լինի բանտարկյալի վիճակով կամ վարքագծով: Անհրաժեշտ է արձանագրել նման այցելությունները և դրանց հետ կապված որոշումները:

գ) Վարչական մեկուսի բանտարկություն կանխարգելիչ նպատակներով

Սա կարող է հանգեցնել չափազանց երկարաժամկետ մեկուսի բանտարկության, իսկ համապատասխան վարչական որոշումները հաճախ անորոշ են. այս երկու տարրերն էլ սաստկացնում են նման միջոցի բացասական հետևանքները: Հետևաբար, անհրաժեշտ է խիստ հսկողություն: ԽԿԿ-ն համարում

է, որ վարչական մեկուսի բանտարկության ենթարկելը պետք է թույլատրվի միայն բանտի վարչակազմի ամենաբարձրաստիճան ղեկավարի կողմից. նման միջոցի ցանկացած կիրառման մասին պետք է շտապ կարգով զեկուցվի վարչակազմի՝ հերթապահության մեջ գտնվող ամենաբարձրաստիճան անդամին և հնարավորինս արագ ներկայացվի բանտի պետի ուշադրությանը: Նախքան նման որոշում կայացրած աշխատակցի կողմից հերթապահություն հանձնելը, նա պետք է կազմի ամբողջական գրավոր զեկույց այդ մասին: Այդ զեկույցում պետք է շարադրված լինեն այդպիսի որոշում կայացնելու պատճառները և դրա ճշգրիտ ժամանակը, ինչպես նաև հենց բանտարկյալի կարծիքը, եթե այն հնարավոր է պարզել: Պետք է լինի մշտական, խիստ վերահսկողություն բոլոր դեպքերի նկատմամբ առաջին մի քանի ժամերի ընթացքում և այդ անձը պետք է ազատվի մեկուսի բանտարկությունից նման որոշում կայացնելու հիմքերի վերանալուն պես: Բոլոր այն դեպքերում, երբ նման միջոցը շարունակվում է 24 ժամից ավելի, պետք է կայանա այդ գործի բոլոր հանգամանքների ամբողջական վերանայում՝ նպատակ ունենալով հնարավորինս արագ չեղյալ համարել այդ որոշումը:

Եթե պարզվում է, որ մեկուսի բանտարկությունը հավանական է կպահանջի ավելի երկար ժամանակ, ապա որոշումների կայացմանը պետք է ներգրավված լինի այնպիսի մարմին, որը դուրս է այն բանտի կազմից, որտեղ պահվում է բանտարկյալը (օրինակ՝ կետրոնական վերադաս մարմնի բարձրաստիճան ներկայացուցիչը): Պետք է նախատեսված լինի նաև անկախ մարմնին բողոքարկելու իրավունք: Երբ այդ հրամանը հաստատվել է, ապա պետք է հրավիրվի միջկարգապահական նիստ այդ գործի քննարկման համար և բանտարկյալին տրվի այդ մարմնի առջև ելույթ ունենալու հնարավորություն: Վեյանայող խմբի հիմնական նպատակն այն է, որ հաստատվի բանտարկյալին ներկայացվելիք ծրագիր այն խնդիրների դիտարկման նպատակով, որոնք պահանջում են, որ բանտարկյալը պահվի մեկուսի բանտարկության մեջ: Ի թիվս այլ հարցերի, վերանայման ընթացքում պետք է նաև վերլուծվի այն, թե արդյոք տվյալ բանտարկյալի նկատմամբ կիրառվող սահմանափակումներից մի քանիսը խիստ անհրաժեշտ են (օրինակ՝ հնարավոր է թույլատրել որոշ սահմանափակ շփումներ առանձին բանտարկյալների հետ): Բանտարկյալը պետք է ստանա գրավոր, հիմնավորված որոշում այդ վերահսկողական մարմնից և նշում այն մասին, թե ինչպես կարելի է բողոքարկել այդ որոշումը: Սկզբնական որոշումից հետո պետք է անցկացվի նոր քննություն՝ առնվազն մեկ ամիս անց, իսկ հետագայում՝ առնվազն երեք ամիսը մեկ, որտեղ կգնահատվի համաձայնեցված պլանի առաջընթացը և կքննարկվի այն հարցը, թե արդյոք հարկ է մշակել նոր ծրագիր: Որքան ավելի երկար է տվյալ անձը մնում այդ իրավիճակում, այնքան ավելի մանրակրկիտ քննության պետք է ենթարկել այն և ավելի շատ միջոցներ ներգրավել, ներառյալ՝ բանտից դուրս գտնվող միջոցները, որպեսզի փորձ արվի

(վերա)ինտեգրել բանտարկյալին մնացած բանտարկյալների հետ: Մեկուսացված անձը պետք է իրավունք ունենա ցանկացած պահի պահանջելու վերանայել իր մեկուսացման հարցը և ստանալու անկախ զեկույցներ այդպիսի վերանայման վերաբերյալ: Բանտի տնօրենը և վարչակազմի բարձրաստիճան անդամները պետք է ձգտեն այցելել նման բանտարկյալներին ամեն օր և անձամբ ծանոթանալ անհատական ծրագրերին: Բժշկական անձնակազմը նույնպես պետք է առանձնակի ուշադրություն ցուցաբերի նման պայմաններում պահվող բանտարկյալների նկատմամբ:

դ) Մեկուսի բանտարկություն պաշտպանական նպատակներով

«Սեփական խնդրանքով» պաշտպանության դեպքերը ավելի քիչ հարցեր են առաջացնում, քան նրանք, որտեղ պաշտպանությունն ապահովվել է անձնակազմի կողմից, սակայն դրանք նույնպես որոշակի քննարկում են պահանջում: ԽԿԿ-ն համարում է, որ առաջին հերթին պետք է օգտագործել բոլոր այլընտրանքային հնարավորությունները, ներառյալ պաշտպանության կարիք ունեցող կոնկրետ բանտարկյալին կամ խնդիրներ ստեղծող բանտարկյալներին, միջնորդությունն ու ինքնավստահության դաստիարակումը, ինչպես նաև բանտարկյալին պետք է բացատրվի այն որոշման բոլոր հետևանքները, որով նրա նկատմամբ կիրառվելու են պաշտպանական միջոցներ: Եվ՝ իհարկե, կամավոր կերպով պաշտպանության տակ գտնվող բանտարկյալի՝ բանտարկյալների հիմնական խումբ վերադառնալու խնդրանքը պետք է քննարկվի և բավարարվի, եթե դա չի սպառնում նրա անվտանգությանը:

Այն անձինք, ում պաշտպանության տակ են վերցնում իրենց կամքին հակառակ, պետք է իրավունք ունենան լիարժեք մասնակցելու այդ որոշման քննարկմանը և առաջարկելու այլընտրանքային լուծումներ: Նրանց անհրաժեշտ է հանգամանորեն բացատրել նման որոշումը և հնարավորություն տալ բողոքարկելու այն ավելի բարձր ատյանում: Այդ որոշումը պետք է պարբերաբար վերանայվի, այն առումով, որ մեկուսի բանտարկությանը հնարավոր լինի վերջ դնել դրա անհրաժեշտությունը վերանալուն պես:

Մեկուսի բանտարկության նյութական պայմանները

58. Մեկուսի բանտարկության համար օգտագործվող խցերը պետք է համապատասխանեն այլ բանտարկյալների պահման պայմանների նվազագույն չափանիշներին: Այնպես որ, դրանք պետք է լինեն համապատասխան չափի, ունենան բնական լուսավորություն և սարքավորված լինեն արհեստական լուսավորմամբ (երկու դեպքում էլ այն պետք է բավարար լինի ընթերցանության համար), ինչպես նաև ունենան համապատասխան ջեռուցում և օդափոխություն: Դրանք պետք է սարքավորված լինեն նաև բանտի աշխատակազմի հետ հաղորդակցվելու միջոցներով: Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ, որպեսզի բանտարկյալները կարողանան իրենց բնական կարիքները հոգալ նորմալ պայմաններում օրվա ցանկացած ժամին, ինչպես նաև ցնցուղ ընդունել, համենայնդեպս, նույնքան հաճախ, որքան և սովորական ռեժիմով ապրող բանտարկյալները: Մեկուսի բանտարկության մեջ գտնվող բանտարկյալներին պետք է թույլատրվի կրել բանտային սովորական հագուստ, իսկ նրանց տրվող սնունդը պետք է չտարբերվի բանտային սովորական սննդից, ներառյալ հատուկ դիետաները, երբ այն պահանջվում է: Ինչ վերաբերում է նման բանտարկյալների կողմից զբոսանքի համար օգտագործվող տարածքին, ապա այն պետք է բավականաչափ մեծ լինի, որպեսզի իրապես հնարավոր լինի ստանալ ցանկալի ծանրաբեռնվածությունը և նաև ունենա որոշ միջոցներ անցանկալի տարրերից պաշտպանվելու համար:

59. Շատ հաճախ ԽԿԿ-ի պատվիրակությունները գտնում են, որ այս հիմնական պահանջներից մեկը կամ մեկից ավելին չեն կատարվում հատկապես այն բանտարկյալների նկատմամբ, ովքեր գտնվում են մեկուսի բանտարկության մեջ՝ որպես կարգապահական տույժ: Օրինակ, նման տիպի մեկուսի բանտարկության համար նախատեսված խցերը երբեմն գտնվում են նկուղներում, առանց բավարար քանակի բնական լույսի և օդափոխության ու այնտեղ խոնավ է: Այնքան էլ անսովոր բան չէ, երբ խցերը չափից դուրս փոքր են, երբեմն լինելով 3-ից 4 մ^2. այդ առնչությամբ ԽԿԿ-ն ցանկանում է ընդգծել, որ 6մ^2 տարածքից փոքր ցանկացած խուց պետք է դադարի օգտագործվել որպես բանտարկյալի տեղավորման վայր: Նման տեսակի բանտարկյալների կողմից օգտագործվող զբոսանքի տարածքները հաճախ նույնպես չեն համապատասխանում սահմանված պահանջներին:

60. Տարածված գործելակերպ է, երբ մեկուսի բանտարկության մեջ գտնվող բանտարկյալների նկատմամբ որպես պատիժ հատկացվում է սահմանափակ քանակության կահույք, ինչն էլ հաճախ ամրացված է լինում հատակին: Սակայն, նման խցերում պետք է նվազագույնը լինի սեղան, նորմալ նստելու տեղ ցերեկվա

ժամերին (այսինքն աթոռ կամ նստարան), նորմալ մահճակալ և անկողնային պարագաներ գիշերը:

Ինչ վերաբերում է այն խցերին, որոնք օգտագործվում են այլ տեսակի մեկուսի բանտարկություն կրող բանտարկյալներին պահելու համար ԽԿԿ-ն համարում է, որ դրանք պետք է կահավորված լինեն ճիշտ նույն կերպ, ինչ և այն խցերը, որոնք օգտագործում են սովորական պայմաններում գտնվող բանտարկյալները:

Մեկուսի բանտարկության ռեժիմները

61. Ինչպես բանտարկյալների նկատմամբ կիրառվող մնացած բոլոր ռեժիմների, այնպես էլ տվյալ դեպքում անհրաժեշտ է պահպանել այն սկզբունքը, որ մեկուսի բանտարկության մեջ գտնվող բանտարկյալները չպետք է ենթարկվեն ավելի շատ սահմանափակումների, քան դա անհրաժեշտ է նրանց անվտանգության և պատշաճ պահման համար: Բացի դրանից, հատուկ ջանքեր է պետք գործադրել ամրապնդելու համար այն անձանց պահման ռեժիմը, ովքեր երկար ժամանակ գտնվում են մեկուսի բանտարկության մեջ և ովքեր հատուկ ուշադրության կարիք ունեն նվազագույնի հասցնելու համար այն վնասը, որ այդ միջոցը կարող է հասցնել նրանց: Կարիք չկա այդ հարցին մոտենալ՝ «ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքի դիրքերից: Յուրաքանչյուր առանձին սահմանափակում պետք է կիրառել ինչպես հարկն է՝ գնահատելով կոնկրետ բանտարկյալից բխող սպառնալիքը: Ճիշտ նույն կերպ, ինչպես արդեն նշվել է, պետք է հստակ տարբերակում դրվի այն ռեժիմների միջև, որոնք կիրառվում են մեկուսի բանտարկության մեջ գտնվող անձանց նկատմամբ՝ հաշվի առնելով մեկուսի բանտարկության տեսակը:

(ա) Դատարանի որոշմամբ կիրառված նախնական կալանքի շրջանակներում մեկուսի բանտարկությունում գտնվող կալանավորներին պետք է վերաբերվել հնարավորինս այնպես, ինչպես նախնական կալանքի տակ գտնվող մյուս կալանավորներին՝ լրացուցիչ սահմանափակումներ կիրառելով միայն արդարադատության խիստ պահանջներից ելնելով:

(բ) Որպես կարգապահական տույժ՝ մեկուսի բանտարկության մեջ գտնվողները երբեք չպետք է լիովին զրկվեն իրենց ընտանիքների հետ ունեցած շփումներից, իսկ նման շփումների ցանկացած սահմանափակում պետք է կիրառվի միայն այն դեպքում, եթե իրավախախտումը կապված է հենց այդ շփումների հետ: Եվ չպետք է լինի որևէ սահմանափակում փաստաբանին դիմելու նրանց իրավունքի հետ կապված: Նրանք պետք է իրավունք ունենան օրական առնվազն մեկժամյա

բացօթյա զբոսանք կատարել մեկուսի բանտարկությունում գտնվելուառաջին օրից սկսած և նրանց պետք է խթանել կատարելու նման զբոսանքներ: Նրանց պետք է նաև թույլատրվի օգտվել ընթերցանության ողջամիտ նյութերից (ինչն, օրինակ, չպետք է սահմանափակվի միայն կրոնական նյութերով): Չափազանց կարևոր է, որպեսզի նրանց որոշակիորեն խրախուսեն հոգեբանական բարեկեցությունը պահպանելու հարցում:

(գ) Կանխարգելիչ նպատակներով վարչական մեկուսի բանտարկություն կրողները պետք է ունենան ռեժիմի անհատական պլան, որը հաշվի է առնում այդ միջոցը կիրառելու պատճառները: Այդ պլանը պետք է փորձի առավելագույնի հասցնել շփումներն այլ անձանց հետ՝ սկզբում վարչակազմի, իսկ որքան հնարավոր է շուտ՝ այլ բանտարկյալների հետ, ինչպես նաև նախատեսել գործողությունների լայն շարք՝ օրը լրացնելու համար: Վարչակազմը պետք է ակտիվորեն խրախուսի մասնակցությունը նման գործունեությանը և հեշտացնի արտաքին աշխարհի հետ շփումները: Վարչական մեկուսի բանտարկության ողջ ընթացքում ընդհանուր նպատակը պետք է լինի սովորական ռեժիմի վերադառնալու բանտարկյալին համոզելը:

(դ) Ինչ վերաբերում է պաշտպանության նպատակներով մեկուսի բանտարկություն կրող բանտարկյալներին, ապա անհրաժեշտ սահմանել հավասարակշռություն մի կողմից խուսափելու համար նրանից, որպեսզի այդ կարգի մեկուսի բանտարկությունը չափից դուրս գայթակղիչ չդառնա բանտարկյալների համար և մյուս կողմից նվազագույնի հասցնել սահմանափակումներն այն անձանց նկատմամբ, ովքեր ենթարկվում են նման միջոցի: Իհարկե, մեկուսի բանտարկության սկզբից պահից պետք է քայլեր ձեռնարկվեն տվյալ անձի հնարավորինս արագ վերինտեգրման համար: Եթե պարզվում է, որ պահանջվում է երկարաժամկետ պաշտպանություն և որևէ այլ տարբերակ հնարավոր չէ, ապա հարկ է հետամուտ լինել ռեժիմի ամրապնդմանը: Առանձնահատուկ ջանքեր պետք է կիրառել՝ բացահայտելու համար այլ բանտարկյալների, որոնց հետ տվյալ բանտարկյալը կարող է պահպանել անվտանգ հարաբերություններ, ինչպես նաև պարզել այն իրավիճակները, երբ այդ անձին կարելի է դուրս հանել խցից:

Բուժանձնակազմի դերը մեկուսի բանտարկության պայմաններում

62. Բուժաշխատողները բանտերում աշխատում են որպես բանտարկյալների անձնական բժիշկներ և այն բանի ապահովումը, որ նրանց միջև լինի բժիշկ-հիվանդ դրական հարաբերություններ բանտարկյալների առողջության և բարեկեցության պահպանման կարևորագույն գործոններից է: Այն գործելակերպը, երբ բանտի բժիշկները տեղեկանք են տալիս այն մասին, թե պիտանի է արդյոք

բանտարկյալը մեկուսի բանտարկության պատիժ կրելու համար (կամ ցանկացած այլ տեսակի մեկուսի բանտարկություն բանտարկյալի կամքին հակառակ) դժվար թե նպաստի նման հարաբերությունների կայացմանը: Դա ընդունվել է Նախարարների կոմիտեի՝ Բանտային վերանայված կանոնների վերաբերյալ Rec(2006)2 Հանձնարարականում: Իսկապես, այն կանոնը, որ առկա էր Կանոնների նախորդ տարբերակում, որը պարտադրում էր բանտի բժիշկներին տեղեկանք տալ այն մասին, որ բանտարկյալները կարող են կրել պատիժը, այժմ հանված է: ԽԿԿ-ն համարում է, որ բուժանձնակազմը երբեք չպետք է մասնակցի որոշումներ կայացնելու որևէ գործընթացի, որը կարող է հանգեցնել ցանկացած տեսակի մեկուսի բանտարկության, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցառումը կիրառվում է բժշկական նկատառումներով:

63. Մյուս կողմից, բուժանձնակազմը պետք է մեծ ուշադրությամբ վերաբերվի մեկուսի բանտարկության մեջ գտնվող բոլոր բանտարկյալներին: Բուժանձնակազմը պետք է տեղյակ լինի յուրաքանչյուր նման դեպքի մասին և պետք է այցելի բանտարկյալներին նման մեկուսացումից անմիջապես հետո և հետագայում պարբերաբար՝ օրական առնվազն մեկ անգամ այցելի նրանց, ինչպես նաև նրանց շտապ բուժօգնություն և բուժում ապահովի, երբ դա անհրաժեշտ է: Դրաով հանդերձ, բուժանձնակազմը պետք է բանտի տնօրենին տեղեկացնի բոլոր այն դեպքերի մասին, երբ մեկուսի բանտարկության մեջ գտնվելը լրջորեն սպառնում է բանտարկյալի առողջությանը:

Եզրակացություն

64. Այսպիսի չափանիշներ սահմանելիս ԽԿԿ-ի նպատակը եղել է այն, որպեսզի նվազագույնի հասցվի մեկուսի բանտարկության կիրառումը բանտերում, ոչ միայն այն մտավոր, ֆիզիկական և սոցիալական վնասի պատճառով, որ կարող է հասցվել բանտարկյալներին, այլև հաշվի առնելով այն հնարավորությունները, որ դա կարող է ստեղծել միտումնավոր բռնության համար: ԽԿԿ-ն համարում է, որ մեկուսի բանտարկություն պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում՝ որպես ծայրահեղ միջոց և հնարավոր ամենակարճ ժամկետով:

Մեկուսի բանտարկության մեջ գտնվողները պետք է պահվեն տանելի պայմաններում: Բացի դրանից, այդ միջոցը պետք է ուղեկցվի բանտարկյալների նկատմամբ նվազագույն սահմանափակումներով՝ համապատասխան այդ միջոցի նպատակներին և հենց բանտարկյալների վարքին, և պետք է միշտ զուգորդվի դրա հետ կապված հարցերը կարգավորելու անձնակազմի եռանդուն ջանքերով: Ավելի կոնկրետ, մեկուսի բանտարկության ռեժիմները պետք է լինեն հնարավորինս դրական և ուղղված լինեն այն գործոնների կարգավորմանը, որոնք նման միջոցը

դարձրել են անհրաժեշտ: Բացի այդ, մեկուսի բանտարկության որոշում կայացնելու գործընթացը և այդ որոշման վերանայումը պետք է ուղեկցվեն իրավական և իրական երաշխիքներով:

Բանտերում առկա բարդ իրավիճակներին մեկուսի բանտարկության՝ իբրև համաչափ արձագանքի ապահովումը կնպաստի վարչակազմի և բանտարկյալների միջև դրական փոխգործակցությանը և կսահմանափակի վնասը, որն ամենից առաջ հասցվում է այն անձանց, որոնք հաճախ արդեն իսկ ամենաանհանգիստ բանտարկյալների շարքերում են:

Բժշկական սպասարկումն ազատազրկման վայրերում

Քաղվածք 3-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (93) 12]

30. Ազատազրկված անձանց բժշկական սպասարկումը ուղղակիորեն ԽԿԿ-ի լիազորություններին վերաբերող բնագավառ է[1] :Բժշկական սպասարկման անբավարար մակարդակը կարող է հանգեցնել «անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք» հասկացությանը համապատասխանող իրավիճակի: Ավելին, բժշկական սպասարկումը տվյալ հիմնարկում ամենայն հավանականությամբ կարող է կարևոր դեր խաղալ դաժան վերաբերմունքի հետևանքով առաջացած տանջանքների մեղմացման գործում, ինչպես բուն հիմնարկում, այնպես էլ այլ վայրերում (հատկապես ոստիկանական հիմնարկներում):Բացի այդ, բժշկական սպասարկումն իր հատուկ կոչման շնորհիվ կարող է դրական ազդեցություն ունենալ կյանքի ընդհանուր մակարդակի վրա այն հիմնարկում, որտեղ նա կիրառվում է:

31. Հաջորդ կետերում նկարագրվում են հիմնական հարցերից մի քանիսը, որոնցով զբաղվել են Կոմիտեի պատվիրակությունները ազատազրկման վայրերում բժշկական սպասարկման վիճակը ուսումնասիրելու ժամանակ: Սակայն, Կոմիտեն ի սկզբանե ցանկանում է ընդգծել իր կողմից կարևորած այն ընդհանուր սկզբունքը, որն ընդունված է մինչ այժմ ԽԿԿ-ի կողմից այցելված երկրներից մեծամասնությունում, եթե ոչ բոլորում: Այդ սկզբունքը ամրագրում է այն դրույթը, որ ազատազրկված անձինք իրավունք ունեն նույն մակարդակի բժշկական սպասարկման, ինչպիսիք ունեն տվյալ հասարակության մեջ ազատության մեջ գտնվող անձինք: Այս սկզբունքը սերտորեն կապված է անձի հիմնական իրավունքների հետ:

32. Նկատառումները, որոնցով ղեկավարվել է Կոմիտեն իր այցելությունների ընթացքում ազատազրկման վայրերում բժշկակն սպասարկման ուսումնասիրության ժամանակ, կարելի է շարադրել ըստ հետևյալ կետերի.

ա) բժշկի ծառայություններից օգտվելու հնարավորություն,
բ) համարժեք բժշկական սպասարկում,
գ) հիվանդի համաձայնությունը և բուժման գաղտնիությունը,
դ) հիվանդությունների կանխարգելում,

---

[1] Հարկ է նաև հղում կատարել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1998թ. ապրիլի 8-ին ընդունված թիվ R (98) 7 Հանձնարարականին, որը վերաբերում է բժշկական սպասարկման էթիկական և կազմակերպչական հարցերին ուղղիչ հիմնարկներում:

ե) մարդասիրական օգնություն,
զ) պրոֆեսիոնալ անկախություն,
է) պրոֆեսիոնալ իրազեկություն:

ա) Բժշկի ծառայություններից օգտվելու հնարավորություն

33. Ազատազրկման վայր մուտք գործելուն պես,բոլոր ազատազրկված անձինք պետք է անհապաղ ենթարկվեն բուժզննման տվյալ հիմնարկի բժշկական անձնակազմի կողմից: Մինչ օրս ներկայացրած հաշվետվություններում ԽԿԿ-ն առաջարկում է, որ ամեն նոր ժամանած ազատազրկված անձ անմիջապես պատշաճ կերպով և անհրաժեշտության դեպքում ֆիզիկապես հետազոտվի բժշկի կողմից: Հարկ է ավելացնել, որ որոշ երկրներում հետազոտումը անց է կացվում բժշկի ղեկավարության տակ աշխատող որակյալ բուժքրոջ կողմից: Այդպիսի մոտեցումը կարելի է դիտարկել որպես առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման ձև[1]:

Ցանկալի է նաև, որ ազատազրկված անձինք ժամանելուն պես ստանան բժշկական ծառայության առկայության և նրա գործունեության, ինչպես նաև հիգիենայի հիմնական միջոցների մասին տեղեկացնող բուկլետ կամ բրոշյուր:

34. Ազատազրկված անձինք պետք է ցանկացած ժամանակ բժշկին դիմելու հնարավորություն ունենան, անկախ իրենց ազատազրկման ռեժիմից (ինչ վերաբերում է հատկապես մենախցերում պահվող անձանց բժշկին դիմելու հնարավորությանը, տե՛ս Կոմիտեի 2-րդ Ընդհանուր հաշվետվություն՝ CPT/Inf (92) 3). 56 կետը: Բժշկական սպասարկումը պետք է կազմակերպված լինի այնպես, որ բժշկի խորհրդատվությունից օգտվելու խնդրանքը բավարարվի առանց ավելորդ հապաղման:

Պետք է ապահովվի ազատազրկված անձանց բուժօգնության դիմելու գաղտնիությունը, օրինակ՝ փակ ծրարի մեջ ուղարկվող նամակի միջոցով: Ավելին, ազատազրկման վայրի ծառայողները չպետք է փորձեն վերահսկել բժշկին դիմելու խնդրանքը:

---

[1] Այս պահանջը հետագայում վերաձևակերպվել է հետևյալ կերպ. յուրաքանչյուր ազատազրկված անձ, կալանավայր մուտք գործելուց հետո, պետք է պատշաճ ձևով քննվի և ֆիզիկապես հետազոտվի բժշկի կողմից հնարավորին չափ շուտ, բացառությամբ այն հատուկ դեպքերի, երբ քննումը/հետազոտումը պետք է կատարվի մուտք գործելու օրը, հատկապես,եթե հարցը վերաբերում է քննչական հիմնարկներին: Այդպիսի բժշկական զննումը կարող է նաև իրականացնել բժշկի ղեկավարության տակ աշխատող բարձր որակավորում ունեցող բուժքույրը:

35. Ազատազրկման վայրի բժշկական ծառայությունը պետք է հնարավորություն ունենա ազատազրկված անձանց ապահովելու առնվազն կանոնավոր ամբուլատոր խորհրդատվությամբ և շտապ բուժօգնությամբ (նաև կարող է ունենալ մահճակալներով ապահովված հիվանդանոցային տիպի բաժանմունք): Ազատազրկված ամեն մի անձ պետք է հնարավորություն ունենա օգտվելու բարձրակարգ ատամնաբույժի ծառայություններից: Բացի այդ, ազատազրկման վայրերում աշխատող բժիշկները պետք է մասնագետներ ներգրավելու հնարավորություն ունենան:

Շտապ բժշկական օգնության անհրաժեշտության դեպքում պետք է միշտ բժշկին դիմելու հնարավորություն լինի: Բացի այդ, ազատազրկման վայրում միշտ պետք է ներկա լինի առաջին օգնություն ցուցաբերելու ունակ անձ, ցանկալի է բուժքրոջ պաշտոնապես հաստատված որակավորմամբ:

Ամբուլատոր բուժումը պետք է վերահսկվի բուժանձնակազմի կողմից. շատ դեպքերում ազատազրկված անձի նախաձեռնությունը բավարար չի բուժումը շարունակելու համար:

36. Պետք է հնարավոր լինի օգտվել լավ սարքավորված քաղաքացիական հիվանդանոցի կամ ազատազրկման վայրի հիվանդանոցի բժշկական ծառայություններից:

Քաղաքացիական հիվանդանոցի օգնությանը դիմելու անհրաժեշտության դեպքում ծագում է անվտանգության ապահովման հարց: Այդ առումով Կոմիտեն ընդգծում է, որ բուժման նպատակով հիվանդանոց ուղարկվող անձինք չպետք է ֆիզիկապես գամվեն իրենց մահճակալներին կամ կահույքի այլ առարկաներին՝ անվտանգությունն ապահովելու համար: Պետք է գտնվեն անվտանգության պահանջները բավարարող այլ միջոցներ: Խնդրի հնարավոր լուծումներից մեկը՝ այդպիսի հիվանդանոցներում պահակային ստորաբաժանման ստեղծումն է:

37. Ամեն անգամ, երբ ազատազրկված անձանց հիվանդանոց տեղավորելու կամ հիվանդանոցի մասնագետների կողմից բուժզննման ենթարկելու անհրաժեշտություն է ծագում, նրանց հարկավոր է տեղափոխել այնպես և այնքան շտապ, որքան պահանջում է նրանց առողջական վիճակը:

բ) Համարժեք բժշկական օգնություն

i) ընդհանուր բժշկություն

38. Ազատազրկման վայրերում բժշկական սպասարկումը պետք է ապահովի բուժում և խնամք, ինչպես նաև համապատասխան սնունդ,ֆիզիոթերապևտիկ բուժում, վերականգնողական կամ ցանկացած այլ անհրաժեշտ հատուկ բուժում՝ համարժեք այն բուժմանը, որից օգտվում են հիվանդները նման հիմնարկների սահմաններից դուրս: Պետք է նաև նախատեսվի հիմնարկի ապահովվածությունը բուժ և խնամող անձնակազմով, տեխնիկական մասնագետներով, տարածքներով ու սարքավորումներով:

Անհրաժեշտ է դեղամիջոցների մատակարարման և բաշխման համապատասխան վերահսկում, իսկ դեղամիջոցների պատրաստումը պետք է հանձնարարվի արհեստավարժ բուժանձնակազմին (դեղագործ, բուժքույր և այլն):

39. Յուրաքանչյուր հիվանդի համար պետք է լրացվի բժշկական քարտ, որը կպարունակի ախտորոշաբանական տվյալներ, ինչպես նաև ընթացիկ գրանցումներ հիվանդի վիճակի փոփոխության և ցանկացած հատուկ բուժզննման մասին, որին ենթարկվել է հիվանդը: Հիվանդին այլ հիմնարկ տեղափոխելու դեպքում քարտը պետք է ուղարկվի այն հաստատության բժիշկներին, ուր տեղափոխվում է ազատազրկված անձը:

Բացի այդ, բուժանձնակազմը պետք է ամենօրյա գրանցումներ կատարի մատյանի մեջ հիվանդներին վերաբերող առանձին դեպքերի մասին: Նման գրանցումներն օգտակար են այնքանով, որքանով ընդհանուր պատկերացում են տալիս ազատազրկման տվյալ հիմնարկում առողջապահության կազմակերպման մասին, ինչպես նաև լուսաբանում են որոշակի խնդիրներ, որոնք կարող են ծագել:

40. Բժշկական ծառայության հաջող աշխատանքի նախադրյալ է հանդիսանում քննարկումներ անցկացնելու նպատակով, բժիշկների և խնամող անձնակազմի կանոնավոր հանդիպումները և ծառայությունը ղեկավարող ավագ բժշկի կողմից աշխատանքային խմբեր ստեղծելու հնարավորությունը:

ii) հոգեբուժական օգնություն

41. Ազատազրկված անձանց մոտ ավելի հաճախ են դիտվում հոգեկան շեղումների ախտանիշներ, քան բնակչության մոտ ընդհանրապես:Հետևաբար յուրաքանչյուր ազատազրկման վայրի բժշկական ծառայությանը պետք է կցվի հոգեբուժության մեջ մասնագիտացած բժիշկ, իսկ աշխատող բուժքույրերի մի մասը պետք է նախապես հատուկ ուսուցում ստանա:

Բժիշկներով,բուժքույրերով և այլ բուժանձնակազմով համալրումը, ինչպես նաև ազատազրկման վայրերի ներքին հատակագծումը պետք է հնարավորություն տա կանոնավոր կերպով իրականացնելու դեղորայքային, հոգեթերապևտիկ և աշխատանքային թերապիայի ծրագրերը:

42. Կոմիտեն հատկապես ընդգծում է ազատազրկման վայրերի վարչակազմի դերը հոգեկան շեղումներով (այսինքն՝ դեպրեսիայով, ռեակտիվ վիճակներով և այլն) տառապող անձանց վաղաժամ հայտնաբերման գործում՝ պահման պայմանների մեջ համապատասխան շտկումներ մտցնելու նպատակով: Պահակային անձնակազմի որոշ անդամների համապատասխան բժշկական պատրաստվածությունը կարող է նպաստել գործունեության այդպիսի ուղղվածությանը:

43. Հոգեկան հիվանդությամբ տառապող ազատազրկված անձանց անհրաժեշտ է պահել և խնամել բավականաչափ սարքավորումներ և պատշաճ ձևով պատրաստված անձնակազմ ունեցող բուժական հիմնարկում: Այդպիսի հիմնարկ կարող է լինել սովորական հոգեբուժական հիվանդանոցը, կամ ուղղիչ համակարգի շրջանակներում գործող հատուկ սարքավորված հոգեբուժական բաժանմունքը:

Մի կողմից, հաճախ առաջադրվում են փաստարկներ, որ բարոյական նկատառումներով,ազատազրկման ենթարկված հոգեկան հիվանդներին հարկ է հոսպիտալացնել պատժական սիստեմից դուրս, այն հիմնարկներում, որոնց համար պատասխանատվություն է կրում առողջապահության պետական ծառայությունը: Մյուս կողմից, կարելի է պնդել, որ հոգեբուժական հաստատության առկայությունը ուղղիչ համակարգի սահմաններում,հնարավորություն է տալիս իրականացնել հիվանդների խնամքը անվտանգության առավել բարենպաստ պայմաններում, և բարձրացնել սոցիալական և բժշկական ծառայությունների աշխատանքի արդյունավետությունը:

Որ մոտեցումն էլ ընտրվի, այդպիսի հոգեբուժական հիմնարկում տեղերի քանակը պետք է բավարար լինի, այլապես չափազանց հաճախ կձգձգվի հիվանդի անհրաժեշտ տեղափոխումը:Նման անձի տեղափոխումը հոգեբուժական հիմնարկ պետք է դիտարկվի որպես առաջնահերթ կարևորության հարց:

44. Հոգեկան խանգարումներ ունեցող, ագրեսիվ հիվանդների բուժումը պետք է իրականացվի խիստ հսկողության տակ, ապահովելով հիվանդի խնամքը և անհրաժեշտության դեպքում համադրելով այդ հանգստացնող միջոցների օգտագործման հետ: Ֆիզիկական ներգործման միջոցներին դիմելը պետք է արդարացված լինի միայն առանձնահատուկ դեպքերում, ընդ որում, եթե եղել է նման միջոցներ կիրառելու առաջարկ, ապա պահանջվում է կամ բժշկի անմիջական հրահանգը, կամ նրա հավանությունը:Ֆիզիկական ներգործման միջոցների օգտագործումը պետք է կասեցվի առաջին իսկ հնարավորության դեպքում: Պետք չէ երբևիցե դրանք կիրառել, կամ նրանց կիրառումը երկարաձգել որպես պատժամիջոց:

Այն դեպքում, երբ դիմում են ֆիզիկական ներգործման մեթոդներին, անհրաժեշտ է գրանցում անել ինչպես հիվանդի քարտի մեջ, այնպես էլ համապատասխան մատյանում, նշելով տվյալ մեթոդի օգտագործման ժամկետի սկիզբն ու ավարտը, ինչպես նաև այդ դեպքի հանգամանքները և այդպիսի մեթոդներին դիմելու պատճառները:

գ) Հիվանդի համաձայնությունը և բուժման գաղտնիությունը

45. Ազատ արտահայտած համաձայնությունը և գաղտնիության պահպանումը հանդիսանում են մարդու հիմնական իրավունքները: Դրանք նաև կարևոր են վստահության մթնոլորտ ստեղծելու համար, ինչը բժշկի և հիվանդի փոխհարաբերությունների անհրաժեշտ մասնիկն է, մանավանդ, այն ազատազրկման վայրերում, որտեղ հնարավոր չի ազատորեն ընտրել անձնական բժշկին:

i) հիվանդի համաձայնությունը

46. Հիվանդներին պետք է տրամադրվեն իրենց առողջական վիճակի, բուժման կուրսի և նշանակված դեղամիջոցների մասին բոլոր կարևոր տեղեկությունները (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական հաշվետվության տեսքով): Ցանկալի է, որ հիվանդները իրավունք ունենան ծանոթանալու իրենց բժշկական քարտի բովանդակությանն անմիջապես, բացառությամբ այն դեպքերի, երբ դա խորհուրդ չի տրվում բուժական նկատառումներով:

Նրանք պետք է հնարավորություն ունենան դիմելու, որ այդ տեղեկատվությունը փոխանցվի իրենց ընտանիքներին, դատապաշտպաններին կամ հաստատության սահմաններից դուրս գործող բժշկին:

47. Առողջ դատողություն և գիտակցություն ունեցող յուրաքանչյուր հիվանդ կարող է հրաժարվել բուժումից, ինչպես նաև այլ բժշկական միջամտությունից: Ցանկացած շեղում այս հիմնական սկզբունքից պետք է հիմնված լինի օրենքի վրա և թույլատրելի՝ միայն հստակ և խիստ որոշակի առանձնահատուկ պայմաններում, ինչպեսև դա արվում է ամբողջ բնակչության համար:

Որպես կանոն, ծանր կացություն է առաջանում, երբ հիվանդի որոշումը հակասում է բժշկի վրա դրված հիվանդի առողջության մասին հոգալու պարտավորությանը: Դա հնարավոր է այն դեպքում, երբ հիվանդը գտնվում է սեփական համոզմունքների ազդեցության տակ (օրինակ՝ հրաժարվում է արյան փոխներարկումից) կամ մտադրված է մարմնական վնաս հասցնել, կամ մինչև անգամ խեղանդամ դարձնել իրեն՝ սեփական պահանջները պնդելու, իշխանության դեմ պայքարելու կամ որևէ իր համոզմունքը արտահայտելու համար:

Հացադուլի դեպքում, երբ հիվանդի վիճակը լրջորեն վատանում է, որոշ երկրների պետական մարմինները կամ պրոֆեսիոնալ կազմակերպությունները մահը կանխելու նպատակով պահանջում են բժշկի միջամտությունը: Այլ երկրներում բուժող բժիշկը իրավունք ունի վերջնական կլինիկական որոշում ընդունել միայն խորհրդատվություններ ստանալուց և գործին վերաբերող բոլոր փաստերը կշռադատելուց հետո:

48. Ինչ վերաբերում է ազատազրկված անձանց բժշկական հետազոտման խնդրին, ապա պարզ է, որ պետք է մեծ զգուշություն ցուցաբերել, քանի որ նման հետազոտությանը մասնակցելու նրանց համաձայնությունը կարող է պայմանավորված լինել այն փաստով, որ իրենք ազատազրկված են: Պետք է լինեն երաշխիքներ, որ ազատազրկված անձը իր համաձայնությունը տվել է առանց ճնշման ենթարկվելու և սպառիչ տեղեկատվության հիման վրա:

Կիրառվող կանոնները պետք է հասարակության կողմից ընդունված լինեն և նախատեսեն բարոյականության հարցերով զբաղվող խորհրդի միջամտությունը: Կոմիտեն ցանկանում է նաև ավելացնել, որ այն աջակցում է ազատազրկման վայրի ախտաբանության, համաճարակության, կամ ազատազրկված անձանց առողջական վիճակի այլ հարցերին վերաբերող հետազոտություններին:

ii) գաղտնիություն

50. Ազատազրկման վայրերում բժշկական գաղտնիքը պետք է պահպանվի ճիշտ այնպես, ինչպես հասարակությունում ընդհանրապես: Հիվանդների քարտերի վարումը պետք է լինի բժշկի պարտականությունը:

51. Ազատազրկված անձանց բուժզննումը (ժամանման պահին կամ ավելի ուշ) պետք է կատարվի ազատազրկման վայրում աշխատող անձնակազմի լսելիության սահմաններից և, եթե համապատասխան բժիշկը հակառակը չպահանջի՝ տեսադաշտից դուրս: Ազատազրկված անձի բուժզննումը պետք է կատարվի ոչ թե խմբերով, այլ անհատականորեն:

դ) Հիվանդությունների կանխարգելում

52. Ազատազրկման վայրերում առողջապահական ծառայության խնդիրները չպետք է սահմանափակվեն միայն հիվանդների բուժմամբ: Նա պետք է պատասխանատու լինի նաև սոցիալական և նախապաշտպանական բժշկության համար:

i) հիգիենա

53. Ազատազրկված անձանց պահելու վայրում գործող բուժանձնակազմը, որն անհրաժեշտության դեպքում համագործակցում է այլ մարմինների հետ, պարտավոր է հետևել սննդի կազմակերպմանը (քանակին, որակին, պատրաստմանը և բաշխմանը), հիգիենայի կանոնների պահպանմանը (հագուստի և անկողնային պարագաների մաքրությանը, սանհանգույցներից և մշտական ջրից օգտվելու հնարավորությանը), ինչպես նաև ապահովել ջեռուցումը, լուսավորումը և օդափոխությունը: Անհրաժեշտ է նաև նախատեսել աշխատանքի և մաքուր օդում զբոսանքի կազմակերպումը:

Վնասակար մթնոլորտը, խցերի գերբնակեցումը, երկարատև մեկուսացումը և անգործունեությունը կարող են ազատազրկված անձին բուժօգնություն ցույց տալու անհրաժեշտություն առաջացնել կամ ստիպել դիմելու պատասխանատու մարմիններին բարելավելու ընդհանուր վիճակը:

ii) վարակիչ հիվանդություններ[1]

54. Ազատազրկման վայրերում գործող բժշկական ծառայությունները պետք է կանոնավոր կերպով տեղեկատվություն տարածեն վարակիչ հիվանդությունների (հատկապես հեպատիտի, ՁԻԱՀ-ի, պալարախտի, մաշկային վարակների)մասին ինչպես ազատազրկված անձանց, այնպես էլ հաստատության անձնակազմի շրջանում:Անհրաժեշտության դեպքում, նրանք, ովքեր գտնվում են ազատազրկված անձի հետ հաճախակի շփման մեջ պետք է ենթարկվեն բժշկական վերահսկողության (անձինք, ովքեր պահվում են նույն խցերում, հիմնարկի անձնակազմը, հաճախակի այցելուները):

55. Ինչ վերաբերում է մասնավորապես ՁԻԱՀ-ին,ապա անհրաժեշտ է խորհրդատվություն տրամադրել ցանկացած բուժզննումից առաջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հետո: Ազատազրկման վայրերում անհրաժեշտ է ապահովել անձնակազմի մշտական ուսուցումը՝ կանխարգելիչ միջոցների, դրական ՄԻԱՎ ունեցող անձանց հետ վարվելու վերաբերյալ, և համապատասխան հրահանգներ տալ անձնակազմին խտրականության անթույլատրելիության և գաղտնիության պահպանման մասին:

56. ԽԿԿ-ն ցանկանում է ընդգծել, որ գոյություն չունի ոչ մի բժշկական հիմք, իրեն առողջ զգացող, դրական ՄԻԱՎ ունեցող ազատազրկված անձանց մեկուսացնելու համար[2] :

iii) ինքնասպանության կանխարգելում

57. Ինքնասպանության կանխարգելումը ազատազրկման վայրերի բժշկական ծառայության լիազորություններին վերաբերող ևս մի խնդիր է: Անհրաժեշտ է հիմնարկում այդ խնդրի մասին բավարար իրազեկություն ապահովել և համապատասխան միջոցառումներ նախատեսել:

58. Ժամանելու պահին արված բուժզննումը և ընդհանուր առմամբ ընդունելու գործընթացը պետք է այս հարցում կարևոր դեր խաղան. կանոնավոր կերպով կատարված բուժզննումը կարող է ի հայտ բերել այդպիսի վտանգի ենթակա ազատազրկված անձանց մի մասին և մասնակիորեն թեթևացնել անհանգստությյան զգացումը, որ ունենում են նոր մուտք գործած բոլոր ազատազրկվածները:

---

[1] Տե՛ս նաև էջ 16 «Բանտարկություն», «Վարակիչ հիվանդություններ» բաժինը:

[2] Հետագայում վերաձևակերպվել է հետևյալ կերպ. բժշկական հիմքեր չկա՝ ազատազրկված անձին մեկուսացնելու միայն դրական ՁԻԱՀ ունենալու պատճառով:

Բացի այդ, ազատազրկման վայրերի անձնակազմը, անկախ կատարվող աշխատանքից, պետք է ծանոթ լինի ինքնասպանության վտանգի նախանշանների հետ (ինչը ենթադրում է նախնական ուսուցում): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ դատից անմիջապես առաջ ու հետո և որոշ դեպքերում ազատմանը նախորդող շրջանում դիտվում է ինքնասպանության վտանգի աճ:

59. Ինքնասպանության ռիսկի խմբին դասվող անձը պետք է հատուկ հսկողության տակ գտնվի այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է: Բացի այդ, կյանքից զրկելու միջոցները (պատուհանավանդակի ձողերը, կոտրված ապակին, գոտիները, փողկապները և այլն) չպետք է մատչելի լինեն նման անձանց համար:

Հարկ է ձեռնարկել ռիսկի խմբին դասվող անձանց վերաբերյալ տեղեկությունների կանոնավոր հոսքը երաշխավորող քայլեր՝ ինչպես տվյալ հիմնարկի ներսում, այնպես էլ, անհրաժեշտության դեպքում, հիմնարկների միջև (ավելի ճիշտ, այդ հիմնարկների համապատասխան առողջապահական ծառայությունների միջև):

iv) բռնության կանխում

60. Ազատազրկման վայրերի բժշկական ծառայությունները կարող են իրենց մասնակցությունն ունենալ ազատազրկված անձանց նկատմամբ բռնությունը կանխելու գործում՝ մարմնական վնասվածքների սիստեմատիկ գրանցման և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան մարմիններին ընդհանուր տեղեկություններ տրամադրելու միջոցով: Կարող են տեղեկություններ տրամադրվել նաև առանձին դեպքերի մասին, թեև նման միջոցներ հարկ է ձեռնարկել միայն ազատազրկված համապատասխան անձանց համաձայնության դեպքում:

61. Հիմնարկում ընդունելու պահին կատարվող բուժզննման ընթացքում ազատազրկվածի մոտ հայտնաբերված բռնության կիրառման բոլոր նշանները պետք է լրիվ գրանցվեն այդ անձի համապատասխան հայտարարությունների և բժշկի եզրակացությունների հետ միասին:Բացի այդ, այդ տեղեկությունները պետք է տրամադրվեն ազատազրկված անձին:

Երբ ազատազրկված անձը ազատազրկման վայրում բռնության ենթարկվելիս կամ քննության նպատակով ոստիկանությունում ժամանակավոր արգելանքից հետո կալանավայր վերադառնալիս ենթարկվում է բուժզննման, պետք է կիրառվի նույն մոտեցումը (տե՛ս նաև ԽԿԿ-ի 2-րդ Ընդհանուր հաշվետվություն [CPT/Inf (92) 3], կետ 53):

62. Առողջապահական ծառայությունը կարող է հայտնաբերած մարմնական վնասվածքների մասին պարբերական վիճակագրություն կազմել՝ ազատազրկման վայրերի վարչակազմին, արդարադատության նախարարությանը և այլոց ներկայացնելու համար:

v) սոցիալական և ընտանեկան կապեր

63. Բժշկական ծառայությունները կարող են նաև նպաստել ազատազրկմանը սովորաբար ուղեկցող սոցիալական և ընտանեկան կապերի խզումների նվազեցմանը: Համապատասխան սոցիալական ծառայությունների հետ միասին նա պետք է օժանդակի արտաքին աշխարհի հետ ազատազրկված անձանց շփմանը աջակցող միջոցներին, ինչպիսիք են՝ ընտանիքի անդամների կամ ամուսնու/մտերիմ ընկերոջ հետ հանդիպումների համար նախատեսված տեղերի պատշաճ կահավորումը և համապատասխան պայմանների ստեղծումը. ընտանեկան, մասնագիտական, կրթական և սոցիալ-մշակութային միջավայրում ժամանակ անցկացնելու թույլտվությունը:

Հանգամանքներից ելնելով, ազատազրկման վայրի բժիշկը կարող է միջոցներ ձեռնարկել, որ ազատազրկված անձինք և իրենց ընտանիքները նպաստ ստանան և շարունակեն օգտվել սոցիալական ապահովագրության արտոնություններից:

ե) Հումանիտար օգնություն

64. Գոյություն ունեն ազատազրկվածների մի քանի հատկապես խոցելի խմբեր: Հաստատության բժշկական ծառայությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի նրանց կարիքների վրա:

i) մայր և երեխա

65. Ընդունված սկզբունքն այն է, որ երեխաները չպետք է ծնվեն ազատազրկման վայրերում և Կոմիտեի փորձը ցույց է տալիս, որ այդ սկզբունքը պահպանվում է:

66. Մորն անհրաժեշտ է թույլատրել առնվազն որոշակի ժամանակամիջոց անցկացել երեխայի հետ: Եթե մայրն ու երեխան միասին գտնվում են ազատազրկման վայրում, ապա նրանք պետք է ապահովվեն մանկամսուրին համարժեք պայմաններով և հետծննդյան ու մանկական խնամքի փորձ ունեցող մասնագետներով:

Երկարաժամկետ միջոցառումների մասին որոշումները՝ հատկապես երեխայի հանձնումը հասարակությանը և բաժանումը մորից պետք է յուրաքանչյուր անհատական դեպքում ընդունվեն՝ հիմնվելով մանկավարժահոգեբուժական և բժշկասոցիալական տեսակետների վրա:

ii) դեռահասներ

67. Դեռահասության շրջանի համար բնորոշ են անձի որոշակի փոխակերպումները, որոնք պահանջում են ջանքեր գործադրել անբավարար սոցիալական ադապտացիայի վտանգը մեղմելու համար:

Կալանքի տակ գտնվող դեռահասներին հարկ է թույլատրել մնալ իրենց համար հատկացված տեղերում՝ շրջապատված անձնական իրերով, և գտնվել սոցիալապես բարենպաստ խմբերում: Նրանց նկատմամբ կիրառվող ռեժիմը պետք է հիմնված լինի ինտենսիվ գործունեության վրա, որն իր մեջ պետք է ներառի սոցիալ-կրթական հանդիպումներ, սպորտ, կրթություն, մասնագիտական ուսուցում, պահակախմբի ուղեկցությամբ կազմակերպված էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ՝ ըստ ընտրության:

iii) անձի ներքնաշխարհի խանգարումներով տառապող ազատազրկվածներ

68. Ազատազրկման վայրերում գործող բժշկական ծառայության խնամքի տակ գտնվող հիվանդների մեջ հանդիպում են անհավասարակշիռ, մարգինալ անձնավորություններ, որոնց անցյալում նկատվել են ընտանեկան ցնցումներ, թմրանյութերի երկարատև օգտագործում, իշխանությունների հետ ընդհանրումներ և սոցիալական այլ անհաջողություններ: Նրանք կարող են լինել անկառավարելի, ունենալ ինքնասպանություն գործելու միտումներ կամ անհանդուրժելի սեռական վարք և հիմնականում ի վիճակի չլինեն վերահսկել սեփական գործողությունները և հոգալ սեփական կարիքները:

69. Ազատազրկման ենթարկված այդ անձանց կարիքները զուտ բժշկական բնույթի չեն, բայց այն հաստատության բժիշկը, որտեղ նրանք պահվում են, կարող է նպաստել այդ անձանց համար նախատեսված սոցիալ-թերապևտիկ ծրագրերի մշակմանը, որոնք կիրագործվեն ըստ հասարակության մեջ ընդունված նորմերի և ազատազրկման վայրերի խիստ հսկողության տակ գտնվող ստորաբաժանումներում:

Այդպիսի ստորաբաժանումներն ի վիճակի են մեղմել ազատազրկվածների նվաստացուցիչ դրությունը, սեփական անձի նկատմամբ ունեցած արհամարանքն ու

ատելությունը, հաղորդել նրանց պատասխանատվության զգացում և նախապատրաստել հասարակության մեջ լիարժեք կյանքով ապրելուն: Նման ծրագրերի անմիջական առավելություններից մեկն էլ այն է, որ այդ ծրագրերին ակտիվ և անձնուրաց մասնակցություն են ունենում ազատազրկման վայրերի աշխատակիցները:

iv) երկարատև ազատազրկման համար ոչ պիտանի անձինք

70. Ազատազրկվածների այս խմբին պատկանող տիպիկ օրինակներ են՝ անձինք, որոնց բժշկական կանխատեսման համաձայն կարճ ժամանակ է մնացել ապրելու. ովքեր տառապում են ծանր հիվանդություններով, որոնց հնարավոր չէ կանոնավոր կերպով բուժել ազատազրկման պայմաններում. լուրջ ֆիզիկական թերություններ ունեցող անձինք և տարեցները: Այդպիսի անձանց երկարատև պահելը ազատազրկման վայրի պայմաններում կարող է անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծել: Նման դեպքերում այն հաստատության բժիշկը, որտեղ պահվում են այդ անձինք, համապատասխան այլընտրանքային միջոցներ ձեռնարկելու նպատակով պարտավոր է զեկուցագիր ներկայացնել պատասխանատու մարմնին:

զ) Մասնագիտական անկախություն

71. Յուրաքանչյուր ազատազրկման վայրում գտնվող բժշկական ծառայության աշխատակիցը ամենայն հավանականությամբ ենթակա է ռիսկի: Հիվանդների մասին հոգ տանելու նրա պարտականությունը հաճախ կարող է հակասության մեջ մտնել համապատասխան հաստատության ղեկավարության նկատառումների կամ անվտանգության կանոնների հետ: Դա կարող է առաջացնել բարդ բարոյական հարցեր և ընտրության խնդիր: Առողջապահական հարցերում անձնակազմի անկախությունն երաշխավորելու համար, Կոմիտեն կարևոր է համարում անձնակազմի սերտ կապվածությունը հասարակության առողջապահության հիմնական համակարգի հետ:

72. Ազատազրկման վայրի բժիշկը, անկախ գրված պաշտոնից, իր որոշումներում պետք է առաջնորդվի միայն բժշկական չափանիշներով:

Բժշկական աշխատանքի որակը և արդյունավետությունը պետք է գնահատվի բժշկական համապատասխան լիազորություններ ունեցող մարմնի կողմից: Առկա միջոցները նմանապես պետք է տնօրինվեն այդ մարմնի, այլ ոչ թե անվտանգության և գործերի կառավարման համար պատասխանատու մարմինների կողմից:

73. Ազատազրկման վայրում աշխատող բժիշկը հանդիսանում է հիվանդի անձնական բժիշկը: Հետևաբար, բժիշկ-հիվանդ փոխհարաբերությունների պահպանման նպատակով, նրանից չի կարելի պահանջել հաստատելու, որ ազատազրկված անձի առողջական վիճակը թույլ է տալիս իրեն պատժի ենթարկելու: Նա այս կամ այն մարմնի խնդրանքով չպետք է կատարի որևէ անձնական խուզարկություն կամ զննում, բացառությամբ արտակարգ իրավիճակների, երբ հնարավոր չէ հրավիրել որևէ այլ բժիշկի:

74. Հարկ է նաև նշել, որ ազատազրկման վայրերում մասնագիտական տեսակետից բժիշկի ազատությունը սահմանափակվում է այդ վայրերին բնորոշ իրավիճակով. բժիշկը չի կարող ազատորեն ընտրել իր հիվանդներին, քանի որ ազատազրկված անձինք անմիջական հնարավորություն չունեն բժշկական այլընտրանքի: Բժիշկը չի ազատվում իր պարտականություններից նույնիսկ այն ժամանակ, երբ հիվանդը խախտում է բժշկական կանոնները կամ դիմում է սպառնալիքների կամ բռնության:

է) Մասնագիտական ձեռնհասություն

75. Ազատազրկման վայրերում աշխատող բժիշկներն ու բուժքույրերը պետք է հատուկ գիտելիքներ ունենան, որոնք իրենց հնարավորություն կտան աշխատել ազատազրկման վայրերում շեղումների յուրահատուկ ձևերի հետ և իրենց բուժման մեթոդները հարմարացնել ազատազրկման մեջ պահելու պայմաններին:

Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել բռնության կանխարգելման, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև նրա դրսևորումների դեմ պայքարի համար նախատեսված, մասնագիտական մոտեցումներ:

76. Բավարար թվով աշխատակիցներով ապահովելու համար բուժքույրերին հաճախ օգնում են սանիտարները, որոնց մի մասը համալրվում է ազատազրկման վայրի անձնակազմից: Տարբեր մակարդակներում անհրաժեշտ փորձը պետք է փոխանցվի բարձրորակ աշխատակիցների կողմից և պարբերաբար նորացվի:

Երբեմն սանիտարի դերում թույլ է տրվում հանդես գալ ազատազրկվածներին: Անկասկած, այդպիսի մոտեցումն այն առավելությունն ունի, որ նրանցից մի մասն ապահովվում է հանրօգուտ աշխատանքով: Սակայն սա պետք է դիտարկվի որպես ծայրահեղ միջոց: Բացի այդ, ազատազրկման վայրերում պահվող անձինք երբեք չպետք է ներգրավվեն դեղորայքի բաժանմանը:

77. Վերջապես, ԽԿԿ-ն նշում է, որ իր կարծիքով ազատազրկման պայմաններում բուժսպասարկման ապահովման առանձնահատկությունները կարող են հիմք հանդիսանալ ստեղծելու ինչպես բժիշկների, այնպես էլ բուժքույրերի համար պաշտոնապես հաստատված մասնագիտացում՝ դիպլոմավորված մասնագետների համար կազմակերպվող դասընթացների և առանց արտաղրությունից կտրվելու ուսուցման հիման վրա:

III. Հոգեբուժական հաստատություններ

Հարկադրական տեղավորումը հոգեբուժական հաստատություններում

Քաղվածք 8-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (98) 12]

Ա. Նախնական նկատառումներ

25. Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ)կոչված է ուսումնասիրելու որևէ պետական մարմնի կողմից ազատազրկված բոլոր կարգի անձանց, այդ թվում և հոգեկան հիվանդներին պահելու պայմանները: Համապատասխանաբար,Կոմիտեն հաճախ է այցելում տարբեր տիպի հոգեբուժական հաստատություններ:

ԽԿԿ-ի այցելած հաստատությունների թվի մեջ են մտնում հոգեբուժական հիվանդանոցները, որտեղ կամավոր հիվանդների հետ միասին պահվում են անձինք, որոնք հիվանդանոց են տեղավորվել նրանց հոգեկան բուժում նշանակելու մասին քաղաքացիական դատարանի վճռի համաձայն:ԽԿԿ-ն այցելում է հիմնարկներ (հատուկ հիվանդանոցներ, քաղաքացիական հիվանդանոցների առանձին բաժանմունքներ և այլն) նաև այն անձանց համար, որոնց տեղավորումը հոգեբուժարան որոշվել է քրեական դատավարության ընթացքում: Հոգեբուժական հիմնարկները այն անձանց համար, որոնց հոգեկան հիվանդությունը զարգացել է ազատազրկման վայրում նրանց գտնվելու ընթացքում, անկախ այն բանից, դրանք գտնվում են ուղղիչ համակարգի տնօրինության տակ թե քաղաքացիական հոգեբուժական հիվանդանոցներում,նույնպես ԽԿԿ-ի սևեռուն ուշադրության առարկան են:

26. Բանտերում բժշկական սպասարկման հարցի քննարկման ժամանակ իր երրորդ Ընդհանուր հաշվետվության մեջ (CPT/Inf (93) 12, 30-77կետեր) ԽԿԿ-ն ձևակերպել է մի շարք ընդհանուր չափանիշներ, որոնք բնութագրում են նրա մոտեցումը (բժշկին դիմելու հնարավորությունը, սպասարկման համարժեքությունը,հիվանդի համաձայնությունը և գախտնիությունը, կանխարգելող բուժումը, բժշկական անձնակազմի անկախությունը և մասնագիտական ձեռնհասությունը): Այդ չափանիշները կիրառելի են նաև հոգեբուժական հիմնարկում հարկադիր տեղավորման դեպքում:

Ստորև նկարագրվում են մի քանի առանձնահատուկ խնդիրներ, որոնք հետաքրքրում են ԽԿԿ-ին հոգեբուժական հիմնարկներում հարկադրաբար տեղավորված անձանց վերաբերյալ[1]:Այսպիսով, ԽԿԿ-ն հույս ունի ազգային իշխանություններին նախապես ի ցույց դնել իր հայացքները այդ մարդկանց նկատմամբ եղած վերաբերմունքին առնչվող հարցերի մասին.Կոմիտեն հավանությամբ կընդունի իր Ընդհանուր հաշվետվության այդ հատվածին վերաբերող մեկնաբանությունները:

Բ. Դաժան վերաբերմունքի կանխումը

27. Իր մանդատի համաձայն ԽԿԿ-ի հիմնական առաջնահերթ խնդիրը հոգեբուժական հիմնարկ այցելելիս պետք է լինի բացահայտել որևէ ցուցմունքի առկայությունը հիվանդների նկատմամբ կանխամտածված ոչ պատշաճ վերաբերմունքի մասին: Այդպիսի ցուցմունքներ սակավ դեպքերում են բացահայտվում: Ընդհանուր առմամբ Կոմիտեն ուզում է նշել իր պատվիրակությունների այցելած հոգեբուժական հիմնարկներում անձնակազմի ճնշող մեծամասնության նվիրվածությունը հիվանդների խնամքի գործին: Այդ իրավիճակը առավել ևս գովելի է, եթե հաշվի առնենք կադրերի պակասը և անձնակազմի տրամադրության տակ եղած ռեսուրսների սահմանափակությունը:

Այնուամենայնիվ,այցելությունների ժամանակ ԽԿԿ-ի արած սեփական դիտարկումները, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված հաղորդումները ցույց են տալիս, որ հոգեբուժական հիմնարկներում պարբերաբար տեղի են ունենում հիվանդների նկատմամբ կանխամտածված ոչ պատշաճ վերաբերմունքի դեպքեր: Ստորև կքննարկվեն չարաշահումների կանխման հիմնախնդրի հետ անմիջականորեն կապված մի շարք հարցեր (օրինակ՝ հնազանդեցման միջոցները, բողոք ներկայացնելու ընթացակարգը, արտաքին աշխարհի հետ շփումները, արտաքին հսկողությունը): Սակայն արդեն այս փուլում անհրաժեշտ է անել կադրերի ընտրությանը և անձնակազմի գործողությունների վերահսկմանն առնչվող որոշ դիտողություններ:

28. Աշխատանքը հոգեկան հիվանդների և մտավորապես հետամնաց մարդկանց հետ միշտ էլ դժվար խնդիր է լինելու անձնակազմի բոլոր կարգերի համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել այն փաստը, որ հոգեբուժական հիմնարկներում բժշկական անձնակազմին նրա ամենօրյա աշխատանքում հաճախ

[1] Ազատազրկված անձանց ցույց տրվող հոգեբուժական օգնության վերաբերյալ տես նաև Կոմիտեի 3-րդ Ընդհանուր հաշվետվության 41-44 կետերը:

օգնում են սանիտարները. դեռ ավելին, որոշ հիմնարկներում աշխատակիցների զգալի քանակին հանձնարարվում են անվտանգության ապահովման հետ կապված գործառույթներ: ԽԿԿ-ի տրամադրության տակ եղած տեղեկատվությունը վկայում է, որ այն դեպքերում, երբ իրապես առկա է հոգեբուժական հիմնարկների աշխատողների կողմից գիտակցական դաժան վերաբերմունք,հաճախ դրա մեղավորներն են լինում այդ օժանդակ անձնակազմի ներկայացուցիչները և ոչ թե բժիշկները կամ որակյալ բուժքույրերը:

Հաշվի առնելով այդպիսի աշխատանքի հետ կապված հնարավոր վտանգը՝ խիստ կարևոր է, որ օժանդակ անձնակազմը խնամքով ընտրվի, և կազմակերպվի կադրերի հատուկ ուսուցում՝ նախքան նրանք կանցնեն իրենց պարտականությունների կատարմանը, ինչպես նաև աշխատանքի ընթացքում՝ դասընթացների միջոցով: Այնուհետև, իրենց պարտականությունների կատարման ընթացքում նրանք պետք է վերահսկվեն և ենթարկվեն որակյալ բժշկական անձնակազմին:

29. Որոշ երկրներում ԽԿԿ-ն հանդիպել է հոգեբուժական բաժանմունքներում հիվանդների կամ հարևան ուղղիչ հիմնարկների ազատազրկված անձանց օգտագործմանը որպես օժանդակ անձնակազմ: Կոմիտեն լուրջ մտահոգություն ունի այդպիսի մոտեցման նկատմամբ, որը կարելի է դիտել որպես ծայրահեղ միջոց: Եթե այդպիսի նշանակումներն անխուսափելի են, ապա այդ անձանց գործողությունները պետք է աչալուրջ կերպով վերահսկվեն որակյալ բժշկական անձնակազմի կողմից:

30. Կարևոր է նաև, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեն պաշտպանելու համար հոգեկան հիվանդներին մյուսներից, որոնք կարող են նրանց վնաս պատճառել: Սա, ի թիվս այլ միջոցների, պահանջում է համապատասխան անձնակազմի մշտական ներկայություն՝ ներառյալ գիշերային ժամերը և հանգստյան օրերը: Բացի այդ,անհրաժեշտ է հատուկ միջոցներ ձեռք առնել առանձնապես թույլ հիվանդների նկատմամբ,օրինակ՝ պետք չէ միասին տեղավորել հոգեկան հիվանդ և/կամ մտավորապես հետամնաց դեռահասներին չափահաս հիվանդների հետ:

31. Անձնակազմի բոլոր կարգի անդամների վրա համապատասխան վարչական հսկողությունը նույնպես կարող է նշանակալից չափով նպաստել դաժան վերաբերմունքի կանխմանը: Ակնհայտ է, որ պետք է հստակորեն հասկացնել, որ հիվանդների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական տեսակետից անթույլատրելի է և խստորեն կպատժվի: Ընդհանուր առմամբ ղեկավարությունը պետք է ապահովի բոլոր պայմանները, որ

հոգեբուժական հիմնարկներում անձնակազմի բուժիչ դերը անվտանգության նկատառումների համեմատությամբ չդիտվի որպես ինչ-որ երկրորդական մի բան։

Ճիշտ նույնպես անհրաժեշտ է համապատասխանաբար վերանայել անձնակազմի և հիվանդների միջև լարված մթնոլորտ ստեղծող բոլոր կանոններն ու սահմանումները։ Հիվանդի փախուստի դեպքում անձնակազմի վրա տուգանք դնելը այդպիսի մի միջոց է, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ հոգեբուժական հաստատության ներքին կլիմայի վրա։

Գ. Հիվանդներին պահելու և նրանց հետ վարվելու պայմանները

32. ԽԿԿ-ն հանգամանորեն ուսումնասիրում է, թե ինչ պայմաններում են պահվում հիվանդները և ինչպես են նրանց հետ վարվում. այդ ոլորտում եղած խախտումները արագորեն կարող են հանգեցնել այնպիսի իրադրության, որը կարող է որակվել որպես «անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք»: Գլխավոր նպատակը պետք է լինի հիվանդների առողջացմանը և բարօրությանը նպաստող նյութական պայմանների ստեղծումը. հոգեբուժության լեզվով ասած՝ բարենպաստ բուժիչ միջավայրի ստեղծումը։ Դա կարևոր է ոչ միայն հիվանդների, այլև հոգեբուժական հաստատությունում աշխատող անձնակազմի համար։ Այնուհետև, հիվանդների համար պետք է ապահովել համարժեք հոգեմարմ-նական բուժում և խնամք՝ բուժման համարժեքության սկզբունքի պահպա-նու-մով, որը ենթադրում է, որ հարկադրաբար հոգեբուժական հաստատություն տեղավորված անձանց բուժումը և խնամքը չպետք է զիջեն հոգեբուժական հիվանդանոցների կամավոր հիվանդների սպասարկման մակարդակին։

33. Հիվանդներին պահելու և նրանց բուժման պայմանների որակը նշանակա-լից չափով կախված է առկա ռեսուրսների մակարդակից։ ԽԿԿ-ն ընդունում է, որ տնտեսական ծանր դժվարությունների ժամանակ պետք է որոշ զոհողություններ անել, այդ թվում և առողջապահության բնագավառում։ Բայց մի քանի այցելություն-ների ընթացքում հայտնաբերված փաստերը հաշվի առնելով՝ Կոմիտեն կուզենար հատուկ ընդգծել, որ մի շարք տարրական կենսական պահանջմունքների բավարա-րումը պետք է միշտ երաշխավորված լինի այն հիմնարկներում, որտեղ մարդիկ գտնվում են պետության հովանավորության տակ։ Դա ներառում է համապատասխան սնունդ, ջեռուցում և հագուստի ապահովում, ինչպես նաև անհրաժեշտ դեղամիջոց-ներ բժշկական հիմնարկներում։

Կյանքի պայմանները

34. Բարենպաստ բուժիչ միջավայրի ստեղծումը ամենից առաջ ներառում է հիվանդին բավարար կենսական տարածություն տրամադրելը, ինչպես նաև համապատասխան լուսավորություն, ջեռուցում և օդափոխություն ապահովելը, հաստատությունը բավարար վիճակում պահելը և համապատասխանությունը հիվանդանոցային հիգիենայի նորմերին:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ինչպես հիվանդասենյակների, այն-պես էլ հանգստի գոտիների ձևավորմանը՝ հիվանդների տեսողական գործունեու-թյու-նը խթանելու համար: Ցանկալի կլիներ հիվանդներին տրամադրել կողասեղա-նիկներ և հագուստի պահարաններ. հիվանդներին պետք է թույլ տալ պահելու իրենց որոշ անձնական իրերը (լուսանկարներ, գրքեր և այլն): Անհրաժեշտ է ընդգծել հիվանդներին տեղ հատկացնելու կարևորությունը, որտեղ նրանք կկարողանային իրենց անձնական իրերը պահել և կողպել. այդպիսի տեղի բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ հիվանդների անվտանգության և ինքնուրույնության զգացողության վրա:

Պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որ հիվանդները կարողանան իրենց «պետքերը հոգալ» ոչ մյուս հիվանդների աչքի առաջ: Այնուհետև, այդ առումով պետք է համապատասխանորեն հաշվի առնել տարեց և հաշմանդամ հիվանդների պահանջմունքները, օրինակ՝ այնպիսի զուգարանները, որոնց սարքավորումը նստելու հնարավորություն չի տալիս, հարմար չեն այդպիսի հիվանդների համար: Դրա հետ մեկտեղ, պետք է ապահովել այնպիսի սարքավորում, որը անձնակազմին թույլ կտա համապատասխան օգնություն ցույց տալ անկողնին գամված հիվանդնե-րին (ներառյալ և անձնական հիգիենայի միջոցները). այդպիսի սարքավորումների բացակայությունը անտանելի պայմաններ է ստեղծում:

Պետք է նաև նշել, որ որոշ հոգեբուժական հաստատություններում նկատվող պրակտիկան, երբ հիվանդները մշտապես ննջազգեստներ ու գիշերաշապիկներ են հագնում, չի նպաստում անհատականության և արժանապատվության զգացողության ամրապնդմանը. հագուստի անհատականացումը պետք է դառնա բուժման գործընթացի մի մասը:

35. Հիվանդների կյանքի պայմանների մյուս կողմը, որ հարուցում է ԽԿԿ-ի առանձնահատուկ մտահոգությունը, նրանց սնունդն է: Սնունդը ոչ միայն պետք է համարժեք լինի քանակի և որակի տեսակետից, այլև պետք է տրվի հիվանդներին բավարար պայմաններում: Պետք է գոյություն ունենա ճիշտ ջերմաստիճանում կերակրի պատրաստումն ապահովող անհրաժեշտ սարքավորում: Այնուհետև, պետք է ապահովված լինեն սննդի ընդունման նորմալ պայմաններ. այս տեսակետից

պետք է ընդգծել, որ հիվանդներին նրանց կենսական կարևոր պահանջ-ները հոգալու հնարավորության ընձեռումը, ինչպես՝ սննդի ընդունումը հատուկ սպասքի միջոցով, սեղանի մոտ նստած, հիվանդների սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրի անբաժանելի մասն է կազմում: Մատուցվող ճաշա-տեսակների արտաքին տեսքը նույնպես մի գործոն է, որ չպետք է աչքաթող արվի:

Սննդի կազմակերպման ժամանակ ևս պետք է ուշադրության առնել հաշման-դամ հիվանդների հատուկ կարիքները:

36. ԽԿԿ-ն կուզենար նաև միանշանակ հայտարարել, որ ինքը պաշտպանում է հոգեբուժական հիմնարկների հիվանդներին բազմատեղանոց հիվանդասենյակ-նե-րում տեղավորելուց հրաժարվելու՝ մի քանի երկրներում իր նկատած միտումը. այդպիսի պայմանները հազիվ թե համատեղելի են ժամանակակից հոգեբուժության նորմերի հետ: Փոքր խմբերի սկզբունքով ապրելատեղերի ապահովումը վճռական գործոն է հիվանդի արժանապատվության պահպանման/վերականգնման համար, ինչպես նաև հիվանդների հոգեբանական ու սոցիալական վերականգնմանն ուղղված քաղաքականության կարևոր տարր է: Այդ տիպի կառույցները նաև հեշտացնում են հիվանդների բաշխումը համապատասխան կարգերի՝ բուժական ցուցանիշների հաշվառումով:

Այսպիսով, ԽԿԿ-ն ողջունում է ավելի ու ավելի տարածում գտնող այն մոտեցումը, որը հիվանդներին ցանկության դեպքում հնարավորություն է տալիս օրվա ընթացքում օգտվելու իրենց սենյակներից և նրանց ազատում է մյուս հիվանդների հետ ընդհանուր գոտիներում գտնվելու պարտավորությունից:

Բուժումը

37. Հոգեթերապևտիկ բուժումը պետք է հիմնվի անհատական մոտեցման վրա, որը ենթադրում է ամեն կոնկրետ հիվանդի բուժման պլանի մշակում: Այն պետք է ներառի բուժական և վերականգնողական միջոցառումների լայն շրջանակ, այդ թվում՝ աշխատանքային թերապիայի, խմբային թերապիայի, անհատական հոգեթե-րա-պիայի, արվեստով, բեմադրությամբ, երաժշտությամբ, սպորտով զբաղվելու հնարավորություն: Հիվանդները պետք է կարողանան կանոնավոր կերպով օգտվել հատուկ սարքավորված հանգստի սենյակներից, և հնարավորություն ունենան ամեն օր զբոսնել մաքուր օդում. ցանկալի է նաև, որ նրանց առաջադրվի կրթական բնույթի գործունեություն և հարմար աշխատանք:

ԽԿԿ-ն չափազանց հաճախ է հանդիպում սոցիալ-հոգեբանական վերականգնման տեսակետից արդյունավետ բուժման այդ հիմնական բաղադրիչների թույլ զարգացվածության կամ իսպառ բացակայության փաստին.

դրա հետևանքով հիվանդին տրամադրված բուժումը սահմանափակվում է դեղաբուժությամբ: Նման իրադրությունը կարող է արդյունք լինել համապատասխան ձևով որակավորված անձնակազմի, անհրաժեշտ ռեսուրսների բացակայության կամ դեռևս պահպանվող այն աշխարհայացքի, որ հիմնված է հիվանդներին խնամակալության տակ առնելու սկզբունքի վրա:

38. Անշուշտ, հոգեդեղաբանական բուժումը հաճախ հոգեկան խանգարում-նե-րից տառապող հիվանդների խնամքի անհրաժեշտ բաղադրամասն է: Պետք է մշակվեն նշանակված դեղերի փաստացի մատակարարումը ապահովող, ինչպես նաև անհրաժեշտ դեղերի կանոնավոր ընդունումը երաշխավորող գործողություններ: ԽԿԿ-ն նաև ուշադրությամբ հետևում է դեղերի չարաշահման մասին տրված բոլոր ցուցմունքներին:

39. Էլեկտրաշոկային թերապիան (ԷՇԹ) հատուկ խանգարումներից տառապող հոգեկան հիվանդների բուժման ընդունված մեթոդ է: Այնուամենայնիվ, պետք է հատուկ զգուշություն ցուցաբերել ԷՇԹ-ն հիվանդի բուժման պլանի մեջ մտցնելիս, և դրա անցկացումը պետք է ուղեկցվի անհրաժեշտ երաշխիքներով:

ԽԿԿ-ն հատկապես անհանգստացած է չձևափոխված տեսքով (այսինքն՝ առանց ցավազրկող և մկանային թուլացում առաջացնող միջոցների) ԷՇԹ-ի կիրառման դեպքերով. այդպիսի մոտեցումը այլևս չի կարելի ընդունելի համարել ժամանակակից հոգեբուժության պրակտիկայում: Բացի կոտրվածքներ ստանալու և բժշկական այլ անբարենպաստ հետևանքների վտանգից, գործողությունը ինքնին նվաստացուցիչ է ինչպես հիվանդների, այնպես էլ այն կատարող անձնակազմի համար: Հետևաբար, ԷՇԹ-ն պետք է կիրառել միայն ձևափոխված տեսքով:

ԷՇԹ-ն պետք է անցկացնել մյուս հիվանդների տեսադաշտից դուրս (ցանկալի է՝ դրա համար հատուկ սարքավորված առանձին սենյակում) և այդ գործողությունը կատարելու համար հատուկ պատրաստություն ստացած անձնակազմի կողմից: Այնուհետև, ԷՇԹ-ի կիրառումը պետք է մանրամասն արձանագրվի հատուկ մատյանում: Միայն այդ ձևով հիվանդանոցի ղեկավարությունը կարող է ճշգրիտ կերպով հաստատել որևիցե անցանկալի գործողությունների փաստը և դրանք քննարկել անձնակազմի հետ:

40. Մի ուրիշ կարևոր պահանջ է հիվանդի կանոնավոր բժշկական զննությունների անցկացումը և նշանակված բուժման ճշգրտումները: Սա, իմիջիայլոց, թույլ կտա հիվանդանոցից հնարավոր դուրսգրման կամ նվազ կաշկանդող միջավայր տեղափոխելու հիմնավորված որոշումներ ընդունել:

Յուրաքանչյուր հիվանդի համար պետք է բացել գաղտնի պահվող անձնական բժշկական քարտ։ Այդ քարտը պետք է պարունակի ախտորոշման տեղեկատվությունը (ներառյալ հիվանդի բոլոր հատուկ զննությունների արդյունք-ները), ինչպես նաև հիվանդի հոգեկան և մարմնական վիճակի և նրան նշանակված բուժման վերաբերյալ ընթացիկ գրառումները։ Հիվանդը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու իր քարտին, եթե դա անցանկալի չէ բուժման տեսակետից, իսկ քարտի մեջ եղած տեղեկատվությունը պետք է հասանելի լինի նրա ընտանիքի անդամներին կամ փաստաբանին՝ վերջիններիս խնդրանքով։ Այնուհետև, հիվանդի տեղափոխման դեպքում նրա բժշկական քարտը պետք է հանձնվի նրան ընդունող հաստատության բժիշկներին. դուրսգրման դեպքում, հիվանդի համաձայնությամբ, քարտը պետք է ուղարկվի նրա բուժող բժշկին ըստ բնակության վայրի։

41. Սկզբունքորեն կարևոր է, որ հիվանդները իրավունք ունենան ազատ և իրազեկված համաձայնություն հայտնելու իրենց նշանակվող բուժման վերաբերյալ։ Հոգեբուժական հիմնարկում անձի հարկադիր տեղավորումը չպետք է մեկնաբանվի որպես նրա բուժումը առանց նրա համաձայնության անցկացնելու թույլտվություն։ Դրանից հետևում է, որ ամեն մի վարքագիտակ հիվանդի, լինի նա կամավոր թե ոչ կամավոր, պետք է հնարավորություն տրվի հրաժարվելու բուժումից կամ որևէ այլ բժշկական միջամտությունից։ Ամեն մի շեղում այս հիմնարար սկզբունքից պետք է օրինական հիմք ունենա և իրագործվի միայն պարզ ու հստակ սահմանված բացառիկ հանգամանքներում։

Անշուշտ, բուժվելու համաձայնությունը կարող է որակվել որպես ազատ ու իրազեկված, եթե միայն դա հիմնված է հիվանդի վիճակի և նրան նշանակված բուժման մասին լիակատար ու հասկանալի տեղեկատվության վրա. ԷՇԹ-ի նկարագրությունը որպես «քնաբուժություն» տվյալ բուժման մասին ավելի քան ոչ լիակատար ու ոչ ճշգրիտ տեղեկատվության օրինակ է։ Ուստի բոլոր հիվանդներին պետք է կանոնավորապես համապատասխան իրազեկում տրվի նրանց հիվանդու-թյան և նրանց նշանակված բուժման մասին։ Պետք է նաև տրվի բուժման ընթացքին ուղեկցող տեղեկատվությունը (արդյունքները և այլն)։

Դ. Անձնակազմը

42. Կադրային ռեսուրսները պետք է համարժեք լինեն քանակի, անձնակազմի կարգի (հոգեբույժ, թերապևտ, բուժքույր, հոգեբան, աշխատաթերապևտ, սոցիալական աշխատող և այլն), ինչպես նաև մասնագիտական փորձի և պատրաստվածության տեսակետից։ Ռեսուրսների պակասը հաճախ կարող է լրջորեն խանգարել 37-րդ կետում նկարագրված միջոցառումներն անցկացնելու

փորձերին. դեռ ավելին, դա կարող է ստեղծել հիվանդների համար ծայրահեղ վտանգավոր իրավիճակներ՝ չնայած բարի մտադրություններին ու եղած անձնակազմի ջանքերին։

43. Որոշ երկրներում ԽԿԿ-ն հատկապես ապշած էր հոգեբուժական հիմնարկներում զբաղված որակյալ բուժքույրերի սակավաթվությամբ, ինչպես նաև սոցիալական թերապիայի միջոցառումներ իրագործելու կոչված անձնակազմի (մասնավորապես աշխատաթերապևտների) պակասությամբ։ Հոգեբուժական հիմնարկ-ներում աշխատելու համար բուժքույրերի հատուկ պատրաստման կազմակերպումը, ինչպես նաև սոցիալական թերապիայի խիստ ընդգծումը էական ազդեցություն կթողներ բժշկական սպասարկման որակի վրա։ Մասնավորապես, դա կնպաստեր բուժիչ միջավայր ստեղծելուն, որն ավելի քիչ է ուղղված դեղերով և ֆիզիկական միջոցներով բուժելուն։

44. Նախորդ բաժնում (տես 28-31 կետերը) արդեն արվեցին մի շարք դիտողություններ կադրերի հարցի, մասնավորապես օժանդակ անձնակազմի առնչությամբ։ Սակայն ԽԿԿ-ն սևեռուն ուշադրություն է դարձնում նաև բժիշկների և բուժքույրերի վերաբերմունքին։ Մասնավորապես, Կոմիտեն կուզենար տեսնել, որ ան-կեղծ շահագրգռվածություն կա հիվանդների հետ հաստատել բուժական բնույթ ունեցող հարաբերություններ։ Կոմիտեն կստուգի նաև, անուշադրության չե՞ն մատնվել արդյոք այն հիվանդները, որոնք համարվում են դժվար կամ վերականգնման ունակությունից զուրկ։

45. Ինչպես և մյուս բժշկական հաստատություններում, կարևոր է, որ հոգեբուժական բաժանմունքում զբաղված անձնակազմի տարբեր կարգերը կանոնավոր կերպով իրար հետ հանդիպեն և ավագ բժշկի ղեկավարությամբ գործող աշխատանքային խումբ ներկայացնեն։ Դա թույլ կտա սահմանել և քննարկել ամենօրյա խնդիրները, ինչպես նաև ստանալ անհրաժեշտ ցուցումներ։ Այդպիսի հնարավորության բացակայությունը անձնակազմի անդամների մեջ կարող է առաջացնել հիասթափության ու անբավարարվածության զգացում։

46. Դրսի օժանդակությունն ու խթանումը նույնպես անհրաժեշտ են հոգեբուժական հիմնարկների անձնակազմի ավելորդ մեկուսացումից խուսափելու համար։ Այդ կապակցությամբ մեծապես ցանկալի կլիներ այդ անձնակազմին հնարավորություն տալ սովորելու կամ ստաժավորում անցնելու հիմնարկի սահմաններից դուրս։ Դրա հետ մեկտեղ պետք է խրախուսել հոգեբուժական հիմնարկներում անկախ անձանց (օրինակ՝ ուսանողների կամ հետազոտողների), ինչպես նաև դրսի մարմինների ներկայությունը (տես 55 կետը)։

Ե. Հնազանդեցման միջոցները

47. Յուրաքանչյուր հոգեբուժական հիմնարկում երբեմն կարող է ծագել գրգռված և/կամ մոլագար հիվանդների նկատմամբ հնազանդեցման մեթոդների կիրառման անհրաժեշտություն։ Այդ ոլորտը հարուցում է ԽԿԿ-ի առանձնահատուկ մտահոգությունը, քանի որ նրա մեջ պոտենցիալ կերպով առկա է չարաշահումների և դաժան վերաբերմունքի հնարավորությունը։

Հիվանդների հնազանդեցման հարցը պետք է լինի հստակ մշակված քաղաքականության առարկա։ Այդ քաղաքականությունը պետք է միանշանակ ուղղված լինի այն բանին, որ գրգռված կամ մոլագար հիվանդին զսպելու բոլոր փորձերը ըստ հնարավորին բռնության բնույթ չկրեն (օրինակ՝ խոսքով համոզելը). իսկ այն դեպքերում, երբ ֆիզիկական զսպումը այնուամենայնիվ անհրաժեշտ է, դա պետք է ի գործ դրվի սկզբունքորեն առանց կապանքներ և զսպաշապիկներ օգտագործելու։

Հոգեբուժական հիմնարկների անձնակազմը պետք է սովորի մոլագար հիվանդներին ֆիզիկական ուժ չգործադրելով զսպելու մեթոդները։ Զսպելու այդպիսի տեխնիկային տիրապետելը անձնակազմին թույլ կտա պատշաժ կերպով վարվելու դժվար իրավիճակներում՝ այդպիսով զգալիորեն կրճատելով վնասվածքներ ստանալու վտանգը հիվանդի և անձնակազմի համար։

48. Ֆիզիկական զսպման միջոցների (կաշեփոկերի, զսպաշապիկների և այլն) օգտագործումը արդարացվում է միայն խիստ սակավ դեպքերում և միշտ պետք է կամ նշանակված լինի բժշկի կողմից, կամ բժշկի հավանությունը ստանալու համար պետք է անմիջապես նրան տեղեկացնել այդ մասին։ Եթե, որպես բացառություն, ֆիզիկական զսպման միջոցների կիրառումից բացի այլ ելք չի եղել, ապա առաջին իսկ հնարավորության դեպքում դրանք պետք է հանել. դրանք երբեք չպետք է կիրառվեն կամ դրանց կիրառումը չպետք է երկարաձգվի որպես պատիժ։

ԽԿԿ-ն երբեմն հանդիպում է հոգեբուժական հիմնարկների հիվանդների, որոնց նկատմամբ ֆիզիկական զսպման միջոցները կիրառվել են մի քանի օրերի ընթացքում շարունակ. Կոմիտեն պետք է ընդգծի, որ այդ պրակտիկան չի կարող որևէ բուժական արդարացում ունենալ և իր կարծիքով հավասարազոր է դաժան վերաբերմունքի։

49. Այս կոնտեքստում պետք է նշել նաև մոլագար կամ որևէ այլ տեսակետից «անկառավարելի» հիվանդների մեկուսացումը (այսինքն՝ առանձին տեղում փակելը), մի միջոց, որ երկար պատմություն է ունեցել հուգեբուժության մեջ։

Ժամանակակից հոգեբուժության մեջ հիվանդների մեկուսացումից հրաժարվելու հստակ միտում է նկատվում, և ԽԿԿ-ն գոհունակությամբ նշում է, որ շատ երկրներում այդ պրակտիկան կիրառումից դուրս է գալիս։ Իսկ այնտեղ, ուր շարու-նա-կում է կիրառվել մեկուսացումը, դա պետք է առարկա դառնա մանրամասն մշակված քաղաքականության, որը, մասնավորապես, որոշում է, թե ինչ դեպքերում այն կարող է կիրառվել, ինչ նպատակով, դրա տևողությունը և կանոնավորաբար վերանայելու անհրաժեշտությունը, անհրաժեշտ մարդկային շփումների առկայու-թյու-նը, անձնակազմի կողմից հատուկ ուշադրության անհրաժեշտությունը։

Մեկուսացումը երբեք չպետք է կիրառվի որպես պատիժ։

50. Հիվանդի ֆիզիկական զսպման ամեն մի դեպք (ձեռքով զսպելը, ֆիզիկական սահմանափակման միջոցների կիրառումը, մեկուսացումը) պետք է գրանցվի այդ նպատակի համար նախատեսված հատուկ մատյանում (ինչպես նաև հիվանդի գործի մեջ)։ Գրանցումը պետք է պարունակի տվյալ միջոցի կիրառման սկզբի և ավարտի ժամանակը, դեպքի հանգամանքները, տվյալ միջոցին դիմելու պատճառները, նշանակող և հավանություն տվող բժշկի անունը, ինչպես նաև տեղեկություն հիվանդի կամ անձնակազմի ներկայացուցչի ստացած յուրաքանչյուր վնասվածքի մասին։

Դա զգալիորեն կհեշտացնի ինչպես նման դեպքերի վերահսկողությունը, այնպես էլ դիտարկումները նրանց հաճախականության վերաբերյալ։

Զ. Երաշխիքները ոգեբուժարանում հարկադիր տեղավորման կոնտեքստում

51. Նկատի ունենալով հոգեկան հիվանդների և մտավորապես հետամնացների առանձնահատուկ զգայունությունը, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն՝ նրանց ինքնազգացողությանը վնաս հասցնող ամեն տեսակի վարմունք կանխելու կամ որևէ կարգի բացթողումներից խուսափելու համար։ Հետևաբար, հարկադիր տեղավորումը հոգեբուժական համտատություն պետք է միշտ ամրապնդվի անհրաժեշտ երաշխիք-ներով։ Ամենակարևոր երաշխիքներից մեկը՝ բուժում անցնելու ազատ և իրազեկված համաձայնությունը, արդեն վերը քննարկել ենք (տես 41 կետը)։

Հոգեբուժարան տեղավորելու նախնական որոշումը

52. Հոգեբուժարանում հարկադիր տեղավորման մասին որոշում ընդունելու ընթացակարգը պետք է լինի անկախ ու անաչառ, ինչպես նաև պետք է ենթադրի օբյեկտիվ բժշկական փորձաքննություն։

Մասնավորապես, քաղաքացիական բնույթի դեպքերի առնչությամբ շատ երկրներում հարկադիր տեղավորման որոշումը պետք է ընդունվի դատական մարմինների կողմից (կամ հաստատվի նման մարմինների կողմից կարճ ժամանակվա ընթացքում)՝ հոգեբույժների եզրակացության հիման վրա։ Սակայն ոչ բոլոր երկրներում է ինքնըստինքյան ենթադրվում դատական մարմինների մասնակցությունը նախնական որոշում ընդունելու գործընթացին։ Նախարարների կոմիտեի թիվ R (83) 2 հանձնարարականը, որ վերաբերում է հոգեկան խանգարում-ներով տառապող և հարկադրաբար հատուկ հաստատություններում տեղավորված անձանց իրավական պաշտպանությանը, թույլ է տալիս կիրառել երկու մոտեցումն էլ (թեև սահմանում է հատուկ երաշխիքներ այն դեպքի համար, եթե հոգեբուժարան տեղավորելու որոշումը ընդունվում է դատական իրավասություններ չունեցող մարմինների կողմից)**:** Սակայն Խորհրդարանական վեհաժողովը վերադարձել է այդ հարցի քննարկմանը հոգեբուժությանը և մարդու իրավունքներին վերաբերող իր 1235 (1994) հանձնարարականով, որը կոչ է անում, որ հարկադրաբար հոգեբուժարան տեղավորելու որոշումն ընդունվի դատավորի կողմից։

Ամեն դեպքում դատական իրավասություններ չունեցող մարմնի կողմից հարկադրաբար հոգեբուժարան տեղավորված անձը պետք է իրավունք ունենա գործ հարուցելու, որի քննության ընթացքում տվյալ անձի ազատազրկման օրինականությունը արագ կերպով կորոշվի դատարանով։

Հիվանդանոց տեղավորելու հետ կապված երաշխիքները

53. Հիվանդանոց տեղավորելիս ամեն մի հիվանդի և նրա ընտանիքի անդամ-ներին պետք է տրվի տվյալ հաստատությունում կարգուկանոնի նկարագրությունը և հի-վանդի իրավունքները պարունակող գրքույկ։ Գրքույկի բովանդակությունը հաս-կա-նա-լու դժվարություն կրող հիվանդները պետք է ստանան անհրաժեշտ օգնություն։

Այնուհետև, ինչպես և ազատազրկման ամեն մի այլ վայրում, հոգեբուժական հաստատություններում դաժան վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքը բողոքների ներկայացման արդյունավետ ընթացակարգն է։ Պետք է գոյություն ունենա հատուկ գործողությունների կարգ, որը հնարավորություն կտա հիվանդին պաշտոնական բողոք ներկայացնել հստակ լիազորություններ ունեցող մարմնի, ինչպես նաև գաղտնի տեղեկություններ ուղարկել հաստատությունից դուրս գտնվող համապա-տաս-խան մարմնին։

54. Արտաքին աշխարհի հետ շփումներ պահպանելը կարևոր է ոչ միայն չարաշահումները կանխելու, այլև բուժական տեսակետից։

Հիվանդները պետք է թղթակցություն ուղարկելու և ստանալու, հեռախոսից օգտվելու, ինչպես նաև իրենց բարեկամներին և ընտանիքի անդամներին ընդունելու հնարավորություն ունենան։ Պետք է նաև երաշխավորված լինի առանձնացած պայմաններում փաստաբանին դիմելու հնարավորությունը։

55. ԽԿԿ-ն մեծ նշանակություն է տալիս նաև նրան, որ հիվանդների բժշկական սպասարկման վերահսկողության համար պատասխանատու արտաքին անկախ մարմինը (օրինակ՝ դատավորը կամ վերահսկիչ կոմիտեն) կանոնավոր կերպով այցելություններ կատարի հոգեբուժական հաստատություններ։ Մասնավորապես, այդ մարմինը պետք է լիազորություն ունենա հիվանդների հետ մասնավոր զրույցներ վարելու, նրանցից անմիջականորեն ամեն կարգի բողոքներ ընդունելու, ինչպես նաև համապատասխան հանձնարարականներ տալու։

Ազատ արձակումը

56. Հոգեբուժարանում հարկադրաբար գտնվելը պետք է ընդհատվի այն դեպ-քում, եթե հիվանդի հոգեկան վիճակը այլևս դա չի պահանջում։ Համապատաս-խանա-բար, պետք է պարբերաբար վերանայվի այնտեղ գտնվելու անհրաժեշտությունը։

Այն դեպքում, երբ հարկադրաբար հիվանդանոց տեղավորելը կատարվում է որոշակի ժամկետով, որը կարելի է երկարացնել հոգեբույժի եզրակացության հիման վրա, այդպիսի վերանայումը պետք է իրականացվի տեղավորելու պահից հաշվելով։ Բայց հարկադիր տեղավորումը կարող է շարունակվել անորոշ ժամանակով, հատկապես այն անձանց դեպքում, որոնք հարկադրաբար հոգեբուժարան են տեղավորվել քրեական դատարանի վճռով և համարվում են վտանգավոր։ Այն դեպքում, երբ հարկադիր տեղավորման ժամկետը որոշված չէ, ինքնաբերաբար կանոնավոր ժամանակահատվածներում պետք է կատարվի հիվանդանոցում մնալու անհրաժեշտության հարցի վերանայում։

Բացի այդ, հիվանդն ինքը պետք է հնարավորություն ունենա որոշակի ժամանակամիջոցներից հետո դիմելու դատական մարմնի որոշմամբ հիվանդանո-ցում իր մնալու անհրաժեշտության հարցը վերանայելու խնդրանքով։

57. Որոշ դեպքերում հիվանդը, որի գտնվելը հոգեբուժական հաստատություն-նում այլևս անհրաժեշտ չէ, այնուամենայնիվ, դեռ բուժման և/կամ արտաքին աշխարհում պաշտպանական միջավայրի կարիք ունի։ Այդ կապակցությամբ ԽԿԿ-ն հայտնաբերել է, որ մի շարք երկրներում հիվանդները, որոնց հոգեկան վիճակը այլևս չի պահանջում նրանց պահել հոգեբուժարաններում, այնուամենայնիվ, մնում են այդ հաստատություններում՝ դրանցից դուրս ապրելիս համարժեք խնամք և համապատասխան պայմաններ չունենալու պատճառով։ Անխրախուսելի պրակտիկա է հիվանդներին հարկադրա-բար հոգեբուժարանում պահելը՝ դրա սահմաններից դուրս համապատասխան պայմաններ չլինելու պատճառով։

Է. Եզրափակիչ նկատառումներ

58. Հոգեկան խանգարումներ ունեցող հիվանդների բուժսպասարկման կազմակերպչական կառուցվածքը տարբեր երկրներում տարբեր է, և անկասկած ամեն մի պետություն ինքը պետք է դրանք որոշի։ Այնուամենայնիվ, ԽԿԿ-ն կուզենար ուշադրություն հրավիրել մի շարք երկրներում հոգեբուժական խոշոր հաստատու-թյուններում տեղերի կրճատման և ըստ բնակության վայրի հոգեկան առողջության կենտրոններ ստեղծելու միտումի վրա։ Կոմիտեն այս պրակտիկան շատ դրական է համարում, պայմանով, որ այդ կենտրոնների տրամադրած բժշկական սպասարկումը բավարար որակ ունենա։

Ներկայումս բոլորի կողմից ընդունվում է, որ խոշոր հոգեբուժական հաստատու--թյուն-ները ներփակ համակարգի վերածվելու վտանգ են պարունակում թե՛ հիվանդների, թե՛ անձնակազմի համար, հատկապես երբ մեկուսացած վայրերում են տեղադրված։ Դա կարող է վնաս հասցնել հիվանդների բուժմանը։ Հոգեբուժության միջոցների լիակատար շրջանակ կիրառող բժշկական ծրագրերը ավելի հեշտ է իրագործել հիմնական քաղաքային կենտրոններին մոտ գտնվող փոքր բաժանմունքներում:

Չափահասների համար նախատեսված զսպման միջոցները հոգեբուժական հիմնարկներում

Քաղվածք 16-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2006) 35]

Նախնական նկատառումներ

36. ԽԿԿ-ն 1997 թ. 8-րդ Ընդհանուր հաշվետվության մեջ քննարկել է չափահասների համար նախատեսված հոգեբուժական հիմնարկներում ոչ կամավոր հիմունքներով տեղավորման հարցը: Այդ կապակցությամբ Կոմիտեն մի շարք նկատառումներ է արել, կապված գրգռված և (կամ) մոլագար հիվանդների հնազանդեցման հետ: Անցած ինը տարիների ընթացքում զսպման կիրառման շուրջ մղվող բանավեճերը շարունակում էին կրքեր բորբոքել, քանի որ հոգեբուժության տարբեր ավանդույթներ տարբեր մոտեցումներ են նախատեսում նման հիվանդներին բուժելու հարցում:

Շատ հոգեբուժական հիմնարկներում երբեմն անհրաժեշտ է լինում օգտագործել գրգռված և մոլագար հիվանդների շարժումների ազատությունը սահմանափակող միջոցներ: Հաշվի առնելով հիվանդների նկատմամբ չարաշահումների և դաժան վերաբերմունքի հավանականությունը՝ , զսպման նման միջոցների կիրառումը շարունակում է հարուցել ԽԿԿ-ի հատուկ մտահոգությունը: Ըստ այդմ, հոգեբուժական հիմնարկություններ այցելած ԽԿԿ-ի պատվիրակությունները ուշադիր ուսումնասիրել են զսպման ընթացակարգերը և պրակտիկան, ինչպես նաև այդ միջոցների օգտագործման հաճախականությունը: Ցավոք կարելի է արձանագրել, որ այցելած շատ հիմնարկություններում նկատվում է զսպման միջոցների չափազանց մեծ կիրառություն:

ԽԿԿ-ն համարում է, որ եկել է պահը նախկինում տված խորհուրդներն ընդարձակելու համար և մասնագետներին հրավիրում է մեկնաբանություններ անել Ընդհանուր հաշվետվության այս բաժնի վերաբերյալ: Սույն նկատառումներն արված են հենց նման կառուցողական երկխոսության ոգով՝ նպատակ ունենալով օգնել բուժանձնակազմին իրենց դժվարին գործում և ապահովել համապատասխան խնամք հիվանդների նկատմամբ:

Զսպման կիրառման մասին ընդհանրապես

37. Սկզբունքորեն հիվանդանոցները պետք է անվտանգ վայր լինեն ինչպես հիվանդների, այնպես էլ անձնակազմի համար: Հոգեկան հիվանդների հետ անհրաժեշտ է վերաբերվել հարգանքով և արժանապատվորեն, միաժամանակ ապահովելով անվտանգությունը և ցուցաբերելով այնպիսի մարդասիրություն, որը հարգում է նրանց ընտրությունն ու ինքնորոշումը: Այս առումով նվազագույն պահանջը բռնության և չարաշահումների բացակայությունն է, ինչպես անձնակազմի կողմից հիվանդների նկատմամբ, այնպես էլ հիվանդների միջև:

Թեև հիվանդների նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումը կարող է որոշ դեպքերում անխուսափելի լինել ինչպես անձնակազմի, այնպես էլ հիվանդների անվտանգությունն ապահովելու համար: Հիվանդների համար ապրելու լավ պայմանների ստեղծումն ու պահպանումը, ինչպես նաև բուժման համապատասխան միջավայրի առկայությունը, ինչը հիվանդանոցի բուժանձնակազմի առաջնային խնդիրն է, ենթադրում են ագրեսիվության և բռնության բացակայություն ինչպես հիվանդների միջև, այնպես էլ անձնակազմի նկատմամբ: Այդ իսկ պատճառով, կարևոր է ապահովել անձնակազմի պատշաճ ղեկավարումն ու անձնակազմի համապատասխան ուսուցումը, որպեսզի նրանք կարողանան էթիկապես ընդունելի ձևով վերաբերվել գրգռված և (կամ) մոլագար հիվանդներին:

38. Այն սահմանագիծը, որը բաժանում է հիվանդի նկատմամբ համաչափ ֆիզիկական ուժի գործադրումը նրան հսկողության տակ վերցնելու համար՝ բռնության դրսևորումից, կարող է շատ նուրբ լինել: Հաճախ անձնակազմը խախտում են այդ սահմանը ոչ թե չարակամ մտադրության, այլ անուշադրության կամ ոչ պատրաստվածության պատճառով: Շատ դեպքերում անձնակազմն ուղղակի չունի բավարար քանակի տեխնիկական միջոցներ միջամտելու համար, երբ բախվում է գրգռված և (կամ) մոլագար հիվանդների հետ:

Հարկ է նաև ընդգծել, որ ԽԿԿ-ի պատվիրակությունները գտել են, որ հիվանդանոցի ղեկավարության կողմից ակտիվ և աչալուրջ վերաբերմունքը հոգեբուժարանում զսպման միջոցների կիրառման նկատմամբ, որպես կանոն, հանգեցնում է դրանց օգտագործման շարունակական նվազեցմանը:

Զսպման միջոցների տեսակները

39. ԽԿԿ-ն բախվել է գրգռված և (կամ) մոլագար հիվանդներին վերահսկողության տակ առնելու տարբեր մեթոդների հետ, որոնք կարող են կիրառվել առանձին կամ իրար հետ համակցված. ստվերի պես հետևելը (երբ անձնակազմի աշխատակիցը մշտապես գտնվում է հիվանդի կողքին և, անհրաժեշտության դեպքում, միջամտում նրա պահվածքին), ձեռքերով բռնելը, զսպման մեխանիկական միջոցները, ինչպես օրինակ՝ ամրակապերը, զսպաշապիկները կամ ներփակվող մահճակալները, դեղամիջոցներով հնազանդեցումը (հիվանդին դեղամիջոցներով բուժելը նրա կամքին հակառակ՝ նրա վարքը վերահսկելու նպատակով) և մեկուսացումը (նրան հարկադրաբար մեկուսի սենյակում պահելը): Որպես ընդհանուր կանոն, ամեն մի առանձին հիվանդի նկատմամբ ընտրված մեթոդը պետք է լինի ամենահամաչափը (բոլոր մատչելի մեթոդներից) ծագած իրավիճակում. օրինակ, կարիք չկա ավտոմատ կերպով կիրառել զսպման մեխանիկական կամ դեղորայքային միջոցներն այն դեպքում, երբ բավարար կլիներ մի կարճ ժամանակահատվածի ընթացքում պահել հիվանդին ձեռքերով և այդ ընթացքում հանգստացնել նրան հոգեբանորեն:

Ինչպես և կարելի էր սպասել, խոսքերով համոզելը (այսինքն՝ հիվանդի հետ զրուցելը նրան հանգստացնելու նպատակով) կլիներ ԽԿԿ-ի նախընտրելի մեթոդը, բայց երբեմն կարող է անհրաժեշտություն ծագել դիմելու այլ միջոցների, որոնք ուղղակիորեն սահմանափակում են հիվանդի շարժումների ազատությունը:

40. Զսպման որոշ մեխանիկական միջոցներ, որոնց դեռևս կարելի է հանդիպել առանձին հոգեբուժական հիվանդանոցներում, ուր այցելել է ԽԿԿ-ն, բացարձակապես չեն համապատասխանում այդ նպատակին և կարող են հիմնավոր կերպով համարվել որպես արժանապատվությունը նվաստացնող: Բացահայտ կերպով դրանց շարքին են դասվում ձեռնաշղթաները, մետաղյա շղթաները և վանդակ-մահճակալները. դրանք տեղ չունեն հոգեբուժության պրակտիկայում և պետք է անհապաղ դուրս բերվեն օգտագործումից:

Ցանցով ծածկած մահճակալների օգտագործումը, ինչը բառացիորեն դեռևս մի քանի տարի առաջ լայնորեն տարածված էր մի շարք երկրներում, այժմ մշտապես նվազում է: Անգամ այն փոքրաթիվ երկրներում, որտեղ դրանք դեռևս կիրառվում են, ցանցով ծածկած մահճակալների ավելի հազվադեպ կարելի է հանդիպել: Դա դրական փոփոխություն է և ԽԿԿ-ն կցանկանար կոչ անել պետություններին շարունակել ջանքեր գործադրել նման մահճակալների քանակը նվազեցնելու համար:

41. Եթե կիրառվում են հնազանդեցման դեղորայքային միջոցներ, ինչպիսին են ցավազրկող, հակապսիխոպաթիկ և քնաբեր միջոցները, ինչպես նաև հանգստացուցիչները, ապա դրանք պետք է ենթարկվեն նույն այն սահմանափակումներին, ինչ և հնազանդեցման մեխանիկական միջոցները: Անհրաժեշտ է անընդհատ հիշել կողմնակի հետևանքների մասին, որ նման դեղամիջոցները կարող են ունենալ կոնկրետ հիվանդի համար, հատկապես այն ժամանակ, երբ այն կիրառվում է զսպման մեխանիկական կամ մեկուսացման միջոցների հետ համակցված:

42. Ինչ վերաբերում է մեկուսացմանը, ապա այդ կոնկրետ միջոցը միշտ չէ, որ կարող է փոխարինել զսպման մեխանիկական, դեղորայքային և այլ միջոցների կիրառմանը: Հիվանդին մեկուսացնելը կարող է հանգստացնող ազդեցություն թողնել միայն կարճաժամկետ ընթացքում, բայց հայտնի է նաև, որ այն առաջացնում է ապակողմնորոշում և անհանգստություն, համենայն դեպս, որոշ հիվանդների մոտ: Այլ կերպ ասած, հիվանդին մեկուսի սենյակում տեղավորելն առանց համապատասխան ուղեկցող երաշխիքների կարող է հակառակ արդյունք տալ: ԽԿԿ-ն մտահոգված է մի շարք հոգեբուժական հիվանդանոցներում նկատվող միտումով, երբ որպես զսպման սովորական միջոց ընտրվում է մեկուսացումը՝ առանց դիտարկելու այլ միջոցների կիրառման հնարավորությունը:

Որ դեպքերում է պետք զսպել հիվանդին

43. Որպես ընդհանուր կանոն, հիվանդին պետք է զսպման ենթարկել միայն որպես ծայրահեղ միջոց. դա արտակարգ միջոց է, որը կիրառվում է կանխելու համար առողջությանը սպառնացող մոտալուտ վնասը կամ նվազեցնելու սուր գրգռվածությունը և/կամ բռնությունը:

Իրականում, ԽԿԿ-ն հաճախ արձանագրել է, որ հիվանդներին ենթարկում են զսպման, սովորաբար մեխանիկական որպես պատիժ այն բանի համար, ինչն ընկալվում է որպես վատ վարքագիծ կամ որպես միջոց փոխելու նման վարքագիծը:

Ավելին, ԽԿԿ-ի այցելած բազմաթիվ հոգեբուժական հիմնարկներում, զսպման միջոցների կիրառումն օգտագործվում է անձնակազմի հարմարության համար. դա անում են դժվար հիվանդներին վերահսկելու համար, երբ այլ խնդիրներ են իրականացվում: ԽԿԿ-ին արվող սովորական արդարացումն այն է, որ զսպման միջոցների լայն կիրառումը պայմանավորված է անձնակազմի պակասով:

Դա վատ փաստարկ է: Զսպման միջոցների կիրառումը ճիշտ ձևով և համապատասխան պայմանների պահպանմամբ պահանջում է ավելի շատ, այլ ոչ հակառակը, բժշկական անձնակազմի առկայությունը, քանի որ հնազանդեցման յուրաքանչյուր դեպք պահանջում է, որպեսզի անձնակազմի աշխատակիցն ապահովի ուղղակի, անհատական և շարունակական հսկողություն հիվանդի նկատմամբ (տես կետ 50-ը):

Այն հիվանդների նկատմամբ, ովքեր հիվանդանոց են եկել սեփական կամքով, զսպման միջոցները պետք է կիրառվեն միայն նրանց համաձայնությամբ: Եթե նման միջոցի կիրառումը նման կամավոր հիվանդի նկատմամբ անհրաժեշտ է համարվում, իսկ հիվանդը դրան համաձայն չէ, ապա պետք է վերանայել տվյալ հիվանդի իրավական կարգավիճակը:

44. Ի՞նչ կարելի է անել կանխելու համար հնազանդեցման միջոցների կիրառման չարաշահումը կամ չափից դուրս շատ օգտագործումը: Ամենից առաջ, ինչպես փորձը ցույց է տվել, բազմաթիվ հոգեբուժական հիմնարկներում կարելի է զգալիորեն պակասեցնել, մասնավորապես, մեխանիկական հնազանդեցման միջոցների կիրառումը: Որոշ երկրներում այդ նպատակով մշակված ծրագրերը կարծես թե պսակվել են հաջողությամբ, ընդ որում, դա չհանգեցրեց դեղորայքային միջոցներով զսպման առավել լայն կիրառմանը կամ ֆիզիկապես հիվանդներին վերահսկմանը: Այդ իսկ պատճառով հարց է ծագում՝ հնարավոր չէ արդյոք ամբողջությամբ (կամ գրեթե ամբողջությամբ) վերացնել զսպման մեխանիկական միջոցները՝ դա դարձնելով երկարաժամկետ իրատեսական նպատակ:

Պահանջվում է, որ զսպման յուրաքանչյուր առանձին դեպքում դա արվի բժշկի թույլտվությամբ կամ, ծայրահեղ դեպքում, առանց հետաձգման տեղյակ պահվի բժշկին այդ մասին, որպեսզի նա հավանություն տա այդ քայլին: ԽԿԿ-ի փորձի հիման վրա կարելի է եզրակացնել, որ զսպման միջոցները որպես կանոն ավելի հաճախ են կիրառվում, եթե բժիշկը նախապես իր ընդհանուր հավանությունն է տալիս, այն բանի փոխարեն, որպեսզի որոշումները կայացվեն յուրաքանչյուր առանձին դեպքի համար, յուրաքանչյուր առանձին իրավիճակի նկատմամբ:

45. Երբ արտակարգ իրավիճակը, որը հանգեցրել է զսպման միջոցների կիրառմանը, դադարում է գոյություն ունենալ, ապա հիվանդը պետք է անհապաղ ազատ արձակվի: ԽԿԿ-ն հանդիպել է հիվանդների, որոնց նկատմամբ հնազանդեցման մեխանիկական միջոցները կիրառվել են օրեր շարունակ: Նման գործելակերպի համար ոչ մի արդարացում չի կարող լինել և այն հանդիսանում է, ԽԿԿ-ի կարծիքով, հիվանդների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորում:

Նման գործելակերպի երկարակեցության հիմնական պատճառներից մեկն այն է, որ շատ քիչ հոգեբուժական հիմնարկներ են մշակել զսպման միջոցների կիրառման տևողության վերաբերյալ հստակ կանոններ: Հոգեբուժական հիմնարկները պետք է քննարկեն նման կանոնների ներդրման հնարավորությունը, ինչի հիման վրա զսպման մեխանիկական միջոցների կիրառման թույլտվությունը կլրանա որոշակի ժամանակ անց, եթե միայն այն ուղղակիորեն չերկարացվի բժշկի կողմից: Բժշկի համար նման կանոնի առկայությունը հզոր խթան կհանդիսանա այցելելու համար շարժումներում սահմանափակված հիվանդին և ստուգելու համար նրա մտավոր կամ ֆիզիկական առողջության վիճակը:

46. Զսպման միջոցների կիրառումը դադարեցնելուց հետո չափազանց կարևոր է հիվանդի հետ զրուցելը: Դա բժշկին հնարավորություն կտա բացատրել հիվանդին, թե ինչու է նրա նկատմամբ կիրառվել տվյալ միջոցը, ինչը հիվանդի մոտ կնվազեցնի հոգեբանական ցնցումը վերապրածից, ինչպես նաև կվերականգնի հարաբերությունները բժշկի և հիվանդի միջև: Ինչ վերաբերում է հիվանդին, ապա այդ զրույցի ընթացքում նա կկարողանա պատմել բժշկին իր էմոցիոնալ վիճակի մասին մինչև նման միջոցի կիրառումը, ինչը թույլ կտա ավելի լավ հասկանալ հիվանդի պահվածքի պատճառները ինչպես հենց իր, այնպես էլ հիվանդանոցի աշխատակիցների կողմից: Հիվանդն ու անձնակազմը միասին կարող են փորձել այլընտրանքային միջոցներ գտնել, որպեսզի հիվանդն ինքը կարողանա պահպանել ինքնատիրապետումը, դրանով իսկ կանխելով հետագա հնարավոր բռնության դրսևորումներն ու զսպման դիմելը:

Ինչպես է պետք կիրառել զսպման միջոցները

47. Մի շարք տարիների ընթացքում շատ հիվանդներ ԽԿԿ-ի պատվիրակությունների անդամներին պատմել են զասպման ենթարկվելու ժամանակ իրենց փորձառությունների մասին: Հիվանդները բազմիցս ասել են, որ ողջ այդ փորձության ընթացքում իրենք իրենց նվաստացած էին զգում, իսկ այդ զգացումը ժամանակ առ ժամանակ սաստկանում էր այն ձևից, որով զսպումն իրականացվում էր:

Հոգեբուժական հիվանդանոցի անձնակազմին նախևառաջ պետք է մտահոգի այն, որպեսզի զսպման միջոցների կիրառման պայմաններն ու հանգամանքները չվատացնեն այն հիվանդի մտավոր և ֆիզիկական առողջության վիճակը, ում նկատմամբ դրանք կիրառվել են: Դա ենթադրում է, ի թիվս այլոց, որպեսզի չընդհատվի նախկինում նշանակված թերապևտիկ բուժումը և, որպեսզի հիվանդները, ովքեր գտնվում են դեղերից կախվածության մեջ, ստանան համապատասխան բուժում՝ հաշվի առնելով վերացման ախտանիշները: Ընդ որում նշանակություն չունի, թե այդ ախտանիշներն առաջացել են անօրինական թմրամիջոցներից զրկելուց, նիկոտինից կամ այլ նյութերից:

48. Ընդհանրապես այն վայրը, որտեղ հիվանդի նկատմամբ կիրառվում է զսպման միջոցը, պետք է նախատեսված լինի հենց այդ կոնկրետ նպատակի համար: Այն պետք է անվտանգ լինի (օրինակ, առանց կոտրած ապակիների կամ սալիկների) և համարժեք կերպով լուսավորված և ջեռուցված, որպեսզի հիվանդի համար ստեղծվի այն միջավայրը, որտեղ նա կարող է իրեն հանգիստ զգալ:

Բացի դրանից հիվանդը, ում նկատմամբ կիրառվել է զսպման միջոցը, պետք է համապատասխան ձևով հագնված լինի և նրան չի կարելի ցուցադրել մյուս հիվանդներին, եթե միայն նա բացահայտորեն չի խնդրում հակառակը կամ, եթե հիվանդի մասին հայտնի է, որ նա նախընտրում է գտնվել այլ մարդկանց շրջապատում: Ամեն դեպքում հիվանդանոցի անձնակազմը պետք է երաշխավորի, որ հիվանդը, ով ենթարկվել է զսպման միջոցների, պաշտպանված է այլ հիվանդների կողմից վնասվելուց: Ինքնըստինքյան հասկանալի է, որ մի հիվանդի նկատմամբ զսպման միջոցների կիրառման ժամանակ անձնակազմը չպետք է դիմի մյուս հիվանդների օգնությանը:

Զսպման միջոցներ կիրառելիս հարկ է դա անել հմտորեն և խնամքով, որպեսզի սպառնալիքներ չստեղծվեն հիվանդի առողջության համար և նրան ցավ չպատճառվի: Չպետք է խախտվեն հիվանդի կենսական ֆունկցիաները, ինչպիսին են շնչառությունը և խոսելու, ուտելու և խմելու կարողությունը: Եթե հիվանդը հակում ունի կծելու, ծծելու կամ թքելու, ապա պոտենցիալ վնասն անհրաժեշտ է կասեցնել մի այլ կերպ, քան նրա բերանը փակելով:

49. Գրգռված կամ մոլագար հիվանդի նկատմամբ զսպման միջոցի պատշաճ իրականացումն անձնակազմի համար հեշտ խնդիր չէ: Այդ պատճառով էլ կարևոր է ոչ միայն կանոնավոր հիմունքներով կազմակերպված ուսուցում, այլև որակավորման բարձրացման դասընթացներ անցնելը: Նման ուսուցումը չպետք է միայն կենտրոնանա բուժանձնակազմին հրահանգավորելու այն մասին, թե ինչպես է պետք կիրառել զսպման միջոցները, այլև, ինչը նույնքան կարևոր է, պետք է ապահովի այն, որ անձնակազմը գիտակցի հիվանդի համար զսպման միջոցների հնարավոր հետևանքները և լինի տեղեկացված, թե ինչպես է պետք խնամել նման միջոցի ենթարկված հիվանդին:

50. Պատշաճ կերպով զսպման կիրառումը զգալի ռեսուրսներ է պահանջում անձնակազմի ներգրավման առումով: Օրինակ՝ ԽԿԿ-ն կարծում է, որ երբ հիվանդի վերջույթները կապված են ամրակապերով կամ գոտիներով, ապա այնտեղ պետք է մշտապես ներկա լինի անձնակազմի մի փորձված անդամ, որպեսզի օգնի թերապևտիկ համալիր միջոցների ձեռնարկմանը և ընդհանրապես օգնություն ապահովելու համար: Այդ օգնությունը կարող է ներառել հիվանդին զուգարան ուղեկցելը, կամ բացառիկ դեպքերում, երբ զսպման միջոցի կիրառումը երկարաձգվում է՝ օգնել նրան սնունդ ընդունել:

Ակնհայտ է, որ տեսահսկումը չի կարող փոխարինել անձնակազմի մշտական ներկայությանը: Այդ դեպքերում, երբ հիվանդը ենթարկվել է մեկուսացման, անձնակազմի անդամը կարող է գտնվել այդ հիվանդասենյակից դուրս պայմանով, որ հիվանդը կարող է տեսնել աշխատակցին, իսկ վերջինս, իր հերթին, կարող է մշտապես դիտարկել և լսել հիվանդին:

Զսպման միջոցների կիրառման համապարփակ ռազմավարական ծրագրի ընդունումը

51. Յուրաքանչյուր հոգեբուժական հաստատություն պետք է ունենա համապարփակ և մանրազնին կերպով մշակված զսպման միջոցների կիրառման ռազմավարական ծրագիր: Կարևորագույն նշանակություն ունի հաստատության ղեկավարության և անձնակազմի ներգրավվածությունը այդ ծրագրի մշակման գործում և նրանց աջակցությունը դրան: Նման ծրագիրը պետք է հստակ նախատեսի, թե զսպման ինչ միջոցներ կարող են կիրառվել, ինչ հանգամանքներում է թույլատրելի դրանց կիրառումը, դրանց կիրառման գործնական միջոցները, անհրաժեշտ հսկողությունը և ինչ գործողություններ պետք է ձեռնարկվեն զսպման միջոցի կիրառումից հետո:

Այդ ծրագիրը պետք է պարունակի նաև որոշակի բաժիններ այլ կարևոր հարցերի վերաբերյալ, ինչպիսին են՝ անձնակազմի ուսուցումը, անձնակազմի գործողությունների վերաբերյալ բողոքների քննարկամն ընթացակարգը, ներքին և արտաքին հաշվետվության մեխանիզմները, ինչպես նաև հարցազրույցները: ԽԿԿ-ի կարծիքով նման համապարփակ ծրագիրը ոչ միայն մեծ աջակցություն է անձնակազմին իր աշխատանքում, այլ նաև նպաստում է ապահովելու, որպեսզի հիվանդները և նրանց խնամակալները կամ վստահված անձինք տեղեկացված լինեն զսպման միջոցների կիրառման հիմքերի և նպատակների վերաբերյալ:

Զսպման դեպքերի գրանցումը

52. Փորձը ցույց է տվել, որ զսպման միջոցների կիրառման մանրամասն և ճշգրիտ գրանցումները կարող են հիվանդանոցի ղեկավարությանը տրամադրել հնարավորություն վերահսկելու այդ բնագավառում տիրող իրավիճակը և կատարելու անհրաժեշտ քայլեր, երբ դա նպատակահարմար է, նվազեցնելու համար զսպման միջոցների կիրառումը:

Գերադասելի է ունենալ հատուկ մատյան զսպման բոլոր դեպքերի գրանցման համար: Դա կլրացներ հիվանդի բժշկական անձնական գործում առկա գրառումները: Գրառումները մատյանում պետք է ներառեն զսպման միջոցի կիրառման սկիզբը և վերջը, գործի հանգամանքները, նման միջոցի կիրառման պատճառները, բժշկի ազգանունը, ով կարգադրել կամ հավանություն է տվել այդ միջոցի կիրառմանը, ինչպես նաև այն բոլոր հնարավոր մարմնական վնասվածքների մասին հաշվետվությունը, որ հասցվել են հիվանդներին կամ անձնակազմին: Հիվանդները պետք է հնարավորություն ունենան իրենց մեկնաբանություններն ավելացնեն այդ մատյանում և նրանք պետք է տեղեկացված

լինեն այդ մասին, իրենց պահանջով նրանք պետք է ստանան ամբողջական գրառումների պատճեն:

53. Կարելի է նաև քննարկել մոնիտորինգի արտաքին մարմնի, օրինակ, առողջապահության տեսչությանը, կանոնավոր հաշվետվություններ ներկայացնելու հարցը: Հաշվետվությունների նման մեխանիզմի ակնհայտ առավելությունը կայանում է նրանում, որ այն կհեշտացնի ազգային կամ տարածաշրջանային մակարդակում զսպման միջոցների կիրառման պրակտիկայի ամփոփումը, դրանով իսկ նպաստելով ջանքերին ավելի խորը ըմբրնելու և, հետևաբար, կառավարելու դրանց օգտագործումը:

Եզրափակիչ նկատառումներ

54. Պետք է ընդունել, որ զսպման միջոցների կիրառումը հաճախ կապված է բժշկությունից հեռու գործոնների հետ, օրինակ, հիվանդանոցի անձնակազմի որոշակի պատկերացումների հետ իր ունեցած դերի վերաբերյալ և հիվանդների տեղեկացվածության իրենց իրավունքների մասին: Համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զսպման կիրառման հաճախականությունը, այդ թվում և մեկուսացման, կապված է ոչ միայն անձնակազմի թվաքանակից, հիվանդների ախտորոշումից կամ հիվանդանոցի նյութական պայմաններից, բայց և հիվանդանոցի անձնակազմի «կուլտուրայից և վերաբերմունքից»:

Զսպման միջոցների կիրառման նվազեցումը մինչև ընդունելի նվազագույնը պահանջում է բազմաթիվ հոգեբուժական հիմնարկություններում մասնագիտական մշակույթի փոփոխություն: Այս առումով վճռական նշանակություն ունի այդ հաստատությունների ղեկավարության դերը: Մինչև այն պահը, երբ ղեկավարությունը կսկսի խրախուսել անձնակազմին կիրառել այլընտրանքային միջոցներ և կառաջարկի անձնակազմին այդ այլընտրանքները, միանգամայն հավանական է, որ կշարունակվի գերակայել զսպման միջոցների հաճախակի կիրառման ընդունված պրակտիկան:

IV. Ներգաղթողների ազատազրկումը

Օտարերկրացիների մասին օրենսդրության հիման վրա ազատազրկված օտարերկրյա քաղաքացիներ

Քաղվածք 7-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (97) 10]

Ա. Նախնական նկատառումներ

24. ԽԿԿ-ի պատվիրակությունները իրենց այցելությունների ժամանակ հա-ճախ հանդիպում են օտարերկրացիների մասին օրենսդրության հիման վրա ազատազրկված օտարերկրյա քաղաքացիների (այսուհետև՝ «ազատազրկված ներգաղթողներ»), որպիսիք են՝ անձինք, ում արգելված է մուտք գործել տվյալ երկիրը, անձինք, ովքեր մուտք են գործել երկիր անօրինական ճանապարհով և հետագայում հայտնաբերվել են իշխանությունների կողմից, անձինք, որոնց երկրում մնալու թույլտվության ժամկետն անցել է, քաղաքական ապաստան որոնող անձինք, որոնց ազատազրկումը իշխանու-թյուն-ներն անհրաժեշտ են համարում և այլն։

Հաջորդ բաժիններում նկարագրվում են այն հիմնական խնդիրներից մի քանիսը, որոնցով զբաղվում է ԽԿԿ-ն նման անձանց կապակցությամբ։ ԽԿԿ-ն հույս ունի այս միջոցով ազգային մարմիներին հստակորեն և ժամանակին պատկերացում տալու ազատազրկված օտերարկրացիների հետ վարվելու իր հայացքների մասին և, ավելի լայն առումով, նպաստելու այդ կարգի ազատազրկված մարդկանց հետ կապված հարցերի քննարկմանը։ Կոմիտեն հավանությամբ կընդունի Ընդհանուր հաշվետվության այդ մասին վերաբերող դիտողությունները:

Բ. Ազատազրկված անձանց պահելու համար նախատեսված հիմնարկները

25. ԽԿԿ-ի պատվիրակությունները իրենց այցելությունների ժամանակ հանդիպել են ազատազրկման տարբեր պայմաններում գտնվող ներգաղթողների հետ՝ սկսած երկիր մուտք գործելու կետերում հատուկ տեղերից մինչև ոստիկանական բաժանմունքների խցերը, բանտերը և ներգաղթողներին պահելու հատուկ կենտրոնները։ Ինչ վերաբերում է երկիր մուտք գործելու մերժում ստացած անձանց՝ օդանավակայանների տարանցիկ և «միջազգային» գոտիներում տեղավորելու ավելի կոնկրետ դեպքերին, ապա այդպիսի մարդկանց իրավական դրությունը որոշ տարաձայնություններ է հարուցել։ Կոմիտեն բազմիցս բախվել է այն փաստարկներին, իբր այդ մարդիկ«ազատազրկված չեն», քանի որ նրանք կարող են ուզած ժամանակ լքել գոտին՝ նստելով իրենց ընտրած ցանկացած միջազգային երթուղու ինքնաթիռ։

Իր կողմից ԽԿԿ-ն միշտ այն դիրքորոշումն է ունեցել, որ տարանցիկ կամ «միջազգային»գոտում գտնվելը հանգամանքներից կախված կարող է ազատազրկում նշանակել Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ (l) (f) հոդվածի իմաստով, և հետևաբար այդ գոտիները ենթակա են Կոմիտեի մանդատին: Ամուրը ընդդեմ Ֆրանսիայի գործով 1996թվի հունիսի 25-ին մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ընդունած դատավճիռը կարող է դիտվել որպես այդ դիրքորոշման հաստատում: Այդ գործում, որը վերաբերում էր ապաստան փնտրող և Փարիզի Օռլի օդանավակայանի տարանցիկ գոտում 20 օրով կալանքի տակ առնված չորս անձանց, դատարանը հայտարարել է, որ «այն փաստը, որ ապաստան փնտրող անձինք կարող են կամավոր կերպով թողնել երկիրը, որտեղ նրանք ուզում են ապաստան ստանալ, չի կարող բացառել ազատության սահմանափակումը ("atteinte")...», և վճիռ է ընդունել, որ «դիմողներին տարանցիկ գոտում պահելը ... կրած սահմանափակումների լույսի ներքո գործնականում հավասարեցվում է ազատազրկման»:

26. **Մուտքի կետերում պահելու տեղերը** հաճախ ճանաչվել են որպես պահանջներին չհամապատասխանող,հատկապես՝ երկար մնալու համար: Այսպես, օրինակ, ԽԿԿ-ի պատվիրակությունները բազմիցս հանդիպել են դեպքերի, երբ մարդկանց երկար օրեր պահել են օդանավակայանի վատ հարմարեցված սրահներում: Միանգամայն ակնհայտ է, որ այդ մարդկանց համար պետք է ստեղծեին քնելու պատշաճ պայմաններ, ապահովեին իրենց իրերից, համապատասխանորեն սարքավորված լոգարանից ու զուգարանից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև թույլ տային ամեն օր զբոսնելու մաքուր օդում: Բացի այդ, նրանց համար պետք է ապահովեին սնունդ և անհրաժեշտության դեպքում բժշկական օգնություն ստանալու հնարավորություն:

27. Որոշ երկրներում ԽԿԿ-ի պատվիրակությունները հանդիպել են դեպքերի, երբ ներգաղթողները երկար ժամանակ (շաբաթներ, իսկ որոշ դեպքերում՝ ամիսներ) կալանքի տակ են պահվել **ոստիկանական բաժանմունքներում** և միջակ նյութական պայմանների հետևանքով զրկված են եղել որևէ գործունեությունից ու երբեմն ստիպված են եղել ապրելու հանցագործության մեջ կասկածվողների հետ նույն խցերում: Այդպիսի իրավիճակը չի կարելի արդարացնել:

ԽԿԿ-ն ընդունում է, որ ազատազրկված ներգաղթողները որոշ ժամանակ ստիպված կլինեն անցկացնել սովորական ոստիկանական բաժանմունքում: Սակայն այնտեղի պայմանները հաճախ, եթե ոչ միշտ, երկար մնալու համար հարմարեցված չեն: Հետևաբար, ազատազրկված ներգաղթողներին այդպիսի հիմնարկներում պահելու ժամկետը պետք է հասցվի բացարձակ նվազագույնի:

28. Երբեմն Կոմիտեի պատվիրակությունները հանդիպել են ազատազրկված ներգաղթողներին **բանտերում** պահելու դեպքերի: Եթե նույնիսկ այդպիսի հիմնարկ-ներում պահելու պայմանները համապատասխան են, որը միշտ չէ, որ այդպես է, Կոմիտեն այդպիսի մոտեցումը հիմքից արատավոր է համարում: Բանտը, ըստ բնորոշման, հարմար տեղ չէ այն մարդուն պահելու համար, որը ոչ դատապարտված է, ոչ էլ կասկածվում է քրեական օրինախախտության մեջ:

Պետք է ընդունել, որ որոշ բացառիկ դեպքերում, երբ ազատազրկված ներգաղթողի կողմից բռնություն գործադրելու հավանականություն կա, կարող է արդարացվել նրան բանտում պահելը: Բացի այդ, ստացիոնար բուժման անհրաժեշտության և այլ հարմար բուժական հիմնարկ չլինելու դեպքում ազատազրկված ներգաղթողին, հնարավոր է, ստիպված լինեն տեղավորել առողջապահության բանտային ծառայությունում: Սակայն այդպիսի կալանավորվածները պետք է մյուս ազատազրկվածներից առանձին պահվեն, անկախ այն բանից, դրանք կասկածյալներ են թե դատապարտյալներ:

29. ԽԿԿ-ի տեսակետից, այն դեպքերում, երբ օտարերկրացիների մասին օրենքների հիման վրա երկար ժամանակով ազատազրկումը անհրաժեշտ է համարվում, արգելանքի տակ վերցվածները պետք է տեղավորվեն **կենտրոններում, որոնք հատուկ նախատեսված են այդ նպատակի համար,** տրամադրում են այդ մարդկանց իրավական վիճակին համապատասխան նյութական պայմաններ ու ռեժիմ և համալրված են համապատասխան որակավորում ունեցող անձնակազմով: Կոմիտեն ուրախ է նշելու, որ Կոնվենցիայի Կողմերը հետևում են այդ մոտեցմանը:

Ակներև է, որ այդպիսի կենտրոնները պետք է տրամադրեն համապատասխան կահույքով, մաքուր և բարեկարգ ապրելատեղ, որը բավարար բնակտարածություն կապահովի տվյալ քանակի անձանց համար: Բացի այդ, անհրաժեշտ է հոգ տանել ապրելատեղերի ձևավորման և տեղադրման մասին՝ ըստ հնարավորին բանտային միջավայրի տպավորություն ստեղծելուց խուսափելու համար: Ինչ վերաբերում է ռեժիմով թույլատրելի գործունեությանը, ապա դա պետք է ներառի մաքուր օդում գտնվելը, հանգստի սենյակից, ռադիոյից ու հեռուստացույցից, թերթերից ու ամսագրերից, ինչպես նաև հանգստի մյուս միջոցներից (սեղանի խաղերից, սեղանի թենիսից) օգտվելը: Որքան ավելի երկար է անձանց ազատազրկման ժամկետը, այնքան ավելի զարգացած պետք է լինեն գործունեության առաջարկվող ձևերը:

Ազատազրկված ներգաղթողներին պահելու կենտրոնների անձնակազմի վրա հատուկ խնդիր է ընկնում: Նախ՝ անխուսափելիորեն կլինեն լեզվական անջրպետից ծագող հաղորդակցական դժվարություններ:Երկրորդ՝ ազատազրկվածներից շատերը դժվարությամբ կընկալեն ազատազրկման փաստը,մանավանդ որ նրանք չեն կասկածվում որևէ քրեական օրինախախտման մեջ: Երրորդ՝ տարբեր ազգերի կամ էթնիկական խմբերի պատկանող ազատազրկված անձանց միջև լարված հարաբերությունների առաջացման վտանգ կա: Ուստի Կոմիտեն բարձր է գնահատում, երբ այդպիսի կենտրոններում հսկողություն իրականացնող անձնակազմը խնամքով ընտրվում և համապատասխան պատրաստություն է անցնում: Միջանձնական հաղորդակցման լավ զարգացած հատկություններ ունենալու հետ միասին տվյալ անձնակազմը պետք է ծանոթ լինի ազատազրկված անձանց մշակույթի առանձնահատկություններին, համեմայն դեպս, գոնե որոշ աշխատակիցներ պետք է ունենան համապատասխան լեզվական պատրաստվածություն: Բացի այդ,անձնակազմը պետք է սովորած լինի ճանաչել ազատազրկված անձանց մեջ ի հայտ եկող ստրեսային հակազդեցության հնարավոր հայտանշանները (կամ հետվնասվածքային, կամ սոցիալ-մշակութային փոփոխությունների հետևանքով առաջացած) և կարողանա ձեռք առնել համապատասխան միջոցներ:

Գ. Իրավունքների պաշտպանության երաշխիքները ազատազրկման ժամանակ

30. Ազատազրկված ներգաղթողներին, ինչպես և այլ կարգի ազատազրկված անձանց, պետք է իրավունք վերապահվի ազատազրկման պահից ևեթ իրենց վիճակի մասին հայտնելու իրենց ընտրությամբ ցանկացած մարդու և դիմելու փաստաբանի և բժշկի օգնությանը: Բացի այդ, նրանց պետք է ճշգրիտ, անմիջապես և իրենց հասկանալի լեզվով տեղեկություն տրվի իրենց իրավունքների և իրենց նկատմամբ կիրառվող գործողությունների մասին:

ԽԿԿ-ն նշում է, որ որոշ երկրներում այդ պահանջները կատարվում են, իսկ այլ երկրներում՝ ոչ: Մասնավորապես, այցելող պատվիրակությունները շատ դեպքերում հանդիպել են ազատազրկված ներգաղթողների, որոնք ակներևաբար իրենց հասկանալի լեզվով լիովին չեն տեղեկացվել իրենց իրավաբանական կարգավիճակի մասին: Այդպիսի դժվարությունները հաղթահարելու համար ազատազրկված ներգաղթողներին պարբերաբար պետք է ապահովել նրանց նկատմամբ կատարվող գործողությունները բացատրող և նրանց իրավունքները շարադրող փաստաթղթով: Այդ փաստաթուղթը պետք է տրվի այն լեզվով, որով սովորաբար խոսում են այն անձինք, որոնց դա վերաբերում է, և, եթե անհրաժեշտ է, պետք է դիմել թարգմանչի օգնությանը:

31. Փաստաբանին դիմելու իրավունքը պետք է տարածվի ազատազրկման ամբողջ ժամկետի վրա և պետք է ներառի ինչպես փաստաբանի հետ մենակ խոսելու իրավունքը, այնպես էլ համապատասխան մարմինների հետ զրույցի ընթացքում փաստաբանի ներկայության իրավունքը։

Բոլոր հիմնարկները, որտեղ պահվում են ազատազրկված ներգաղթողները, պետք է ապահովեն բժշկական ծառայության հնարավորությունը։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել քաղաքական ապաստան փնտրողների ֆիզիկական ու հոգեբանական վիճակին, նրանցից ոմանք,հնարավոր է, ենթարկվել են խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի այն երկրներում, որտեղից եկել են։ Բժշկին դիմելու իրավունքը պետք է ներառի, եթե ազատազրկվածը կամենում է, նաև իր ընտրած բժշկի կողմից քննության ենթարկվելու իրավունքը, սակայն այդպիսի լրացուցիչ քննության ծախսերը սովորաբար վճարում է ազատազրկված անձը։

Ավելի լայն իմաստով՝ ազատազրկված ներգաղթողները պետք է իրավունք ունենան արգելանքի տակ գտնվելու ժամանակաընթացքում կապ պահպանելու արտաքին աշխարհի հետ և հատկապես, օգտվելու հեռախոսից և հարազատների ու համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների այցելություններից։

Դ. Արտաքսումից հետո դաժան վերաբերմունքի վտանգը

32. Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելումը ենթադրում է պարտավորություն՝ անձանց չուղարկել տվյալ երկիր, եթե կան էական հիմքեր կարծելու, որ նա այնտեղ կհանդիպի խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի օբյեկտ դառնալու վտանգին։ Կատարո՞ւմ են արդյոք Կոնվենցիայի Կողմերը այդ պարտավորությունը,սա ակներևաբար ԽԿԿ-ի համար նշանակալից հետաքրքրություն ներկայացնող հարց է։ Ի՞նչ դեր պետք է ձգտի կատարել Կոմիտեն այս հարցում։

33. Անձանց կողմից Ստրասբուրգում գտնվող ԽԿԿ-ին հասցեագրված ամեն մի հաղորդում այն մասին, որ իրենք իբր ենթակա են վտարման մի երկիր, ուր նրանց խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վտանգ է սպառնում,անմիջապես հայտնվում է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին։ Հանձնաժողովը իր կարգավիճակի շնորհիվ Կոմիտեից ավելի մեծ հնարավորություններ ունի այդպիսի պնդումները քննարկելու և, եթե անհրաժեշտ է, կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու։

Եթե ազատազրկված ներգաղթողը (կամ ազատազրկված որևէ այլ անձ) որի հետ զրուցել են այցելության ընթացքում, պնդում է, որ ինքը իբր պետք է ուղարկվի մի երկիր, ուր խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վտանգին է ենթարկվելու, Կոմիտեի պատվիրակությունը այցելության ժամանակ կհետևի, որ այդ պնդումը հասցվի համապատասխան ազգային իշխանություններին և պատշաճ ձևով քննարկվի։ Հանգամանքներից կախված՝ պատվիրակությունը կարող է պահանջել, որ իրեն մշտապես տեղյակ պահեն ազատազրկված անձի վիճակի մասին, և/կամ ազատազրկված անձին հայտնեն հարցը Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի առջև դնելու հնարավորության մասին (և, վերջին դեպքում,կհետևի, որ ազատազրկված անձը ի վիճակի լինի բողոք ներկայացնելու Հանձնաժողովին)։

34. Սակայն, քանի որ ԽԿԿ-ի գործառույթը հիմնականում կանխարգելումն է, նա հակված է իր ուշադրությունը կենտրոնացնելու այն հարցի վրա, թե որոշում ընդունելու գործընթացն ամբողջապես առաջադրո՞ւմ է արդյոք համապատասխան երաշխիքներ անձանց այն երկրներն ուղարկելու դեմ, որտեղ նրանք կենթարկվեն խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի վտանգին։ Այս կապակցությամբ Կոմիտեն կցանկանար քննել այն հարցը, թե կիրառվող ընթացակարգը առաջադրո՞ւմ է արդյոք նշված անձանց իրենց բողոքները ներկայացնելու իրական հնարավորություն, համապատասխան պատրաստություն անցե՞լ են արդյոք պաշտոնատար անձինք, ում հանձնարարված է քննել այդ բողոքները, և արդյոք հնարավորություն ունե՞ն նրանք օբյեկտիվ և անկախ իրազեկում ստանալու այլ երկրներում մարդու իրավունքների իրավիճակի մասին։ Բացի այդ,«խաղաքարտին դրված» շահերի կարևորությունից ելնելով՝ Կոմիտեն ենթադրում է, որ պետության սահմաններից մարդկանց արտաքսելու հետ կապված որոշումը պետք է բողոքարկման ենթակա լինի այլ, անկախ մարմնի առջև՝ մինչև դրա իրագործումը։

Ե. Հարկադրանքի միջոցները արտաքսման ընթացակարգերի իրականացման պայմաններում

35. Վերջապես, ԽԿԿ-ն պետք է նշի, որ մի քանի երկրներից տագնապալից հաղորդումներ է ստացել կալանավորված ներգաղթողների արտաքսման ընթացքում կիրառվող հարկադրանքի միջոցների մասին: Այդ հաղորդումները, մասնավորապես, պարունակում էին պնդումներ ծեծի, կապանքների, բերանը խցոց դնելու և նշված անձանց կամքին հակառակ հանգստացնող դեղամիջոցներ գործադրելու մասին:

36. ԽԿԿ-ն ընդունում է, որ օտարերկրյա քաղաքացուն արտաքսելու մասին ցուցումի իրականացումը, երբ նա որոշել է մնալ տվյալ երկրի տարածքում, հաճախ դժվար խնդիր է դառնում: Իրավապահ մարմինների աշխատակիցները այդպիսի վտարումն իրականացնելու համար երբեմն ստիպված են ուժ գործադրել: Սակայն գործադրվող ուժը չպետք է անցնի խելամիտ անհրաժեշտության սահմանները: Մասնավորապես, անթույլատրելի է վտարման ենթակա անձանց նկատմամբ ֆիզիկական ներգործություն կատարել՝ փոխադրական միջոցից նրանց օգտվել ստիպելու կամ այդ պահանջը չկատարելու համար պատժելու նպատակով: Բացի այդ, Կոմիտեն պետք է ընդգծի, որ մարդկանց բերանը խցոց դնելը խիստ վտանգավոր միջոց է:

ԽԿԿ-ն նաև ցանկանում է ընդգծել, որ արտաքսման ենթակա անձանց դեղորայք տալը պետք է կատարվի միայն բժշկի ցուցումով և համաձայն բժշկական էթիկայի:

Երաշխիքներ ազատությունից զրկված անօրինական միգրանտների համար

Քաղվածք 19-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2009) 27]

Նախնական նկատառումներ

75. 1997 թ. հրատարակված 7-րդ Ընդհանուր հաշվետվության հիմնական հատվածում ԽԿԿ-ն հանգամանորեն շարադրել էր իր դիրքորոշումը օտարերկրացիների մասին օրենսդրության հիման վրա ազատազրկված օտարերկրյա քաղաքացիների համար («ազատազրկված ներգաղթողներ») նախատեսված երաշխիքներին և պայմաններին, ինչպես նաև իր տեսակետերը նման անձանց վտարման վերաբերյալ[1]: Դրանից հետո անցած ժամանակահատվածում ԽԿԿ-ն բազմիցս այցելել է ներգաղթողների պահման համար նախատեսված կենտրոններ, ինչպես նաև ոստիկանական բաժանմունքներ և բանտային հաստատություններ, որտեղ մի շարք երկրներում շարունակում են պահվել ազտազրկված ներգաղթողները: Այս այցելությունների մեծամասնության արդյունքում Կոմիտեի մոտ ամրացել է կարծիքն այն մասին, որ ազատազրկված ներգաղթողներն առանձնապես խոցելի են բռնության տարբեր ձևերի ենթարկվելու առումով՝ լինի դա ձերբակալության պահին, կալանքի տակ պահելու, թե երկրից արտաքսելու ժամանակ:

Հաշվի առնելով այս խմբի անձանց խոցելի վիճակը, ԽԿԿ-ն իր բազմաթիվ այցելությունների ժամանակ հատուկ ուշադրություն է դարձրել ազատազրկված ներգաղթողների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի վրա: Բացի դրանից, Կոմիտեն շարունակում էր մշակել իր սեփական չափորոշիչները, օրինակ, ի շնորհիվ 13-րդ Ընդհանուր հաշվետվության մեջ կատարելագործելով օդային տրանսպորտի միջոցով օտարերկրացիների, ներառյալ ազատազրկված ներգաղթողների, արտաքսելու ղեկավար սկզբունքները[2]:

76. ԽԿԿ-ն 19-րդ Ընդհանուր հաշվետվության մեջ ամրագրել է իր մոտեցումներն այն երաշխիքների վերաբերյալ, որոնք պետք է ապահովեն ազատությունից զրկված անօրինական միգրանտներին՝, առանձնակի ուշադրություն հատկացնելով երեխաներին[3]: «Ազատազրկված անօրինական միգրանտներ». սա եզրույթ է, որ օգտագործվում է մատնանշելու համար

---

1 Տես CPT/Inf (97) 10 փաստաթղթի 24-36 կետերը:

2 Տես CPT/Inf (2003) 35 փաստաթղթի 27-45 կետերը:

3 Սա չի նշանակում, որ երեխաները միակ խոցելի խումբն են: Նույն կերպ խոցելի են, օրինակ՝ տարեցներն ու առանց ուղեկիցների կանայք:

օտարերկրացիների վերաբերյալ օրենսդրության հիման վրա ազատազրկված այն անձանց, ովքեր կա՛մ անօրինական կերպով մուտք են գործել երկիր (կամ փորձել են դա անել), կա՛մ էլ այն պատճառով, որ գերազանցել են տվյալ երկրում գտնվելու իրենց օրինական ժամկետը:

Հարկ է նշել, որ ապաստարան հայցողները չեն հանդիսանում անօրինական միգրանտներ, թեև տվյալ անձինք կարող են դառնալ այդպիսին, եթե ապաստարան հայցելու նրանց դիմումը մերժվի և լրանա երկրում գտվելու նրանց ժամկետը: Բոլոր այն դեպքերում, երբ ապաստարան հայցող մարդիկ զրկվում են ազատությունից մինչև իրենց դիմումի քննումը, նրանց պետք է տրամադրվի երաշխիքների լայն շրջանակ իրենց կարգավիճակին համապատասխան, որը դուրս է երաշխիքների այն շրջանակից, որոնք կիրառելի են անօրինական միգրանտների համար, որ շարադրված են հետագա շարադրանքում[1]:

Անօրինական միգրանտների ազատազրկումը

77. Այցելությունների ընթացքում ԽԿԿ-ն նշել է, որ Եվրախորհրդի մի շարք անդամ պետություններ համաձայնեցված ջանքեր են գործադրել բարելավելու համար ազատազրկված միգրանտների պահման պայմանները: Սակայն ԽԿԿ-ն մինչ օրս էլ չափազանց հաճախ է բախվում անօրինական միգրանտների մի շարք դեպքերում նաև ապաստան հայցող անձանց, պահման այնպիսի տեղերի հետ, որոնք դրա համար բոլորովին հարմար չեն: Նման մի վայրի վառ օրինակ է չօգտագործվող պահեստը, որտեղ կան սանիտարական սահմանափակ պայմաններ կամ դրանք ընդհանրապես բացակայում են, որը լցված էր մահճակալներով կամ հատակին զցված ներքնակներով, որտեղ տեղաբաշխված էին հարյուրավոր մարդիկ, փակված այնտեղ շաբաթներով կամ անգամ ամիսներով, ովքեր չունեին ոչ մի զբաղմունք ու հնարավորություն զբոսնելու և ապրում էին հիգիենիկ վատ պայմաններում: ԽԿԿ-ի պատվիրակությունները ինչպես նախկինում շարունակում են հայտնաբերել անօրինական միգրանտների,

[1] Ինչ վերաբերում է ապաստարան հայցող անձանց, ապա որոշ միջազգային երաշխիքներ նախատեսվել են 1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին Ժնևյան կոնվենցիայով և դրա 1967 թ. Արձանագրությամբ: Բացի դրանից, մի շարք երաշխիքներ է նախատեսում Եվրամիության օրենսդրությունը: Մասնավորապես, 2003 թ. հունվարի 27-ի 2003/9/EC Խորհրդի հրահանգում շարադրված են ապաստարան հայցող անձանց ընդունման նվազագույն չափորոշիչները և սահմանված են մի շարք երաշխիքներ. սակայն այդ օրենսդրության կիրառումը սահմանափակված է ԵՄ անդամ պետություններով: Հարկ է նաև հիշատակել Մարդու իրավունքների պաշտպանության ղեկավար սկզբունքները՝ ապաստարան տրամադրելու արագացված ընթացակարգի համատեքստում՝ ընդունված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2009 թ. հուլիսի 1-ին:

որոնց պահում են ոստիկանական բաժանմունքներում, գրեթե անընդունելի պայմաններում օրեր, երբեմն էլ, շաբաթներ շարունակ:

Որոշ երկրներում անօրինական միգրանտներին պահում են բանտերում: ԽԿԿ-ի կարծիքով բանտային հաստատությունն իր նշանակությամբ արդեն հարմար վայր չէ պահելու համար մեկին, ում ոչ մեղադրել են, ոչ էլ դատապարտել քրեական հանցագործության մեջ: Հետաքրքիր է նշել, որ իրենց այցելած տարբեր բանտային հաստատությունների ղեկավարներ և աշխատակիցներ ԽԿԿ-ի հետ հաճախ համաձայնվում են նրանում, որ չունեն ոչ համապատասխան սարքավորումներ, ոչ էլ պատրաստվածություն հետևելու համար անօրինական միգրանտներին: Այդ համատեքստում ԽԿԿ-ն ցանկանում է կրկին նշել, որ անօրինական միգրանտների կենտրոնների աշխատակիցները շատ դժվարին խնդիր են իրականացնում: Հետևաբար, նրանք պետք է բծախնդրորեն ընտրվեն և անցնեն համապատասխան պատրաստություն:

78. Չնայած որ Եվրախորհրդի անդամ պետություններում անօրինական միգրանտների պահման համար բազմաթիվ վայրեր կան, դեռևս գոյություն չունի համապարփակ այնպիսի փաստաթուղթ, որը կներառեր ողջ Եվրոպական մայրցամաքը[1] և որտեղ շարադրված կլինեին ազատազրկված անօրինական միգրանտների համար նվազագույն չափանիշներն ու երաշխիքները՝ տվյալ անձանց առանձնահատուկ խմբի հատուկ կարիքների համապատասխան:

Ազատազրկված այն միգրանտների նկատմամբ, ովքեր պահվում են բանտերում, կիրառվում են 2006 թ. Եվրոպական բանտային կանոնները: Սակայն Կանոններին կից Մեկնաբանություններում ընդգծվում է, որ ազատազրկված միգրանտները սկզբունքորեն չպետք է պահվեն բանտում: Այդ պատճառով էլ Կանոններում չեն դիտարկվում անօրինական միգրանտների հատուկ կարիքների և կարգավիճակի հետ կապված այնպիսի հարցեր, ինչպիսին են արտաքսման ընթացակարգերի նախապատրաստությունն ու իրականացումը: Այդ առիթով հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5 (1) հոդվածի համաձայն անօրինական միգրանտները կարող են ազատազրկվել կամ նրանց արտաքսման նպատակով ձեռնարկված միջոցների, կամ նրանց անօրինական

[1] Եվրոպական խորհրդարանի 2008/115/EC և Եվրոպական միության Խորհրդի 2008 թ. դեկտեմբերի 16-ի հրահանգը՝ անդամ պետություններում անօրինականորեն գտնվող երրորդ երկրների քաղաքացիների վերադարձման մասին ընդհանուր չափորոշիչները և ընթացակարգերը նախատեսում են, ի թիվս այլոց, ազատազրկված անօրինական միգրանտներին վերաբերող չափորոշիչներ: Այդ Հրահանգը կիրառվում է ԵՄ անդամ պետությունների մեծ մասում և մի քանի այլ երկրներում և այն անհրաժեշտ է ամրագրել ազգային օրենսդրություններում 2010 թ. վերջերին:

մուտքը երկիր կանխելու նպատակով: Այսպիսով, անօրինական միգրանտներին ազատազրկելու նպատակը զգալիորեն տարբերվում է այն անձանց ազատազրկումից, ովքեր բանտում են պահվում կամ որպես նախնական կալանքի փուլ, կամ էլ որպես արդեն դատապարտված իրավախախտներ:

79. Անօրինական միգրանտների ազատազրկման պայմանները պետք է արտացոլեն նրանց ազատազրկման բնույթը, նվազագույն սահմանափակումներով և նախատեսեն տարատեսակ գործունեության ձևեր: Օրինակ՝ ազատազրկված միգրանտները պետք է բոլոր հնարավորություններն ունենան արտաքին աշխարհի հետ իրական շփում պահպանելու համար (ներառյալ՝ հեռախոսով հաճախակի զանգահարելու և այցելուներ ընդունելու հնարավորությունը) և նրանք պետք է որքան հնարավոր է քիչ սահմանափակումներ ունենան իրենց պահման վայրի շրջանակում ազատ տեղաշարժվելու համար: Եվ անգամ եթե բանտում պահվելու պայմանները համապատասխանում են այս պայմաններին,- իսկ դա, իհարկե, միշտ չէ, որ այդպես է, ԽԿԿ-ն կարծում է, որ անօրինական միգրանտներին բանտային պայմաններում պահելն ինքնին հիմնավորապես սխալ մոտեցում է՝ վերը նշված պատճառներից ելնելով:

80 Ընդհանուր առմամբ, որոշ երկրներում իշխանությունները մինչև անօրինական միգրանտների արտաքսելը պարբերաբար դիմում են նրանց վարչական կալանքի ենթարկելու միջոցին, ընդ որում, երբեմն առանց ժամանակի սահմանափակման կամ առանց դատական վերանայման հնարավորության: Պարզ է, որ նման պայմաններում վարչական կալանքի ենթարկելը մեխանիկորեն բերում է այն ռիսկին, որ դա հակասության մեջ է մտնում, ի թիվս այլոց, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հետ: ԽԿԿ-ի կարծիքով, պետությունները պետք է անօրինական միգրանտներին ազատազրկելու իրենց լիազորություններն իրականացնեն ընտրովի հիմունքներով: Կալանքի տակ վերցնելու միջոցին պետք է դիմել յուրաքանչյուր առանձին գործ մանրամասն քննության ենթարկելուց հետո:

Հիմնական իրավունքներն ազատությունից զրկման նախնական փուլերում

81. ԽԿԿ-ն համարում է, որ կալանքի տակ գտնվող անօրինական միգրանտները պետք է իրենց ազատազրկման հենց սկզբից օգտվեն երեք հիմնական իրավունքներից ճիշտ այնպես, ինչպես և ազատազրկված այլ կատեգորիայի անձինք: Այդ իրավունքներն են. (1) փաստաբանի մատչելիություն, (2) բժշկի մատչելիություն և (3) սեփական ընտրությամբ տեղեկացնելու ազգականին կամ երրորդ կողմին ազատությունից զրկման մասին:

82. Փաստաբանի մատչելիության իրավունքը պետք է ներառի փաստաբանի հետ գաղտնի զրուցելու, ինչպես նաև բնակության վայրի, կալանքի տակ գտնվելու և արտաքսման հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվություն ստանալու իրավունքները: Դա ենթադրում է, որ երբ անօրինական միգրանտներն ի վիճակի չեն իրենք ընտրել և վճարել փաստաբանին, նրանց պետք է մատչելի լինի անվճար իրավաբանական օգնությունը:

Բացի դրանից, նոր եկած բոլոր ազատազրկված անձինք պետք է անմիջապես զննության ենթարկվեն բժշկի կամ բժշկի ենթակայության ներքո գործող բարձրորակ բուժքույրի կողմից: Բժշկի մատչելիության իրավունքը անօրինական միգրանտի ցանկության դեպքում պետք ներառի իրավունք բժշկական զննում անցնելու իր ընտրած բժշկի կողմից: Սակայն նման բուժզննման հետ կապված ծախսերը պետք է հավանաբար հոգա ազատազրկված անձը:

Ազգականին կամ սեփական ընտրությամբ երրորդ կողմին կալանքի տակ գտնվելու մասին տեղեկացնելը զգալիորեն հեշտանում է, եթե անօրինական միգրանտներին թույլատրվի իրենց մոտ պահել բջջային հեռախոսները ազատազրկման ընթացքում կամ, առնվազն, դրանք մատչելի լինեն նրանց:

83. Ի լրումն այս երեք հիմնական իրավունքների, միջազգային պայմանագրերը ճանաչում են կալանքի տակ գտնվող անօրինական միգրանտի իրավունքը դիմելու հյուպատոսական օգնության: Բայց քանի որ ոչ բոլոր անօրինական միգրանտներն են ցանկանում շփման մեջ մտնել իրենց ազգային իշխանությունների հետ, այդ իրավունքի իրականացումը պետք է թողնվի շահագրգիռ անձի հայեցողությանը:

84. Շատ կարևոր է, որ նոր բերված անօրինական միգրանտներին անհապաղ տրմադրվեն տեղեկություններ այս իրավունքների մասին այն լեզվով, որը նրանք հասկանում են: Այս նպատակով անհրաժեշտ է նրանց պարբերաբար տրամադրել փաստաթուղթ, որտեղ բացատրվում են նրանց նկատմամբ կիրառվող ընթացակարգերը, ինչպես նաև պարզ և հստակ ձևակերպումներով շարադրված են նրանց իրավունքները: Այդ փաստաթուղթը պետք է առկա լինի բոլոր այն լեզուներով, որոնցով սովորաբար խոսում են ազատությունից զրկված անձինք և, անհրաժեշտության դեպքում, նրանց պետք է մատչելի լինեն թարգմանչի ծառայությունները:

Ընդհանուր երաշխիքները ազատությունից զրկման ընթացքում

85. Ազատությունից զրկման յուրաքանչյուր դեպք պետք է իրականացվի կալանքի տակ վերցնելու պատշաճ կերպով ընդունված որոշման հիման վրա, որի հետ կարելի է ծանոթանալ այն հաստատությունում, որտեղ տվյալ անձը պահվում է: Կալանքի տակ վերցնելու նման որոշում պետք է կայացվի հենց ազատազրկման պահին կամ էլ դրանից հետո՝ որքան հնարավոր է շուտ: Այս հիմնական պահանջը հավասարապես տարածվում է ազատությունից զրկված անօրինական միգրանտների վրա: Բացի դրանից, հիմնարար երաշխիքներն այն անձանց համար, ովքեր կալանավորվել են իրավապահ մարմինների կողմից, ավելի ուժեղ են դառնում, եթե յուրաքանչյուր տվյալ անձի վերաբերյալ վարվում է միասնական և ամբողջական բանտարկության գրառում, որտեղ նշվում են անձի կալանքի տակ գտնվելու բոլոր նյութերը և այդ կապակցությամբ ձեռնարկված բոլոր գործողությունները:

86. Ազատությունից զրկված անօրինական միգրանտները պետք է ունենան իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, ինչը նրանց հնարավորություն կընձեռի դատարանի կողմից նրանց կալանքի տակ վերցնելու օրինականությունը արագ կերպով քննության առնել: Գործի նման դատական վերանայումը պետք է ներառի բանավոր լսումները փաստաբանի մասնակցությամբ՝ անվճար տրամադրված այն անձանց, ովքեր չունեն բավարար միջոցներ, և թարգմանչի տրամադրմամբ (եթե անհրաժեշտ լինի): Դրանից բացի, ազատությունից զրկված անօրինական միգրանտները պետք է հստակ կերպով տեղեկացված լինեն իրավական պաշտպանության այդ միջոցի մասին: Կալանքի ժամկետի երկարացման անհրաժեշտությունը պետք է պարբերաբար վերանայվի անկախ մարմնի կողմից:

87. Պետք է ձեռնարկվեն միջոցներ, որոնք ազատությունից զրկված անօրինական միգրանտներին թույլ կտան խորհրդակցել փաստաբանի կամ բժշկի հետ մշտական հիմունքներով, ինչպես նաև այցելություններ ստանալ ՀԿ-ի ներկայացուցիչներից, ընտանիքի անդամներից կամ իրենց ընտրությամբ այլ անձանցից, ինչպես նաև հեռախոսային կապ պահպանել նրանց հետ:

Եթե միևնույն ընտանիքի անդամներն ազատությունից զրկվել են օտարերկրացիների մասին օրենսդրության հիման վրա, անհրաժեշտ է բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի խուսափեն նրանց իրարից բաժանելուց:

88. Ինչպես անօրինական միգրանտների, այնպես էլ աշխատակազմի շահերին է համապատասխանում հստակ ներքին կանոնների առկայությունը ազատությունից զրկման բոլոր վայրերի համար: Ընդ որում, այդ կանոնների օրինակները պետք է լինեն բավարար քանակի լեզուներով: Այդ ներքին կանոնները պետք է առաջին հերթին լինեն տեղեկատվական բնույթի և վերաբերեն հարցերի, իրավունքների ու պարտականությունների ամենալայն շրջանակի, որոնք կապված են ազատազրկման վայրում կյանքի ամենօրյա խնդիրների հետ: Այդ ներքին կանոնները պետք է նաև պարունակեն կարգապահական ընթացակարգեր և ազատազրկված անձանց իրավունք վերապահեն բացատրություններ տալու այն խախտումների վերաբերյալ, որոնցում նրանք մեղադրվում են, ինչպես նաև անկախ մարմնին բողոքարկելու ցանկացած պատժամիջոցի դեմ: Առանց նման կանոնների առկա է այն ռիսկը, որ կդրսևորվի ոչ պաշտոնական (և չվերահսկվող) կարգապահական համակարգ:

Այն դեպքում, երբ անօրինական միգրանտին առանձնացնում են անվտանգության կամ նրա պաշտպանության համար, նման ընթացակարգերը պետք է ուղեկցվեն արդյունավետ երաշխիքներով: Շահագրգիռ անձը պետք է տեղեկացվի իր նկատմամբ կիրառվող նման միջոցի պատճառների մասին, հնարավորություն ունենա շարադրելու իր տեսակետերն այդ հարցի վերաբերյալ նախքան այդ միջոցի իրականացումը, ինչպես նաև հնարավորություն ունենա վիճարկելու այդ միջոցը իրավասու մարմնի առջև:

89. Անօրինական միգրանտների ազատությունից զրկման վայրերի անկախ մոնիտորինգը կարևոր գործոն է բռնության կանխարգելման համար և, ավելի լայն առումով ապահովելու համար բավարար պայմաններ կալանքի տակ պահելու ընթացքում: Լիարժեք արդյունավետ լինելու համար մոնիտորինգային այցելությունները պետք է լինեն թե հաճախակի, թե անսպասելի: Բացի դրանից, մոնիտորինգի մարմինները պետք է լիազորություններ ունենան առանձին հարցազրույցներ անցկացնելու անօրինական միգրանտների հետ և քննարկելու նրանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի հետ կապված բոլոր հարցերը (կալանքի տակ գտնվելու նյութական պայմանները, դրա հետ կապված հաշվետվություններն ու այլ փաստաթղթերը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց կողմից իրենց իրավունքների իրականացումը, նրանց կողմից առողջապահական ծառայություններից օգտվելը և այլն):

Առողջության պահպանման հետ կապված երաշխիքները

90. Ազատությունից զրկման ընթացքում անօրինական միգրանտների առողջական վիճակի գնահատումը կարևորագույն պատասխանատվության խնդիր է ինչպես առանձին վերցրած յուրաքանչյուր ազատազրկված անձի, այնպես էլ անօրինական միգրանտների խմբի համար ամբողջությամբ: Անօրինական միգրանտների մտավոր և ֆիզիկական առողջության վրա կարող են բացասաբար ազդել նրանց կյանքի նախկին տրավմատիկ հանգամանքները: Բացի դրանից, նրանց համար սովորական անձնական և մշակութային միջավայրի կորուստը, ինչպես նաև անվստահությունը սեփական ապագայի նկատմամբ կարող են հանգեցնել հոգեբանական վիճակի վատթարացման, այդ թվում՝ նախկինում առկա դեպրեսիայի ախտանիշների, անհանգստության և հետտրավմատիկ խանգարման սրացմանը:

91. Ազատությունից զրկված միգրանտների կենտրոնում ամենօրյա հիմունքներով առնվազն պետք է գտնվի որակյալ բուժքրոջ կարգավիճակ ունեցող աշխատակից: Այդ անձը, մասնավորապես, պետք է իրականացնի նոր բերվածների սկզբնական բուժզննում (մասնավորապես, վարակիչ հիվանդությունների հայտանաբերման համար, ներառյալ՝ թոքախտը), ստանա բժշկի այցելության խնդրանքները, ապահովի նշանակված դեղերի ստացումն ու բաժանումը, իրականացնի բժշկական փաստաթղթերի ձևակերպումը և վերահսկի հիգիենայի ընդհանուր պայմանները:

92. Ակնհայտ է, որ բժշկական գաղտնիքը պետք է պահպանվի ճիշտ այնպես, ինչպես դա արվում է սովորական բժշկական հիմնարկներում: Մասնավորապես, անօրինական միգրանտների բժշկական քարտերը չպետք է մատչելի լինեն ոչ բուժական անձնակազմին, և պետք է գտնվեն փակի տակ բուժքրոջ կամ բժշկի մոտ: Դեռ ավելին, բոլոր բուժզննումները պետք է անցկացվեն կալանավայրի աշխատակիցների լսողությունից հեռու և, եթե միայն կոնկրետ դեպքում բժիշկն այլ բան չի խնդրի, նաև նրանց տեսադաշտից դուրս:

Բոլոր այն դեպքերում, երբ բժիշկները և (կամ) բուժքույրերը չեն կարողանա ճիշտ ախտորոշել հիվանդությունը լեզվական խնդիրների պատճառով, նրանք պետք է առանց հապաղման կարողանան օգտվել որակյալ թարգմանչի ծառայություններից: Բացի դրանից, ազատությունի ց զրկված անօրինական միգրանտները պետք է ամբողջապես տեղեկացված լինեն այն բուժման մասին, որը նրանց առաջարկվում է:

Երեք այլ կարևոր երաշխիքներ

93. Խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը պարտավորություն է առաջանում անձին չուղարկելու այնպիսի երկիր, որի համար էական հիմքեր կան համարելու, որ տվյալ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների կամ բռնության այլ տեսակների ռիսկի: Համապատասխանաբար, անօրինական միգրանտների համար պետք է գործնականում մատչելի լինի ապաստան հայցելու ընթացակարգը (կամ երկրում բնակության իրավունք տվող այլ ընթացակարգեր), որը կարող է երաշխավորել ինչպես գաղտնիությունը, այնպես էլ այլ երկրներում մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի օբյեկտիվ և անկախ վերլուծությունը: Պետք է անցկացնել ծագման երկիր կամ երրորդ երկիր արտաքսման դեպքում բռնության ենթարկվելու ռիսկի անհատական գնահատում: ԽԿԿ-ն մտահոգված է նրանով, որ որոշ երկրներում ապաստան հայցելու դիմումի ժամկետը օրենքով սահմանափակված է որոշակի օրերի քանակով՝ երկիր ժամանելու օրվանից կամ կալանավայրում պահվելու պահից սկսած. վերջնաժամկետից հետո տրված դիմումները չեն քննարկվում: Նման մոտեցումն ավելացնում է այն բանի հավանականությունը, որ անձանց կուղարկեն այն երկիր, որտեղ նրանց սպառնում է խոշտանգումների կամ այլ տեսակի բռնության ենթարկվելու ռիսկը:

94. Այդ կապակցությամբ ԽԿԿ-ն լուրջ մտավախություններ ունի որոշ երկրներում ոստիկանության որդեգրած պրակտիկայի վերաբերյալ՝ ծովում անօրինական միգրանտներ տեղափոխող նավերը կանգնեցնելու և այդ անձանց Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Աֆրիկա վերադարձնելու համար: Ենթադրաբար նման պրակտիկա գոյություն ունի Եվրոպական որոշ ցամաքային սահմաններում:

Նման քաղաքականություն կամ պրակտիկա որդեգրած երկրները կարող են ենթարկվել չարտաքսելու («non-refoulement») հիմնարար սկզբունքը խախտելու ռիսկին, որը կազմում է միջազգային մարդասիրական իրավունքի, ինչպես նաև Եվրամիության իրավունքի մասը: Դա հատկապես արդիական է, երբ այն երկրները, ուր վտարում են անօրինական միգրանտներին, չեն վավերացրել Փախստականների կարգավիճակի մասին Ժնևյան 1951 թ. կոնվենցիան կամ չեն միացել դրան:

95. Նախարարների կոմիտեի կողմից 2005 թ. մայիսի 4-ին ընդունված Բռնի վտարման վերաբերյալ Քսան ուղեցույցերի համաձայն վտարման կարգադրությունները յուրաքանչյուր և ամեն մի առանձին դեպքում պետք է հիմնված լինեն որոշման վրա, որը համապատասխանում է ազգային օրենսդրությանը և ընթացակարգերին, ինչպես նաև միջազգային հումանիտար իրավունքի հիման վրա ստանձնած պարտավորություններին: Վտարման կարգադրությունը պետք է գրավոր տեսքով հանձնվի վտարվող անձին: Ավելին, հարկ է սահմանել նման կարգադրության բողոքարկման հնարավորություն, իսկ արտաքսումը չպետք է իրականացվի միչև ցանկացած բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը: Ընթացակարգի այդ փուլում պետք է երաշխավորել նաև փաստաբանի և թարգմանչի օգնությունը:

96. Երրորդ, պետական իշխանության մարմնի կողմից ազատությունից զրկված անձանց պահման ցանկացած վայրի նկատմամբ ԽԿԿ-ն մշտապես խորհուրդ է տալիս, որ բռնության մասին հայտարարած անձի մարմնական ցանկացած վնասվածք, ինչպես նաև տվյալ անձի համապատասխան հայտարարությունները և բժշկի եզրակացությունները (անձի հայտարարության և տեսանելի մարմնական վնասվածքների միջև համապատասխանության վերաբերյալ) պետք է պատշաճ կերպով արձանագրվեն բժշկի կողմից այդ նպատակի համար նախատեսված ձևաչափով: Համանման մի արձանագրություն էլ պետք է կազմվի անգամ բռնության մասին հայտարարության բացակայության դեպքում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ բռնություն տեղի է ունեցել: Անհրաժեշտ է նախատեսել ընթացակարգեր, որոնք կապահովեն, որ բոլոր այն դեպքերում, երբ մարմնական վնասվածքներն արձանագրվում են բժշկի կողմից և դրանք համապատասխանում են բռնության մասին տվյալ անձի հայտարարությանը (կամ որոնք, անգամ նման հայտարարության բացակայության դեպքում, պարզորոշ ցույց են տալիս բռնության ախտանիշեր), նման հաշվետվությունը պարբերաբար ներկայացվի իրավասու դատական և դատախազական մարմինների ուշադրությանը:

Լրացուցիչ երաշխիքներ երեխաների համար

97. ԽԿԿ-ն համարում է, որ անհրաժեշտ է բոլոր հնարավոր ջանքերը գործադրել՝ խուսափելու համար անչափահաս անօրինական միգրանտի ազատազրկումից[1]: «Երեխայի լավագույն շահերը» սկզբունքի համաձայն, որը նախատեսված է Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3րդ հոդվածում, երեխաների ազատազրկումը, այդ թվում՝ առանց ուղեկցողի և առանձնացված,[2] , հազվադեպ է արդարացված լինում և, Կոմիտեի կարծիքով, չի կարող պատճառաբանվել բացառապես կացության կարգավիճակի բացակայությամբ:

Բացառիկ դեպքերում, երբ երեխան վերցվում է կալանքի, ապա նման ազատազրկումը պետք է տևի հնարավորինս կարճ: Անհրաժեշտ է բոլոր ջանքերը գործադրել կալանավայրից առանց ուղեկցողի կամ առանձնացված երեխաներին անհապաղ ազատելու համար և խնամքի համար ավելի հարմարավետ վայրում պահելու համար: Բացի դրանից, հաշվի առնելով երեխայի առանձնակի խոցելիությունը, անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ երաշխիքներ երեխայի ազատազրկման բոլոր դեպքերի համար, առանձնապես այն դեպքերի, երբ երեխաներն առանձնացված են իրենց ծնողներից կամ այլ խնամակալներից և առանց ուղեկցողների են, այսինքն՝ առանց ծնողների, խնամակալների կամ ազգականների:

98. Որքան հնարավոր է արագ այն բանից հետո, երբ երեխայի ներկայության մասին հայտնի է դառնում իշխանություններին, արհեստավարժ մասնագետը պետք է սկզբնական հարցազրույց անցկացնի երեխայի համար հասկանալի լեզվով: Անհրաժեշտ է անցկացնել երեխայի հատուկ խոցելիության գնահատում, այդ թվում՝ հաշվի առնելով նրա տարիքը, առողջական վիճակը, հոգեբանական, սոցիալական գործոնները և այն կարիքները, որոնք կապված են բռնության,

---

[1] Երբ պարզ չէ, թե արդյոք տվյալ անօրինական միգրանտը անչափահաս է, թե՝ ոչ (այսինքն՝ նրա 18 տարին դեռ չի լրացել), ապա տվյալ անձը պետք է դիտվի որպես անչափահաս մինչև հակառակը չի ապացուցվել:

[2] «Առանց ուղեկցողի երեխաները» (որոնց կոչում են նաև՝ առանց ուղեկցողի անչափահասներ)՝ դրանք այն երեխաներն են, ովքեր առանձնացված են երկու ծնողներից և այլ ազգականներից և որոնց համար խնամք չի տանում չափահաս անձը, ով, օրենքով կամ ավանդույթի համաձայն, պատասխանատու է դրա համար: «Առանձնացված երեխաները» նրանք են, ովքեր առանձնացված են երկու ծնողներից կամ իրենց նախկին օրինական կամ ավանդական հիմնական խնամակալից, սակայն ոչ պարտադիր նաև այլ ազգականներից: Այդ իսկ պատճառով, այստեղ կարող են ներառվել ընտանիքի այլ չափահաս անդամների կողմից ուղեկցվող երեխաները:

թրաֆիքինգի կամ վնասվածքների հետ: Առանց ուղեկցի կամ առանձնացված ազատազրկված երեխաներին անհրաժեշտ է ապահովել արագ և անվճար իրավաբանական և այլ համապատասխան օգնություն, ներառյալ խնամակալ կամ օրինական ներկայացուցիչ նշանակելը: Հարկ է նաև նախատեսել վերահսկման կառուցակարգեր՝ խնամակալության որակի մոնիտորինգի համար:

99. Պետք է քայլեր ձեռնարկվեն սոցիալական աշխատակցի և հոգեբանի կանոնավոր ներկայություն և նրանց հետ անհատական շփում ապահովելու համար այն հաստատություններում, որտեղ կարող են պահվել երեխաները: Բռնությունից խուսափելու ևս մեկ երաշխիք է անձնակազմի երկսեռ կազմը. թե՛ տղամարդ ու թե՛ կին աշխատակիցների ներկայությունը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ ազատազրկման վայրում տիրող բարոյական մթնոլորտի վրա և այնտեղ ստեղծել նորմալ կյանքի որոշակի մակարդակ: Ազատազրկված երեխաներին անհրաժեշտ է առաջարկել տարբեր տեսակի օգտակար զբաղմունքներ (առանձնապես շեշտը դնելով այն բանի վրա, որ երեխան կարողանա շարունակել իր կրթությունը):

100. Սահմանափակելու համար շահագործման ռիսկը, անհրաժեշտ է հատուկ միջոցառումներ իրականացնել բնակելի տարածքներում, որպեսզի դրանք հարմարեցվեն երեխաների կարիքներին, օրինակ, առանձնացնել նրանց չափահասներից, եթե միայն երեխայի ամենակարևոր շահերը չեն պահանջում հակառակը: Օրինակ, հարկ չկա առանձնացնել երեխաներին, եթե նրանց ուղեկցում են նրանց ծնողները կամ այլ մոտիկ ազգականները: Նման դեպքում անհրաժեշտ է բոլոր ջանքերը գործադրել ընտանիքի բաժանումից խուսափելու համար:

Օդային տրանսպորտով օտարերկրացիների արտաքսումը

Քաղվածք 13-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2003) 35]

27. Իր գործունեության հենց սկզբից ԽԿԿ-ն ուսումնասիրում է օտարերկրացիների մասին օրենսդրության հիման վրա ազատազրկված անձանց պահման պայմանները, և այդ հարցը քննարկվել է ԽԿԿ-ի 7-րդ Ընդհանուր հաշվետվությունում (CPT/Inf (97) 10, 24-36 կետեր): Այդ հաշվետվության մեջ ԽԿԿ-ն սահմանել է մի քանի հիմնարար կանոններ՝ կապված ազատազրկված ներգաղթողների արտաքսման ընթացակարգերի համատեքստում ուժի կիրառման և զսպման միջոցների հետ:

28. Այդ հաշվետվությունից հետո ԽԿԿ-ի այցելությունները թույլ տվեցին վերջինիս լրացնել գիտելիքները օդային տրանսպորտով օտարերկրացիների արտաքսման պրակտիկայի վերաբերյալ: Իր այցելությունների ժամանակ ԽԿԿ-ն ուշադրություն է դարձնում այն ընթացակարգերի վրա, որոնք ներառում են հարկադրական վտարում պահակախմբի ուղեկցությամբ[1], ինչպես նաև այն գործերի վրա, որոնց այն ուշադրություն էր դարձրել: Մասնավորապես արտաքսված անձի մահվան պատճառով , զսպման միջոցների ամբողջության և/կամ բռնություն կիրառելու մեղադրանքների վրա: ԽԿԿ-ն չի սահմանափակում իր վերլուծությունը այն ընթացակարգի պահպանմամբ, երբ համապատասխան անձը նստում է ինքնաթիռ, ինչպես նաև թռիչքի ընթացքով: Այն նաև վերահսկում է բազմաթիվ այլ բաղադրիչներ (օրինակ՝ կալանքի տակ պահելը նախքան արտաքսումը, կալանքի տակ վերցրած ներգաղթողին նշանակման երկիր վերադարձնելու համար ձեռնարկված քայլերը, պահակախմբի համապատասխան անձնակազմի ընտրության և ուսուցման միջոցների ապահովումը, արտաքսման պահակախմբերի համար պատասխանատու անձնակազմի վարքագիծը վերահսկող ներքին և արտաքին համակարգերը, այն միջոցառումները, որոնք ձեռնարկվում են ի պատասխան արտաքսման անհաջող փորձի և այլն:

---

[1] Միտում կա դասակարգելու արտաքսումը մի շարք գործոնների հիման վրա, ինչպես օրինակ, օգտագործվող ուժի սահմանների, զսպման օգտագործվող միջոցների տեսակների և արտաքսվող անձին ուղեկցող պահակախմբի թվաքանակի:
Օրինակ, վերջերս այցելած մի երկրում տարբերություն էր դրվում առանց դիմադրության կատարված վտարման, առանց պահակախմբի հարկադրական վտարման և պահակախմբով հարկադրական վտարման միջև: Ընդհանուր առմամբ ամենախնդրահարույց ընթացակարգերը նրանք էին, որոնք ներառում էին ուժի զուգորդված կիրառումը, հարկադրանքի մի քանի միջոցները և պահակախմբում մեծ թվաքանակ կազմող անձնակազմի առկայությունը մինչև այն պահը, երբ արտաքսվող անձը կհասնի վերջնական նշանակման երկիր:

29. Արտաքսման գործողությունների ընթացքում օգտագործված ընթացակարգերի և միջոցների մանրազնին ուսումնասիրություն կատարելու համար, ԽԿԿ-ն ձեռք էր բերել համապատասխան հրահանգների և կարգադրությունների պատճենները: Այն ձեռք էր բերել նաև շատ այլ փաստաթղթերի պատճենները (արտաքսման գործողությունների մասին վիճակագրության, պահակախումբ նշանակելու մասին հաշվետվության, միջադեպերի մասին հաշվետվության, դատավարությունների մասին նյութերի, բժշկական տեղեկանքների և այլն) և քննարկել արտաքսման գործողության ընթացքում օգտագործված զսպող սարքավորումները: Այն նաև տարբեր երկրներում մանրամասն զրուցել է արտաքսման գործողությունների համար պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների հետ, ինչպես նաև տեղում հանդիպած ապագայում արտաքսվելիք անձանց հետ, որոնցից մի քանիսը հետ էին վերադարձվել ազատազրկման վայրեր՝ արտաքսման չհաջողված փորձից հետո:

30. Այցելություններից հետո ԽԿԿ-ն մշակել էր մի շարք ուղեցույցներ, որոնց նա համապատասխան երկրներին խորհուրդ էր տվել հետևել: Նպաստելու համար այդ ուղեցույցների լայն կիրառմանը Կոնվենցիային միացած բոլոր Կողմ պետություններում, Կոմիտեն որոշել է ի մի բերել ամենակարևոր սկզբունքները և իրականացնել դրանց մենկաբանություն:

Իհարկե, ստորև շարադրվածը պետք է մեկնաբանվի պետությունների ստանձնած հիմնարար պարտավորությունների լույսի ներքո. մարդկանց չուղարկել մի երկիր, որտեղ էական հիմքեր կան ենթադրելու, որ նրանց սպառնում է խոշտանգումների և բռնությունների ենթարկվելու իրական վտանգ:

31. ԽԿԿ-ն ընդունում է, որ արտաքսման հրամանի հարկադրական կատարման խնդիրը հաճախ կարող է լինել դժվարին և լարված այն օտարերկրացու նկատմամբ, ով որոշել է մնալ պետության տարածքում,: Տարբեր երկրներում ԽԿԿ-ի իրականացրած բոլոր դիտարկումների լույսի ներքո (մասնավորապես, ելնելով արտաքսման՝ բռնության մեղադրանքներ պարունակող մի շարք նյութերի զննումից) պարզ է նաև, - և որ օդային տրանսպորտով միջոցով իրականացվող արտաքսման գործողությունները հանգեցնում են անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Այդ ռիսկն առկա է թե՛ արտաքսման նախապատրաստության ժամանակ և թե՛ հենց թռիչքի պահին. այն հատուկ է մի շարք անհատական զսպող միջոցների ու մեթոդների կիրառմանը և անգամ մեծանում է նման միջոցների ու մեթոդների համակցված օգտագործումից:

32. Ամենից առաջ պետք է հիշեցնել, որ **ֆիզիկական ուժի կիրառումը արտաքսման ենթակա անձանց նկատմամբ, նրանց տրանսպորտային միջոց նստել պարտադրելու կամ նման պահանջի չկատարման համար պատժելու նպատակով՝ բացարձակապես անընդունելի է**: ԽԿԿ-ն ողջունում է այն, որ տվյալ կանոնն իր արտացոլումն է գտել այցելած երկրների բազմաթիվ համապատասխան հրահանգներում: Օրինակ, ԽԿԿ-ի կողմից ուսումնասիրված որոշ հրահանգներ արգելում են զսպող կամ ավելորդ ցավ պատճառող միջոցների օգտագործումը՝ պատժելու համար դիմադրություն ցույց տվող օտարերկրացուն:

33. Ակնհայտ է, որ արտաքսման գործողության ընթացքում ծագող առանցքային հարցերից մեկնը պահակախմբի անձնակազմի կողմից ֆիզիկական ուժի և զսպող միջոցների կիրառումն է: ԽԿԿ-ն ընդունում է, որ համապատասխան անձնակազմը երբեմն ստիպված է լինում կիրառել ուժ և զսպող միջոցներ, որպեսզի արդյունավետ իրականացնի արտաքսումը, սակայն **ուժի և զսպող միջոցների կիրառումը չպետք է գերազանցի ողջամտորեն անհրաժեշտ սահմանը**: ԽԿԿ-ն ողջունում է այն, որ որոշ երկրներում ուժի և զսպող միջոցների կիրառումը արտաքսման ընթացակարգերի ընթացքում մանրամասն վերանայվում է օրինականության, համամասնության և համաչափության սկզբունքների լույսի ներքո:

34. Ուժի և զսպող միջոցների կիրառման հարցը ծագում է համապատասխան ազատազրկված անձին խցից դուրս հանելու պահից (որտեղ էլ որ գտնվելիս լինի այդ խուցը՝ օդանավակայանի շինություններում, ներգաղթողների պահման մասնագիտացված կենտրոնում, բանտում թե ոստիկանական բաժանմունքում): Միջոցները, որոնք օգտագործում է պահակախմբի անձնակազմը ոչ շարժունակ դարձնելու համար այն անձին, ում նկատմամբ պետք է կիրառվեն զսպող միջոցներ (օրինակ՝ մետաղական ձեռնաշղթաները կամ պլաստիկ ժապավենները), արժանի են հատուկ ուշադրության: Մեծամասամբ կալանքի տակ վերցրած անձինք լիովին տիրապետում են իրենց ֆիզիկական ունակություններին և կարող են ուժեղ դիմադրել ձեռնաշղթաներ կիրառելուն: Դիմադրության դեպքում պահակախմբի անձնակազմն ամբողջությամբ անշարժացնում է ազատազրկված անձին պառկեցնելով նրան գետնին՝ դեմքով ներքև, որպեսզի կիրառի ձեռնաշղթաները: Ազատազրկված անձին նման դիրքով պահելը, առանձնապես, երբ պահակախմբի անձանակազմն իր քաշով ճնշում է նրա մարմնի տարբեր մասերի վրա (ճնշում կրծքավանդակին, ծնկներով ճնշում մեջքին, պարանոցի անշարժացում), երբ տվյալ անձը դիմադրություն է ցուցաբերում, կարող է ստեղծել դիրքային շնչահեղձության առաջացման ռիսկ[1]:

[1] Տես, մասնավորապես, «Դիրքային շնչահեղձությունը-անսպասելի մահ», ԱՄՆ-ի

Այսպիսի ռիսկ առկ է այն դեպքում, երբ ինքնաթիռի բազկաթոռին նստեցրած արտաքսվող անձը դիմադրում է և պահակախմբի անձնակազմն ուժ կիրառելով ստիպում է նրան թեքվել առաջ, գլուխը մտցնելով ծնկների մեջտեղը, դրանով իսկ ուժեղ ճնշելով կրծքավանդակը: Որոշ երկրներում ուժի կիրառումը տվյալ անձի նկատմամբ՝ ստիպելու համար նրան երկտակ ծալվել ուղևորական նստարանի վրա, որպես կանոն, արգելված է և անշարժացման նման ձևը թույլատրվում է միայն դրա բացարձակ անհրաժեշտության դեպքում այն բանի համար, որպեսզի իրականացվի կոնկրետ, կարճատև և արտոնված գործողություն (օրինակ՝ ձեռնաշղթաներ հագցնելը, ստուգելը կամ հանելը) այն էլ միայն բացառապես այդ նպատակի համար անհրաժեշտ ժամանակի ընթացքում:

ԽԿԿ-ն հստակ նշել է, որ **անհրաժեշտ է հնարավորության սահմաններում խուսափել ուժ և (կամ) հարկադրանք կիրառելուց, որոնք կարող են հանգեցնել դիրքային շնչահեղձության և որ բացառիկ հանգամանքներում ցանկացած նման կիրառում պետք է իրականացվի այն հրահանգների պահպանմամբ, որոնք նախատեսում են նվազագույնի հասցնել տվյալ անձի առողջությանը վնաս պատճառելու ռիսկերը:**

35. ԽԿԿ-ն դրական է գնահատել որոշ երկրներում գործող կարգավորումները, որոնց համաձայն՝ զսպող միջոցները կամ հարկադրանքը պետք է թռիչքի ժամանակ դադարեցվեն (հենց որ ինքնաթիռը բարձրություն է հավաքում): Եթե բացառիկ դեպքերում այդ միջոցները պետք է մնան ուժի մեջ, քանի որ արտաքսվող անձը շարունակում է իրեն ագրեսիվ պահել, պահակախմբի անձնակազմին հրահանգավորված է ծածկել նրա վերջույթները ծածկոցով (ինչպիսին սովորաբար տրվում է ուղևորներին), որպեսզի մյուս ուղևորները չնկատեն զսպող միջոցների կիրառումը:

Մյուս կողմից, դեռևս ոչ վաղ անցյալում արտաքսման գործողությունների առումով ամենախնդրահարույց երկրներից մեկում, ուր Կոմիտեն այցելել էր, գործող հրահանգները (երբ մարդկանց ստիպում էին տակաշորեր կրել և թույլ չէին տալիս թռիչքի ժամանակ օգտվել զուգարանից, հաշվի առնելով նրանց ենթադրյալ վտանգավորությունը) կարող են հանգեցնել արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

արդարադատության նախարարություն, հունիս, 1995 թ. և «Ավելի անվտանգ զսպում» Կոնֆերանսի ամփոփիչ նյութերը, անց է կացվել Լոնդոնում 2002 թ. ապրիլին՝ Բողոքներ ոստիկանության վրա բրիտանական ծառայության հովանու ներքո (cf.www.pca.gov.uk):

36. Ի լրումն դիրքային շնչահեղձության վերը հիշատակված ռիսկերից խուսափելուն, ԽԿԿ-ն պարբերաբար խորհուրդ է տալիս **բացարձակ արգելք դնել այն միջոցների կիրառման նկատմամբ, որոնք կարող են մասամբ կամ ամբողջությամբ փակել օդի մուտքը (քիթը և (կամ) բերանը)**: Վերջին տասը տարիների ընթացքում տարբեր երկրներում արտաքսման ժամանակ տեղ գտած լուրջ միջադեպերը կարևորել են այդ միջոցների կիրառման դեպքում համապատասխան անձանց կյանքին սպառնացող վտանգը (բերանի և (կամ) քթի փակումը կպչուն ժապավենով, երեսին բարձ կամ բամբակով լցված ձեռնոց դնելը, առջևի նստարանի թիկունքին դեմքը սեղմելը և այլն): ԽԿԿ-ն Կոնվենցիային միացած Կողմ պետությունների ուշադրությունը նման կարգի միջոցների վտանգավորության վրա հրավիրել է դեռևս 1997 թ. 7-րդ Ընդհանուր հաշվետվության մեջ: Այն նշել է, որ այդ պրակտիկանհստակ արգելված է բազմաթիվ Կողմ պետություններում և **կոչ է արել այն պետություններին, որոնք դեռևս դա չեն արել, անհապաղ այդ առնչությամբ պարտադիր դրույթներ ընդունել**:

37. Շատ կարևոր է, որ օդում գտնվող ինքնաթիռում ծագած արտակարգ իրավիճակի դեպքում ոչինչ չխանգարի արտաքսվող անձին փրկելուն: Հետևաբար, **պետք է հնարավոր լինի ինքնաթիռի անձնակազմի հրամանով անհապաղ հեռացնել արտաքսվող անձի շարժումների ազատությունը սահմանափակող ցանկացած միջոց**:

Պետք է նաև հաշվի առնել առողջությանը սպառնացող ռիսկերը, կապված այսպես կոչված «էկոնոմ կարգի սինդրոմի» հետ այն անձանց նկատմամբ, ովքեր երկար ժամանակով կապված են իրենց նստատեղերից[1]:

38. Որոշակի երկրներ կատարած այցելություններից հետո ԽԿԿ-ի անհանգստությունն են հարուցել հատուկ ուշադրության արժանի երկու հարց. արտաքսող պահակախմբերի կողմից դիմակների կրումը և նրանց կողմից կաթվածահարական և գրգռիչ գազերի օգտագործումը՝ ազատազրկված ներգաղթողներին իրենց խցերից դուրս բերելու և ինքնաթիռ տեղափոխելու համար:

ԽԿԿ-ի կարծիքով, **անվտանգության նկատառումները երբեք չեն կարող ծառայել որպես արդարացում այն բանի, որպեսզի պահակախմբի անձնակազմը արտաքսման գործողություն կատարելու ժամանակ լինի դիմակներով**: Նման

[1] Տես, մասնավորապես, «Խոր երակների ախտանիշներ չունեցող խցանումների հաճախականությունը և կանխարգելումը երկարատև թռիչքների դեպքում. պատահականության սկզբունքով կատարված հետազոտությունը», Ջոն Սքար et al, *The Lancet*, Vol. 357, 12-ը մայիսի 2001 թ.:

գործելակերպը ծայր աստիճան անցանկալի է, քանի որ այն կարող է լրջորեն խանգարել բռնության մեղադրանքներ ներկայացնելու դեպքում դրա մեղավորի հայտնաբերմանը:

ԽԿԿ-ն նաև շատ լուրջ վերապահումներ ունի կաթվածահար անող և գրգռիչ գազերի օգտագործման վերաբերյալ, որն արվում է անհնազանդ ազատազրկված անձանց ենթարկեցնելու նպատակով՝ նրանց իրենց խցերից դուրս բերելու և ինքնաթիռ տեղափոխելու համար: Նման գազերի օգտագործումը խիստ սահմանափակ տարածքներում, ինչպիսին հանդիսանում են խցերը, կհանգեցնի ինչպես ազատազրկված անձի, այնպես էլ համապատասխան անձնակազմի առողջության համար ակնհայտ ռիսկերի: Անձնակազմին հարկ է սովորեցնել վերահսկման այլ մեթոդների (օրինակ՝ ձեռքերի կամ վահանների օգտագործմամբ վերահսկման տեխնիկային)՝ անշարժեցնելու համար անհնազանդ ազատազրկված անձանց:

39. Որոշակի միջադեպեր, որ ծագել են արտաքսման գործողությունների ընթացքում, ընդգծել են **ազատազրկված ներգաղթողներին մինչև արտաքսումը բժշկական քննություն անցնելու թույլտվություն տալու կարևորությունը**: Այդ նախազգուշությունը հատկապես անհրաժեշտ է, երբ նախատեսվում է ուժի և (կամ) հատուկ միջոցների կիրառում:

Նմանապես, **բոլոր այն անձինք, ովքեր դարձել են արտաքսման չհաջողված գործողությունների սուբյեկտ, պետք է բժշկական քննություն անցնեն ազատությունից զրկման վայր վերադարձվելուց անմիջապես հետո** (կամ ոստիկանական բաժանմունքում, բանտում կամ օտարերկրացիների համար նախատեսված կենտրոնում): Այդ կերպ հնարավոր կլինի ստուգել համապատասխան անձի առողջական վիճակը և, անհրաժեշտության դեպքում, տրամադրել ցանկացած վնասվածքի առկայությունը հաստատող տեղեկանք: Նման միջոցառումը կարող է նաև պաշտպանել պահակախմբի անձնակազմին անհիմն մեղադրանքներից:

40. Բազմաթիվ այցելությունների ժամանակ ԽԿԿ-ի անդամները լսել են մեղադրանքներ այն մասին, որ ազատազրկված ներգաղթողներին կատարել են ներարկումներ հանգստացնող կամ ընկճող ազդեցություն ունեցող դեղորայքով, որպեսզի առանց խնդիրների ապահովեն նրանց արտաքսման իրականացումը: Մյուս կողմից նշվել է նույնպես, որ որոշ երկրներում հրահանգներն արգելում են առանց համապատասխան անձի համաձայնության հանգստացնող կամ այլ դեղորայքի կիրառումը, որոնք նախատեսված են նրան վերահսկողության տակ առնելու համար: **ԽԿԿ-ն համարում է, որ դեղամիջոցների կիրառումը այն անձանց նկատմամբ, ում վրա տարածվում է արտաքսման հրամանը, պետք է միշտ իրականացվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար առանձին ընդունված բժշկական որոշման հիման վրա: Բացառությամբ հստակ և խստորեն սահմանված բացառիկ հանգամանքների, դեղամիջոցները հարկ է կիրառել միայն համապատասխան անձի համաձայնությամբ՝ նրան այդ մասին տեղեկացնելուց հետո:**

41. **Ազատազրկված ներգաղթողների արտաքսումը ներառնող գործողություններին պետք է նախորդեն համապատասխան անձանց վերադարձը կազմակերպող ընտանեկան, աշխատանքային և հոգեբանական բնույթի միջոցառումներ:** Կարևոր է, որպեսզի ազատազրկված ներգաղթողները բավականաչափ վաղ տեղեկացվեն իրենց ապագա արտաքսման մասին, այնպես, որ նրանք կարողանան սկսել հոգեբանորեն հաշտվել նման իրավիճակի հետ և կարողանան տեղեկացնել այն մարդկանց, ում նրանց անհրաժեշտ է հաղորդել այդ մասին և վերստանալ իրենց անձնական իրերը: ԽԿԿ-ն նկատել է, որ հարկադրական արտաքսման մշտական սպառնալիքը, որ կախված է ազատազրկված անձանց վրա, ովքեր ոչ մի նախնական տեղեկություն չեն ստացել իրենց արտաքսման օրվա մասին, կարող է տագնապ առաջացնել, ինչը իր գագաթնակետին է հասնում արտաքսման ժամանակ և հաճախ կարող է վերածվել խիստ գրգռված վիճակի: Այդ կապակցությամբ ԽԿԿ-ն նշել է, որ որոշ այցելած երկրներում արտաքսման գործողությունների համար պատասխանատու ստորաբաժանումների կազմում ներառված է հոգեբանա-սոցիալական ծառայությունը, համալրված հոգեբաններով և սոցիալական աշխատողներով, որոնք պատասխանատու են, մասնավորապես, ազատազրկված ներգաղթողների արտաքսումը նախապատրաստելու համար (մշտական երկխոսությունների, արտաքսման երկրում գտնվող ընտանիքի հետ շփումների և այլ միջոցներով): Ավելորդ է ասել, որ **ԽԿԿ-ն ողջունում է այդ նախաձեռնությունները և կոչ է անում այն պետություններին, որոնք դա դեռևս չեն արել դա, ստեղծել նման ծառայություններ:**

42. Արտաքսման գործողությունների պատշաճ իրականացումը մեծապես կախված է պահակախմբի պարտականություններ կատարող անձնակազմի որակից: Ակնհայտ է, որ **պահակախմբի անձնակազմը պետք է ընտրվի ծայրահեղ զգուշությամբ և ստանա համապատասխան հատուկ ուսուցում, ինչը կոչված է նվազագույնի հասցնել բռնության ռիսկերը:** Այցելած Կողմ պետություններում դա հաճախ ամենևին էլ այդպես չէր: Սակայն որոշ երկրներում կազմակերպվել էին հատուկ ուսուցումներ (զսպման մեթոդները և միջոցները, լարվածության և հակասությունների կառավարումը և այլն): Ավելին, կառավարման որոշակի ռազմավարություններ դրական ազդեցություն էին ունեցել: Խոսքը վերաբերում է պահակախմբի պարտականությունների փոխանցմանը կամավոր ցանկություն հայտնած անձնակազմին՝ զուգորդված դրա անդամների պարտադիր ռոտացիայով (այն բանի համար, որպեսզի խուսափեն մասնագիտական ուժասպառության սինդրոմից և միապաղաղության հետ կապված ռիսկերից, ինչպես նաև ապահովելու համար այն, որ համապատասխան անձնակազմը պահպանի որոշակի զգացմունքային հեռավորություն այն աշխատանքային գործունեությունից, որում իրենք մասնակցում են), ինչպես նաև անձնակազմի պահանջով մասնագիտացված հոգեբանական աջակցության տրամադրմանը:

43. **Դժվար թե հնարավոր լինի գերագնահատել վերահսկողության ներքին և արտաքին համակարգերի ստեղծումը այնպիսի մի զգայուն ոլորտում, որն առնչվում է օդային տրանսպորտով արտաքսման գործողություններին:** ԽԿԿ-ն բազմաթիվ երկրներում նկատել է, որ, դժբախտաբար, վերահսկողության հատուկ համակարգեր ներդրվել են միայն առանձնապես լուրջ միջադեպերից հետո (օրինակ՝ արտաքսվող անձանց մահվան դեպքերը):

44. **Արտաքսման գործողությունները պետք է խնամքով արձանագրվեն:** Հիմնարար պահանջ է համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացրած արտաքսման բոլոր գործողությունների հաշվառման մատյանի և ամբողջական անձնական գործերի ստեղծումը: Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել արտաքսման չհաջողված փորձերի տեղեկատվության վրա և, մասնավորապես, արտաքսման գործողությունների ձախողման պատճառների վրա (պահակախմբի անդամների կողմից ղեկավարության հրամանի հիման վրա ընդունված որոշումը, ինքնաթիռի հրամանատարի հրաժարվելը, արտաքսվող անձի սաստիկ դիմադրությունը, ապաստարան տրամադրելու խնդրանքը և այլն), որոնք պետք է պարբերաբար արձանագրվեն: Արձանագրված տեղեկատվությունը պետք է ընդգրկի յուրաքանչյուր միջադեպ և զսպող միջոցների յուրաքանչյուր կիրառում (ձեռնաշղթաների, կոճերի համար նախատեսված հատուկ շղթաների, ծնկների համար նախատեսված հատուկ շղթաների, ինքնապաշտպանական միջոցների օգտագործման, արտաքսվողի տեղափոխումը ինքնաթիռ և այլն):

Կարելի է նախատեսել նաև այլ միջոցների օգտագործումը (օրինակ՝ տեսալսողական), որոնք կիրառվում են որոշ երկրներում, մասնավորապես՝ ակնկալվող խնդրահարույց արտաքսումների համար: Դրանից բացի, կարելի է տարբեր գոտիներում տեսախցիկներ տեղադրել (դեպի խցերը տանող միջանցքներում, ճանապարհին, որով պահակախումբը արտաքսվող անձին տանում է դեպի այն տրանսպորտային միջոց, որով նրան պետք է տեղափոխեն ինքնաթիռ և այլն):

45. **Օգտակար է նաև արտաքսման յուրաքանչյուր գործողության նկատմամբ, որտեղ կանխատեսվում են դժվարություններ, իրավասու ստորաբաժանման ղեկավարի կողմից իրականացվող վերահսկողությունը, որը ցանկացած պահի կարող է դադարեցնել գործողությունը:** ԽԿԿ-ն որոշ երկրներում նկատել է, որ նման ստուգումներ անց են կացվել ոստիկանության ներքին վերահսկողական մարմինների անդամների կողմից, ընդ որում, ինչպես արտաքսման նախապատրաստման, այնպես էլ ինքնաթիռ նստելու ընթացքում: Ավելին, սահմանափակ քանակի դեպքերում, վերահսկողական մարմինների անդամներն ինքնաթիռ են նստել գաղտնի և նման կերպ վերահսկել արտաքսվող անձին ու պահակախմբին մինչև նշանակման վայր ժամանելը: ԽԿԿ-ն կարող է միայն ողջունել նման նախաձեռնությունները, որոնք ընդհանուր առմամբ չափազանց հազվադեպ են տեղ գտնում ներկա պահին Եվրոպայում:

Բացի այդ, **ԽԿԿ-ն ցանկանում է առանձնապես ընդգծել այն դերը, որը պետք է ունենան արտաքին վերահսկողական (ներառյալ դատական) մարմինները՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային արտաքսման գործողությունների ընթացքում բռնությունը կանխարգելելու համար:** Այդ մարմինները պետք է անընդհատ հետևեն այդ առումով դեպքերի բոլոր զարգացումներին, հատուկ ուշադրություն դարձնելով ուժի և զսպող միջոցների կիրառման վրա, ինչպես նաև օդային տրանսպորտի միջոցով արտաքսվող անձի հիմնարար իրավունքների պաշտպանության վրա:

V. Ազատությունից զրկված անչափահասներն ըստ Քրեական օրենսդրության

Քաղվածք ԽԿԿ Թիվ 24 ընդհանուր զեկույցից [CPT/Inf (2015) 1]

1. Նախնական դիտարկումներ

96. 1998թ.-ին, իր Թիվ 9 Ընդհանուր զեկույցում, ԽԿԿ-ն սահմանել էր այն չափանիշները, որոնցով առաջնորդվում է ազատազրկման վայրեր աշխատանքային այցերի ժամանակ, որտեղ «անչափահասները» (այսինքն՝ 18 տարին չլրացած անձինք[1]) ազատությունից զրկված են: Մասնավորապես, այն մի շարք երաշխիքներ և պայմաններ է սահմանել, որոնք համապատասխանաբար պետք է առաջարկվեն քրեական օրենսդրության համաձայն ազատությունից զրկված բոլոր անչափահասներին և պետք է կիրառվեն հատուկ անչափահասների համար նախատեսված կալանքի կենտրոններում: Կոմիտեն համարում է, որ ժամանակն հասունացել է վերանայելու այս չափանիշները՝ հիմք ընդունելով 1998թ.-ից ի վեր իր այցելությունների փորձառությունը, հաշվի առնելով եվրոպական և համամարդկային մակարդակներում տեղի ունեցող զարգացումները՝ այս փուլում ուշադրությունը բևեռելով քրեական իրավունքի համատեքստում ազատությունից զրկված անչափահասների վրա:

Ի սկզբանե ԽԿԿ-ն վերահաստատում է, որ իր չափանիշները պետք է դիտարկվեն որպես լրացում միջազգային փաստաթղթերով սահմանված չափանիշներին, մասնավորապես՝ Միավորված ազգերի երեխայի իրավունքների մասին 1989թ. կոնվենցիային և Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների համար եվրոպական կանոնների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2008)11 հանձնարարականին («Եվրոպական կանոններ երիտասարդ իրավախախտների համար»), որը Եվրոպայում անչափահաս իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի մանրամասն սահմանված կանոններ է նախատեսում[2]: Կոմիտեն ամբողջովին

---

[1] Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունում քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը սահմանված է 14 կամ 15 տարեկանը, մինչդեռ մի շարք երկրներում նվազագույն տարիքի շեմը սկսվում է 13 տարեկանից:

[2] Տես նաև 1985թ. Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), 1990թ. Ազատազրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի

միանում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի Հոդվածներ 3 և 37բ-ով ամրագրված արմատական սկզբունքներին և անչափահաս իրավախախտների համար նախատեսված Եվրոպական կանոնների Կանոն 5-ին և 10-ին, մասնավորապես այն իմաստով, որ անչափահասներին առնչվող բոլոր գործողություններում առաջնային նկատառումը պետք է լինի նրանց շահը, և որ նրանք պետք է զրկվեն իրենց ազատությունից միայն որպես վերջին միջոց և հնարավոր ամենակարճ ժամանակահատվածով:

2. Ոստիկանությունում կալանքի տակ պահվող անչափահասներ

97. Նկատի ունենալով կանխարգելիչ իր հանձնագիրը (մանդատը)՝ ԽԿԿ-ի համար առաջնահերթություն է այցերի ընթացքում պարզել, թե արդյո՞ք ազատությունից զրկված անչափահասները վատ վերաբերմունքի են ենթարկվել: Ցավոք, իրավապահների կողմից միտումնավոր վատ վերաբերմունքն անչափահասների նկատմամբ չի վերացել և շարունակում է իրական մտահոգություն հանդիսանալ մի շարք եվրոպական երկրներում: ԽԿԿ-ի պատվիրակությունները շարունակում են արժանահավատ մեղադրականներ ստանալ ազատազրկված անչափահասների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մասին: Մեղադրանքները հաճախ վերաբերում են կալանավորելիս ոտքով հարվածներին, ապտակներին, բռունցքով կամ մահակով հարվածներին (նույնիսկ այն բանից հետո, երբ անչափահասը վերահսկողության տակ է վերցվել), փոխադրման կամ իրավապահ հիմնարկներում հետագա հարցաքննությունների ժամանակ: Անչափահասները հաճախ նաև սպառնալիքների կամ բանավոր վիրավորանքների զոհ են դառնում (ներառյալ՝ ռասայական բնույթի)՝ իրավապահ մարմինների ձեռքում իսկ գտնվելու ժամանակ:

98. Անձինք վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգին առավել շատ ենթակա են կալանմանն անմիջապես հետևող ժամանակահատվածում : Հետևաբար, ԽԿԿ-ն հանդես է եկել երեք հիմնարար երաշխիքով (մասնավորապես, ազատազրկված անձանց՝ իրենց մերձավոր հարազատին կամ որևէ երրորդ անձի անազատության մեջ պահելու մասին ծանուցելու և փաստաբանի ու բժշկի ծառայություններից օգտվելու իրավունքները), որոնք պետք է կիրառվեն ազատությունից զրկվելու հենց սկզբից (այսինքն՝ այն պահից, երբ անձն առաջին

կանոնները («Հավանայի կանոններ»), 1990թ. Անչափահասների իրավախախտումների կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշները («Ռիադի ուղենիշներ») և 2010թ. Երեխայի համար նախատեսված արդարադատության Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ուղենիշները:

անգամ հարկադրված է մնալ իրավապահ հաստատությունում): Հաշվի առնելով նրանց առանձնահատուկ խոցելիությունը՝ ԽԿԿ-ն համարում է, որ ոստիկանությունում կալանքի տակ պահվող անչափահասները պետք է միշտ օգտվեն վատ վերաբերմունքի դեմ հետևյալ լրացուցիչ երաշխիքներից՝

- Իրավապահները պետք է պաշտոնական պարտականություն ունենան երաշխավորելու, որ անչափահասի կողմից վստահված ազգականը կամ մեկ այլ չափահաս անձ տեղեկացված է անչափահասի ազատազրկման մասին (անկախ նրանից, թե արդյոք անչափահասը դիմել է այդպիսի խնդրանքով, թե՝ ոչ):
- Ազատազրկված անչափահասը առանց փաստաբանի, և սկզբունքորեն, չափահաս վստահված անձի ներկայության ոստիկանության կողմից երբեք չպետք է ենթարկվի հարցաքննության կամ ստիպողաբար որևէ հայտարարություն անի կամ որևէ փաստաթուղթ ստորագրի հանցագործության(թյունների) վերաբերյալ, որ(ոնց)ում նա կասկածվում է («չի ցանկանում հանդիպել փաստաբանի հետ» տարբերակը չպետք է կիրառվի անչափահասների նկատմամբ):
- Բոլոր անչափահասներին, ովքեր կալանքի տակ են առնված, իրավապահ հաստատություն ժամանելիս անմիջապես հատուկ տեղեկատվական թերթիկ պետք է տրվի, որում սահմանված են վերոնշյալ երաշխիքները: Տեղեկատվական թերթիկը պետք է նախատեսված լինի երեխայի համար, գրված պարզ ու հասկանալի լեզվով և հասանելի տարբեր լեզուներով : Առանձնահատուկ պետք է հոգ տարվի՝ երաշխավորելու, որ անչափահասները լիովին հասկանում են այդ տեղեկատվությունը:

99. ԽԿԿ-ն համարում է, որ ոչ ոք չպետք է պահվի իրավապահ հաստատությունում երկարաձգված ժամանակահատվածով, քանի որ այդպիսի հաստատությունները, որպես կանոն, հարմարավետ պայմաններ և պատշաճ ռեժիմային միջոցառումներ չեն ապահովում: Ավելին, փորձը ցույց է տվել, որ ոստիկանությունում կալանքի տակ պահվող անձինք ավելի խոցելի են և հաճախ ենթակա են խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դրսևորման այլազան ձևերի ենթարկվելու առավել մեծ վտանգի: Սրանից հետևում է, որ Է'լ ավելի մեծ ջանքեր պետք է գործադրվեն իրավապահ հաստատություններում անչափահասներին կալանքի տակ պահելը նվազագույնի հասցնելու համար: Որոշ երկրներում անչափահասներին շարունակում են պահել ոստիկանական բաժանմունքներում տասն օր կամ ավելի ժամկետով: Նման գործելակերպերն անընդունելի են: ԽԿԿ-ն համարում է, որ անչափահասները, որպես կանոն, չպետք է պահվեն իրավապահ հաստատությունում 24 ժամից ավելի: Բացի այդ, ամեն գնով պետք է խուսափել անչափահասներին սովորական ոստիկանական խցերում տեղավորելուց՝ փոխարենը նրանց պահելով անչափահասների համար

նախատեսված միջավայրում: Այս նպատակով մեծապես ցանկալի կլինի ստեղծել առանձին ոստիկանական բաժանմունքներ անչափահասների համար, որպեսզի անչափահասներին կարողանան հնարավորինս արագ հեռացնել ոստիկանությունում ընդհանուր կալանքի տակ պահվողներից և տեղավորել հատուկ մասնագիտացված կալանախցերում:

Ցավոք, Կոմիտեն շարունակում է հայտնաբերել դեպքեր, երբ ոստիկանությունում կալանքի տակ պահվող անչափահասները տեղակայված են չափահասների հետ միասին նույն խցերում: Նման իրավիճակն անընդունելի է: Անչափահասների խոցելիությունը նշանակում է, որ նրանք սկզբունքորեն պետք է տեղավորվեն չափահասներից առանձին:

100. Բացի այդ, իրավապահները, ովքեր հաճախ կամ բացառապես գործ ունեն անչափահասների հետ կամ ովքեր հիմնականում զբաղվում են անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների կանխարգելմամբ, պետք է մասնագիտացված նախնական և շարունակական վերապատրաստում անցնեն :

3. Կալանքի կենտրոններ անչափահասների համար

ա. Ներածություն

101. ԽԿԿ-ն վաղուց է հանդես գալիս այն պնդմամբ, որ բոլոր ազատազրկված անչափահասները, ովքեր կասկածվում կամ մեղադրվում են քրեական հանցագործության մեջ, պետք է պահվեն կալանքի կենտրոններում, որոնք հատուկ նախատեսված են այս տարիքի անձանց համար՝ ոչ բանտանման միջավայր և ռեժիմային միջոցառումներ ստեղծելով, որոնք համապատասխանեցված են նրանց կարիքներին, իսկ անձնակազմում ունենալով այնպիսի աշխատակիցներ, ովքեր վերապատրաստված են երիտասարդների հետ աշխատելու համար: Ցավոք, Եվրոպայի խորհրդի շատ անդամ պետություններում սա դեռ հեռու է իրականությունից: Առաջընթաց է գրանցվել՝ երաշխավորելու, որ բանտ ուղարկվող անչափահասները չպահվեն չափահասների հետ, այլ տեղավորվեն միայն անչափահասների կալանախցերում: Այդուհանդերձ, շատ հաճախ այդ կալանախցերում ոչ միայն նյութական վատ վիճակ է տիրում, այլև վերապատրաստված անձնակազմի բացակայության պատճառով անչափահաս կալանավորները գտնվում են թշվառ պայմաններում, և աջակցությունն ու վերահսկողությունն էլ անբավարար են: Սա նշանակում է, որ անչափահասները չեն օգտվում նպատակային միջոցառումներից և կյանքի հմտությունների ուսուցումից, որոնք նպաստում են ազատ արձակվելուց հետո համայնքին վերաինտեգրվելուն:

Մյուս կողմից, Կոմիտեն մի քանի երկրներում այցելել է անչափահասների համար նախատեսված մի շարք հաստատություններ, որոնք իսկապես անչափահասակենտրոն են և հիմնված են բնակսենյակի սկզբունքով: Այս հաստատությունները կազմված են փոքր, անձնակազմով հագեցած ստորաբաժանումներից, որոնցից յուրաքանչյուրում գոյություն ունեն սահմանափակ թվով մեկտեղանոց սենյակներ (սովորաբար տասից ոչ ավելի), ինչպես նաև ընդհանուր օգտագործման տարածք: Անչափահասների համար օրվա ընթացքում նախատեսվում են նպատակային գործունեության մի շարք տեսակներ, իսկ բնակավայրում անձնակազմը խթանում է համայնքային հարաբերությունների զարգացումը: ԽԿԿ-ն համարում է, որ ազատազրկված անչափահասներին պահելու այս տեսակի կենտրոնը այն մոդելն է, որ պետք է ստեղծվի եվրոպական բոլոր պետություններում:

102. Ինչպես վերը նշվեց, անչափահասները (կալանքի տակ կամ ազատազրկման դատապարտված), որպես կանոն, չպետք է պահվեն չափահասների համար նախատեսված հաստատություններում, այլ այնպիսիներում, որոնք նախատեսված են հատուկ իրենց տարիքի համար: ԽԿԿ-ն համարում է, որ երբ բացառիկ դեպքերում նրանք պահվում են չափահասների համար նախատեսված բանտերում, ապա անչափահասները պետք է միշտ տեղավորված լինեն չափահասներից առանձին՝ առանձնացված տարածքում: Բացի այդ, չափահաս բանտարկյալները չպետք է մուտք ունենան այդ տարածք: Այնուամենայնիվ, Կոմիտեն ընդունում է, որ կարող են լինել փաստարկներ՝ ի նպաստ չափահաս բանտարկյալների հետ արտախցային միջոցառումներին անչափահասների մասնակցության, այն խիստ պայմանով, որ առկա է անձնակազմի պատշաճ հսկողություն: Նման իրավիճակներ պատահում են օրինակ, երբ հաստատությունում կա շատ քիչ կամ միայն մեկ անչափահաս հանցագործ: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ խուսափելու, որ անչափահասներին *de facto* չտեղավորեն մենախցում:

103. Քրեական օրենսդրության համաձայն ազատազրկված անչափահասները սկզբունքորեն չպետք է պահվեն այլ հիմքերով ազատությունից զրկված անչափահասների հետ: Միևնույն հաստատությունում պահվող արական և իգական սեռի անչափահասները պետք է տեղավորվեն առանձին ստորաբաժանումներում, թեև նրանք կարող են շփվել օրվա ընթացքում կազմակերպված միջոցառումների ժամանակ՝ պատշաճ հսկողության ներքո: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի տարիքային տարբեր խմբերին պատկանող անչափահասների տեղավորելու հարցին՝ նրանց կարիքները լավագույնս հոգալու նպատակով: Պետք է նաև պատշաճ միջոցներ ձեռնարկվեն՝

երաշխավորելու այս տարիքային խմբերի միջև բավարար տարանջատումը՝ անցանկալի ազդեցությունը, գերիշխանությունը կամ չարաշահումը կանխարգելելու նպատակով:

Անչափահաս իրավախախտների համար եվրոպական կանոններում նշվում է, որ երիտասարդ չափահաս իրավախախտները, անհրաժեշտության դեպքում, կարող են համարվել անչափահասներ և համապատասխան վերաբերմունքի արժանանալ: Այս գործելակերպը կարող է շահավետ լինել խնդրո առարկա երիտասարդ անձանց համար, սակայն հանգամանալի կառավարում է պահանջում՝ բացասական վարքագծի ի հայտ գալը կանխարգելելու նպատակով: Այս առումով, ԽԿԿ-ն համարում է, որ պետք է դեպքերի առանձին ուսումնասիրություն իրականացնել՝ որոշելու, թե արդյոք նպատակահարմար է կոնկրետ բանտարկյալին տեղափոխել չափահասների համար նախատեսված հաստատություն չափահասության տարիքին հասնելուց հետո (այսինքն՝ 18 տարեկանում)՝ հաշվի առնելով նրա բանտարկության մնացած ժամկետը, նրա հասունությունը, նրա ազդեցությունն այլ անչափահասների վրա և այլ կարևոր գործոններ:

b. Նյութական պայմաններ

104. Անչափահասների համար լավ նախագծված կալանքի կենտրոնը պետք է դրական և անհատականացված պայմաններ ապահովի երիտասարդ անձանց անազատության մեջ պահելու համար՝ հարգելով նրանց արժանապատվությունն ու անձնական կյանքը: Բոլոր սենյակները պետք է պատշաճ կահավորված և բավարար բնական լույսով և օդափոխությամբ ապահովված լինեն:

Անչափահասները, որպես կանոն, պետք է տեղավորվեն առանձին ննջասենյակներում: Հիմնավորում պետք է ներկայացվի, թե ինչու է տվյալ անչափահասի լավագույն շահերից բխում ննջասենյակը մեկ այլ բանտարկյալի հետ կիսելը: Նախքան նույն ննջասենյակում մեկ այլ բանտարկյալի հետ բնակեցնելու պահանջ ներկայացնելը անչափահասների հետ պետք է խորհրդակցել, և նրանք պետք է հնարավորություն ունենան նշելու, թե ում հետ կցանկանային բնակեցվել:

Ամեն ջանք պետք է գործադրվի անչափահասներին խոշոր կացարաններում տեղակայելուց խուսափելու համար, քանի որ ԽԿԿ-ի փորձառությունը ցույց է տալիս, որ սա անչափահասներին ենթարկում է բռնության և շահագործման զգալիորեն ավելի մեծ վտանգի: Իսկապես, խոշոր կացարաններով հաստատությունները պետք է գործածությունից դուրս գան:

105. Բացի այդ, անչափահասները պետք է սանիտարական հարմարությունների ազատ մուտք ունենան, որոնք բավարար հիգիենիկ պայմաններ և առանձնություն են ապահովում: Մասնավորապես, ուշադրություն պետք է դարձվի՝ երաշխավորելու, որ իգական սեռի անչափահասները սանիտարական և լվացվելու հարմարությունների մատչելի հնարավորություն ունեն, ինչպես նաև հիգիենայի պարագաներին, ինչպես օրինակ՝ հիգիենիկ միջադիրների:

106. Անչափահաս իրավախախտներին պետք է նաև թույլատրվի կրել իրենց սեփական հագուստը, եթե այն հարմար է: Սեփական հարմար հագուստ չունեցող անձանց հաստատությունը պետք է ոչ համազգեստային հագուստ տրամադրի:

c. ռեժիմային միջոցառումներ

107. Թեև նպատակային գործունեության բացակայությունը բացասաբար է ազդում ցանկացած բանտարկյալի վրա, այն հատկապես վնասակար է ֆիզիկական և մտավոր գործունեության հատուկ կարիք ունեցող անչափահասների համար: Անչափահաս բանտարկյալներին պետք է ամբողջ օրվա ընթացքում կրթական, սպորտային, մասնագիտական, ժամանցի և այլ արտախցային միջոցառումների համալիր ծրագիր տրամադրվի :

108. Ֆիզիկական վարժությունները պետք է կազմեն անչափահասի առօրյա ծրագրի կարևոր մասը: Բոլոր անչափահասները պետք է կանոնավոր մարզումների հնարավորություն ունենան, օրական առնվազն երկու ժամ, որից առնվազն մեկ ժամը, նախընտրելի է զգալիորեն ավելի երկար, բացօթյա: Բացօթյա մարզումների բակերը պետք է լինեն ընդարձակ և համապատասխանաբար հագեցված՝ իրական հնարավորություն ստեղծելով անչափահասներին ֆիզիկապես մարզվելու համար (օրինակ՝ սպորտով զբաղվելու): Դրանք նաև պետք է ծածկ ունենան եղանակային վատ պայմաններից պատսպարվելու համար:

109. Հաստատություն ընդունվելուց հետո յուրաքանչյուր անչափահասի համար պետք է անհատականացված ծրագիր մշակվի, որում կմատնանշվեն նպատակները և դրանց հասնելու ժամկետներն ու միջոցները՝ կալանքի կենտրոնում տվյալ անչափահասի անցկացրած ժամանակը լավագույնս օգտագործելու, հմտություններ և կարողություններ զարգացնելու համար, որոնք կօգնեն նրան վերաինտեգրվել հասարակությանը:

110. Անազատության մեջ պահվող անչափահասներին առաջարկվող կրթական և մասնագիտական ուսուցումը պետք է համապատասխանի տվյալ համայնքում առկա ուսուցման մակարդակին՝ տրամադրված մասնագետ

ուսուցիչների/հրահանգիչների կողմից, և անազատության մեջ պահվող անչափահասները պետք է ստանան նույնպիսի դիպլոմներ կամ վկայականներ (իրենց կրթությունը հաջողությամբ ավարտելուց հետո), ինչպես այդ համայնքում կրթական հաստատություններ հաճախող անչափահասները: Քայլեր պետք է ձեռնարկվեն՝ խուսափելու, որ դպրոցի ավարտական վկայականներում որևէ նշում լինի անչափահասի ինստիտուցիոնալ պատկանելության մասին: Հաշվի առնելով շատ անչափահասների առանձնապես դժվարին վիճակը՝ ջանքեր պետք է գործադրվեն՝ խրախուսելու և խթանելու նրանց մասնակցությունը դասընթացներին և մասնագիտական ուսուցմանը, ինչպես նաև այն սեմինարներին, որտեղ նրանք կարող են հմտություններ ձեռք բերել, որոնք նրանց կօգնեն ազատ արձակվելուց հետո: Մի շարք երկրներում ԽԿԿ-ն հանդիպել է անչափահասների համար համակարգիչների օգտագործման ուսուցման (այդ թվում նաև համացանցի) և/կամ ընտրված ազատազրկված անչափահասներին ընդհանուր համայնքում դպրոց հաճախելու թույլատրման դեպքերի: Նման գործելակերպերը պետք է խթանվեն:

111. ԽԿԿ-ն նաև ցանկանում է ընդգծել, որ իգական սեռի անչափահասները ոչ մի դեպքում չպետք է պակաս խնամք, պաշտպանություն, աջակցություն և ուսուցում ստանան, քան արական սեռի անչափահասները, չնայած այն հանգամանքին, որ նրանց թիվը շատ ավելի փոքր է, և կալանքի կենտրոնները գրեթե միշտ նախատեսված են արական սեռի բանտարկյալների համար: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ միջոցներ պետք է ձեռնարկվեն հավասար վերաբերմունք ապահովելու համար:

112. Իր այցելած տարբեր հաստատություններում ԽԿԿ-ն հանդիպել է խթանահեն տարբերակված ռեժիմի առկայության, որում առաջխաղացում են ունենում համագործակցող և լավ վարք դրսևորող անչափահասները, մինչդեռ բացասական վարք դրսևորող բանտարկյալները հետընթաց են ապրում և ենթարկվում տարբեր սահմանափակումների: ԽԿԿ-ի կարծիքով՝ վարքագծային մոտեցումը կարող է օգտակար լինել անչափահաս բանտարկյալներին՝ խմբում բնակվելու նորմերին ենթարկվելու և ինքնազարգացման կառուցողական ուղիներին հետամուտ լինելու խրախուսման տեսանկյունից: Սակայն կանոններին չհետևելու պատճառով խրախուսման բացառումը կարող է արագ հասնել զրկելու մակարդակին, ինչը չի համապատասխանում նվազագույն պահանջներին: Մասնավորապես, քայլեր պետք է ձեռնարկվեն խուսափելու խնդրո առարկա անչափահասներին մեկուսի բանտարկմանը հավասարազոր ռեժիմի ենթարկելուց: Բացի այդ, պետք է գոյություն ունենան պաշտոնական և թափանցիկ ընթացակարգեր խուսափելու «կրթական միջոցների» քմահաճ կիրառումից կամ կամ որպես այդպիսին ընկալվելուց:

d. Առողջապահություն

113. Բանտերում առողջապահական ծառայությունների հարցն ուսումնասիրելիս ԽԿԿ-ն իր աշխատանքում ուղորդվել է մի շարք ընդհանուր չափանիշներով (բժշկի մատչելիություն, համարժեք խնամք, հիվանդի համաձայնություն և գաղտնիություն, կանխարգելիչ բժշկական օգնություն, մասնագիտական անկախություն և մասնագիտական իրավունակություն): Ավելին, իր 23-րդ Ընդհանուր զեկույցում Կոմիտեն մանրամասն սահմանել է իր չափանիշները՝ վատ վերաբերմունքի կանխարգելման գործում բանտերում առողջապահական ծառայությունների դերի վերաբերյալ (մասնավորապես՝ վնասվածքների պարբերաբար արձանագրման և համապատասխան մարմիններին տեղեկատվություն տրամադրելու միջոցով): Բնականաբար, վերոնշյալ բոլոր չափանիշները հավասարապես կիրառելի են անչափահասների կալանքի կենտրոններում:

114. Այս ասելով՝ ԽԿԿ-ն միշտ հատուկ ուշադրություն է դարձնում ազատությունից զրկված անչափահասների հատուկ բժշկական կարիքներին: Հատկապես կարևոր է, որ անչափահասներին ցուցաբերվող բժշկական օգնությունը խնամքի բազմառարկայական (բժշկա-հոգե-սոցիալական) ծրագրի անքակտելի մաս կազմի: Սա, ի թիվս այլոց, նշանակում է, որ ուղղիչ հաստատություն ընդունվելիս բոլոր անչափահասները պետք է օգտվեն անհատական բժշկական, հոգեբանական և սոցիալական կարիքների համապարփակ գնահատման հնարավորությունից, և որ մշտապես առկա է սերտ համակարգում հաստատության բժշկական թիմի (բժիշկներ, քույրեր, հոգեբաններ և այլն) և այլ մասնագետների, այդ թվում՝ մասնագիտացված դասավանդողների, սոցիալական աշխատողների և ուսուցիչների աշխատանքի միջև, ովքեր կանոնավոր շփում ունեն բանտարկյալների հետ: Նպատակը պետք է լինի երաշխավորել, որ անչափահաս բանտարկյալներին տրամադրվող բժշկական օգնությունը կազմում է աջակցության և բուժման անտեսանելի ցանցի բաղադրիչ մասը:

115. Բոլոր անչափահասները պետք է պատշաճ կերպով հարցաքննվեն և ֆիզիկական զննում անցնեն բժշկի կամ որակավորված բուժքրոջ կողմից, ով զեկուցում է բժշկին կալանքի կենտրոն ընդունվելուց հետո հնարավորինս ամենաարագ ժամկետում՝ նախընտրելի է ժամանման օրը: Ընդունվելիս նման բժշկական զննման պատշաճ կատարումը հաստատության առողջապահական ծառայությանը հնարավորություն կընձեռի հայտնաբերել պոտենցիալ առողջական խնդիրներ ունեցող երիտասարդ անձանց (օրինակ՝ թմրամոլություն, սեռական չարաշահում և ինքնասպանության միտումներ): Նման խնդիրների վաղ փուլերում

հայտնաբերումը կնպաստի արդյունավետ կանխարգելիչ միջոցների ձեռնարկմանը հաստատության առողջապահական ծառայության բժշկա-հոգե-սոցիալական ծրագրի շրջանակներում:

116. Նաև քաջ հայտնի է, որ ազատազրկված անչափահասները միտում ունեն ներգրավվելու ռիսկային վարքագծի մեջ, հատկապես՝ կապված թմրանյութերի, ալկոհոլի և սեռական հետ առնչված, և որ ինքնավնասման հավանականությունը նրանց մոտ շավ ավելի մեծ է: Հետևաբար, անչափահասների յուրաքանչյուր կալանքի կենտրոնում պետք է լինի համապարփակ ռազմավարություն հոգեմետ նյութերի չարաշահման (ներառյալ՝ կանխարգելում և բուժում) կառավարման և սեփական անձին վնաս հասցնելու ու ինքնասպանության կանխարգելման համար: Կանխարգելիչ բժշկական օգնության ծրագրի մեկ այլ կարևոր տարր է վարակիչ հիվանդությունների վերաբերյալ բժշկական կրթության տրամադրումը: Հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անչափահասներին պետք է հոգ տանեն հոգեբույժներն ու հոգեբանները, ովքեր մասնագիտացված են անչափահասների հոգեկան առողջության ոլորտում:

117. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի իգական սեռի անչափահասների առողջական կարիքներին՝ պետք է ապահովվեն գինեկոլոգների հասանելիությունը և կանանց առողջության ոլորտում կրթությունը: Անազատության մեջ պահվող հղի անչափահաս աղջիկները և անչափահաս մայրերը պետք է պատշաճ աջակցություն և բժշկական օգնություն ստանան: Հնարավորության սահմաններում պետք է կիրառվեն այլընտրանքներ անազատությանը: Այս առումով, ազատությունից զրկված կանանց վերաբերյալ համապատասխան չափանիշները, որոնք ԽԿԿ-ն մշակել է իր 10-րդ Ընդհանուր զեկույցում, հավասարապես կիրառվում են ազատազրկված իգական սեռի անչափահասների նկատմամբ[1]:

118. Բուժանձնակազմը պետք է նաև ակտիվ դեր ունենա սննդի որակի և քանակի վերահսկման գործում: Անչափահասների սնուցման վիճակը պետք է գնահատվի, այլոց թվում, աճի աղյուսակներ կազմելու միջոցով այն անչափահասների համար, ովքեր դեռ աճման շրջանում են:

e. Կաղրային հարցեր

119. Հատկապես դժվար խնդիր է ազատությունից զրկված անչափահասներին կալանքի տակ պահելը և նրանց մասին հոգ տանելը: Պետք է հաշվի առնվի, որ նրանցից շատերը տուժել են ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական

[1] Տես՝ CPT/Inf (2000) 13, պարբերություններ 26-33:

բռնությունից։ Այս առաջադրանքը կատարելու կոչված անձնակազմը պետք է հանգամանորեն ընտրվի հասուն նկարագրի, մասնագիտական հմտության և այս տարիքային խմբի հետ աշխատելու և նրանց բարեկեցությունը ապահովելու հետ կապված դժվարությունները հաղթահարելու կարողունակության սկզբունքով: Մասնավորապես, քայլեր պետք է ձեռնարկվեն անչափահասների համար նախատեսված կալանքի կենտրոններում մասնագիտացված դասավանդողների, հոգեբանների և սոցիալական աշխատողների կանոնավոր ներկայությունը ապահովելու ուղղությամբ։ Նրանք պետք է երիտասարդների հետ նվիրված աշխատեն և կարողանան ուղղորդել ու խթանել նրանց։ Բանտանման միջավայրից խուսափելու նպատակով՝ անչափահասների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմը, որպես կանոն, չպետք է ունենա մահակներ, անզգայացնող աերոզոլներ կամ զսպման այլ միջոցներ։ Պետք է խթանվի բանտապահների կողմից բանտային համազգեստ չկրելու գործելակերպը, ինչին ԽԿԿ-ն ականատես է եղել անչափահասների կալանքի մի շարք կենտրոններում։ Երկու սեռերի ներկայացուցիչներից կազմված անձնակազմը կարող է նպաստավոր ազդեցություն ունենալ պահառուների էթիկայի վրա և խթան հանդիսանալ ավելի հոգատար ու հանգիստ մթնոլորտի համար:

120. Ամբողջ անձնակազմը, այդ թվում նաև խնամակալական պարտականություններ ունեցողները, ովքեր անմիջական շփման մեջ են անչափահասների հետ, պետք է մասնագիտական ուսուցում ստանան թե՛ աշխատանքը ստանձնելիս և թե՛ շարունակական հիմքով, և իրենց պարտականությունները կատարելիս օգտվեն պատշաճ արտաքին աջակցությունից և վերահսկողությունից։ Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի անձնակազմի վերապատրաստմանը բռնի պատահարների կառավարման ոլորտում, հատկապես՝ խոսքի միջոցով լարվածության թուլացման և մասնագիտական զսպման մեթոդների ուղղությամբ։

121. Հաստատությունների վարչակազմի պատասխանատվությունն է հատուկ միջոցներ ձեռնարկել պաշտպանելու անչափահասներին չարաշահման բոլոր ձևերից, ներառյալ՝ սեռական կամ այլ տեսակի շահագործումից։ Աշխատակիցները պետք է զգոն լինեն հոգեբանական ճնշումների և ծաղրի դրսևորումների նկատմամբ (այդ թվում՝ ֆիզիկական և սեռական բռնություն, բանավոր վիրավորանք, շորթում և մյուս անչափահասներին պատկանող իրերի գողություն) և պետք է կարողանան պատշաճ կերպով արձագանքել և ակտիվ միջամտել նման դեպքերը կանխարգելելու համար։

f. Կապն արտաքին աշխարհի հետ

122. Արտաքին աշխարհի հետ շփման ակտիվ խթանումը հատկապես կարող է նպաստավոր լինել ազատությունից զրկված անչափահասների համար, որոնցից շատերը կարող են ունենալ հուզականության կորստի (դեպրիվացիա) կամ սոցիալական ունակությունների բացակայության հետ կապված վարքագծային խնդիրներ: Ամեն ջանք պետք է գործադրվի բոլոր անչափահաս բանտարկյալներին կալանքի կենտրոն ընդունվելու առաջին իսկ պահից իրենց ընտանիքների և այլ անձանց հետ շփվելու հնարավորությամբ ապահովելու համար: Ընտանիք հասկացությունը պետք է ազատորեն մեկնաբանվի, որպեսզի ներառվեն այն անձանց հետ շփումները, ում հետ անչափահասն ընտանիքի անդամին համարժեք կապ է հաստատել, նույնիսկ եթե այդ կապը պաշտոնականացված չէ: Հասարակությանը ինտեգրման նպատակով՝ անչափահասներին պետք է նաև հնարավորության սահմաններում թույլատրվեն արձակուրդային շրջաններ (ուղեկցությամբ կամ միայնակ):

123. Յուրաքանչյուր շաբաթ անչափահասները պետք է օգտվեն մեկ ժամից ավելի տևողությամբ տեսակցությունների իրավունքից, ինչպես նաև կարողանան այցելուներ ունենալ հանգստյան օրերին: Կարճաժամկետ այցելություններ պետք է թույլատրվեն, որպես կանոն, բաց պայմաններում:

ԽԿԿ-ն որոշ երկրներում նկատել է, որ անչափահասներին իրավունք է տրվում օգտվել երկարաժամկետ չվերահսկվող այցելություններից: Բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք անչափահասի լավագույն շահերից չեն բխում, նման մոտեցումը հատկապես ողջունելի է անչափահասների և նրանց մերձավոր ազգականների ընտանեկան կյանքին աջակցելու և հասարակությանը անչափահասի վերաինտեգրումը խթանելու առումով:

124. Բոլոր անչափահասները, այդ թվում և նախնական կալանքի տակ գտնվողները, պետք է զանգելու հաճախակի հնարավորություն ունենան և մշտապես հնարավորություն ունենան օգտվել նամակագրության իրենց իրավունքից: Եթե առկա են մտահոգություններ անվտանգության հետ կապված, որոշակի հեռախոսային խոսակցություններ և նամակագրություն կարող է վերահսկվել և բացարձակապես արգելվել: Նման որոշումը պետք է հիմնավորված լինի հանցավոր մտադրության կամ ապօրինի այլ գործունեության վտանգի առկայության դեպքով, սակայն որոշակի ժամանակահատվածով պայմանավորված:

ԽԿԿ-ի այցելած որոշ հաստատություններում անչափահասներին թույլատրվում է կանոնավոր կերպով հաղորդակցվել իրենց ընտանիքի անդամների հետ՝ VoIP

համացանցային անվճար ծառայության միջոցով: Նման գործելակերպերը խիստ ողջունելի են, սակայն չպետք է դիտարկվեն որպես այցելություններին փոխարինող:

125. Անչափահասի հանդեպ կիրառվող փոխադրումների, ազատ արձակման, կարգապահական պատժամիջոցների և պաշտպանական ու անվտանգության միջոցառումների, ինչպես նաև նրա որևէ հիվանդության, վնասվածքի կամ մահվան վերաբերյալ տեղեկությունները պետք է անհապաղ տրամադրվեն տվյալ անչափահասի ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին։

g. Կարգապահություն և անվտանգություն

126. Պաշտոնական կարգապահական ընթացակարգերի և պատժամիջոցների նկատմամբ կոնֆլիկտների վերականգնողական կարգավորմանը պետք է առաջնահերթություն տրվի: Կիրառվելու դեպքում կարգապահական պատժամիջոցները պետք է ղեկավարվեն համաչափության սկզբունքով և կիրառվեն համապատասխան պաշտոնական կարգապահական կանոններին և ընթացակարգերին լիարժեք համապատասխանությամբ ու չստանան ոչ պաշտոնական պատժի ձև։ Կոլեկտիվ պատժի ցանկացած ձև անընդունելի է։

ԽԿԿ-ի այցելած մի շարք հաստատություններում անձնակազմի համար սովորական երևույթ էր այսպես կոչված «դաստիարակչական ապտակը» կամ ֆիզիկական պատժի այլ ձևերն իրենց վատ պահող անչափահասների նկատմամբ: Այս կապակցությամբ ԽԿԿ-ն հիշեցնում է, որ մարմնական պատիժը կարող է համարժեք լինել վատ վերաբերմունքի և պետք է խստիվ արգելվի:

127. ԽԿԿ-ն ցանկանում է շեշտել, որ անչափահասի շփումն արտաքին աշխարհի հետ երբեք չպետք է մերժվի կամ սահմանափակվի՝ որպես կարգապահական միջոցի կիրառում, եթե միայն կարգապահական հանցագործությունը չի վերաբերում այդ շփմանը:

128. Անչափահասների մեկուսացման ցանկացած ձև կարող է վտանգել նրանց ֆիզիկական և/կամ մտավոր բարեկեցությունը, ուստի պետք է կիրառվեն միայն որպես ծայրահեղ միջոց:

ԽԿԿ-ի կարծիքով՝ մեկուսի բանտարկությունը որպես կարգապահական միջոց պետք է կիրառվի միայն շատ կարճ ժամանակահատվածներով և ոչ մի դեպքում երեք օրից ավելի։ Երբ անչափահասները ենթարկվում են նման միջոցի, նրանց պետք է սոցիալ-դաստիարակչական աջակցություն և պատշաճ մարդկային շփման հնարավորություն տրամադրվի: Բուժանձնակազմի որևէ անդամ պետք է

այցելի անչափահասին մեկուսացումից անմիջապես հետո և հետագայում պարբերաբար՝ օրական առնվազն մեկ անգամ և նրան անմիջական բժշկական օգնություն և բուժում տրամադրի :

129. Ինչ վերաբերում է պաշտպանության կամ կանխարգելիչ նպատակներով մեկուսի բանտարկությանը, ապա ԽԿԿ-ն ընդունում է, որ նման միջոցը կարող է պահանջվել ծայրահեղ դեպքերում՝ հատկապես խոցելի անչափահասներին պաշտպանելու կամ մյուսների անվտանգությանը սպառնացող լուրջ վտանգները կանխարգելելու կամ բանտի անվտանգության նպատակով, եթե ոչ մի այլ լուծում բացարձակապես հնարավոր չէ գտնել: Յուրաքանչյուր նման միջոցի վերաբերյալ որոշումը պետք է կայացնի իրավասու մարմինը՝ հիմնված հստակ ընթացակարգի վրա, որում նշվեն բանտարկության բնույթը, տևողությունը, հիմքերը, որոնց համաձայն այն կարող է կիրառվել՝ ապահովելով վերանայման կանոնավոր գործընթացը, ինչպես նաև անկախ արտաքին մարմնին որոշման դեմ բողոք ներկայացնելու հնարավորությունը տվյալ անչափահասի համար: Խնդրո առարկա անչափահասներին միշտ պետք է պատշաճ մարդկային շփման հնարավորություն տրամադրվի, և նրանք պետք է օգտվեն բուժանձնակազմի անդամի ամենօրյա այցելություններից:

Նմանապես, բռնի կամ անհանգիստ վարքագիծ դրսևորող անչափահասի տեղավորումը հանգստացման սենյակում պետք է կիրառվի որպես ծայրահեղ բացառիկ միջոց: Ցանկացած նման միջոց չպետք է մի քանի ժամից ավելի տևի և երբեք չպետք է կիրառվի որպես ոչ պաշտոնական պատիժ: Այս համատեքստում մեխանիկական զսպման միջոցը երբեք չպետք է կիրառվի: Անչափահասի յուրաքանչյուր տեղավորում հանգստացման սենյակում պետք է անմիջապես ներկայացվի բժշկի ուշադրությանը, որպեսզի նա կարողանա հետևել տվյալ անչափահասի առողջական կարիքներին: Բացի այդ, ցանկացած նման տեղավորում պետք է արձանագրվի կենտրոնական գրանցամատյանում, ինչպես նաև անչափահասի անհատական գործում:

h. Տեղեկատվություն իրավունքների վերաբերյալ

130. Ընդունվելիս բոլոր անչափահասներին պետք է տրվի տվյալ հաստատությունում առօրյա կյանքի կանոնների պատճենը և նրանց իրավունքների ու պարտականությունների գրավոր նկարագիրը նրանց հասկանալի լեզվով և ձևով: Անչափահասներին նաև պետք է տեղեկատվություն տրամադրվի բողոք ներկայացնելու, այդ թվում և բողոքներ ստանալու իրավասություն ունեցող մարմինների կոնտակտային տվյալների մասին, նաև իրավաբանական օգնություն տրամադրող ծառայությունների հասցեները:

Այն անչափահասների համար, ովքեր գրագետ չեն կամ չեն կարող հասկանալ լեզուն գրավոր ձևով, վերոնշյալ տեղեկատվությունը պետք է հրամցվի այնպիսի ձևով, որը կապահովի դրա լիակատար ընկալումը։

i. Բողոքներ ներկայացնելու և ստուգման ընթացակարգեր

131. Բողոք ներկայացնելու և ստուգման արդյունավետ ընթացակարգերը վատ վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքներն են անազատության բոլոր վայրերում, այդ թվում նաև անչափահասների համար նախատեսված կալանքի կենտրոններում։

Անչափահասները (ինչպես նաև նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները) պետք է բողոք ներկայացնելու եղանակներ ունենան, որոնք իրենց հասանելի կլինեն հաստատությունների վարչական համակարգի ներսում, և պետք է մի անկախ մարմնի գաղտնիության սկզբունքով բողոքները ուղղելու իրավունք ունենան: Բողոքներ ներկայացնելու ընթացակարգերը պետք է լինեն պարզ, արդյունավետ և հասկանալի երեխաների համար, հատկապես՝ լեզվի հետ կապված: Անչափահասները (ինչպես նաև նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները) պետք է բողոքների վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն ստանալու և անվճար իրավական օգնությունից օգտվելու իրավունք ունենան երբ այդ են պահանջում արդարադատության շահերը։

132. ԽԿԿ-ն նաև հատուկ կարևորություն է տալիս անչափահասների բոլոր կալանքի կենտրոններ անկախ մարմնի կանոնավոր այցելություններին, ինչպիսիք են՝ այցելող հանձնաժողով, դատավոր, երեխաների օմբուդսմեն կամ Ներպետական կանխարգելիչ մեխանիզմ (որը հիմնված է Խոշտանգումների դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ – ԽԴԿԿԱ/OPCAT), որն իրավասու է ստանալ անչափահասների կամ նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների կողմից ներկայացված բողոքները և անհրաժեշտության դեպքում քայլեր ձեռնարկել այդ կապակցությամբ՝ ստուգել կացարաններն ու բնակության պայմանները և գնահատել, թե արդյոք այդ հաստատությունները գործում են ներպետական օրենսդրության պահանջներին և սահմանված միջազգային չափանիշներին համապատասխան: Ստուգող մարմնի անդամները պետք է նախաձեռնող լինեն և անմիջական շփման մեջ մտնեն անչափահասների հետ՝ այդ թվում և բանտարկյալների հետ մասնավոր զրույցի ձևով:

VI. Ազատազրկված կանայք

Քաղվածք 10-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2000) 13]

Նախնական նկատառումներ

21. ԽԿԿ-ն իր նախորդ մի քանի ընդհանուր հաշվետվություններում ձևակերպել է այն չափանիշները, որոնցով նա առաջնորդվում է իր աշխատանքի մեջ ազատազրկման տարբեր վայրերում, այդ թվում ոստիկանական բաժանմունքներում, բանտերում, ազատազրկված ներգաղթողների պահման կենտրոններում,հոգեբուժարաններում, ինչպես նաև անչափահաս անձանց կալանավայրերում:

Բնական է, որ Կոմիտեն վերոհիշյալ չափանիշները կիրառում է ազատազրկված և՛ կանանց, և՛ տղամարդկանց նկատմամբ: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններում ազատազրկված կանայք այնուամենայնիվ կազմում են ազատազրկված անձանց համեմատաբար փոքր մասը:Կանանց կալանքի տակ պահելու համար առանձին հատկացումներ կատարելը պետությունների համար կապված է մեծ ծախսերի հետ: Կանայք (երբեմն տնից և իրենց խնամքի տակ գտնվող երեխաներից հեռու) հաճախ պահվում են ի սկզբանե տղամարդկանց համար նախատեսված ոչ մեծ թվով շինություններում (որտեղ կարող են պահվել և տղամարդիկ): Այս պարագաներում անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել ազատազրկված կանանց անվտանգ և բարեկեց միջավայրում պահելու ապահովման համար:

Ընդգծելով ազատազրկված կանանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման կարևորությունը, ԽԿԿ-ն որոշեց 10-րդ Ընդհանուր հաշվետվության այս գլուխը նվիրել տվյալ բնագավառում իր կողմից հետապնդող որոշ կոնկրետ խնդիրներին: Կոմիտեն հուսով է, որ այսպիսով նա հնարավորություն կտա ազգային իշխանություններին ստույգ պատկերացումներ կազմել Կոմիտեի տեսակետների մասին՝ ինչ վերաբերում է ազատազրկված կանանց հետ վարվեցողությանը: Ինչպես և նախորդ տարիներին, **ԽԿԿ-ն զոհունակությամբ կընդունի իր Ընդհանուր հաշվետվության այս հիմնական բաժնի վերաբերյալ դիտողությունները**:

22. Ի սկզբանե, պետք է ընդգծել, որ սույն գլխում շարադրված խնդիրների վերաբերյալ ԽԿԿ-ի մտահոգությունները առկա են անկախ նրանից, թե ինչ բնույթի կալանավայրի մասին է խոսքը գնում: ԽԿԿ-ի փորձը ցույց է տալիս, որ ազատազրկված կանանց ֆիզիկական և/ կամ հոգեբանական վիճակին սպառնացող վտանգը կարող է ավելի մեծ լինել իրենց ձերբակալմանն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում: Հետևաբար, պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որ այդ ժամանակահատվածում ապահովվեն ներքոհիշյալ բաժիններում շարադրված չափանիշները:

Կոմիտեն ցանկանում է հատուկ նշել, որ այս բնագավառում իր կողմից մշակվող ստանդարտները պետք է դիտվեն որպես լրացում այն ստանդարտներին, որոնք ամրագրված են այլ միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, Միացյալ Ազգերի Կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում և Միացյալ Ազգերի Կազմակերպության Ցանկացած ձևի կալանքի կամ բանտարկության մեջ գտնվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների հավաքածուի մեջ:

Անձնակազմի համալրումը տարբեր սեռի ներկայացուցիչներով

23. Ինչպես ընդգծված է ԽԿԿ-ի 9-րդ Ընդհանուր հաշվետվությունում, անձնակազմի համալրումը տարբեր սեռի ներկայացուցիչներով ուղղիչ հիմնարկներում հանդիսանում է դաժան վերաբերմունքի դեմ ուղղված կարևոր երաշխիք: Տղամարդկանցից ու կանանցից բաղկացած անձնակազմի առկայությունը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ ինչպես պահելու բնույթի,այնպես էլ նորմալ մթնոլորտի ստեղծման վրա:

Անձնակազմի համալրումը տարբեր սեռի ներկայացուցիչներով նաև թույլ է տալիս կատարել անձնակազմի համապատասխան տեղաբաշխումներ՝ տվյալ սեռի համար յուրահատուկ հանձնարարականներ կատարելիս (ինչպես օրինակ՝ խուզարկություն կատարելիս): Այս կոնտեքստում ԽԿԿ-ն ցանկանում է նորից ընդգծել, որ ազատազրկված անձինք պետք է խուզարկվեն միայն նույն սեռի ծառայողների կողմից, և յուրաքանչյուր խուզարկություն, որը պահանջում է հագուստը հանել, պետք է կատարվի հակառակ սեռի տեսադաշտից դուրս:

Ազատազրկված կանանց անջատ բնակեցումը

24. Պետության կողմից ազատազրկված անձանց նկատմամբ ցուցաբերող հոգատարության պարտավորությունը ներառում է՝ պարտավորություն պաշտպանելու նրանց այլ անձանցից, ովքեր փորձում են նրանց վնաս հասցնել: ԽԿԿ-ն ժամանակ առ ժամանակ հանդիպել է կանանց միջև անվայել վերաբերմունքի դեպքերի: Այնուամենայնիվ, կանանց նկատմամբ տղամարդկանց կողմից դաժան վերաբերմունքի (մասնավորապես սեռական հետապնդումների, այդ թվում նաև խոսքային վիրավորանքների) դեպքերը ավելի հաճախակի են տեղի ունենում, հատկապես, երբ չի ապահովվում ազատազրկված կանանց անջատ ապրելատեղը, որը մեծ մասամբ հսկվում է կին ծառայողների կողմից:

Որպես սկզբունք, ազատազրկված կանայք պետք է պահվեն այնպիսի ապրելատեղերում, որոնք ֆիզիկապես առանձնացված են նույն հիմնարկում պահվող տղամարդկանցից:Այնուամենայնիվ,որոշ պետություններ սկսել են միջոցներ ձեռնարկել զույգերին (որոնցից յուրաքանչյուրը ազատազրկված է) միասին տեղավորելու ուղղությամբ և/կամ, որպեսզի ուղղիչ հիմնարկներում այս կամ այն չափով համատեղ պահվեն տարբեր սեռի ներկայացուցիչները: ԽԿԿ-ն ողջունում է այսպիսի առաջադեմ քայլերը այն պայմանով, որ նրանք կատարվեն տվյալ ազատազրկված անձանց համաձայնությամբ, նրանց զգուշավոր ընտրությամբ և համապատասխան հսկողությամբ:

Գործունեությամբ զբաղվելու հավասար հնարավորություններ

25. Ազատազրկված կանայք պետք է հնարավորություն ունենան զբաղվելու իմաստալից գործունեությամբ (աշխատանք, վերապատրաստում,կրթություն, սպորտ և այլն) տղամարդ բանտարկյալների հետ հավասար հիմունքներով:Ինչպես նշել է Կոմիտեն իր վերջին Ընդհանուր հաշվետվությունում ԽԿԿ-ի պատվիրակությունները չափից ավելի հաճախ հանդիպում են դեպքերի, երբ ազատազրկված կանայք զբաղվում են այնպիսի գործունեությամբ, որը իրենց համար համարվում է«համապատասխան» (օրինակ՝ կարը կամ ձեռքի աշխատանքը) այն դեպքում, երբ տղամարդկանց հնարավորություն է տրվում ստանալու շատ ավելի բարձր մասնագիտական բնույթի ուսուցում:

ԽԿԿ-ի տեսակետից այսպիսի խտրական մոտեցումը կարող է ծառայել միայն կանանց սոցիալական դերի մասին գոյություն ունեցող ստերիոտիպերի ուժեղացմանը: Ավելին, հանգամանքներից ելնելով, ռեժիմով նախատեսված գործունեության ձևերից հավասար հիմունքներով կանանց օգտվելու հնարավորության մերժումը կարող է դասվել որպես արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:

Նախածննդյան և հետծննդյան խնամք

26. Ամեն ջանք պետք է գործադրվի, որպեսզի բավարարվեն ազատազրկված հղի կանանց սննդի յուրահատուկ դիետիկ պահանջմունքները: Նրանք պետք է ստանան պրոտեինով հարուստ և թարմ մրգերից ու բանջարեղենից բաղկացած սնունդ:

27. Պարզ է, որ երեխաները չպետք է ծնվեն ուղղիչ հիմնարկներում, և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, սովորաբար ազատազրկված հղի կանանց անհրաժեշտ պահին տեղափոխում են հանրային հիվանդանոցներ:

Մինչդեռ,երբեմն, ԽԿԿ-ն հանդիպում է այնպիսի դեպքերի, երբ հղի կանանց գինեկոլոգիական զննման կամ ծննդաբերության ժամանակ նեղում կամ գամում են մահճակալին կամ որևէ կահույքի:Այսպիսի մոտեցումը լիովին անընդունելի է և կարող է, իհարկե, որակավորվել որպես անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Հնարավոր է և պետք է գտնել անվտանգության պահանջները բավարարող այլ միջոցներ:

28. Ուղղիչ հիմնարկներում շատ կանայք երեխաների և այլոց հիմնական խնամողներն են, իսկ ազատազրկումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջիններիս վրա[1]:

Այս կոնտեքստում նորածինների և մանուկների իրենց մայրերի հետ մնալու հարցը, եթե դա առկա է, և դրա ժամկետը չափազանց բարդ խնդիրներ են: Պարզ է, որ ազատազրկման վայրը նորածինների և մանուկների համար հարմար միջավայր չէ, մինչդեռ մայրերի և երեխաների բռնի բաժանումը նույնպես խիստ անցանկալի է:

29. ԽԿԿ-ի տեսակետց, բոլոր դեպքերում երեխայի բարեկեցությունը պետք է լինի ղեկավար սկզբունք: Սա մասնավորապես ենթադրում է, որ ազատազրկման վայրում նախածննդյան և հետծննդյան խնամքը պետք է համարժեք լինի տվյալ հասարակության մեջ ազատության պայմաններում տրվող խնամքին: Այսպիսի պայմաններում նորածինների և մանուկների նկատմամբ վարվեցողությունը պետք է վերահսկվի սոցիալական աշխատանքի և երեխաների զարգացման հարցերով զբաղվող մասնագետների կողմից: Նպատակը պետք է լինի երեխայի համար այնպիսի միջավայր ստեղծելը, որը զերծ է բանտին բնորոշ հատկանիշներից, ինչպիսիք են, օրինակ՝ համազգեստը, բանալիներից առաջացած աղմուկը:

---

[1] Տե՛ս նաև բանտերում մայրերի և մանուկների վերաբերյալ՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1469 (2000) հանձնարարականը:

Անհրաժեշտ է նաև այնպիսի միջոցներ ձեռնարկել, որոնք կապահովեն ուղղիչ հիմնարկներում երեխաների շարժողական և ճանաչողական ունակությունների բնական զարգացումը:

Իրենց պահելու վայրերում նրանք մասնավորապես պետք է ունենան խաղալու և վարժություններ կատարելու համապատասխան հարմարություններ, իսկ հնարավորության դեպքում կարողանան դուրս գալ հիմնարկից և ապրել սովորական կյանքով՝ այդ պատերից դուրս:

Միաժամանակ,աջակցելով ուղղիչ հիմնարկից դուրս գտնվող ընտանիքի անդամների մասնակցությանը երեխայի խնամքին, կարելի է նպաստել այդ հոգսի թեթևացմանը (օրինակ՝ երեխայի հոր կողմից): Այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, պետք է քննարկվի մսուրային պայմանների հնարավորությունը: Այդպիսի նախաձեռնությունները կարող են նպաստել ազատազրկված կանանց ավելի լայն մասնակցությանը աշխատանքին և ուղղիչ հիմնարկներում իրականացվող այլ միջոցառումներին, քան դա հնարավոր կլիներ այլ պայմաններում:

Հիգիենայի և առողջության խնդիրները

30. Կոմիտեն ցանկանում է նաև Կողմերի ուշադրությունը հրավիրել հիգիենայի և առողջության հետ կապված մի շարք խնդիրների վրա: Ազատազրկված կանանց պահանջները, այդ առումով, զգալիորեն տարբերվում են տղամարդկանց պահանջներից:

31. Կանանց **հիգիենայի** յուրահատուկ պահանջները պետք է բավարարվեն համապատասխան ձևով: Կարևոր նշանակություն ունեն սանիտարական և լվացվելու միջոցներից անմիջապես օգտվելու հնարավորությունը, արյունով աղտոտված իրերի անվտանգ թափումը, այնպիսի հիգիենիկ իրերով ապահովվածությունը, ինչպիսիք են սանիտարական միջադիրները և տամպոնները:

Առաջին անհրաժեշտության պարագաների բացակայությունը համարժեք է նվաստացնող վերաբերմունքի:

32. Էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը,որ ազատազրկված անձանց **բուժսպասարկման**մակարդակը համապատասխանի տվյալ հասարակությունում ազատության պայմաններում գտնվող հիվանդանոցների բուժսպասարկման մակարդակին:

Ինչ վերաբերում է ազատազրկված կանանց, ապա բժշկական սպասարկման համարժեքության սկզբունքի իրագործման ապահովումը պահանջում է, որ բուժսպասարկումը կատարվի կանանց հիվանդությունների, այդ թվում՝ գինեկոլոգիայի գծով հատուկ ուսուցում ստացած բժիշկների և բուժքույրերի կողմից:

Բացի դրանից, ազատազրկված կանայք պետք է նույն չափով, ինչ չափով դա առկա է տվյալ հասարակությունում ազատության պայմաններում գտնվող կանանց համար, ընդգրկվեն կանանց համար բնորոշ բժշկական պրոֆիլակտիկ հետազոտություններում ինչպիսիք են՝ կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղի ախտորոշումը:

Բժշկական սպասարկման համարժեքության սկզբունքը պահանջում է, որ ազատազրկման վայրում պաշտպանվի կնոջ մարմնական ամբողջականության իրավունքը: Այսպես կոչված «հաջորդ առավոտ» հաբերը կամ/և հղիությունը ուշ շրջանում դադարեցնելու այլ միջոցները ազատազրկված կանանց համար պետք է նույն պայմաններով մատչելի լինեն, ինչպես դա մատչելի է ազատության մեջ ապրող կանանց համար:

33. Որպես սկզբունք, կանայք, որոնք բուժման կուրսը սկսել են ազատազրկումից առաջ, պետք է հնարավորություն ունենան շարունակելու այն ազատազրկման պայմաններում: Այս կոնտեքստում, պետք է ջանքեր տարվեն, որ ազատազրկման վայրերում կանանց համար անհրաժեշտ համապատասխան դեղամիջոցները մատչելի լինեն:

Ինչ վերաբերում է, մասնավորապես, հակաբեղմնավորիչ դեղամիջոցներին, ապա դրանք պետք է նշանակվեն ոչ միայն բեղմնավորումը կանխարգելելու, այլ նաև բժշկական նպատակներով(օրինակ՝ դաշտանի ցավերը մեղմացնելու համար): Այն փաստը, որ կնոջ կալանքի տակ գտնվելը ինքնըստինքյան խիստ նվազեցնում է հղիության հավանականությունը, չի կարող այդպիսի դեղամիջոցներ չտրամադրելու բավարար պատճառ դառնալ:

VII. Վատ վերաբերմունքի բժշկական ապացույցների փաստագրում և հաղորդում

Քաղվածք 23-րդ Ընդհանուր զեկույցից [CPT/Inf (2013) 29]

71. Ինչպես իր գործունեության վաղ փուլում, ԽԿԿ-ն շեշտել է այն կարևոր ներդրումը, որ կարող են և պետք է կատարեն առողջապահական ծառայությունները ազատազրկման վայրերում՝ կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ պայքարելու ուղղությամբ՝ վնասվածքների մեթոդական (հետևողական) արձանագրման և համապատասխան իշխանություններին[1] տեղեկությունների տրամադրման միջոցով: Բժշկական այս ապացույցների ճշգրիտ և ժամանակին զեկուցումը մեծապես կնպաստի հնարավոր վատ վերաբերմունքի դեպքերի հետաքննությանը և բռնարարների՝ պատասխանատվության ենթարկմանը, ինչն իր հերթին հանդես կգա որպես ապագայում վատ վերաբերմունքի դրսևորումը զսպող ուժեղ գործոն:

ԽԿԿ-ն հատուկ ուշադրություն է դարձրել այն դերին, որը պետք է կատարեն քրեակատարողական հիմնարկների առողջապահական ծառայությունները՝ վատ վերաբերմունքի դեմ պայքարի հետ կապված: Բնականաբար, այդ դերը մասամբ վերաբերում է ազատազրկված անձանց նկատմամբ նրանց ազատազրկման ընթացքում հնարավոր վատ վերաբերմունքին՝ անկախ նրանից, թե այն պատճառվել է անձնակազմի թե մյուս բանտարկյալների (բանտակիցների) կողմից: Այնուհանդերձ, առողջապահական ծառայությունները այնպիսի հաստատություններում, որոնք բանտային համակարգ մուտքի կետեր են, նույնպես կարևոր ներդրում ունեն կատարելու՝ կապված վատ վերաբերմունքի կանխարգելման հետ՝ անմիջապես ազատազրկմանը նախորդող ժամանակահատվածում, այսինքն այն ժամանակ, երբ անձինք իրավապահ գործակալությունների կողմից կալանքի տակ են պահվում (օրինակ՝ ոստիկանության կամ ժանդարմերիայի):

72. Ինչպես հայտնի է ԽԿԿ զեկույցների ուշադիր ընթերցողներին, իրավիճակը կապված վատ վերաբերմունքի բժշկական ապացույցների փաստագրման և հաղորդման հետ ներկայում հեռու է բավարար լինելուց շատ երկրներում, որտեղ այցելել է Կոմիտեն: Տեղերում գործող ընթացակարգերը միշտ չէ, որ երաշխավորում են, որ ազատազրկված անձանց հասցված վնասվածքները

[1] Տես օրինակ ԽԿԿ 3-րդ Ընդհանուր զեկույցի, CPT/Inf (93) 12, 60-62-րդ պարբերությունները:

կարձանագրվեն ճիշտ ժամանակին: Նույնիսկ երբ վնասվածքները արձանագրվում են, դա հաճախ կատարվում է մակերեսորեն: Ավելին, հաճախ երաշիքն չկա, որ բժշկական ապացույցը, որը փաստագրվել է, այնուհետև հաղորդվելու է համապատասխան իշխանություններին:

Հետևաբար, Կոմիտեն համարել է, որ օգտակար կլինի հետագա պարբերություններում սահմանել այն չափանիշները, որ այն մշակել է վատ վերաբերմունքի բժշկական ապացույցների փաստագրման և հաղորդման հետ կապված: Քննարկվել են նաև տարաբնույթ առնչվող (հարակից) հարցեր:

73. Միանգամայն ակնհայտ է, որ ազատազրկված անձինք պետք է պատշաճ կերպով քննվեն և ֆիզիկապես զննվեն առողջապահության ոլորտի մասնագետի կողմից հնարավորինս շուտ՝ բանտ իրենց մուտքից հետո: ԽԿԿ-ն համարում է, որ քննությունը/զննումը պետք է իրականացվի մուտքից հետո 24 ժամվա ընթացքում: Նոր ժամանողների այս համակարգված (սիստեմատիկ) զննումը կարևոր է տարբեր պատճառներով: Ավելի հստակ, պատշաճ իրականացվելու դեպքում այն կերաշխավորի, որ խնդրո առարկա անձանց ստացած ցանկացած վնասվածք, ինչպեսև դրանց առնչվող մեղադրանքները, արձանագրվեն առանց անպատեհ ձգձգումների: Նույն ընթացակարգին պետք է հետևել երբ ազատազրկված անձը, որին հետ են հանձնել ոստիկանություն հետաքննական նպատակներով, վերադարձվում է ազատազրկման վայր: Ցավոք նման փոխադրումները դեռ տարածված գործելակերպ են մի շարք Պետություններում, որտեղ այցով գտնվել է ԽԿԿ-ն, և դրանք կարող են ի հայտ բերել վատ վերաբերմունքի մեծ վտանգ (տես նաև պարբերություն 80-ը): Նմանապես, ցանկացած բանտարկյալ, ով ներգրավված է եղել որևէ բռնի դրվագում, պետք է անհապաղ բժշկական զննում անցնի:

Բացի բանտերից, կան ազատազրկման այլ վայրեր, որտեղ անձինք կարող են պահվել երկար ժամանակահատվածով (օրինակ ավելի, քանի մի քանի օր): Այդպիսի դեպք է օրինակ, երբ կալանքի կենտրոններ են օգտագործվում՝ տեղավորելու այնպիսի անձանց, ովքեր կալանքի տակ են պահվում համաձայն օտարերկրյա օրենսդրության: Բաց այդ, մի շարք երկրներում, որտեղ այցով գտնվել է ԽԿԿ-ն, ազատազրկված անձանց տարբեր կատեգորիաներ (օրինակ վարչական օրինազանցներ, հետ-կալանքի տակ ուղարկված անձինք, ովքեր սպասում են բանտ փոխադրման կամ ենթարկվում են հետագա քննության) կարող են երկարատև ժամանակահատվածներ պահվել «կալանատներում» կամ «ժամանակավոր ազատազրկման վայրերում»: Նոր ժամանողների համակարգված բժշկական զննություն պետք է նաև իրականացվի նմանօրինակ վայրերում:

74. 73-րդ պարբերության մեջ վկայակոչված՝ բժշկական զննությունից հետո կազմվելիք արձանագրությունը պետք է ներառի՝ i) տվյալ անձի կողմից ներկայացված հայտարարությունների շարադրանքը, որոնք վերաբերում են բժշկական զննմանը (ներառյալ նրա առողջական վիճակի նկարագիրը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած պնդումներ), ii) հանգամանալի զննության վրա հիմնված բժշկական օբյեկտիվ եզրակացությունների լրիվ շարադրանքը և iii) առողջապահության ոլորտի մասնագետի դիտարկումները i)-ի և ii)-ի լույսի ներքո՝ մատնանշելով ներկայացված որևէ մեղադրանքի և բժշկական օբյեկտիվ եզրակացության միջև համապատասխանությունը: Արձանագրությունը նաև պետք է ներառի իրականացված լրացուցիչ հետազոտությունների արդյունքները, մասնագիտական խորհրդակցությունների մանրամասն եզրակացությունները և վնասվածքների բուժման նպատակով իրականացվող բուժման և իրականացվող ցանկացած այլ ընթացակարգի նկարագիրը:

Բժշկական զննության արձանագրումը տրավմատիկ վնասվածքների դեպքում պետք է կատարվի այս նպատակով տրամադրված հատուկ ձևաթղթի վրա՝ մարմնի գրաֆիկական պատկերներով տրավմատիկ վնասվածքները նշելու համար, որը կպահվի բանտարկյալի բժշկական ֆայլում: Բացի այդ, ցանկալի կլիներ, որպեսզի լուսանկարվեին վնասվածքները, և լուսանկարները նույնպես ներառվեին բժշկական ֆայլում: Ի հավելում, վնասվածքների հատուկ մատյան պետք է պահվի, որում պետք է արձանագրվեն նկատված բոլոր տեսակի վնասվածքները:

75. Կարևոր է հստակ տարբերակել վերը նշված բժշկական զննությունը և դրան հաջորդող ընթացակարգը, երբ ազատազրկված անձը հանձնվում է բանտում կալանքի: Այս վերջին ընթացակարգը ենթադրում է այնպիսի փաստաթղթերի կազմում, որոնք ստորագրվում են թե՛ բանտի հերթապահ անձնակազմի և թե՛ ոստիկանության ուղեկցող պահակախմբի կողմից, ինչպես նաև թերևս ազատազրկված անձի կողմից: Ցանկացած տեսանելի վնասվածք, որը նկատվում է կալանավորի հանձնման պահին, որպես կանոն արձանագրվում է այս փաստաթղթերում:

Այս ընթացակարգը վարչական բնույթի է, նույնիսկ եթե, ինչը երբեմն պատահում է, այն տեղի է ունենում բանտի առողջապահական անձնակազմի ներկայությամբ, այն ոչ մի դեպքում չի կարող փոխարինել արդեն նկարագրված բժշկական զննության ընթացակարգին: Բացի այդ, նկատի ունենալով ոստիկանական պահակախմբի ներկայությունը, ինչպես նաև այն անհանգստությունը, որ զգում են բանտ մտնելիս՝ բանտարկյալները այս սկզբնական փուլում չպետք է հարցաքննվեն իրենց վրա տեսանելի վնասվածքների

ծագման վերաբերյալ: Այնուհանդերձ, նկատված տեսանելի վնասվածքների մասին արձանագրությունը պետք է անմիջապես փոխանցվի բանտի առողջապահական ծառայություններին:

76. ԽԿԿ-ն մեծ ուշադրություն է դարձնում բանտերում և ազատազրկման այլ վայրերում բժշկական գաղտնիության պահպանմանը: Հետևաբար, ինչպես ազատազրկված անձի ցանկացած այլ բժշկական քննություն, 73-րդ պարբերության մեջ վկայակոչված բժշկական զննումը պետք է կատարվի այնպիսի ձևով, որպեսզի լսելի և տեսանելի չլինի ոչ բժշկական անձնակազմի համար, եթե առողջապահության տվյալ մասնագետը հստակորեն հակառակը չի պահանջում: Այս պահանջը ներկայում հեռու է կատարումից բոլոր այն պետություններում, որտեղ այցելել է ԽԿԿ-ն:

77. Սակայն գաղտնիության սկզբունքը չպետք է դառնա խոչընդոտ վատ վերաբերմունքի մասին վկայող բժշկական ապացույցների հաղորդման համար, որ տվյալ դեպքում հավաքում են առողջապահության մասնագետները: Նման բան թույլ տալը ընդհանրապես կհակասի ազատազրկված անձանց և ընդհանուր առմամբ լայն հասարակության օրինական շահերին:[1] Հետևաբար ԽԿԿ-ն կողմ է բանտերում և ազատազրկման այլ վայրերում աշխատող առողջապահական ոլորտի մասնագետների կողմից ավտոմատ հաշվետվություններ ներկայացնելու պարտականությանը, երբ նրանք նման տեղեկություններ են հավաքում: Իրականում նման պարտականություն արդեն գոյություն ունի շատ երկրների օրենսդրության համաձայն, որտեղ այցելել է ԽԿԿ-ն, սակայն դա հաճախ լիարժեք չի հարգվում գործնականում:

Իր մի շարք վերջին այցելությունների զեկույցներում ԽԿԿ-ն առաջարկել է, որպեսզի գոյություն ունեցող ընթացակարգերը վերանայվեն՝ երաշխավորելու, որ ինչպիսի վնասվածքներ էլ որ արձանագրվեն առողջապահության մասնագետի կողմից, որոնք համապատասխանեն վատ վերաբերմունքի մասին ազատազրկված անձի պնդումներին, այդ տեղեկությունները անմիջապես և համակարգված պետք է բերվեն համապատասխան իշխանության ուշադրությանը, անկախ խնդրո առարկա անձի ցանկություններից: Եթե պարզվել է, որ ազատազրկված անձն ունի վնասվածքներ, որոնք ակնհայտորեն վկայում են վատ վերաբերմունքի մասին (օրինակ՝ ոտքերի ներբանների ծավալուն կապտուկներ), բայց հրաժարվում է

[1] Երկընտրանքներին, որոնց կարող են առերեսվել առողջապահության ոլորտի մասնագետները, ովքեր աշխատում են ազատարկման վայրերում, ծանոթանալու համար տես 1999թ. Ստամբուլի արձանագրության պարբերություններ 65-72-ը (Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ոտնահարող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ հետաքննման և փաստաթղթավորման Ձեռնարկ):

բացահայտել դրանց պատճառը կամ ներկայացնում է մի պատճառաբանություն, որը կապ չունի վատ վերաբերմունքի հետ, նրա հայտարարությունը պետք է փաստաթղթերով հստակ հիմնավորվի և հաղորդվի համապատասխան իշխանությանը՝ օբյեկտիվ բժշկական եզրակացության լիարժեք հիմնավորման հետ միասին։

78. «Համապատասխան իշխանությունը», որին պետք է ուղարկվի առողջապահության մասնագետի զեկույցը, առաջին և ամենաանկախ մարմինն է, որը լիազորված է իրականացնել տվյալ խնդրի պաշտոնական հետաքննություն և անհրաժեշտության դեպքում քրեական մեղադրանքներ ներկայացնել։ Իշխանության մյուս մարմինները, որոնք պետք է տեղեկացվեն, կարող են ներառել մարմինների, որոնք պատասխանատու են ազատազրկված անձանց իրավիճակի մշտադիտարկման կամ կարգապահական հետաքննության համար հաստատություններում, որտեղ կարող է տեղի ունեցած լինել վատ վերաբերմունքի դրսևորումը։ Զեկույցը նաև պետք է հասանելի լինի տվյալ ազատազրկված անձին և նրա փաստաբանին։

Զեկույցը համապատասխան իշխանությանը (իշխանություններին) փոխանցելու փաստացի մեխանիզմը տարբեր երկրներում տարբեր կլինի՝ կազմակերպական կառուցվածքների լույսի ներքո և կարող է չներառել ուղղակի հաղորդակցություն առողջապահության ոլորտի մասնագետի և տվյալ իշխանության միջև։ Հնարավոր է, որ զեկույցը փոխանցվի առողջապահության մասնագետի հիերարխիայի միջոցով (օրինակ՝ Բժշկական բաժինը՝ նախարարական մակարդակում) կամ ազատազրկման հաստատության ղեկավարության կողմից, որում մասնագետն աշխատում է (օրինակ՝ բանտապետի կողմից)։ Սակայն ինչպիսին էլ որ լինի մոտեցումը, զեկույցի արագ փոխանցումը համապատասխան իշխանությանը պետք է երաշխավորվի։

79. Պարբերություն 77-ում վկայակոչված՝ ավտոմատ զեկուցման պարտականության եզրահանգումն է այն, որ առողջապահության ոլորտի մասնագետը պետք է խնդրո առարկա ազատազրկված անձին տեղեկացնի այդ պարտականության մասին՝ բացատրելով, որ նման զեկույց գրելը վատ վերաբերմունքի կանխարգելման համակարգի շրջանակներում է, և որ համապատասխան իշխանությանն այդ զեկույցի փոխանցումը չի փոխարինում պատշաճ ձևով բողոք բերելուն։ Ազատազրկված անձին այս տեղեկությունները տրամադրելու պատշաճ պահը կլինի սկսած այն պահից, երբ նա սկսում է հայտարարություններ անել վատ վերաբերմունքի մասին և կամ երբ պարզվում է, որ նրա վրա հայտնաբերվել են վնասվածքներ, որոնք վկայում են վատ վերաբերմունքի մասին։

Եթե այս գործընթացը իրականացվի նրբանկատորեն, ապա խնդրո առարկա ազատազրկված անձանց մեծամասնությունը չի առարկի բացահայտմանը։ Ինչ վերաբերում է նրանց, ովքեր կշարունակեն ընդդիմանալ, ապա առողջապահության ոլորտի մասնագետը կարող է նախընտրել սահմանափակել զեկույցի բովանդակությունը օբյեկտիվ բժշկական եզրակացությամբ։

80. Համապատասխան իշխանությանը վատ վերաբերմունքի մասին վկայող բժշկական ապացույցների հաղորդումը պետք է զուգորդվի արդյունավետ միջոցներով՝ պաշտպանելու այն անձին, ով տվյալ զեկույցի սուբյեկտն է, ինչպես նաև այլ ազատազրկված անձանց։ Օրինակ, բանտի աշխատակիցները, ովքեր ենթադրաբար ներգրավված են եղել վատ վերաբերմունքի դրսևորման մեջ, պետք է փոխադրվեն այնպիսի պարտականությունների, որոնք չեն պահանջում ամենօրյա շփում բանտարկյալների հետ՝ մինչև հետաքննության արդյունքների հայտնի դառնալը։ Եթե հնարավոր վատ վերաբերմունքը կապված է բանտակիցների գործողությունների հետ, ապա տվյալ ազատազրկված անձի համար պետք է գտնել այլընտրանքային կացարան։ Բնականաբար, եթե զեկույցը վերաբերում է իրավապահների կողմից հնարավոր վատ վերաբերմունքին, ապա տվյալ անձը ոչ մի դեպքում չպետք է վերադարձվի նրանց պահպանությանը։ Ընդհանուր առմամբ ԽԿԿ-ն գտնում է, որ նպատակը պետք է լինի վերջ դնել բանտարկյալներին հետաքննական նպատակներով իրավապահ մարմիններին վերադարձնելու գործելակերպին։ Մասնավորապես, տվյալ անձի ցանկացած հետագա հարցաքննություն, որը կարող է անհրաժեշտ լինել, պետք է անցկացվի բանտի տարածքում։

81. Բացի յուրաքանչյուր դեպքը ըստ անվան հաղորդելուց, երբ վատ վերաբերմունքի մասին վկայող բժշկական ապացույցներ են հավաքվել, Կոմիտեն առաջարկում է, որ բոլոր հնարավոր պատճառներով ի հայտ եկած բոլոր տրավմատիկ վնասվածքները մշտադիտարկվեն և պարբերաբար տեղեկություններ տրամադրվեն համապատասխան մարմիններին (բանտի ղեկավարություն, նախարարական մարմիններ)՝ անանուն վիճակագրության միջոցով։ Նման տեղեկությունները կարող են անգնահատելի լինել խնդրահարույց ոլորտների բացահայտման առումով։

82. Վերը նկարագրված չափանիշներին համապատասխանություն ապահովելու նկատառումով հատուկ վերապատրաստում պետք է առաջարկվի առողջապահության ոլորտի մասնագետներին, ովքեր աշխատում են բանտերում և այլ վայրերում, որտեղ անձինք կարող են անազատության մեջ պահվել երկար

ժամանակահատվածով: Վնասվածքների փաստաթղթավորման և մեկնաբանման անհրաժեշտ որակավորում զարգացնելուց և զեկուցելու պարտականության ու ընթացակարգի վերաբերյալ լիարժեք գիտելիքներ երաշխավորելուց զատ, այս վերապատրաստումը պետք է ներառի այն անձանց հարցաքննելու մեթոդները, ովքեր կարող են ենթարկված լինել վատ վերաբերմունքի:

Նաև շատ ցանկալի կլիներ, որ առողջապահության ոլորտի շահագրգիռ մասնագետները կանոնավոր պարբերականությամբ ստանային արձագանքող տեղեկություններ այն միջոցների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են իշխանությունների կողմից՝ իրենց ներկայացրած զեկույցներից հետո: Սա կարող է օգնել նրանց զգայուն դարձնել որոշակի կետերի նկատմամբ, ինչի հետ կապված կարող են բարելավվել նրանց փաստաթղթավորելու և զեկուցելու հմտությունները, և ընդհանուր առմամբ հիշեցնել նրանց այս առումով իրենց աշխատանքի կարևորության մասին:

83. Նախքան պարբերություն 73-ում վկայակոչված այս կանոնավոր բժշկական զննումը, ազատազրկված անձինք հաճախ որոշ ժամանակ են անցկացնում իրավապահ մարմիններում կալանքի տակ՝ հարցաքննության և հետաքննական այլ միջոցառումների իրականացման նպատակով: Այս ժամանակահատվածում, որը կարող է մի քանի ժամից մինչև մեկ կամ ավելի օր տևել՝ կախված համապատասխան իրավական համակարգից, վատ վերաբերմունքի վտանգը կարող է հատկապես մեծ լինել: Հետևաբար ԽԿԿ-ն խորհուրդ է տալիս, որպեսզի այդ ժամանակ առկա լինեն որոշակի երաշխիքներ՝ ներառյալ բժշկի կողմից հետազոտության ենթարկվելու իրավունքը:[1] Ինչպես բազմիցս շեշտել է Կոմիտեն, ոստիկանական բաժանմունքում կամ ժանդարմերիայում կալանքի տակ գտնվող անձի՝ բժշկի կողմից հետազոտվելու պահանջը պետք է միշտ բավարարվի: Իրավապահները չպետք է փորձեն ֆիլտրել այդ պահանջները:

84. Ոստիկանությունում կամ ժանդարմերիայում կալանքի տակ գտնվող անձի ցանկացած բժշկական քննությունից հետո կատարված արձանագրությունը պետք է համապատասխանի վերը նշված 74-րդ պարբերությունում սահմանված պահանջներին, և հետազոտության գաղտնիությունը պետք է երաշխավորվի, ինչպես նկարագրված է պարբերություն 76-ում: Այնուհետև պետք է կիրառվի 77-րդ պարբերության մեջ վկայակոչված՝ ավտոմատ զեկուցման (հաղորդման) պարտականությունը, եթե հետազոտության ընթացքում հավաքվեն վատ

[1] Այլ կարևոր երաշխիքներից են իր ընտրությամբ երրորդ կողմին ձերբակալության փաստի մասին տեղեկացնելու իրավունքը և փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունքը:

վերաբերմունքի մասին վկայող բժշկական ապացույցներ։ Այս բոլոր պայմանները պետք է կատարվեն անկախ նրանից, թե արդյոք առողջապահության ոլորտի մասնագետը կանչվել է ազատազրկված անձի՞ խնդրանքով, թե՞ այցելել է իրավապահների նախաձեռնությամբ։

Նման դեպքերում զեկուցման պարտականության կատարման միջոցը պետք է արտացոլի իրավիճակի հրատապությունը։ Առողջապահության ոլորտի մասնագետը պետք է իր զեկույցն ուղղակիորեն և անմիջապես հանձնի այն իշխանությանը, որը լավագույն դիրքում է արագ միջամտելու և տեղի ունեցող վատ վերաբերմունքի դրսևորումը դադարեցնելու առումով։ Այդ իշխանության ինքնությունը կախված կլինի իրավական համակարգից և գործին բնորոշ կոնկրետ հանգամանքներից։

VIII. Պայքար անպատժելիության դեմ

Քաղվածք 14-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2004) 28]

25. ԽԿԿ-ի *գոյության իմաստը՝* խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի «կանխարգելումն է». նրա հայացքն ուղղված է ավելի շուտ դեպի ապագան, քան անցյալը: Սակայն տեղի ունեցած վատ վերաբերմունքի դեպքում գործադրված ջանքերի արդյունավետության գնահատումը հանդիսանում է Կոմիտեի կանխարգելիչ լիազորությունների անբաժանելի մասը՝ հաշվի առնելով նման ջանքերի ազդեցությունն ապագա վարքագծի վրա:

Խոշտանգումների և այլ տեսակի դաժան վերաբերմունքի արգելքի նկատմամբ հավատն ամեն անգամ խարխլվում է, երբ նման իրավախախտումների համար պատասխանատու պաշտոնատար անձինք իրենց գործողությունների համար չեն ենթարկվում պատասխանատվության: Եթե նշված վատ վերաբերմունքի մասին տեղեկությունների ի հայտ գալուց հետո չի հետևում արագ և արդյունավետ պատասխան, ապա նրանք, ովքեր հակված են վատ վերաբերվել ազատազրկված անձանց, շատ լավ հիմքեր ունենալով արագ կսկսեն հավատալ, որ իրենք կարող են դա անել անպատիժ կերպով: Բոլոր ջանքերը խթանելու համար մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները կադրերի համալրման խիստ քաղաքականության և մասնագիտական ուսուցման միջոցով՝ զուր կանցնեն: Չձեռնարկելով արդյունավետ քայլեր՝ հարցին առնչվող անձինք՝ գործընկերները, ավագ պաշտոնատար անձինք, քննչական մարմինները, վերջին հաշվով իրենց ներդրումն են ունենում այն արժեքների քայքայման մեջ, որոնք էլ հենց կազմում են ժողովրդավարական հասարակության հիմքերի հիմքը:

Եվ հակառակը՝ երբ այն պաշտոնատար անձինք, ովքեր հրամայել են, արտոնել, թույլատրել կամ կատարել խոշտանգումներ և դաժան վերաբերմունք դրսևորել, ենթարկվում են պատասխանատվության իրենց գործողությունների կամ անգործության համար, ապա դրանով իսկ հստակ հասկացնել են տալիս, որ այդպիսի վարքագիծ չեն հանդուրժելու: Բացի նշանակալի կանխարգելող արդյունքից այդ ուղերձը կհամոզի հանրությանը, որ ոչ ոք օրենքից վեր չի կանգնած, անգամ նրանք, ովքեր պատասխանատու են այն պահպանելու համար: Այն բանի գիտակցումը, որ դաժան վերաբերմունքի համար պատասխանատու անձինք ենթարկվել են պատասխանատվության, շահեկան ազդեցություն կունենա նաև տուժածների վրա:

26. Անպատժելիության դեմ պայքարը պետք է սկսվի տանը, այսինքն՝ համապատասխան ծառայության ներսում (ոստիկանությունում, բանտային ծառայությունում, զինվորական կառույցներում և այլն): Շատ հաճախ հավաքական ոգին բերում է իրար թիկունքի կանգնելու ցանկությանը, երբ տեղ են գտնում պնդումներ դաժան վերաբերմունքի մասին, որը հասնում է մինչև գործընկերների անօրինական գործողությունների հովանավորմանը: Անհրաժեշտ է դրական քայլեր ձեռնարկել, ուսուցանելու և անձնական օրինակի օգնությամբ **առաջ բերելու համար** մասնագիտական վարքագծի **այնպիսի մշակույթ**, որտեղ ոչ մասնագիտական և մասնագիտական աճի համար ոչ անվտանգ կհամարվի այնպիսի աշխատառճն ու միախմբումն այն գործընկերների հետ, ովքեր դիմում են դաժան վերաբերմունքի և որտեղ ճիշտ կհամարվի և մասնագիտական պարգևատրման կարժանանան նրանք, ովքեր ձեռնպահ կմնան նման քայլերից:

Պետք է ստեղծվի այնպիսի մթնոլորտ, որտեղ ճիշտ կհամարվի զեկուցել գործընկերների կողմից դրսևորած վատ վերաբերմունքի մասին. պետք է լինի հստակ գիտակցումն այն բանի, որ վատ վերաբերմունքի համար մեղքը տարածվում է բացի դրա փաստացի կատարողներից ցանկացած մեկի վրա, ով գիտի կամ պետք է իմանա տեղ գտնող վատ վերաբերմունքի մասին և չի փորձում կանխել այն կամ զեկուցել այդ մասին: Դա ենթադրում է վերադասին հաշվետվության հստակ մեխանիզմի, ինչպես նաև խախտումների մասին ահազանգի պաշտպանական միջոցների առկայություն:

27. ԽԿԿ-ի այցելած շատ պետություններում պաշտոնական պարտականությունների իրականացման ժամանակ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կիրառումը, ցուցմունքներ տալու հարկադրանքը, իշխանության չարաշահումը և այլն, քրեական իրավախախտումներ են հանդիսանում, ինչը հետապնդվում է *ի պաշտոնե*: ԽԿԿ-ն ողջունում է նման իրավական դրույթների առկայությունը:

Այնուամենայնիվ, ԽԿԿ-ն գտնում է, որ որոշ երկրներում դատախազական մարմինները տնօրինում են զգալի հայեցողական լիազորություններ նախաքննություն սկսելու այն դեպքում, երբ երևան է գալիս ազատազրկված անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի մասին տեղեկատվություն: Կոմիտեի կարծիքով, անգամ պաշտոնական բողոքի բացակայության դեպքում նման մարմինները պետք է ունենան **իրավական պարտավորություն քննություն իրականացնել** ամեն անգամ, երբ իրենք հավաստի տեղեկություններ են ստանում որևէ աղբյուրից այն մասին, որ կարող է տեղ գտած լինել դաժան վերաբերմունք ազատազրկված անձանց նկատմամբ: Այս առումով պատասխանատվության ենթարկելու իրավական շրջանակները կամրապնդվեն, եթե պետական

պաշտոնատար անձինք (ոստիկանության աշխատակիցները, բանտի պետերը և այլն) պաշտոնապես պարտավորված լինեն անհապաղ տեղյակ պահել համապատասխան իշխանություններին, երբ նրանց հայտնի է դառնում դաժան վերաբերմունքի մասին ցանկացած տեղեկություն:

28. Համապատասխան իրավական շրջանակների առկայությունն ինքնին բավարար չէ երաշխավորելու համար համարժեք քայլերի ձեռնարկումը դաժան վերաբերմունքի հնարավոր դեպքերի պարագայում: Պատշաճ ուշադրություն պետք է դարձնել **համապատասխան իշխանությունների զգոնության բարձրացման** վրա՝ նրանց վրա դրված կարևոր պարտականությունների կատարման առումով:

Երբ իրավապահ մարմինների կողմից ազատությունից զրկված անձինք կանգնում են դատախազական և դատական իշխանությունների առջև, դա նրանց հնարավորություն է տալիս նշել, թե իրենց հետ վատ վարվել են, թե՝ ոչ: Բացի դրանից, անգամ այդ անձանց կողմից բողոքների բացակայության դեպքում, այդ իշխանությունները հնարավորություն կունենան ժամանակին քայլեր ձեռնարկել, եթե առկա են դաժան վերաբերմունքի այլ հատկանիշներ (օրինակ, տեսանելի վնասվածքներ, անձի ընդհանուր տեսքը կամ պահվածքը):

Սակայն այցելությունների ընթացքում ԽԿԿ-ի անդամները հաճախ հանդիպել են անձանց, ովքեր պնդել են, որ իրենք վատ վերաբերմունքի մասին բողոքել են դատախազներին և (կամ) դատավորներին, բայց իրենց զրուցակիցները քիչ ուշադրություն են դարձրել դրա վրա, անգամ երբ իրենք ցույց են տվել վնասվածքներն իրենց մարմնի տեսանելի տեղերում: Նման իրավիճակների իրական լինելն ապացուցվել է ԽԿԿ-ի դիտորդների կողմից տարբեր դեպքերում: Օրինակ՝ Կոմիտեն վերջերս քննարկում էր մի դատական գործ, որտեղ դաժան վերաբերմունքի մասին արված պնդումներից բացի առկա էին և նշումներ տվյալ անձի դեմքին, ոտքերին և մեջքին եղած կապտուկների և այտուցների մասին: Չնայած այն փաստին, որ գործում առկա տեղեկությունը կարող էր համարվել *«բավարար ապացույց՝ հերքման բացակայության դեպքում»* դաժան վերաբերմունքի դրսևորման մասին, համապատասխան իշխանությունները քննություն չեն սկսել և ի վիճակի չէին ճշմարտանման բացատրություններ տալ իրենց անգործության վերաբերյալ:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ անձինք պնդում են, որ իրենք վախենում են բողոքել դաժան վերաբերմունքի մասին, քանի որ դատախազի կամ դատավորի մոտ գործի լսումների ժամանակ ներկա են գտնվում իրավապահ մարմինների նույն այն աշխատակիցները, ովքեր հարցաքննել են իրենց կամ էլ այդ անձանց պարզորոշ համոզել էին անել դա այն բանի հիման վրա, որ դա իրենց շահերից չի բխում:

Խիստ կարևոր է, որպեսզի դատախազական և դատական մարմինները վճռական քայլեր ձեռնարկեն դաժան վերաբերմունքի դրսևորման մասին ցանկացած տեղեկության ի հայտ գալու դեպքում: Նմանապես նրանք պետք է քննություն իրականացնեն այնպես, որ գործին առնչվող անձինք իրական հնարավորություն ունենան հայտարարություն անելու իրենց նկատմամբ դրսևորված վերաբերմունքի մասին:

29. **Համարժեք գնահատել դաժան վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունները** հաճախ ամենևին էլ ակնհայտ խնդիր չէ: Վատ վերաբերմունքի որոշակի տեսակներ (օրինակ՝ շնչահեղձ անելը կամ էլեկտրահարող սարքի կիրառումը) բացահայտ հետքեր չեն թողնում կամ չեն թողնի, եթե դա արվի որոշակի իմացությամբ: Նմանապես, եթե ստիպես մարդկանց ուղղակի կանգնել, ծնկի գալ կամ կռացած դիրքում մնալ մի քանի ժամ, կամ զրկել նրանց քնից, ապա դա դժվար թե հստակ տեսանելի հետքեր թողնի: Անգամ մարմնին հասցրած հարվածները կարող են թողնել միայն թեթևակի ֆիզիկական հետքեր, որոնք դժվար է նկատել և որոնք արագ անհետանում են: Հետևաբար, երբ նման տեսակի վատ վերաբերմունքի մասին պնդումներ հասնում են դատախազական կամ դատական մարմիններին, նրանք պետք է առանձնահատուկ զգուշություն ցուցաբերեն, որպեսզի ավելորդ կարևորություն չտան ֆիզիկական հետքերի բացակայությանը: Նույնը, *անգամ ավելի մեծ չափով,* վերաբերում է գերազանցապես հոգեբանական բնույթ կրող վատ վերաբերմունքի պնդումներին (սեռական ստորացում, սպառնալիք կյանքին կամ կալանավորված անձի կամ նրա ազգականների ֆիզիկական ամբողջությանը և այլն): Համարժեքորեն գնահատելու համար վատ վերաբերմունքի մասին պնդումների հավաստիությունը կարող է պահանջվել ցուցմունքներ վերցնել բոլոր համապատասխան անձանցից և տեղում ստուգումներ և (կամ) բժշկական զննումներ անցկացնել:

Ամեն անգամ, երբ քրեական հանցագործության մեջ կասկածվող անձինք դատախազական կամ դատական իշխանությունների առջև կանգնած պնդում են իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի մասին, այդ հայտարարությունները պետք է գրավոր արձանագրվեն, անհապաղ պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն (ներառյալ, եթե անհրաժեշտ լինի, դատական հոգեբույժի կողմից) և պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու համար այդ հայտարարությունների պատշաճ քննությունը: Նման մոտեցում պետք է դրսևորվի անկախ այն բանից, թե կան արդյոք տեսանելի վնասվածքներ տվյալ անձի վրա: Անգամ եթե բացակայում է վատ վերաբերմունքի մասին հստակ հայտարարություն, դատաբժշկական փորձաքննություն պետք է նշանակվի պահանջվի յուրաքանչյուր այն դեպքում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ անձը կարող է դաժան վերաբերմունքի զոհ լինել:

30. Կարևոր է նաև, որպեսզի խոչընդոտներ չառաջանան վատ վերաբերմունքի մասին հայտարարած անձանց (ովքեր կարող էին ազատ արձակվել առանց դատախազի կամ դատավորի առջև ներկայացվելու) և բժիշկների միջև, ովքեր կարող են կազմել դատաբժշկական փորձաքննության՝ դատախազական և դատական իշխանությունների կողմից ընդունելի ակտեր: Օրինակ՝ նման բժշկի մատչելիությունը չպետք է նախապես ենթակա լինի քննչական մարմինների թույլտվությանը:

31. ԽԿԿ-ն հնարավորություն է ունեցել իր մի շարք այցելություններին նվիրված հաշվետվություններում գնահատել այն մարմինների գործունեությունը, որոնք լիազորված են պաշտոնական քննություն իրականացնել և քրեական կամ վարչական մեղադրանքներ առաջարկել այն գործերի հետ կապված, որտեղ հայտարարություններ էին արվել վատ վերաբերմունքի մասին: Դա անելիս Կոմիտեն հաշվի է առել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերում առկա չափանիշները: Այժմ հստակ սահմանված սկզբունք է դարձել այն, որ **արդյունավետ քննությունը**, որի արդյունքում կարող է ի հայտ գան պատասխանատվության ենթարկվեն դաժան վերաբերմունքի մեջ մեղավոր պատասխանատու անձինք, գործնական տեսանկյունից էական նշանակություն ունեն խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելման համար:

Այս սկզբունքի պահպանումը ենթադրում է, որ քննության համար պատասխանատու մարմինները պետք է ունենան անհրաժեշտ բոլոր մարդկային և նյութական ռեսուրսները: Բացի դրանից, քննությունը պետք է համապատասխանի որոշակի հիմնական չափանիշների:

32. Որպեսզի հնարավոր վատ վերաբերմունքի քննությունն արդյունավետ լինի, կարևոր է, որպեսզի այն անձինք, ովքեր պատասխանատու են դրա համար լինեն <u>անկախ</u> այդ իրավախախտումներում ներգրավված անձանցից: Որոշ իրավական համակարգերում ոստիկանների կամ այլ պետական պաշտոնյաների կողմից դրսևորած վատ վերաբերմունքի համար տրված բոլոր բողոքները պետք է ներկայացվեն դատախազին, և հենց նա, այլ ոչ ոստիկանությունն է, որոշելու՝ պետք է արդյոք սկսել քննություն, թե՝ ոչ: ԽԿԿ-ն ողջունում է նման մոտեցումը: Սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ քննության ամենօրյա անցկացման պատասխանատվությունը վերադարձվում է իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց: Նման դեպքում դատախազի մասնակցությունը սահմանափակվում է հարցումներ կատարելու այդ պաշտոնատար անձանց տրված հանձնարարություններով, արդյունքների ստանալու հաստատմամբ և

մեղադրանք ներկայացնելու վերաբերյալ որոշում կայացնելով: Կարևոր է ապահովել, որպեսզի համապատասխան պաշտոնատար անձինք չլինեն նույն այն ծառայությունից, ինչ և այն անձինք, ում նկատմամբ իրականացվում է այդ քննությունը: Իդեալական տարբերակում նրանք, ում վստահվել է քննության իրականացումը, պետք է լիովին անկախ լինեն դրանում ներգրավված ծառայությունից: Բացի դրանից, դատախազական մարմինները պետք է սևեռուն և արդյունավետ վերահսկողություն իրականացնեն պետական պաշտոնատար անձանց կողմից դրսևորած հնարավոր վատ վերաբերմունքի կապակցությամբ իրականացվող քննության նկատմամբ: Նրանց պետք է տրվեն հստակ ցուցումներ նման քննության նկատմամբ վերահսկողության իրականացման վերաբերյալ:

33. Պետական պաշտոնատար անձանց կողմից դրսևորած հնարավոր վատ վերաբերմունքի քննությունը պետք է համապատասխանի լրիվության չափանիշին: Դրա արդյունքում պետք է պարզվի՝ կոնկրետ հանգամանքներում եղել է արդյոք ուժի կամ այլ մեթոդների կիրառումը արդարացված, ինչպես նաև ի հայտ բերվեն և հարկ եղած դեպքում պատասխանատվության ն ենթարկվեն համապատասխան անձինք: Դա ոչ թե արդյունքի հասնելու, այլ բոլոր միջոցների օգտագործման պարտավորություն է: Այն պահանջում է, որպեսզի բոլոր ողջամիտ քայլերն իրականացվեն՝ ապահովելու համար միջադեպի հետ կապված ապացույցների ձեռք բերումը, այդ թվում՝ տուժածների, կասկածյալների և վկաների բացահայտումն ու հարցաքննությունը (օրինակ, հերթապահ ոստիկանների, այլ ձերբակալվածների), այն գործիքների առգրավումը, որոնք կարող էին օգտագործված լինել վատ վերաբերմունք դրսևորելու համար և դատաբժշկական ապացույցների հավաքումը: Անհրաժեշտության դեպքում պետք է կատարվի դիահերձում, որն ամբողջությամբ և հստակորեն կարձանագրի բոլոր մարմնական վնասվածքներն ու կտա կլինիկական տվյալների օբյեկտիվ վերլուծությունը, այդ թվում՝ մահվան պատճառը:

Քննությունը պետք է նաև բազմակողմանի լինի: ԽԿԿ-ն հանդիպել է դեպքերի, երբ, չնայած հնարավոր վատ վերաբերմունքի դրսևորման հետ կապված միջադեպերի և փաստերի վերաբերյալ բազմաթիվ հայտարարությունների, քննության ծավալներն անհարկի սահմանափակվել էին, կարևոր դրվագներ և դրանց ուղեկցող՝ վատ վերաբերմունքի մասին վկայող հանգամանքներ մնացել էին առանց չպարզված:

34. Այդ համատեքստում ԽԿԿ-ն ցանկանում է հստակ հայտարարել, որ լուրջ մտավախություններ ունի բազմաթիվ երկներում նկատված այն պրակտիկայի վերաբերյալ, երբ իրավապահ մարմինների կամ բանտային համակարգի պաշտոնատար անձինք ձերբակալություններ , հարցաքննություններ

իրականացնելիս կամ բանտային անկարգությունները հանդարտեցնելիս դիմակներ և սաղավարտներ են կրում: Դա ակնհայտորեն խոչընդոտում է վատ վերաբերմունքի մեղադրանք ներկայացնելու դեպքում հնարավոր կասկածյալների բացահայտմանը: Նման պրակտիկան պետք է խստորեն վերահսկվի և կիրառվի միայն բացառիկ դեպքերում, եթե այն պատշաճ կերպով հիմնավորված է: Դա կարող է շատ հազվադեպ (եթե իհարկե երբևիցե կարող է) արդարացված լինել բանտի համատեքստում:

Նույն կերպ, որոշ երկրներում տեղ գտնող՝ ոստիկանության կողմից կալանավորած անձանց աչքերը կապելու գործելաոճը պետք է հստակորեն արգելվի. դա կարող է լրջորեն խանգարել քրեական գործերի հարուցմանը այն անձանց նկատմամբ, ովքեր խոշտանգումներ կամ դաժան վերաբերմունքի այլ ձևեր են կիրառում, և նման դեպքերի հետ ԽԿԿ-ն արդեն իսկ բախվել է որոշ երկրներում:

35. Որպեսզի քննությունը լինի արդյունավետ, այն պետք է իրականացվի <u>պատշաճ կարգով</u> և ողջամտորեն <u>կարճ</u> ժամկետում: ԽԿԿ-ն հայտնաբերել է դեպքեր, երբ անհրաժեշտ քննչական գործողությունները չարդարացված ձևով ձգձգվել են կամ որտեղ դատախազական և դատական մարմինների մոտ բացահայտորեն բացակայել է պահանջվող պատրաստակամությունը օգտագործել իրենց տրամադրության տակ եղած իրավական միջոցները արձագանքելու վատ վերաբերմունքը մատնանշող հայտարարություններին կամ գործին վերաբերող այլ տեղեկություններին: Համապատասխան քննություններն անորոշ ժամանակով կասեցվել են կամ դադարեցվել, իսկ վատ վերաբերմունք դրսևորելու մեջ ներգրավված իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք հնարավորություն են ունեցել ընդհանրապես խուսափելու քրեական պատասխանատվությունից: Այլ կերպ ասած, անհերքելի ապացույցներ ունեցող պաշտոնական դիրքի չարաշահմամբ կատարված լուրջ հանցագործության հանդեպ ունեցած արձագանքը դժվար թե կարելի լինի բնութագրել «քննություն» հստակ անվանմամբ:

36. Ի լրումն արդյունավետ քննության վերը նշված չափանիշների, պետք է քննության կամ դրա արդյունքի նկատմամբ լինի բավարար <u>հասարակական վերահսկողություն</u>, որպեսզի ապահովվի հաշվետվողականությունը ինչպես պրակտիկայում, այնպես էլ տեսության մեջ: Պահանջվող վերահսկողության աստիճանը տարբեր գործերում կարող է տարբեր լինել: Առանձնապես լուրջ գործերում կարող է ավելի հարմար լինել անցկացնել հասարակական քննարկում: Բոլոր դեպքերում, տուժողը (կամ որոշ դեեպքերում տուժողի մերձավոր ազգականը) պետք է մասնակցի այդ ընթացակարգին այնքանով, որքանով դա անհրաժեշտ է նրա օրինական շահերի ապահովման համար:

37. **Կարգապահական վարույթները** վատ վերաբերմունքի համար լրացուցիչ փոխհատուցման ձև են և կարող են տեղ գտնել քրեական դատավարությանը զուգահեռ: Պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվությունը պետք է պարբերաբար քննության առնվի, անկախ այն բանից, թե խնդրո առարկա զանցանքները հանդիսանում են քրեական իրավախախտումներ, թե՝ ոչ: ԽԿԿ-ն այս առիթով խորհուրդ է տալիս պահպանել մի շարք ընթացակարգային երաշխիքներ: Օրինակ՝ ոստիկանների դեմ կարգապահական գործերը քննող հանձնաժողովներում պետք է ներառված լինի առնվազն մեկ անկախ անդամ:

38. Պետական պաշտոնատար անձանց կողմից հնարավոր կարգապահական իրավախախտումների քննությունները կարող են անցկացվել առանձին ներքին քննության ստորաբաժանման կողմից՝ համապատասխան մարմնի կազմում: Այնուամենայնիվ, ԽԿԿ-ն մեծապես խրախուսում է ստեղծել լիարժեքորեն անկախ քննության մարմին: Նման մարմինը պետք է լիազորություններ ունենա կարգադրելու կարգապահական վարույթների անցկացումը:

Անկախ քննչական մարմնի ձևական կառուցվածքից, ԽԿԿ-ն համարում է, որ դրա գործառույթները պետք է պատշաճ կերպով հրապարակվեն: Քաղաքացիների համար բողոքներն ուղղակիորեն քննության այս մարմին ներկայացնելու հնարավորությունից բացի, պետական իշխանությունները, ինչպիսին է օրինակ ոստիկանությունը, պետք է պարտավորված լինեն գրանցելու բոլոր դիմումները, որոնք կարող են բողոք պարունակել: Դրա համար պետք է ներդրվեն համապատասխան ձևի թերթիկներ, որտեղ կնշվի բողոքն ընդունելու մասին և կհավաստիացվի, որ հարցը կքննարկվի:

Եթե որոշակի դեպքում կպարզվի, որ պաշտոնատար անձանց վարքագիծը բնույթով կարող է քրեորեն պատժելի լինել, ապա քննություն իրականացնող մարմինը պետք է միշտ ուղղակիորեն և առանց ձգձգումների այդ մասին տեղեկացնի իրավասու դատախազական մարմիններին:

39. Պետք է ամենայն հոգատարությամբ ապահովել, որպեսզի այն անձանց, ովքեր հնարավոր է որ դարձել են պետական պաշտոնյաների վատ վերաբերմունքի զոհեր, չկարողանան տարհամոզել բողոք ներկայացնելու հարցում: Օրինակ, անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ վատ վերաբերմունքի մեջ մեղադրվող պաշտոնատար անձինք կարող են բողոքողին մեղադրել զրպարտության մեջ, ինչը պոտենցիալ բացասական ազդեցություն կունենա տվյալ անձի բողոքի վրա: Մրցակցող օրինական շահերի միջև պետք է արդարացի հավասարակշռություն սահմանվի: Նույն այս համատեքստում պետք է նաև հղումներ անել որոշակի հարցերի վրա, որոնք արդեն իսկ նշվել են 28-րդ կետում:

40. **Քաղաքացիական վարույթի** ժամանակ երևան եկած՝ պետական պաշտոնատար անձանց կողմից դրսևորած վատ վերաբերմունքի ցանկացած ապացույց նույնպես արժանի է մանրակրկիտ ստուգման: Օրինակ՝ վնասի հատուցմամբ ավարտված հայցերի կամ ոստիկանության աշխատակիցների կողմից բռնություն ներառող հիմնավորմամբ կատարված բարեկամական կարգավորումների դեպքում ԽԿԿ-ն խորհուրդ է տալիս անկախ քննություն անցկացնել: Նման քննությունը պետք է պարզի, թե հարկ կա արդյոք հաշվի առնելով ոստիկանների դեմ ներկայացված մեղադրանքների բնույթն ու ծանրությունը, վերանայել քրեական և/կամ կարգապահական վարույթների հարցը:

41. Ակնհայտ ճշմարտություն է, որ անկախ նրանից, թե որքան արդյունավետ կարող է լինել քննությունը, դրանից քիչ օգուտ կլինի, եթե **վատ վերաբերմունքի համար սահմանված պատժամիջոցները** անհամաչափ լինեն: Երբ վատ վերաբերմունքի դրսևորումն ապացուցվել է, դրան պետք է հետևի համապատասխան պատիժը: Դա կունենա շատ ուժեղ համոզիչ ազդեցություն: Եվ հակառակը՝ մեղմ դատական ակտերի կայացումը կարող է ծնել միայն անպատժելիության մթնոլորտ:

Իհարկե, դատական իշխանություններն անկախ են և, հետևաբար, ազատ են ցանկացած գործի վերաբերյալ օրենքով սահմանված շրջանակներում դատավճիռ կայացնելու: Սակայն այդ շրջանակների մեջ պետք է հստակ արտահայտված լինի օրենսդիրի մտադրությունը, որ քրեական արդարադատության համակարգը պետք է վճռական դիրքորոշում ունենա խոշտանգումների և դաժան վերաբերմունքի այլ ձևերի նկատմամբ: Նույն կերպ, կարգապահական իրավախախտման համար նշանակված պատժամիջոցները պետք է համապատասխանեն մեղքի ծանրությանը:

42. Վերջապես, ոչ մեկի մոտ որևէ կասկած չպետք է մնա այն մասին, որ **պետական իշխանությունները վճռական են** անպատժելիության դեմ պայքարում: Դա կսատարի մնացած բոլոր մակարդակներում իրականացվող գործողություններին: Անհրաժեշտության դեպքում իշխանությունները պետք է քաղաքական ամենաբարձր մակարդակով հստակ ուղերձ հղեն այն մասին, որ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի նկատմամբ պետք է լինի «զրոյական» հանդուրժողականություն:

IX. Էլեկտրահարող սարքերը

Քաղվածք 20-րդ Ընդհանուր հաշվետվությունից [CPT/Inf (2010) 28]

Նախնական նկատառումներ

65. ԽԿԿ-ի այցելած երկրներում արագորեն սովորական է դառնում ոստիկանության և այլ իրավապահ մարմինների աշխատակիցներին էեկտրահարող սարքերով ապահովելը: Ընդ որում Կոմիտեն նկատել է նման սարքերի առկայությունը և ազատազրկման վայրերում (մասնավորապես, որոշ երկրների բանտերում): Գոյություն ունեն էլեկտրահարող սարքերի տարբեր տեսակներ՝ էլեկտրաշոկ մահակներից և ձեռքի զենքերի այլ տարատեսակներից, որոնք պահանջում են ուղղակի շփում այն անձի հետ, ով որպես թիրախ է ընտրվել, մինչև այնպիսիները, որ ընդունակ են արձակել նետանման փամփուշտներ, ինչն էլեկտրական ցնցում է առաջ բերում որոշակի հեռավորության վրա գտնվող անձի մոտ:

66. Իրավապահ և այլ պետական մարմինների աշխատակիցների կողմից էլեկտրահարող սարքերի օգտագործումը վիճահարույց խնդիր է: Գոյություն ունեն հակասական տեսակետեր ինչպես այն կոնկրետ իրավիճակների վերաբերյալ, որտեղ նման տեսակի զենքի կիրառումը կարող է արդարացված լինել, այնպես էլ առողջության վրա թողած այն բացասական հետևանքների վերաբերյալ, որ նման զենքի կիրառումը կարող է առաջացնել: Փաստ է նաև, որ ինքնին էլեկտրահարող սարքը կարող է չարաշահումների տեղիք տալ: Մի շարք դեպքերում ԽԿԿ-ն արժանահավատ ապացույցներ է հավաքել, որ նման տեսակի զենքեր օգտագործվել են ազատազրկված անձանց նկատմամբ արտակարգ դաժան վերաբերմունք դրսևորելու համար, և Կոմիտեն հաճախ է հաղորդումներ ստացել այն մասին, որ կալանքի տակ գտնվող անձանց սպառնացել են տանջել էլեկտրահարող սարքերի միջոցով:

67. ԽԿԿ-ն արդեն քննարկել է էլեկտրահարող սարքերի հետ կապված հարցն իր այցելած երկրներից մի քանիսի վերաբերյալ կազմված հաշվետվությունների ժամանակ: Ստորև ներկայացվող կետերում շարադրված են ԽԿԿ ԽԿԿ դիրքորոշումը, ինչպես նաև անհանգստություն առաջացնող մի շարք խնդիրներ: ԽԿԿ-ն կցանկանար մեկնաբանություններ ստանալ իր Ընդհանուր հաշվետվության այս բաժնի վերաբերյալ, որպեսզի օգներ Կոմիտեին մշակելու իր սեփական չափանիշներն այս դժվարին խնդրի վերաբերյալ:

Ընդհանուր սկզբունքները

68. ԽԿԿ-ն գիտակցում է ազգային իշխանությունների ցանկությունն իրենց իրավապահ մարմինների աշխատակիցներին տրամադրել այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան ապահովելու նրանց առավել տարբերակված մեթոդներով պատասխանել այն վտանգավոր իրավիճակներին, որոնց նրանք բախվում են: Կասկած չկա, որ նվազ մահաբեր զենքի առկայությունը, ինչպիսին էլեկտրահարող սարքն է, կարող է որոշ դեպքերում հնարավոր դարձնել խուսափել հրազենի կիրառումից: Սակայն էլեկտրահարող սարքերը կարող են սուր ցավ պատճառել և ինչպես արդեն ասվել է, չարաշահումների տեղիք տալ: Ըստ այդմ, իրավապահ մարմինների աշխատակիցներին կամ այլ պետական ծառայողներին էլեկտրահարող սարքերի տրամադրման ցանկացած որոշում պետք է կայացվի հարցի հիմնավոր քննարկումից հետո երկրի ազգային գործադիր և օրենսդիր իշխանությունների մակարդակով: Բացի դրանից, էլեկտրահարող սարքերի կիրառման չափանիշները պետք է սահմանված լինեն օրենսդրությամբ և շարադրված կոնկրետ կանոնակարգերով:

69. ԽԿԿ-ն համարում է, որ էլեկտրահարող սարքերի կիրառումը պետք է կանոնակարգվի անհրաժեշտության, օժանդակության, համաչափության և նախօրոք զգուշացման (երբ դա հնարավոր է) սկզբունքներից ելնելով: Այս սկզբունքները ենթադրում են, ի թիվս այլոց, որ պետական ծառայողները, ում նման զենք է տրամադրվում, պետք է համապատասխան ուսուցում անցնեն այն օգտագործելու համար: Ինչ վերաբերում է էլեկտրահարող սարքերի այն տեսակներին, որոնք կարող են կրակել փամփուշտներով, ապա դրանց օգտագործման կանոնները պետք է ուղղակիորեն կապված լինեն հրազենի կիրառման կանոնների հետ:

70. ԽԿԿ-ի կարծիքով, էլեկտրահարող սարքերի կիրառումը պետք է սահմանափակվի այնպիսի իրավիճակներով, երբ իրական և անմիջական վտանգ է սպառնում կյանքին կամ մարմնական ծանր վնասվածք ստանալու վտանգ կա: Նման զենքի կիրառումը միայն հասարակական կարգի պահպանության համար՝ անթույլատրելի է: Բացի դրանից, նման տեսակի զենքերի կիրառումը պետք է թույլատրվի միայն այն դեպքում, երբ արդյունքի չեն հասել կամ անհնարին են այլ ոչ բռնի միջոցները (բանակցություններն ու համոզելը, արանց սարքերի կիրառման զսպելը և այլն) և երբ էլեկտրահարող սարքը մնացել է միակ հնարավոր այլընտրանքն այն միջոցների թվից, որոնք մարմնական վնասվածքների և մահվան ավելի մեծ սպառնալիք են ներկայացնում:

Այդ սկզբունքների կիրառումը կոնկրետ իրավիճակներում

71. Կոնկրետ իրավիճակների համար ԽԿԿ-ն, օրինակ, հստակ հանդես եկավ Էլեկտրահարող սարքեր այն ստորաբաժանումների աշխատակիցներին տրամադրելու դեմ, ովքեր պատասխանատու են ազատազրկված միգրանտներին արտաքսելու համար: Նույն կերպ Կոմիտեն լուրջ վերապահումներ արեց բանտային պայմաններում (առավել ևս փակ հոգեբուժական հաստատություններում) Էլեկտրահարող սարքերի կիրառման վերաբերյալ: Միայն ամենաբացառիկ հանգամանքներում (օրինակ՝ պատանդներ վերցնելու դեպքում) կարելի է արդարացնել էլեկտրահարող սարքերի կիրառումը այդ հաստատություններում, ընդ որում այն պայմանի խստագույնս պահպանմամբ, որ նման զենքը կօգտագործվի միայն հատուկ պատրաստվածություն անցած աշխատակիցների կողմից: Էլեկտրահարող սարքերը ոչ մի դեպքում չեն կարող հիմնական զենք դառնալ այն աշխատակիցների համար, ովքեր ուղղակիորեն շփվում են բանտերում կամ ցանկացած այլ վայրում պահվող ազատազրկված անձանց հետ:

72. Էլեկտրահարող սարքերը ավելի ու ավելի հաճախ են սկսել կիրառել ձերբակալություններ իրականացնելիս և կան լայնորեն հայտնի օրինակներ տվյալ համատեքստում այդ զենքի չարաշահման մասին (օրինակէ բազմիցս արձակված էլեկտրական լիցքեր այն անձանց վրա, ովքեր պառկած են գետնին): Ակնհայտ է, որ էլեկտրահարող սարքերի օգտագործումը նման իրավիճակներում պետք է խստորեն սահմանափակվի: Որոշ երկրներում ԽԿԿ-ն հայտնաբերել է ուղեցույցներ, որտեղ նշված է, որ էլեկտրահարող սարքերը կարող են կիրառվել, եթե իրավապահ մարմինների աշխատակիցները բախվում են այն աստիճան հասնող բռնության կամ բռնության սպառնալիքի, որ պահանջվում է ուժի կիրառում իրենց կամ ուրիշներին պաշտպանելու համար: Այդ ցուցումներն այն աստիճան լայն են, որ մեծ տեղ են թողնում անհամաչափ պատասխանի համար: Եթե էլեկտրահարող սարքերը աստիճանաբար վերածվեն նախընտրելի զենքի բոլոր այն դեպքերում, երբ ձերբակալության ընթացքում կասկածյալը անհնազանդ վարքագիծ է դրսևորում, ապա դա կհանգեցնի հանրության աչքերում իրավապահ մարմինների աշխատակիցների վարկանիշի խիստ բացասական արժեվորմանը:

73. Հաշվի առնելով ԽԿԿ-ի լիազորությունների սահմանափակ բնույթը, այն ձեռնպահ է մնացել հաստատուն դիրքորոշում որդեգրել հասարակական կարգի վերականգնման կամ պահպանման գործողության ժամանակ (օրինակ՝ ցույցերի նկատմամբ հսկողություն հաստատելը) էլեկտրահարող սարքերի կիրառման նկատմամբ: Ընդ որում, վերը շարադրված 70-րդ կետի լույսի ներքո, նման գործողությունների ժամանակ էլեկտրահարող սարքերի կիրառումը կարող է

աննպատակահարմար համարվել, բացառությամբ այն դեպքերի, երբ գոյություն ունի իրական և անմիջական վտանգ կյանքին կամ մարմնական ծանր վնասվածք ստանալու վտանգ: Այդ գործողություններում ներգրավված իրավապահ մարմինների աշխատակիցներն իրենց տրամադրության տակ ունեն (կամ պետք է ունենան) պաշտպանության այլ միջոցներ և այնպիսի գործողությունների տարբերակներ, որոնք առավել չափով են հարմարեցված կոնկրետ խնդրի լուծմանը: Արժե նշել, որ որոշ ոստիկանական ուժեր Եվրոպայում բացառել են հրապարակային ցույցերը հսկողության տակ վերցնելու գործողությունների ժամանակ էլեկտրահարող սարքերի կիրառումը:

74. Հատուկ պետք է հիշատակել կաթվածահարող գոտիները և նմանատիպ սարքերը: ԽԿԿ-ն հստակ նշել է , որ ինքը դեմ է կալանքի տակ գտնվող անձանց տեղաշարժն ազատազրկման վայրերում վերահսկելու համար նման կարգի սարքերի օգտագործմանն ինչպես ներսում, այնպես էլ դրսում: ԽԿԿ-ի , նման սարքը, անկախ նրանից, թե ում նկատմամբ է կիրառվում, ինքնին մարդու արժանապատվությունը նվաստացնող բնույթ ունի և այստեղ շատ մեծ է հնարավոր չարաշահումների հավանականությունը: Կարող է և պետք է գտնվեն ազտազրկված անձանց տեղաշարժի ժամանակ անվտանգության ապահովման այլընտրանքային միջոցներ:

Հրահանգներ և ուսուցում

75. Էլեկտրահարող սարքեր տրամադրելու ցանկացած որոշում կայացնելուց հետո իշխանության համապատասխան մարմինները պետք է ապահովեն մանրամասն հրահանգների տարածումը նման զենք ստացած ծառայություններին: Բացի դրանից, այն աշխատակիցները, ովքեր կարող են նման զենք կիրառել, պետք է հատուկ ընտրված լինեն, հաշվի առնելով նրանց կամային հատկությունները և իրավիճակը գնահատելու կարողությունները, և համապատասխան ձևով պատրաստություն անցնեն: Անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական պատրաստվածության ուսումնական ծրագրեր ու անցկացնել կանոնավոր թեստեր (տե՛ս, նաև 80-րդ կետը):

Տեխնիկական կողմերը

76. Ինչպես ցանկացած այլ զինատեսակ, էլեկտրահարող սարքն օգտագործելուց առաջ պետք է անցնի տեխնիկական թույլտվության ընթացակարգ: Այդ ընթացակարգը պետք է, մասնավորապես, ապահովի, որպեսզի էլեկտրական լիցքերի քանակը, տևողությունը և ուժգնությունը լինի անվտանգ: ԽԿԿ-ին հայտնի են դեպքեր, երբ ազատազրկված անձինք կարճ ժամանակահատվածի ընթացքում ենթարկվել են էլեկտրական լիցքերի մի շարք հարվածների. նման չափազանց մեծ, անհարկի ուժի կիրառումը, իհարկե, կգնահատվի որպես դաժան վերաբերմունք: Բացի դրանից, անհրաժեշտ է նախատեսել այդ զենքի կանոնավոր տեխզննման և սպասարկման ընթացակարգ:

77. Էլեկտրահարող սարքը պետք է համալրված լինի համապատասխան մեխանիզմներով (որպես կանոն, հիշողության քարտով), որոնք կարելի է օգտագործել տարատեսակ տեղեկությունների գրառման և տվյալ զենքի ստուգում կատարելու համար (այնպիսի տվյալներ, ինչպիսիք են օգտագործման ճշգրիտ ժամը, էլեկտրական լիցքերի քանակը, տևողությունը, ուժգնությունը և այլն): Այդ քարտերի վրա պահվող տեղեկությունները պետք է պարբերաբար ընթերցվեն իրավասու մարմինների կողմից (առնվազն՝ երեք ամիսը մեկ): Բացի դրանից, այդ զենքը պետք է սարքավորված լինի լազերային նշանառման ներկառուցված համակարգով և տեսագրման սարքերով, ինչը թույլ կտա հնարավոր դարձնել անվտանգ նշանառությունն ու նկարահանել դրա օգտագործման հետ կապված հանգամանքները:

78. Իրավապահ մարմինների աշխատակիցներին տրամադրվող էլեկտրահարող սարքերը, որպես կանոն, նախատեսված են կիրառման տարբեր ձևերի համար, մասնավորապես, «կրակող» և «շփման» («շփման շոկ» (drive-stun)) տարբերակով: Առաջին դեպքում զենքը կրակում է փամփուշտներով, որոնք դիպչում են թիրախ դարձած մարդուն իրարից մոտ գտնվող հատվածներում և առաջացնում էլեկտրական լիցքեր: Դեպքերի մեծ մասում նման լիցքը առաջ է բերում մկանների ընդհանուր կծկում, ինչը ժամանակավորապես կաթվածահար է անում մարդուն և հասցնում նրան, որ մարդն ընկնում է գետնին: Ի տարբերություն դրա, «շփման» տարբերակի կիրառման ժամանակ զենքի ծայրին գտնվող էլեկտրոդները ստեղծում են էլեկտրական աղեղ և երբ դրանք շփման մեջ են մտնում թիրախ դարձած մարդու հետ, ապա այդ էլեկտրոդներն առաջացնում են շատ սուր, տեղայնացված ցավ, մաշկի վրա թողնելիք հնարավոր այրվածքներով: ԽԿԿ-ն լուրջ վերապահումներ ունի էլեկտրահարող սարքերի այդպիսի կիրառման կապակցությամբ: Իսկապես, ինչպես հարկն է պատրաստված իրավապահ մարմինների աշխատակիցները բազում այլ մեթոդների են տիրապետում հսկողություն ապահովելու համար իրենցից ձեռքով հասանելի տարածության վրա գտնվող անձի նկատմամբ:

Առողջական նկատառումները

79. Էլեկտրահարող սարքերի օգտագործման հնարավոր հետևանքներն այն անձանց ֆիզիկական և մտավոր առողջության համար, ում դեմ այդ զենքը կիրառվում է, բազմաթիվ վեճերի պատճառ են առիթ: Դրանք առանձնապես սրվել են այն բանից հետո, երբ մի շարք դեպքերում թիրախ դարձած մարդիկ մահացել են այդ զենքի կիրառման արդյունքում: Ու թեև ներկայում այդ բնագավառում կատարվող հետազոտությունները դեռևս վերջնական հետևությունների չեն հանգել, անվիճելի է, որ էլեկտրահարող սարքերի կիրառումը մարդկանց առողջությանը վտանգ է սպառնում, ներառյալ դրա արձակած գնդակից զետին ընկնելու դեպքում մարմնական վնասվածքներ ստանալու հավանականությունը կամ այրվածքների արդյունքում, երբ տվյալ զենքն օգտագործվում է երկար ժամանակի ընթացքում «շփման» տարբերակով: Մանրամասն ուսումնասիրությունների բացակայության պարագայում այն պոտենցիալ հետևանքների վերաբերյալ, որ էլեկտրահարող սարքերի կիրառումը կարող է ունենալ առանձնապես խոցելի անձանց համար (օրինակ, տարեց մարդկանց, հղի կանանց, երեխաների, նախկինում սրտի հետ կապված խնդիրներ ունեցող անձանց), ԽԿԿ-ն կարծում է, որ նման անձանց դեմ դրանց կիրառումը բոլոր դեպքերում պետք է բացառվի: Եվս մի լուրջ խնդիր է հանդիսանում էլեկտրահարող սարքերի օգտագործումը ցնորական կամ հարբած վիճակում գտնվող անձանց նկատմամբ: Այդպիսի վիճակում գտնվող մարդիկ կարող է և չհասկանան նման զենքի կիրառման նախազգուշացնող նշանակությունը և հակառակը՝ կարող է սկսեն իրենց ավելի գրգռված վարքագիծ դրսևորել նման իրավիճակում: Հենց առողջական նման վիճակով են բացատրվում ձերբակալությունների ժամանակ տեղ գտնող մահացու դեպքերը՝ հատկապես էլեկտրահարող սարքերի օգտագործման հետ կապված: Այդ պատճառով, անհրաժեշտ է առանձնակի զգուշություն ցուցաբերել և նման դեպքում խուսափել ԿՊ-ների կիրառումից: Նույնը վերաբերում է նաև այն իրավիճակներին, երբ էլեկտրահարող սարքերը կարող են մեծացնել մահացու ելքով կամ մարմնական վնասվածքներով պատահարների վտանգը:

80. Էլեկտրահարող սարքեր կրող աշխատակիցների վերապատրաստման ծրագիրը պետք է ներառի առողջական նկատառումներով այդ զենքի կիրառման աննպատակահարմարության մասին տեղեկատվություն, ինչպես նաև ուսուցում առաջին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ (ընկնելու, այրվածքների, փամփուշտներից հասցված վերքերի, սրտային անբավարարվածության, հոգեկան խանգարումների և այլ դեպքերում): Բացի այդ, հսկողության տակ վերցված անձը, ում նկատմամբ էլեկտրահարող սարք է կիրառվել, պետք է տեղեկացվի այն մասին, որ այդ զենքն ունի միայն ժամանակավոր ներգործություն:

81. ԽԿԿ-ն գտնում է, որ ցանկացած անձ, որի նկատմամբ էլեկտրահարող սարք է օգտագործվել, պետք է բոլոր դեպքերում զննվի բժշկի կողմից և անհրաժեշտության դեպքում հիվանդանոց տարվի: Բժիշկներն ու շտապ օգնության ծառայությունները պետք է տեղեկացվեն այն մասին, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ նման զենքի օգտագործումը տվյալ անձի համար, ինչպես նաև բուժման տարբեր ձևերի մասին, որոնք հաշվի կառնեն տուժածի ֆիզիկական և հոգեբանական առողջության վիճակը: Բացի դրանից, նման անձանց (և/կամ նրանց փաստաբանին՝ համապատասխան խնդրանքի հիման վրա) պետք է տրվեն բժշկական տեղեկանքներ:

Էլեկտրահարող սարքի կիրառմանը հետևող ընթացակարգը

82. Էլեկտրահարող սարքի յուրաքանչյուր կիրառումից հետո անհրաժեշտ է զրուցել իրավապահ մարմինների այն աշխատակցի հետ, ով այդ զենքն օգտագործել է: Բացի դրանից, միջադեպի մասին պետք է մանրամասն հաշվետվություն տրվի վերադաս մարմնին: Այդ հաշվետվությունում անհրաժեշտ է նշել նման զենք կիրառելու համար հիմք հանդիսացած կոնկրետ հանգամանքները, օգտագործված տարբերակը, ինչպես նաև այլ գործին վերաբերող տեղեկություններ (վկաների ներկայությունը, հնարավոր էր արդյոք կիրառել այլ զենք, բժշկական ինչ օգնություն է ցուցաբերվել այն անձին, ում նկատմամբ Էլեկտրահարող սարք է կիրառվել և այլն): Հաշվետվության մեջ պետք է ներառվի տեխնիկական տեղեկատվությունը, որը գրառված է հիշողության քարտում, ինչպես նաև Էլեկտրահարող սարքի օգտագործման պահի տեսագրումը:

83. Նման ներքին ընթացակարգը պետք է ուղեկցվի արտաքին մոնիտորինգով: Դա կարող է արվել պարբերաբար՝ որոշակի ժամանակահատվածներում էլեկտրահարող սարքերի կիրառման բոլոր դեպքերի մասին տեղեկացնելու միջոցով այն անկախ մարմնին, որը պատասխանատու է իրավապահ մարմինների վերահսկողության համար:

84. Բոլոր այն դեպքերում, երբ կհայտնաբերվի, որ էլեկտրահարող սարքերի կիրառումը կարող է խախտած լինել համապատասխան օրենքները և կանոնները, հարկ է անցկացնել համապատասխան քննություն (կարգապահական և (կամ) քրեական):

Կոնտակտային տվյալներ:

Secretariat of the CPT
Council of Europe
F-67075 Strasbourg Cedex
France

Internet: www.cpt.coe.int
E-mail: cptdoc@coe.int
Tel.: +33 (0)3 88 41 39 39
Fax: +33 (0)3 88 41 27 72

Ստրասբուրգ, հունվարի, 2015 թվական
Առաջին էջի նկարը՝ © CICR / FEDELE, Cristina